Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝* ***http://www.armin.am***

*Էլ. փոստ՝* ***info@armin.am***

Հրատարակվում է
Հայոց Ցեղասպանության 90-ամյակի առթիվ եւ
նվիրվում է նահատակների հիշատակին

Издается в связи с 90-летием Геноцида Армян и
посвящается памяти всех мученников

Published on the occasion of the 90th anniversary of the
Armenian Genocide and dedicated to all martyrs

Գիրքը հրատարակվում է շնորհիվ գործարար-
ընկերոջս՝ Արմեն Դալլաքյանի (Ուկրաինա)
հովանավորության

Книга издается благодаря поддержки моего друга-
предпринимателя Армена Мелсиковича Даллакяна
*(Украина)*

The book is sponsored by my businessman friend
Mr. Armen Dallakyan (Ukraine)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

**(Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու)**

Խմբագրությամբ՝ *Ավագ Հարությունյանի*

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Հ 282

Հրատարակվում է Հայաստանի Ազգային
Արխիվի Գիտական Խորհրդի որոշմամբ

Հ 282 Հայոց Ցեղասպանության 50-ամյակը եւ
Խորհրդային Հայ-աստանը,
(Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու),
Կազմող եւ խմբագիր՝ Ավագ
Հարությունյան, Երևան, ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատ., 2005, 260 էջ:

1965թ. Հայոց Եղեռնի 50-ամյակի նշման համազգային երե-ւույթը մինչ այժմ ընդհանրապես ուսումնասիրության առարկա չի եղել:

Փաստորեն, այս ուսումնասիրություն-հրապարակումը հայ պատմագիտության մեջ այդ ուղղությամբ առաջին աշխատանքն է եւ ձգտել ենք հնարավորինս ամփոփ եւ սպառիչ պատկերացում տալ թեմայի վերաբերյալ, եւ, ըստ այդմ, հրատարակության պատրաստել ու ներկայացնել Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարության, ինչպես նաեւ ԽՄԿԿ Կենտկոմի դիրքորոշումն արտացոլող՝ մինչ այժմ անհայտ եւ անտիպ, արխիվային վավերագրեր, եւ պարբերական մամուլի նյութեր:

Միաժամանակ, որպեսզի թեման առավել համակարգված պատկերացվի, հրապարակման ենք ներկայացրել Մայր Աթոռ Ս.Էջմիածնի եւ Գրողների միության որոշ կարեւոր վավերաթղթեր:

Որպես հավելված հրապարակվում են մինչեւ 1990թ. ներա-ռող թեմային առնչվող վավերաթղթեր:

Անշուշտ, Հայոց Ցեղասպանության պատմության համակողմանի ուսումնասիրությունը կարեւորագույն եւ հրատապորեն արդիական նշանակություն ունի, մեզ համար. ոգեկոչման, դաստիարակության ու վերարժեքավորման, իսկ օտարների համար. քարոզչական առումներով:

0503020913
Հ———————2005
703(02)-2005

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-8080-0605-8

© Ավագ Հարությունյան – Խմբագիր, կազմող, թարգմանիչ

НАЦИОНАЛЬНЫЙ АРХИВ АРМЕНИИ

# 50-ЛЕТИЕ ГЕНОЦИДА АРМЯН И СОВЕТСКАЯ АРМЕНИЯ

Сборник документов и материалов

Под редакцией **Авага Арутюняна**

Издается по решению Научного Совета
Национального Архива Армении

50-летие Геноцида Армян и Советская Армения. Сборник документов и материалов. Составитель и редактор Аваг Арутюнян, Издательство НАА ,Гитутюн, Ереван, 2005, 260 с.

Тема 50-летия Геноцида Армян 1915 года в Турции до настоящего времени не была предметом научнога исследования.

Фактически, эти исследования-публикация первая работа в армянской историографии в этом направлении. Этой публикацией мы стремились дать по мере возможности исчерпывающее представление темы, подготвили и представили к публикации неизвестные архивные документы и материалы периодической печати, отражающие официальную позицию руководства Советской Армении, а также ЦК КПСС.

Одновременно, с целью более полного представления темы, опубликованы некоторые важные документы Первопрес-тольного Святого Эчмиадзина и Союза писателей Армении.

В виде Приложения публикуются также документы, относящиеся к этой теме до 1990 года включительно.

National Archieve of Armenia

# The 50th Aniversary of Armenian Genocide and Soviet Armenia

(Documents and Material)

Editor: **Avag Harutyunyan**

Published by the decision of the Scientific Council
of National Archieve of Armenia

The 50th anniversary of Armenian Genocide and Soviet Armenia (Documents and Material), Compiled and edited by Avag Harutyunyan, Publishing Hause of Academy of Science ,Gitutyun, Yerevan, 2005, 260 p.

The all-Armenian commemoration in 1965 of 50th anniversary of the Armenian Genocide perpetrated by Turks towards the Armenians has not been yet investigated by the scientific circles in Armenia and abroad. So, this is the first work in this direction.

The book contains yet unpublished and unknown state and Communist Party documents compiled from National Archieves of Armenia as well as articles and other material published in the periodical press, all related to the 50th commemoration of the Armenian Genocide. In the Supplement are published similar material related to the commemorations of the Armenian Genocide till 1990.

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ՆՇՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԻՑ ՄԻԱԶԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ

*Մ՛խ, ինչպե՞ս, ո՞նց մոռանալ*
*Արհավիրքն այն օրերի.*
*- Աշխարքում ով մոռանա՝*
*Ջուխտ աչքով թող քոռանա ...*

**«Անլռելի զանգակատուն»**
**Պարույր Սեւակ**

ՄԵԿ ՀԱԶԱՐ ԻՆՆ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ, ԱՊՐԻԼԻ 24: 1965թ. Ապրիլի 24: Հերթական եւ սովորական մի տարի մարդկության պատմության օվկիանում, աշխարհի համար մի առօրեական օր, նման՝ նախընթաց, եւ հաջորդ բոլոր օրերին:

Այո՛, այդպես էր բոլորի, ամենքի համար: Բայց, ո՛չ հայերի համար: Հայերը, ճշմարիտ է, այդ օրը, ինչպես եւ միշտ, աշխարհից չէին զանազանվում եւ հակադրվում, այլ ավելին՝ իրենց Մեծ Սուգը վրեժով եւ պայքարով ոգեկոչելով, իրենց սրտում եւ հոգում անթաղ Նահատակի ծիսական պատգամի արժեւորմամբ վճռակամ էին այդ նույն աշխարհին ապացուցելու եւ ընդունել տալու իրենց *Ապրիլի 24-ի խորհուրդը*:

Այն այլեւս դադարեց միմիայն հայի սեփականությունը լինելուց, եւ այդ օրվանից իսկ դարձավ աշխարհի խղճի փորձաքարը:

Այդ օրը սկիզբ դրվեց Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Այդ օրվա Խորհուրդը հայերի համար առաջին հերթին բարոյական էր, խորապես հոգեբանական՝ համազգային միասնության դրսեւորման ոգեղեն ընկալմամբ հենց իրեն եւ համաշխարհային հանրությանը ուղի ցույց տալ, սեփական ողբերգականի ճանաչմամբ մարդկությանն ապահովագրել հետագա համանման ոճիրներից:

Ի թիվս բազում ենթակայական եւ առարկայական պարագաների Հայոց Ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչումը՝ մասնավորապես Խորհրդային Հայաստանում, պայմանավորված էր տիրող վարչա-կուսակցական հասարակարգի գործոնով: Խորհրդային համակարգում, երբ ամեն ինչի մենաշնորհ տիրակալը կոմկուսն էր, ցանկացած երեւույթ ծառայեցվում կամ ստորադասվում էր նրա գաղափարախոսության շահերին, արհեստածին ժողովուրդների բարեկամություն ու ոչ մեկի կողմից չհասկացվող պրոլետարական ինտերնացիոնալիզմ (ավելի ճիշտ՝ անտերնացիոնալիզմ) կոչվող սին հոսանքներին:



Միանգամայն այլ էր Սփյուռքի պարագան, թեպետ իր առարկայական որոշակի խոչընդոտներն էլ նա ուներ:

Անշուշտ, Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարությունից պահանջվում էր հիրավի քաղաքական խիզախություն՝ Մոսկվայից թույլտվություն ստանալու, իր իսկ ներսում գոյություն ունեցող ապազգային ընդդիմությունը չեզոքացնելու (ինչը շատ դեպքերում ավելի դժվար ու ցավագին էր, նաեւ՝ վտանգահարույց), Հայոց Եղեռնի 50-ամյակին բազմակողմանիորեն նախապատրաստվելու եւ այն նշանավորելու ուղղությամբ:

Ի վերջո, առանձին բացառություններից, եւ բնականաբար՝ հայրենադարձներից ու սասունցի-մշեցիների զավակներից զատ, խորհրդահայությունը մեծ մասամբ անտեղյակ էր եւ հոգեբանորեն անպատրաստ, նրան տարիներ շարունակ միանգամայն այլ բաներ էին սերտել տվել, այլ դաստիարակությամբ առաջնորդել:

Այսինքն, Վարդգես Պետրոսյանի դիպուկ բնորոշմամբ. «Քառասունհինգ տարի, 1920-ից մինչեւ 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք ... տխրելու իրավունքից: Այդ ամենը, հասկանալի է, վիրավորում էր մեր ազգային ինքնասիրությունը, տարեցտարի գերլարման հասցնելով մեր ազգային համբերության եւ արժանապատվության պրկված զսպանակը: Եւ 1965-ին, Մեծ Ցեղասպանության 50-ամյա տարելիցի օրը, այդ զսպանակը պայթեց»:[1]

Եւ, ահա, նույնիսկ այդպիսի պայմաններում, հանկարծ պարզվեց, ընդ որում, բոլորի համար զարմանալի կերպով. ցանկացած խորհրդահայ համակվեց Եղեռնի 50-ամյակով, տարվեց նրա տարերքով ու իր համար խորհրդային մտածելակերպին անհարիր պայքարին մասնակից դարձավ ամենայն պատվախնդրությամբ:

Մինչդեռ, դժվարությունները ահռելի էին եւ դրանց հաղթահարման հնարավորությունները գրեթե բացառվում էին: Բավական է հիշատակել, որ երբ Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն Եղեռնի 50-ամյակը նշելու թույլտվության համար դիմեց Մոսկվա, Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոյում հարցի քննարկման համար կազմվեց հատուկ հանձնաժողով՝ Մ.Սուսլով, Ն.Պոդգոռնի, Ա.Գրոմիկո կազմով, որը բավականին դժկամությամբ, բայց եւ այնպես համաձայնվեց Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը թույլատրել նշել Եղեռնի 50-ամյակը:

Արժե հիշատակել, որ մասնավորապես ԽՍՀՄ պաշտոնական գաղափարախոս Մ. Սուսլովը հանրահայտ էր իր ընդգծված հայատյաց դիրքորոշմամբ: Դժբախտաբար, Յա. Զարոբյանի հուշերի եւ համապատասխան մոսկովյան արխիվային վավերաթղթերի բացակայությունը հնարա-

[1] *Պետրոսյան Վարդգես*, **Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես ... իմ վիշտը**, Երեւան, 2003, էջ 133:

վորություն չեն տալիս ամբողջապես պատկերացնել մոսկովյան վերնախավում տեղի ունեցած կուլիսային քաղաքական խաղերի մասին:

Սակայն, մեկ բան հստակ է. ՀԽՍՀ ղեկավարությունը՝ հանձինս ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանի, ի զորու եղավ հաղթահարել սուսլովների արգելապատնեշը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հրապարակվող փաստաթղթերն ու դրանցում մեր կողմից կազմված համապատասխան տողատակային ծանոթագրությունները ընթերցողին հնարավորություն են ընծեռում արդեն իսկ պատկերացում կազմել թեմայի քաղաքական կողմերի մասին, այստեղ կներկայացնենք միայն այն առանձին հարցերի շրջանակի վերլուծությունը, որոնք փաստաթղթերում արտացոլված չեն:

Առանձնահատուկ անհրաժեշտ ենք գտնում շեշտել Յակով Սիկիտի Զարոբյանի անուրանալի դերակատարությունը: 1914թ. ծննդավայր Արդվինից գաղթած եւ ոտքով Ռոստով հասած, ապա մինչեւ 1949թ. Հայաստանից դուրս ապրած Յա. Ն. Զարոբյանը սեփական անձի ու գերդաստանի ճակատագրի վրա զգացել էր Մեծ Եղեռնի արհավիրքները: Խորհրդային Հայաստանի, եւ ինչու չէ՝ անուղղակիորեն նաեւ սփյուռքահայության համար պատասխանատվություն ստանձնելով, նա կարողացավ կոմունիստական հասարակարգի պայմաններում առաջ քաշել եւ իրականություն դարձնել զուտ համազգային (նաեւ ակամայից որոշակի հակախորհրդային երանգավորմամբ) միջոցառումներ, որը արմատապես հեղաշրջեց խորհրդահայության մտածելակերպը, ձեւավորեց միանգամայն նոր հոգեկերտվածք:

1960թ. դեկտեմբերի 28-ից դառնալով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանը անմիջապես ձեռնամուխ եղավ շատ որոշակի ազգային ծրագրերի իրականացմանը: Արդեն1961թ. սկզբին նա ՀԿԿ Կենտկոմի Ագիտքարոզչական բաժնում ստեղծեց Արտասահմանյան կապերի ենթաբաժին, եւ պահանջում ու հսկում էր, որպեսզի դրա ղեկավար Կ.Դալլաքյանը երկու շաբաթը մեկ զեկուցի Սփյուռքի իրադրության մասին, եւ հենց սկզբից զգուշացրել էր, որ այդ ենթաբաժինը «արտասահմանյան կոմկուսների պատվիրակություններ ընդունելուց, խաղաղության շարժման գործը Հայաստանում համակարգելուց եւ նման կարգի ուրիշ հարցերից զատ եւ դրանցից առավել, պետք է զբաղվի Սփյուռքի հարցերով, որ ինքը հաճախ, անմիջապես պիտի զբաղվի ենթաբաժնով»:[1]

Ուշագրավ է, որ Յա. Զարոբյանը արդեն 1961թ. ապրիլի 24-ի նախօրյակին հետաքրքրվել է Եղեռնի 50-ամյակի առթիվ Սփյուռքում կատարվելիք ծրագրերով:[2]

[1] *Դալլաքյան Կարլեն*, Հուշապատում. (Դեմքեր, իրողություններ, մտորումներ), Երեւան, 1998, էջ 62:
[2] *Դալլաքյան Կարլեն*, Հուշապատում, էջ 63:



Վերոնշյալի տեսանկյունից բավականին հետաքրքիր եւ ինքնին խոսուն է 1962թ. սկզբին Յա. Զարոբյանի եւ լիբանանահայ հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկյանի հետեւյալ երկխոսությունը.

«Ա. Ծ. - Իսկ ծրագիր մը ունի՞ք Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի առիթով:

Յա. Զ. - Կարծում եմ լավ կլինի:

Ա. Ծ. - Հանդիսություն, մամուլ, հուշարձա՞ն:

Յա. Զ. - Եւ դրանք եւ թերեւս ուրիշ բաներ: Այս ամենը առայժմ դեռ հրապարակելի չէ: Կենտրոնը (նկատի ունի Մոսկվա -Ա. Հ.) սկզբունքորեն համաձայն է, միայն զգուշանում է եւ աշխատում է այնպիսի ձեւեր գտնել, որպեսզի չխաթարվեն ԽՍՀՄ արտաքին շահերը:

Յա. Զարոբյանը հարցնելով այդ առթիվ Սփյուռքի ծրագրերի մասին ասել է. «Իմ երազանքն էլ դա է, հասնել Սփյուռքի համախմբմանը Խորհրդային Հայաստանի շուրջ: Մեկը մյուսին խիստ անհրաժեշտ են: Հատկապես հայապահպանության համար: Հայրենիքը մեկն է, հայությունն էլ թող լինի մեկ, մի ամուր միասնության մեջ»:[1]

1961թ. հունվարի 28-ին Յա. Զարոբյանը ԽՄԿԿ Կենտկոմ նամակ ուղարկեց՝ խնդրելով թույլատրել 1961-1965թթ. հայրենադարձություն իրականացնել:[2] Սա, փաստորեն, տասնամյակներով ընդհատված այդ համազգային նշանակության գործընթացի շարունակությունն էր:

Այս առումով հատկանշական է այն փաստը, որ ԽՄԿԿ Կենտկոմին 1961թ. հունիսի 3-ին դիմելով Գրիգոր Զոհրապի 100-ամյակը նշելու հարցով Յա. Զարոբյանը մասնավորապես շեշտում էր. «1915 թվականին, հայկական կոտորածի օրերին, հայ մտավորականության հիասքանչ ներկայացուցիչների հետ Գր. Զոհրապը բանտարկվել եւ թուրքական յանիչարների կողմից գազանաբար սպանվել է»:[3]

Իսկ 1961թ. օգոստոսի 2-ին նա ԽՄԿԿ Կենտկոմին առաջարկեց կատարել սփյուռքահայ պարբերականների բաժանորդագրություն եւ անվանի ստեղծագործողների երկերի տպագրություն, այդ թվում՝ նաեւ Մոսկվայում, վճարումը կատարելով արտարժույթային ռուբլիներով:[4]

Այս համատեքստում պետք է դիտարկել 1961թ. սեպտեմբերի 7-ին նրա նամակը ԽՄԿԿ Կենտկոմ, ուր հաշվի առնելով Սփյուռքում «դպրոցների մեծ քանակությունը ... ծայրահեղ նպատակահարմար համարվեց ՀԽՍՀ-ում հատուկ սփյուռքահայ դպրոցների համար արեւմտահայ լեզվով ... հայոց լեզվի, գրականության, պատմության եւ աշխարհագրության դասագրքերի պատրաստումը եւ տպագրումը կազմակերպելը»:[5]

[1] *Դալլաքյան Կարլեն*, Հուշապատում, էջ 67:
[2] ՀԱԱ, ֆ. 1, g. 84, գ. 48, թ. 48:
[3] ՀԱԱ, ֆ. 1, g. 41, գ. 85, թ. 84:
[4] ՀԱԱ, ֆ. 1, g. 41, գ. 85, թթ. 139-140:
[5] ՀԱԱ, ֆ. 1, g. 41, գ. 86, թ. 68:

Այս ամենն ակնհայտորեն վկայում է, որ արդեն1961թ.-ից Յա. Զարոբյանը (հավանաբար ՀԽՍՀ մյուս ղեկավարներին դեռ տեղյակ չպահելով) սկսել էր լրջորեն նախապատրաստել Եղեռնի 50-ամյակի նշման եւ Սփյուռքի հետ կապերի ամրապնդման գործընթացին:

Եւ արդեն ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը 1964թ. ապրիլի 10-ին որոշում ընդունեց Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե ստեղծելու մասին, հանգամանալից նշվեցին նրա խնդիրները եւ անելիքները: Միաժամանակ, համապատասխան պետական բոլոր մարմիններին հրահանգվեց ըստ ամենայնի աջակցել եւ նպաստել նորաստեղծ հաստատության գործունեությանը:[1]

Իսկ արդեն 1964թ. մայիսի 26-ին Սփյուռքի կոմիտեի կազմավորման մասին որոշում ընդունեց ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը:[2]

Կոմիտեի նախագահ նշանակվեց Վարդգես Համազասպյանը:[3]

Ի դեպ, վերջինս հետագա տարիներին անդրադառնալով Սփյուռքահայության կոմիտեի կազմավորմանը եւ նշելով, որ նրա հիմնադիրներ դարձան «ողջ Հայաստանի մտավորականությունն ու աշխատավորությունը», եւ տալով 17 հոգու անուն, բոլորովին մոռացության է մատնում ՀԽՍՀ ղեկավարության ըստ ամենայնի աջակցության փաստը, չի հիշատակում անգամ Յա. Զարոբյանի անունը (ում պարտական էր իր պաշտոնի ստացման համար), միմիայն շեշտելով վերադասի հարուցած դժվարություններն ու խոչընդոտները:[4]

Ուշագրավ է այն հանգամանքը, որ սկզբում այս կոմիտեն պետք է լիներ «Կամավոր ընկերություն», այսինքն՝ հասարակական կազմակերպություն, սակայն նկատի ունենալով դրա կարեւորությունը եւ համազգային հնչեղությունը՝ որոշվեց դարձնել պետական մարմին:

Հիշատակենք, որ դեռ 1962թ. Պետանվտանգության կոմիտեն առաջարկել էր ստեղծել այսպես կոչված Բեռլինի կոմիտեի («ըստ էության ՊԱԿ-ի մասնաճյուղ») կամ պաշտոնապես «Արտասահմանում գտնվող հայրենակիցների հետ կապերի կոմիտեի» հայկական տարբերակ, բայց Յա. Զարոբյանը կտրուկ դեմ է եղել: Այս մարմինը զբաղվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի հետեւանով արտասահմանում հայտնված հայրենակիցներով, ինչը սփյուռքահայության հետ բնավ կապ չուներ եւ վտանգավոր համարվեց նրանց «ապահովության տեսակետից»:[5]

Եւ օգտվելով այն փաստից, որ ԽՄԿԿ Կենտկոմի Քարտուղարությունը 1963թ. ապրիլի 23-ին «Հայրենիք վերադառնալու Խորհրդային

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 42, թթ. 95-97:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 191, թթ. 2-3:
[3] ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 192, թ. 2:
[4] *Համազասպյան Վարդգես*, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը եւ Հայաստանը, Երեւան, 2001, էջ 279-280:
[5] *Դալլաքյան Կարլեն*, Հուշապատում, էջ 82:



Կոմիտեն Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Խորհրդային Կոմիտեի վերակազմակերպելու մասին» որոշում էր ընդունել՝ ՀԿԿ Կենտկոմը անմիջապես ձեռնարկեց Սփյուռքահայության կոմիտեի ստեղծումը:

1964թ. հուլիսի 16-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի տնօրեն Ծ. Աղայանը, ԳԱ Արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Ինճիկյանը, ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջ. Կիրակոսյանը ՀԿԿ Կենտկոմին նամակ հղեցին Եղեռնի 50-ամյակը նշելու վերաբերյալ՝ ներկայացնելով 11 կետերից բաղկացած առաջարկություններ, այդ թվում՝ հուշարձանի կառուցման:[1]

1964թ. դեկտեմբերի 13-ին Յա. Զարոբյանը Եղեռնի 50-ամյակը նշելու առթիվ ԽՄԿԿ Կենտկոմին հիմնավոր, պատմականորեն փաստալից նամակ հղեց: Այդտեղ կարեւորելով սփյուռքի գոյությունը, հայրենադարձության փաստը, տալով Եղեռնի 50-ամյակի նշման քաղաքական եւ գաղափարական նշանակությունը, նա եզրակացնում էր. «Ելնելով այդ ամենից, նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակը Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակի, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո նշել: Այդ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի այնպես, որպեսզի այն բացասաբար չազդի հարեւան երկրների եւ մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ փոխհարաբերությունների բարելավման քաղաքականության վրա, եւ հետապնդի նպատակ, որպեսզի ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգություն այլեւս չկրկնվի»: Վերջում նա ներկայացնում էր կոնկրետ միջոցառումների ծրագիր, այդ թվում՝ «առաջին համաշխարհային պատերազմում զոհված հայ նահատակներին նվիրված կոթողի» կառուցման:[2]

Անշուշտ, կարեւոր նշանակություն ունեցավ Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին 1965թ. փետրվարի 15-ի որոշումը:[3]

Իսկ ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի համապատասխան կարգադրությունն ընդունվեց 1965թ. մարտի 16-ին:[4]

1965թ. մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը հաստատեց «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների» հանգամանալից քարոզչական եւ գործնական աշխատանքների ծրագիր՝ բաղկացած 15 կետից:[5]

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 66-73:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 170-174:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 6, թ.171:
[4] ՀԱԱ, ֆ. 113, ց. 96, գ. 88, թ. 2: Թեպետ կոթողի կառուցումը պետք է ավարտվեր 1965թ., բայց բացումը կատարվեց 1967թ. նոյեմբերի 29-ին:
[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թթ. 8-10:

Միջոցառումների այս ծրագրի բոլոր կետերը՝ բացառությամբ Եղեռնի զոհերի հիշատակի կոթողի կառուցումից (որն ավարտվեց 1967թ.), ընդհանուր առմամբ իրականացվեցվեցին:

Մյուս կողմից, անհրաժեշտ է նշել, որ այդ ուղղությամբ շրջանային եւ թե հատկապես հանրապետական մասշտաբի որոշ պաշտոնյաների ու մարմինների կողմից կազմակերպչական ու քարոզչական առումներով թերացումներ եղան: Ընդ որում, ավելի հաճախ ենթակայական, քան թե առարկայական պատճառներով՝ վարչա-հրամայական գործելակերպի չարաշահման արդյունքում:

1965թ. ապրիլի 20-ին ԵՊՀ մեծ դահլիճում անցկացվեց ԳԱ-ի եւ ԵՊՀ-ի միացյալ գիտական նստաշրջան, որը բացեց ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանը: Այստեղ հիշատակենք ելույթների թեմանները. 1. Ա. Եսայան, Հայ ժողովրդի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ եւ միջազգային իմպերիալիզմը, 2. Մ. Մկրյան, Եղեռնի զոհ հայ մտավորականները, 3. Գ. Ստեփանյան, Արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները, 4. Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Եղեռնի պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ, 5. Կ. Ուդումյան, Ժողովուրդների լենինյան բարեկամության անհաղթ ուժը, 6. Գ. Գալոյան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը եւ հայ ժողովրդի վերածնունդը:[1]

1965թ. ապրիլի 24-ին Օպերայի եւ բալետի թատրոնում տեղի ունեցավ «1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Երեւան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էր ՀԽՍՀ ողջ ղեկավարությունը: Արժե հիշատակել, որ ժողովին հնարավոր էր մասնակցել միմիայն ՀԿԿ Կենտկոմի տրամադրած հատուկ հրավիրատոմսերով:

Ժողովը հակիրճ ճառով բաց արեց ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ Ն.Հարությունյանը: Նա մասնավորապես ասաց. «Հայ ժողովուրդը այսօր առաջին անգամ արժանավայել նշում է մեծ եղեռնի տարելիցը, նրա բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը: ... Դատապարտելով գենոցիդի մարդակեր քաղաքականությունը, մենք դատապարտում ենք ոչ թե աշխատավոր ժողովրդին, այլ բռնակալ դահիճներին, այդ քաղաքականությունն ստեղծողներին եւ նրա գործադրողներին»: Ժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հոտնկայս հարգեցին Եղեռնի զոհերի հիշատակը: Ժողովում զեկուցեց Գիտությունների Ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանը:[2]

Տեղին է նշել, որ ելույթներն ավարտվում էին խորհրդային ժամանակների ավանդույթներին հարիր բուռն ծափահարություններով, իսկ ծրագրավորված համերգը տեղի չունեցավ միայն շենքի առջեւ հավաքված ցուցարարների բողոքից հետո: Կարելի է փաստել, որ այս ժողովը

[1] «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 21:
[2] «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 25:



ավելի շատ արդեն սովորական դարձած «հանդիսավոր նիստ» էր, քան թե սգո եւ ոգեկոչման երեկո: Չնայած հարկ է նշել, որ արդեն իսկ նման ժողովի գումարումը, երբ այդպիսի միջոցառումներն առանց բացառության կատարվում էին կոմունիստական տոների կամ հոբելյանների առիթով, անտարակույս ուներ կարեւոր նշանակություն. իր կազմակերպական թերություններով հանդերձ այն ողջ ԽՍՀՄ-ում առաջին ոչ խորհրդային միջոցառումն էր՝ այն էլ զուտ ազգային թեմայով:

1965թ. ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած համազգային երթերին եւ հանրահավաքներին այստեղ չենք անդրադառնա (ընթերցողն ինքը թող պատկերացում կազմի հատկապես Մկրտիչ Արմենի հրապարակվող զեկուցագրից), ուղղակի պարտավոր ենք փաստել, որ առաջին անգամ հայ ժողովուրդը լիովին կազմակերպված ձեւով նման ծավալուն հայրենասիրական եւ քաղաքական բնույթի ակցիա կատարեց:

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը 1965թ. ապրիլի 28-ին որոշում ընդունեց «Երեւան քաղաքում 1965 թվականի ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին»: Հրահանգվեց «լուրջ բարելավել գաղափարախոսական աշխատանքը, հատուկ ուշադրություն դարձնել ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակությանը, խիստ պատասխանատվության ենթարկել ուսումնական հաստատությունների, հիմնարկների եւ ձեռնարկությունների ղեկավարներին, պարտավորեցնել ստեղծագործական կազմակերպություններին եւ ղեկավարությանը աշխատանքներում կատարել համապատասխան հետևություններ, նշել Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի անբավարար աշխատանքը, ի ցույց դնել հասարակական կարգի պահպանման նախարար Ս. Արզումանյանին, պարտավորեցնել հասարակական կարգի պահպանման նախարարությանը, Դատախազությանը, ՊԱԿ-ին անցկացնել հանգամանալից հետաքննություն:[1]

1965թ. ապրիլի 29-30-ին ՀԿԿ Կենտկոմի ընդլայնված պլենումը լսելով վերոնշյալ որոշման մասին Յա. Զարոբյանի հաղորդումը՝ ընդունեց հետեւյալ որոշումը.

«1. Հավանություն տալ հայերի կոտորածների 50-ամյակի կապակցությամբ ՀԿԿ Կենտկոմի Նախագահության միջոցառումներին եւ ՀԿԿ Կենտկոմի Նախագահության ապրիլի 28-ի «1965թ. ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին» որոշմանը:

2. Հանձնարարել Կենտկոմի Նախագահությանը մշակել եւ իրականացնել կոնկրետ միջոցառումներ աշխատավորության՝ հատկապես երիտասարդության, շրջանում գաղափարա-քաղաքական, դաստիարակչական աշխատանքների հետագա արմատական ուժեղացման, ինչպես

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թթ. 28-35:

նաեւ հանրապետության ադմինիստրատիվ մարմինների աշխատանքների բարելավման ուղղությամբ»:[1]

Առանձնահատուկ պարտավոր ենք զգում հիշատակել Մայր Աթոռի քայլերի մասին: 1964թ. օգոստոսի 17-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Եղեռնի 50-ամյակի առիթով հրապարակած կոնդակում նշելով, որ «Մեր նահատակները մեռան ապրելու յոյսով եւ հայ հայրենիքի վերածնունդի տեսիլքներով», մասնավորապես հրահանգում էր.

«ա. որ յառաջկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին եւ համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի եւ աղօթքի տարի:

բ. որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ, ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ եւ հոգեհանգստեան պաշտօններ, աղօթելու համար մեր բիւրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան եւ լուսաւորման համար:

դ. որ բոլոր հայ եկեղեցական համայնքներուն եւ գաղութներուն մէջ, Հայ Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի եւ յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական-գեղարվեստական նիստեր հայ եւ այլազգի հասարակութեանց համար, նուիրած Ապրիլեան եղեռնին»:[2]

Վազգեն Ա. Եղեռնի 50-ամյակի առթիվ 1964թ. սեպտեմբերի 24-ին նամակներ հղեց Հռոմի Պողոս Զ պապին, Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիին, Քենտբերիի Արքեպիսկոպոս եւ Համայն Անգլիայի Միտրոպոլիտ Մայքլ Ռեմզիին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Վիսսեր դ՝ Հուֆտին: Այդտեղ փաստելով, որ «Նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանության մեծ ոճիրն էր, որ կատարվեց: Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրեւ քրիստոնյա եւ ազատ ազգություն», Վազգեն Ա. «խորհելով, թե առաջնորդված քրիստոնեական գութի և արդարության զգացումից», նրանք պիտի կամենան ապրիլի 24-ին իրենց «աղոթքները միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար»:[3]

Իսկ արդեն 1965թ. ապրիլի 24-ին Մայր Աթոռում տեղի ունեցան հանդիսություններ Եղեռնի 50-ամյակի առթիվ: Վազգեն Ա. պատարագ մատուցեց, կատարվեց հոգեհանգիստ «հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսունամյակին նվիրված», ապա Մայր Տաճարի հյուսիսային կողմում տեղի ունեցավ Եղեռնի նահատակների հուշարձանի հիմնարկեքի օրինությունը: Երեկոյան Վազգեն Ա. իր շքախմբով ներկա եղավ Օպերայի թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր նիստին: Ապրիլի 25-ին Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց, ապա գումարվեց հուշի նիստ՝ նվիրված Եղեռնի 50-ամյակին:[1]

1965թ. հունիսի 13-ին Պլովդիվի Հայոց ազգային գերեզմանատունը Վազգեն Ա.-ի հանդիսադրությամբ տեղի ունեցավ Եղեռնի նահատակների հիշատակի հոգեհանգիստ եւ նահատակաց հուշարձանի բացումը, որին ներկա էր նաեւ Բուլղարիայի Կրոնական գործերի խորհրդի նախագահ Մ. Քյուչյուկովը:[2]

1965թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն Ա. ողջ հոգեւոր դասի եւ հյուրերի ուղեկցությամբ Մայր Տաճարի հյուսիսային կողմում բացեց Եղեռնի նահատակների հուշարձանը, որի հեղինակը անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն էր: Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրված էր. «Խաչքար Աղոթքի եւ Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների»: Հուշարձանի երկրորդ երեսի վրա փորագրվել են Վանի, Մուսա լեռան, Շապին Գարահիսարի, Հաճընի, Մարաշի, Եդեսիայի, Զեյթունի, Սասունի եւ Սարդարապատի անունները: Բացմանը Վազգեն Ա. մասնավորապես ասաց. «Այս տարի, ապրիլի 245-ին, Մենք օրհնեցինք այս հողը, որպեսզի այստեղ մարմին առնե կոթող մը, նվիրված 1915 թվականի հայոց մեծ եղեռնի զոհերու հիշատակին: Ահա այդ կոթողը, խորհրդանիշը հայոց վշտին, խորանը մեր աղոթքին, վեմը մեր ուխտին: ... Այս օրեն սկսյալ սրբավայր մըն է այստեղ, նվիրված մեր ողբերգական անցյալին, մեր զոհված եղբայրներու եւ քույրերու հիշատակին, մեր ժողովրդի ինքնապաշտպանության հերոսամարտերուն, մեր ազգին ուխտին»:[3]

Այս առումով, հետաքրքիր է այն փաստը, որ այս միջոցառումը զուգադիպեց Վազգեն Ա.-ի գահակալության 10-ամյակին, որին ներկա էին նաեւ քույր եկեղեցիների պետերը:

Հայոց Ցեղասպանության 50-ամյակի նշման ողջ գործընթացում առանձնահատուկ հարկ է անդրադառնալ գրողների գործունեությանը, նրանց դիրքորոշմանը: Անտարակույս, հայ գրողները համազգային զարթոնքի առաջամարտիկներից էին:

1965թ. ապրիլի 23-ին գրողների տանը անցկացվեց նահատակ գրողների հիշատակին նվիրված երեկո: Այն բացեց Ստեփան Զորյանը, ելույթ ունեցան Վաղարշակ Նորենցը, Գևորգ Էմինը, Անահիտ Սահինյանը, Գրիգոր Քեշիշյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սիլվա Կապուտիկյանը: Լուսավորության աշխատողների տանը կազմակերպվեց երեկո նվիրված «1915 թվին թուրք ջարդարարների կողմից գազանաբար սպանված հայ գրողների հիշատակին», որտեղ ոգեկոչվեցին մեր ազգի մեծ նահատակները՝ Դ.Վարուժան, Գր.Զոհրապ, Ռ.Սեւակ, Սիամանթո, Ռ.Զարդարյան ...[4]

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 1, թթ. 2-4: գ. 2, թթ. 31-63, 71: գ. 4, թթ. 34-49, 61-64:
[2] **«Էջմիածին»**, 1964, Ը-Թ, էջ 3-5:
[3] **«Էջմիածին»**, 1964, ԺԱ, էջ 8-9:

[1] **«Էջմիածին»**, 1965, ԵՁԷ, էջ 106-113:
[2] **«Էջմիածին»**, 1965, Ը-Թ, էջ 19:
[3] **«Էջմիածին»**, 1965, ԺԱ-ԺԲ, էջ 44-49:
[4] **«Գրական թերթ»**, 1965, ապրիլի 23, թ. 17, էջ 4:

Շեշտենք, որ ապրիլի 23-ի համարը «Գրական թերթ»-ը ամբողջությամբ նվիրել էր Եղեռնին: («Վերածնված իմ Հայաստան» խմբագրական, Գեւորգ Էմինի «Եղել է, կա ու կլինի», պրոֆեսոր Վարդան Պարսամյանի «Հերոսական դրվագներ» հոդվածները):

Այս առումով, պետք է շեշտել, որ ՀԽՍՀ-ի ռուսալեզու պաշտոնական մամուլը Եղեռնի թեմային, միջոցառումների լուսաբանությանն անդրադարձավ աններելիորեն չափազանց հպանցիկ, մինչդեռ քարոզչական նկատառումներից ելնելով միանգամայն հակառակը պետք է լիներ:

Ցավալիորեն, Ապրիլի 24-ի ցույցին եւ ընդհանրապես Եղեռնի 50-ամյակի միջոցառումներին աշխույժ մասնակցություն չունեցավ ժամանակի մտավորականության ազդեցիկ եւ հեղինակավոր առաջնորդը՝ իր խիզախ դիրքորոշմամբ հայտնի, ՀԿԿ Կենտկոմի անդամ Հրաչյա Քոչարը: Ծանր հիվանդության հանդիման նրա սիրտը տեղի տվեց. մահացավ մայիսի 3-ին:[1]

1965թ. ապրիլի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Խորհրդային Գրողների Միության (այդպես էր պաշտոնապես կոչվում հայ գրողների կազմակերպությունը) կուսակազմակերպության դռնբաց ժողովը:[2]

Այդ ժողովին ներկա էին Կոմկուսի 75 անդամներ, նախագահը կուսակցական բյուրոյի առաջին քարտուղար Սերո Խանզադյանն էր, քարտուղարը՝ Ստեփան Ալաջաջյանը:

«Եղեռնի 50-ամյակի նշման մասին» զեկուցեց միության վարչության պատասխանատու քարտուղար էդ. Թոփչյանը: Նա շեշտեց, որ 50-ամյակի նշումը պետք էր, եւ որ այն «կապված էր ավելի քան մեկ ու կես միլիոն հայության բախտի հետ, որ դեգերում էր արտասահմանում»: Նկարագրելով ապրիլի 24-ի դեպքերը, նա օգտագործեց «խուլիգաններ» ձեւակերպումը. «Նրանք ձեռք էին բարձրացրել մեր կուլտուրայի տաճարի (նկատի ուներ օպերայի շենքը) վրա, նրանք թույլ էին տվել ամենակոպիտ անկարգություն»: Մասնակիցներին նա պիտակավորում է. «հանցագործ տարրեր», «տականքներ», «անարժան մարդիկ», «թափթփուկ էլեմենտներ», «հակահասարակական տարրեր»: Նա միանշանակ առաջարկում է դատապարտել այդ արարքը:

Սիլվա Կապուտիկյանի խորին համոզումն էր. «Անհրաժեշտ էր, պատմական եւ քաղաքական մոմենտի թելադրանք՝ անդրադառնալ այդ տարեթվին, նշել այն պետականորեն, անհրաժեշտ լայնությամբ եւ լրջությամբ»: Նա փաստարկված հիմնավորեց Եղեռնի 50-ամյակի նշման անհրաժեշտությունը, իրավացի նշեց ապրիլի սկզբին ծրագրավորված միջոցառումների սառեցման եւ մամուլում տիրող անհարկի լռության փաստը, ինչը առարկայաբար ժողովրդի շրջանում «նորից ստեղծեց լարված վիճ-

[1] Հայոց Ցեղասպանության վերաբերյալ նրա դիրքորոշումը տես - ***Հր. Քոչար, «Մտորումներ»***, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24, թ. 96, էջ 4:
[2] Այդ մասին մանրամասն տես՝ ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:



ակ, կրքերի բորբոքում»: Մինչդեռ, նրա կարծիքով. «Այն ինչ արվեց, արվեց շատ մասնակի, կիսաբերան ասված խոսքով, կիսատպռատ միջոցառումներով»: Նա կտրուկ դեմ էր այն կարծիքին, որ ապրիլի 24-ի ցույց-շարժումը երկու տասնյակ երիտասարդի գործն էր, այլ «ողջ ժողովրդի, քանզի բոլորն ուզում էին ասել՝ իրար, ամենքին, աշխարհին, թե՝ տեսեք, ի հեճուկս ցեղասպանների եւ նրանց լռելյայն հովանավորողների, ի հեճուկս ամենի ու ամենքի, մենք ապրում ենք, մենք ծնվեցինք, մենք կանք»: Այս առումով, տարերային շարժման խորհուրդը նա համարեց «առողջ, բարձր, համամարդկային»:

Նշելով, որ գրողը «ժողովրդի ձգտումների արտահայտողն է, պատասխանատու ոչ միայն րոպեի, օրվա, տարվա, այլեւ տասնամյակների, հիսնամյակների, գալիքի առջեւ», Ս. Կապուտիկյանը գտնում էր, որ պետք է հավանություն տալ ՀԿԿ Կենտկոմի վերջին տարիների գաղափարախոսական աշխատանքներին, ու խնդրում ազատ արձակել «բոլոր իսկապես անմեղ երիտասարդներին, քանզի ստեղծված հիվանդագին մթնոլորտի համար առաջին հերթին մեղավոր են մեծահասակները»:

Եղեռնից ազատված «խլյակ» Սողոմոն Տարոնցին խորին համոզմամբ շեշտեց. «Չնշել, նշանակում էր ֆիզիկապես կորցնել սփյուռքահայությանը, որ հեռացել էր իր հայրենիքից այդ եղեռնի պատճառով, եւ կկորցնենք սփյուռքահայության վստահությունն այն իմաստով, որ մենք կուրանայինք մեր պատմության այդ էջը»: Նա եւս կտրուկ դեմ էր ցույցերը «նացիոնալիստական» համարել:

Ցույցին մասնակցած Բաղիշ Հովսեփյանը նշեց, որ բոլորը պետք է այնտեղ լինեին, բայց փոխարենը. «Մենք շատ վախեցանք մեր աթոռներից, մեր պաշտոններից, չկարողացանք ինչպես պետքն է կազմակերպել սգահանդեսը»: Նրա կարծիքով պետական դրոշի վրա «որպես սգո նշան մի սեւ երիզ անցկացնելուց ոչ կոմունիստական շարժումը կտուժեր, ոչ սոցիալիզմի կառուցումը, ոչ էլ մեր ողջախոհությունը»:

«Հպարտության զգացումով» ցուցարարների շարքում քայլած Սեւակ Արզումանյանը դատապարտեց «սեւ դուբինկաներով (մահակ-Ա.Հ.) միլիցիոներների գռեհիկ գործողությունները, երիտասարդների եւ անչափահասների անխնա ծեծը»: Նա քննադատեց Մոսկվայի կենտրոնական մամուլի պահվածքը, որը բազմիցս գրելով «ալժիրցի Ջամիլեի, հույն Մանոլիս Գլեզոսի, Կոնգոյի ժողովրդի մասին», լռության մատնեց հայերի եղեռնի 50-ամյակը, իսկ «Պրավդա»-ի հոդվածը համարեց «համաշխարհային գենոցիդի ամբողջ հարցերի մեջ մեծ եղեռնի փաստի տարալուծում»: Նման մոտեցումը ուշագրավ կերպով նա բացատրեց «երկու չափի, երկու կշեռքի սկզբունքի» կիրառմամբ:

Անահիտ Սահինյանը խստորեն քննադատեց այն գրողներին («որոնց ծափահարելուց մազոլակալել (կոշտուկ - Ա.Հ.) էին այդ երիտասարդների ձեռքերը»), որոնք բացակա էին ցույցից եւ Լենինի հրապա-

րակում հավաքված խոսքի սպասող երիտասարդության առջեւ ելույթ չունեցաց. «Ցավի հետ գլուխ չունեին, նրանց գլուխները միայն դափնիներ կրելու համար են: Սիրում են ամբիոներ, ահա ամբիոն էր»: Արդյունքում, ըստ նրա վկայության. «Հրապարակում ծովացած այդ երիտասարդներն ու պատանիները, որ ուրիշ չէին, այլ մեր երեխաները, մեր քույրերի ու եղբայրների երեխաները, ամբողջ օրը անգլուխ թափառում էին՝ մեկ դեպի պանթեոն, մեկ դեպի ուսանողական թաղամաս, ոչ մի կերպ տեղ չգտնելով իրենց համար»: Այս առումով, միանշանակ ընդունելի է նրա եզրակացությունը. «Եթե պետք է դատապարտվի որեւէ մեկը, ապա եկեք դատապարտենք ինքներս մեզ, որ չկարողացանք այդ երիտասարդների ու պատանիների զգացումների խորքը թափանցել»:

Համո Սահյանը սրտացավորեն հավաստեց. «Ախր, սառը ջուր ենք բաց թողել նրանց վրա, եւ ուզում ենք նրանց դատապարտել: Մեղք չեն այդ երիտասարդները: Մենք ինքներս մեզ պիտի դատապարտենք, որ չկազմակերպեցինք, եւ նրանք կմնային ետեւում: Բարբարոսություն ցուցաբերեցին միլիցիոներները, եւ պիտի՞ դատապարտենք ջահելներին»:

Սաղաթել Հարությունյանը քննադատեց ԽՄԿԿ Կենտկոմին, որ «չհասկացավ, թե 1915թ. ապրիլի 24-ին ինչպիսի դժբախտություն է պատահել հայ ժողովրդի հետ»: Նա քննադատեց նաեւ ՀԿԿ Կենտկոմին. «Այո, հենց նրանք վատ կազմակերպեցին ամեն ինչ»:

Վաղարշակ Նորենցի վերջնական համոզումն էր. «Մեկ խոսքով, եղեռնի 50-ամյակը չնշվեց պատշաճ ձեւով»:

Ժողովը բանաձեւում հավաստեց. «...պատմության մեջ իր նախընթացը չունեցող հայ եղեռնական կոտորածների 50-ամյա տարելիցը նշելու մասին որոշումը միանգամայն տեղին է եւ համարում է ճիշտ»: Նշվում են «կազմակերպչական բնույթի լուրջ թերությունների», զանգվածային լրատվության միջոցներով «անբավարար լուսաբանումների» պարագաները: Իսկ որոշման 5 կետերից ոչ մեկում չարտացոլվեց Հայոց Ցեղասպանության եւ նրա 50-ամյակի քաղաքական գնահատականը: Ընդհանուր առմամբ, համեմատելով ելույթների ոգին ու հնչեցված քննադատությունները ընդունված բանաձեւի ձեւակերպումների հետ, վերջինս աներկբա պետք է համարել թույլ՝ համաժողովրդական ոգեւորության եւ առանձին գրողների հայրենասիրական դիրքորոշման համապատկերում:

Հետաքրքիր ենք համարում անդրադառնալ նաեւ Եղեռնի 50-ամյակի շրջանակներում Հայրենիք-Սփյուռք կապերին: Մասնավորապես, Բեյրութի «Նոր սերունդ» մշակութային միության վարչությունը Լիբանան էր հրավիրել պատմագիտության դոկտոր Արամայիս Մնացականյանին եւ Պարույր Սեւակին, սակայն ՀԿԿ Կենտկոմը նպատակահարմար չգտավ նրանց այցը այն պատճառաբանությամբ, որ «հանրապետությունում պետք է նշվի կոտորածի 50-ամյակը»: Այս պարագան վերաբերում է նաեւ Բեյրութի Թեքեյան մշակութային միության վարչության կողմից ԳԱ



նախագահ Վիկտոր Համբարձումյանի, երգչուհի Զարուհի Դոլուխանյանի, Գ.Սունդուկյանի անվան թատրոնի հրավերին:[1]

Մյուս կողմից, ՀԿԿ Կենտկոմը ընդունեց Վահան Թեքեյանի մահվան 20 եւ Սեմա Աթմաճյանի մահվան 25-ամյակները նշելու վերաբերյալ Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ Վ.Համազասպյանի առաջարկությունը:[2]

ՀԿԿ Կենտկոմի կողմից նման դրական վերաբերմունք ցուցադրվեց նաեւ Նոր Արաբկիրի հիմնադրման 40 եւ Նոր Հաճնի հիմնադրման 50-ամյակները նշելու առաջարկությունների հարցում:[3]

Ուշագրավ է հիշատակել այն փաստը, որ եթե 1964թ. (Սփյուռքի կոմիտեի հիմնման ժամանակ) կապ էր պահպանվում սփյուռքահայ 620 կազմակերպությունների եւ գործիչների հետ, ապա 1965թ. մայիսին՝ (Եղեռնի 50-ամյակի նշումից հետո) նրանց թիվը կազմեց 900:[4]

Այս առումով, սրտացավ հոգացության կիզակետում էին սփյուռքահայ որբ երեխաները (հատկապես Սիրիայում, Լիբանանում, Իրանում): Սփյուռքի կոմիտեի առաջարկությունների հիման վրա ՀԿԿ Կենտկոմում որոշման նախագիծ էր կազմվել նրանց համար Երեւանում հատուկ գիշերօթիկ դպրոց կառուցելու, եւ ըստ այդմ, առաջին հերթին հայրենադարձության համար:[5]

Ցավոք, այս հարցի հետագա ճակատագրի վերաբերյալ առայժմ համապատասխան վավերաթղթեր հնարավոր չեղավ հայտնաբերել:

Ապրիլի 19-ին Արվեստի աշխատողների տանը Երևանի բուհերում սովորող սփյուռքահայ ուսանողների հետ հանդիպում-երեկո կազմակերպվեց: Այն բացեց Վ.Համազասպյանը, ելույթ ունեցան Գ.Էմինը, Ս.Կապուտիկյանը, ակադեմիկոս Ա.Շահինյանը, սփյուռքահայ ուսանողներ Ազնիվ Արաբյանը, Մանվել Ադամյանը, Թորոս Թորանյանը:[6]

1965թ հունվարի 26-ին ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշեց 1965թ. ամռանը 45 օրով կատարելագործման եւ վերապատրաստ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թթ. 6,16:

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45. գ. 67, թթ. 9, 21: *Միլվա Կապուտիկյան*, **«Ծաղկեպսակի փոխարեն. Վահան Թեքեյանի մահվան 20-ամյակը»**, «Գրական թերթ», 1965, ապրիլի 16, թ. 16, էջ 3: **«Ա.Սեմա, մահվան 25-ամյակի առթիվ»**, «Գրական թերթ», մայիսի 21, թ. 21, էջ 4:

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թթ. 31, 50:

[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թ. 42:

[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թթ. 84-87ա:

[6] **«Ավանգարդ»**, 1965, ապրիլի 24, թ. 49, էջ 3: Նույն տեղում՝ ***Ազնիվ Արաբյանի «Անթառամ ծաղկեպսակը»*** հոդվածը: Արժե հիշատակել, որ ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի 1964թ. դեկտեմբերի 18-ին որոշեց ԵՊՀ ընդունել լիբանանահայ երեխաներին ուղեկցելու հանգամանքով Երեւանում գտնվող, Հալեպի Կրթասիրաց վարժարանի ուսուցչուհի, «Ազգային մշակութային միության» վարչության անդամ, Լիբանանի քաղաքացի Ազնիվ Արաբյանին:

ման դասընթացների հրավիրել 30 սփյուռքահայ ուսուցիչների: Կազմակերպչական եւ ֆինանսական հարցերի լուծումը հանձնարարվեց Նախարարների Խորհրդին:[1]

Այս ենթատեքստում հիշատակենք, որ 1965թ մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը՝ հաշվի առնելով 1964թ. փորձը. որոշեց 1965թ. ամռանը ՀԽՍՀ պիոներական ճամբարներում հանգստի հրավիրել 60 սփյուռքահայ դպրոցականների մեկ ամիս ժամկետով (Լիբանանից՝ 15, Սիրիայից՝ 13 երեխա):[2]

Տեղին է շեշտել, որ այդուհետ սփյուռքահայ ուսուցիչների եւ երեխաների ՀԽՍՀ հրավիրումը կանոնավոր կերպով ամեն տարի կազմակերպվում էին: Սկիզբ առնելով Եղեռնի 50-ամյակի միջոցառումների շրջանակներում, այս ծրագրի հետագա շարունակումն անտարակույս Հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնմանն էր միտված:

Այստեղ ավելորդ չենք համարում հիշատակել, որ դեռեւս 1962թ. մայիսի 18-ին ՀԿԿ Կենտկոմի Բյուրոն որոշել էր Երեւանում կազմակերպել սփյուռքահայ դպրոցների համար դասագրքերի տպագրություն, իսկ արդեն 1965թ. դասագրքերի առաքումը (հատկապես Բեյրութ) ԽՍՀՄ համապատասխան վերադաս մարմինների միջոցով ավելի կազմակերպված բնույթ ստացավ:

Հայոց Եղեռնի 50-ամյակի միջոցառումների ողջ համալիրում կարեւոր քարոզչական քայլ պետք է համարել ՀԿԿ Կենտկոմի Նախագահության 1965թ հունվարի 26-ի որոշումը «Հայրենիքի ձայն» անունով թերթի հրատարակման մասին, որպես Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի պաշտոնաթերթ՝ 7 հազար տպաքանակով:[3]

Ելնելով այս որոշումից Յա. Զարոբյանը 1965թ փետրվարի ընկզբին ԽՄԿԿ Կենտկոմին ուղղած նամակում հիմնավորելով նման թերթի հրատարակության անհրաժեշտությունը եւ քաղաքական նշանակությունը՝ թույլտվություն խնդրեց:[4]

Արդեն 1965թ. մարտի 10-ին ԽՄԿԿ Կենտկոմի Քարտուղարությունը համապատասխան որոշում ընդունեց, ինչի հիման վրա ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը ապրիլի 6-ին վերջնականապես որոշեց թերթի լույս ընծայման հարցը, հաստատեց խմբագրության աշխատակիցների հաստիքացուցակը եւ աշխատավարձի դրույքաչափերը:[5]

«Հայրենիքի ձայն» թերթի խմբագրական կոլեգիան՝ ի տարբերություն հանրապետական մյուս պաշտոնաթերթերի, հաստատվեց առանց կուսակցական-պետական գործիչների, 1. Ալթունյան Թաթուլ, 2. Դավթյան

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 47:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 30:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 51:
[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 41, թթ. 34-35:
[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 19, թթ. 61-62:



Վահագն (խմբագիր), 3. Թոփչյան Էդուարդ, 4. Խաչատրյան Հայկ (պատասխանատու քարտուղար), 5. Համազասպյան Վարդգես, 6. Հասրաթյան Մորուս, 7.Սարյան Մարտիրոս, 8.Սեւակ Պարույր, 9.Քեշիշյան Գրիգոր:

Փաստորեն, սկիզբ առնելով Եղեռնի 50-ամյակի շրջանում համազգային զարթոնքի շնորհիվ, հետագայում «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթն անուրանալի դերակատարությունն ունեցավ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ: Իսկ արդեն 1990-ականներին նրա հրատարակության դադարեցումը (ինչպես եւ Սփյուռքի կոմիտեի լուծարումը) միանգամայն անիմաստ եւ ազգային շահերին վնասող քայլ էր:

ՀԿԿ Կենտկոմի Քարտուղարությունը 1965թ փետրվարի 8-ին որոշում ընդունեց «Հայրենիք վերադարձած հայերի ներկայացուցիչների» ժողովի անցկացման մասին: Նախատեսվեց 1965թ. մարտի 12-ին Երեւանում «Խորհրդային Հայաստանը բոլոր աշխատավոր հայերի հայրենիքն է» օրակարգով ժողովում զեկուցող Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ Նագուշ Հարությունյանին, իսկ Նախարարների Խորհրդին հանձնարարվեց հատկացնել անհրաժեշտ միջոցներ:

Հաստատված միջոցառումների ծրագրով ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժինը պետք է հայրենադարձների անունից պատրաստեր ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ կուսակցական, օրենսդիր, գործադիր վերադաս մարմիններին հասցեագրված ողջույնի նամակ, 50 հայրենադարձների ցուցակ՝ ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի պատվոգրով պարգեւատրելու համար, ապահովեր զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող միջոցառումների լայն լուսաբանումը, իսկ մշակույթի եւ գիտության բաժինը պետք է պատրաստեր մշակույթի, գիտության, կրթության բնագավառներում վաստակավոր կոչումներ շնորհելու համար հայրենադարձների ցուցակներ: Անցկացվող ժողովին պետք է մասնակցեին 1230 հոգի: Ծրագիրը նախատեսել էին այն ենթատեքստում, որպեսզի ամեն ինչի կիզակետում լինեին գերազանց-ցապես հայրենադարձները, նույնիսկ համերգային մասում պետք է ելույթ ունենային՝ Գոհար Գասպարյանը, Օհան Դուրյանը, Միհրան Երկաթը, Հովհաննես Չեքիջյանը:[1]

1965թ. մարտի 12-ի ժողովում «միաձայն» ընդունվեց «Խորհրդային Հայաստանի նոր քաղաքացիների» (նկատի ունեն հայրենադարձներին) ողջույնի նամակը՝ ուղղված ԽՄԿԿ Կենտկոմին եւ ԽՍՀՄ Նախարարների Խորհրդին: Կոմունիստական նշանաբաններով տարալեցուն (ինչ հասկանալի է՝ Մոսկվա էր ուղղարկվում) այս նամակում միանշանակ շեշտվում էր. «ՀԽՍՀ-ն օտարության մեջ ապրող աշխատավոր հայերի միակ հայրենիքն է»:[2]

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը 1965թ. հունվարի 26-ին հատուկ որոշում ընդունեց 1965թ. հայրենադարձների ընդունման մասին՝

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 31, թթ. 39-42:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 41, թթ. 43-45:

6000 մարդ թվաքանակով: Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման պետական կոմիտեին, քաղաքային ու շրջանային կուսակցական, գործադիր իշխանություններին պարտավորեցրեցին լուծել հայրենադարձների ընդունման եւ տեղավորման հետ կապված բոլոր հարցերը: Միաժամանակ, հաստատվեց հայրենադարձների ընդունման եւ տեղավորման հատուկ կառավարական հանձնաժողով ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահի առաջին տեղակալ Սուրեն Մովսիսյանի գլխավորությամբ:[1]

Ուշագրավ է հիշատակել, որ ՀԿԿ Կենտկոմի եւ ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի 1961թ. սեպտեմբերի 29-ի որոշմամբ 1965թ. համար հայտարարվել էր 15 հազար հայրենադարձ հայերի ընդունման ծրագիր, սակայն մի շարք պետությունների կառավարություններ չհամաձայնվեցին, այդ իսկ պատճառով ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը թվաքանակը որոշել էր 6000:[2]

Զա. Զարոբյանը եւ Ա. Քոչինյանը 1965թ հոկտեմբերի 19-ին ԽՄԿԿ Կենտկոմին եւ ԽՍՀՄ նախարարների խորհրդին դիմեցին խնդրանքով թույլատրել շարունակել հայրենադարձությունը՝ հաշվի առնելով դրա «քաղաքական մեծ օգուտը»:[3]

ԽՍՀՄ Նախարարների Խորհուրդը 1966թ. օգոստոսի 9-ի թիվ 624-199 որոշմամբ ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին թույլատրեց 1966-70թթ. իրականացնել հայերի հայրենադարձություն՝ յուրաքանչյուր տարի 1000 մարդ թվաքանակով, նրանց աշխատանքի տեղավորման եւ բնակարանով ապահովման համապատասխան պայմանների առկայության հիման վրա:[4]

Արդեն 1966թ սեպտեմբերի 18-ին ՀԿԿ Կենտկոմի Բյուրոն եւ Նախարարների Խորհուրդը հաստատեցին 1966-1970թթ. հայերի հայրենադարձության համակարգված եւ մանրամասն ծրագիր՝ ամբողջությամբ հենված հանրապետական բյուջեի միջոցների վրա:[5]

Հենց եղեռնի 50-ամյակի համազգային զարթոնքով էր պայմանավորված Արցախի հարցի բարձրացումը: Ա. Քոչինյանը և Բ. Մուրադյանը 1966թ. սեպտեմբերի 30-ին ԽՄԿԿ Կենտկոմին ուղղված նամակով հանգամանալից, պատմականորեն հիմնավորելով առաջ քաշեցին ՀԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը միացնելու հարցը:[6]

Հիշատակենք, որ նման պահանջով ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ.Բրեժնեւին էին դիմել Հայաստանի գիտական եւ ստեղծագործական շրջանակների ներկայացուցիչները՝ 1906 հոգի, Մարտիրոս Սարյանի գլխավորությամբ:[1]

1967թ. մայիսի 12-ին Ա. Քոչինյանը նկատի ունենալով Սփյուռքի հետ տարվող աշխատանքների ծավալի աննախադեպ աճը՝ դիմեց ԽՄԿԿ Կենտկոմ՝ ՀԿԿ Կենտկոմում Տեղեկատվության եւ արտասահմանյան կապերի բաժնի ստեղծման թույլտվության հարցով:[2]

1970թ. հունիսի 10-ին Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը եւ Նախարարների Խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանը դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմին եւ ԽՍՀՄ Նախարարների Խորհրդին հայերի հայրենադարձությունը շարունակելու թույլտվության խնդրանքով՝ ՀԽՍՀ բյուջեի հաշվին: Նրանք փաստարկում էին, որ Մերձավոր Արեւելքից հայերը գաղթում են ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա:[3]

1975թ. ապրիլի 14-ին ՀԿԿ Կենտկոմի Բյուրոն հաստատեց «1915թ. հայերի ցեղասպանության 60-ամյակի կապակցությամբ միջոցառումների» համալիր ծրագիր:[4]

1975թ. նոյեմբերի 12-ին Կ. Դեմիրճյանը դիմեց ԽՄԿԿ Կենտկոմին հայերի հայրենադարձության շարունակման թույլտվության հարցով:[5]

1985թ. ապրիլի 16-ին ՀԿԿ Կենտկոմի Բյուրոն հաստատեց «Հայերի ցեղասպանության 70-ամյակի կապակցությամբ միջոցառումների» համալիր ծրագիր:[6]

Մինչ այդ, 1985թ. հունվարի 25-ին Կ. Դեմիրճյանը դիմել էր ԽՄԿԿ Կենտկոմին ապրիլի 24-ը հռչակել «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հռչակելու խնդրանքով:[7]

1987թ. մարտի 27-ին նա արդեն երկրորդ անգամ նամակով դիմեց ԽՄԿԿ Կենտկոմին նույն հարցով:[8]

Նույն հարցի շուրջ Մ. Գորբաչովին 1988թ. սեպտեմբերի 12-ին դիմեց Ս. Հարությունյանը:[9]

Իսկ արդեն 1988թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն Խորհուրդը ընդունեց օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին», եւ ապրիլի 24-ը հայտարարեց «հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:[10]

[1] ՀԱԱ, ֆ. 1, գ. 45, գ. 15, թ. 48:
[2] ՀԱԱ, ֆ. 1, գ. 45, գ.15, թ. 49:
[3] ՀԱԱ, ֆ. 1, գ. 45, գ. 42, թ. 79:
[4] ՀԱԱ, ֆ. 1, գ. 46, գ. 65, թթ. 40-41:
[5] ՀԱԱ, ֆ. 1, գ. 46, գ. 48, թթ. 4-8:
[6] ՀԱԱ, ֆ. 1, գ. 46, գ. 65ա, թթ. 1-9:



[1] ՀԱԱ, ֆ. 1, գ. 46, գ. 65բ, թթ. 1-51:
[2] ՀԱԱ, ֆ. 1, գ. 47, գ. 57, թթ. 112-114:
[3] ՀԱԱ, ֆ. 1, գ. 50, գ. 53, թթ. 143-145:
[4] ՀԱԱ, ֆ. 1, գ. 55, գ. 32, թթ. 2-3:
[5] ՀԱԱ, ֆ. 1, գ. 55, գ. 81, թթ. 122-123:
[6] ՀԱԱ, ֆ. 1, գ. 77, գ. 89, թթ. 70-71:
[7] ՀԱԱ, ֆ. 1, գ. 127, գ. 418, թթ. 2-հակ:
[8] ՀԱԱ, ֆ. 1, գ. 127, գ. 418, թ. 3:
[9] ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, գ. 2, թթ. 63-64:
[10] **«Բանբեր Հայաստանի Արխիվների»**, 1989, թիվ 2, էջ 5:

1990թ. հունվարի 8-ին ՀԿԿ Կենտկոմի Բյուրոն հաստատեց Եղեռնի 75-ամյակի միջոցառումների ծրագիրը:[1]

Անտարակույս, Եղեռնի 50-ամյակն անմիջապես ունեցավ նաեւ միջազգային հնչեղություն: Այսպես, 1965թ. հուլիսի 15-ին Հելսինկիում գումարված Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսը ընդունեց հետեւյալ բանաձեւ. «Այս տարի հիսնամյակն է հայկական ջարդերի, որոնք կազմակերպվեցին օսմանյան Թուրքիայի կողմից՝ ազգային հարցը ամբողջ մի ժողովրդի բնաջնջման ճանապարհով լուծելու նպատակով: Այդ ցեղասպանությունը արժեցավ մեկուկես միլիոնից ավելի ազատասեր հայերի՝ այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի կյանքը»:[2]

Հանրահայտ է, որ 1965թ. ապրիլի 24-ին աշխարհի շուրջ 20 երկրներում (Լիբանան, Սիրիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Ուրուգվայ, Արգենտինա) նշվեց Եղեռնի 50-ամյակը:

Անվերապահորեն պետք է փաստել, որ Եղեռնի 50-ամյակի համազգային նշումն ինքնին սկիզբ հանդիսացավ Հայոց Ցեղասպանության միջազգային համընդհանուր ճանաչման համար՝ Ուրուգվայ, Եւրախորհրդարան, ...

Այսինքն, Հայոց Ցեղասպանություն գաղափարը ի վերջո դարձավ միջազգային ասպարեզում շրջանառության եւ հետապնդման առարկա:

1984թ. ապրիլի 13-16-ին Փարիզում ժողովուրդների մշտական ատյանի նիստը հատուկ քննեց Հայոց Եղեռնի հարցը, եւ որոշեց, որ այն ցեղասպանություն է ըստ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու ու դրա համար պատժելու» կոնվենցիայի:

1987թ. հունիսի 18-ին Ստրասբուրգում Եւրոպառլամենտը ձայների մեծամասնությամբ ընդունեց որոշում, որով ճանաչվեց Հայոց Ցեղասպանության փաստը:[3]

Ամփոփելով, հարկ է շեշտել մի շարք եզրակացություններ:

Եղեռնի 50-ամյակի համազգային եւ պետական բարձր մակարդակով նշումը բարոյական եւ քաղաքական կարեւոր խթան հանդիսացավ հետագա տարիներին այդ ուղղությամբ կատարվելիք աշխատանքների համար:

1965թ. Ապրիլի 24-ին հայ ժողովուրդը (ՀԽՍՀ-ում եւ Սփյուռքում) ինքն առաջին անգամ եւ համազգային ընդգրկմամբ բարոյապես եւ հոգեպես, իսկ Խորհրդային Հայաստանի կուսակցական-գործադիր իշխանությունները պետական բարձր մակարդակով ճանաչեցին ու բազմակողմանիորեն նշեցին 1915թ. Հայոց Ցեղասպանության 50-ամյակը:

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 40, թթ. 2-9:
[2] **«Էջմիածին»**, 1965, օգոստոս-սեպտեմբեր, էջ 69-70:
[3] **«Բանբեր Հայաստանի Արխիվների»**, 1989, թիվ 2, էջ 9-12:



Ճիշտ է, ՀԽՍՀ օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, համապատասխան իրավական որոշում չընդունեց, սակայն Եղեռնի 50-ամյակի՝ նման համատարած ծեւով նշելն ինքնին ունեցավ փաստացի անչափ կարեւոր նշանակություն:

Ավելին, այս պարագան ուղղակիորեն պետք է վերագրել նաեւ ԽՍՀՄ-ին (թեպետ Մոսկվայում եւ մյուս հանրապետություններում կատարյալ լռություն էր տիրում), որի ղեկավար մարմինը՝ ԽՄԿԿ Կենտկոմը եւ պաշտոնաթերթ «Պրավդա»-ն ստիպված եղան ճանաչել, եւ որի անբաժան մասն էր Հայկական ԽՍՀ-ն, ում մայրաքաղաք Երեւանի կենտրոնում վեր հառնեց Հայոց Եղեռնի նահատակների հուշահամալիրը:

ԽՍՀՄ-ի ղեկավարության շրջանում Հայաստանին եւ հայությանը հուզող հիմնախնդիրների հարցում վերաբերմունքը փոփոխվեց: Այսինքն, 1965թ. ապրիլի 24-ի ցույցը եւ Եղեռնի 50-ամյակի միջոցառումների համազգային ընդգրկումները ԽՍՀՄ կոմունիստական հասարակարգին հասկացնել-զգացնել տվեցին, որ այսուհետ հայ ժողովուրդն արդեն ինքնագիտակցվել է, եւ որ այլեւս այլընտրանք չկա. հարկավոր է հնարավորինս զիջման գնալ եւ փոփոխության ենթարկել 15 «հանրապետական» ժողովուրդներից մեկի՝ հայերի նկատմամբ վարվող քաղաքականությունը:

Ցավալի է, սակայն փաստ, որ խորհրդահայությունը (այդ թվում՝ նաեւ մտավորականության մեծ մասը) գրեթե ոչինչ չգիտեր, իսկ Ապրիլի 24-ից շնորհիվ գրեթե ամեն ինչ իմացավ Մեծ Եղեռնի մասին:

Անշուշտ, այն նաեւ ունեցավ կարեւորագույն բարոյա-հոգեբանական դաստիարակիչ նշանակություն՝ հայ ժողովրդի հոգեկերտվածքի եւ մտածելակերպի կերտման ուղղությամբ:

1965թ. Ապրիլյան շարժման մասնակիցները գերազանցապես երիտասարդներ էին, որոնք նոր, ազգային ոգով դաստիարակություն ստացան հետագայի 1970-80-ական թվականների Ազատագրական պայքարի, Արցախյան եւ Անկախության շարժումների ճանապարհին:

1965թ. Հայոց Եղեռնի 50-ամյակի նշման համազգային երեւույթը, ցավալիորեն, մինչ այժմ ընդհանրապես ուսումնասիրության առարկա չի եղել: Այս թեմայի վերաբերյալ առկա են ընդամենը երկու՝ միմյանց հակադիր, Վարագ Առաքելյանի եւ Ստեփան Վարդանյանի հուշագրություններ:[1]

Անհրաժեշտ է հիշատակել, որ Խորհրդային Հայաստանի պատմության պաշտոնական ժամանակագրություններում Եղեռնի 50-ամյակը եւ 1965թ. ապրիլի 24-ի իրադարձությունները անտեսված են:[2]

[1] ***Վարագ Առաքելյան***, **Ճակատագրի խաչմերուկներում**, Երեւան, 2003, էջեր 67-73: ***Ստեփան Վարդանյան***, **Գրիգոր Հարությունյանից մինչեւ Կարեն Դեմիրճյան. Իշխանության միջանցքներում**, Երեւան, 2003, էջեր 74-81:
[2] Տես – **Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն, 1920-1980**, Երեւան, 1981: ***Հարությունյան Ե. Ռ.***, **Սովետական Հայաստան. Տարեգրություն, 1920-1980**, Երեւան, 1982:

Փաստորեն, այս ուսումնասիրություն-հրապարակումը հայ պատմագիտության մեջ այդ ուղղությամբ առաջին աշխատանքն է եւ ձգտել ենք հնարավորինս ամփոփ եւ սպառիչ պատկերացում տալ հարցի վերաբերյալ, եւ, ըստ այդմ, հրատարակության պատրաստել ու ներկայացնել թեմայի մասին Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարության դիրքորոշումն արտացոլող՝ մինչ այժմ անհայտ եւ անտիպ, արխիվային վավերագրեր, որոնք պահպանվում են Հայաստանի Ազգային Արխիվում, ինչպես նաեւ պարբերական մամուլի նյութեր:

Միաժամանակ, որպեսզի թեման առավել համակարգված պատկերացվի, հրապարակման ենք ներկայացրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայ Գրողների միության որոշ վավերաթղթեր:

Որպես հավելված հրապարակվում են մինչեւ 1990թ. ներառող թեմային առնչվող մի շարք կարեւոր վավերաթղթեր:

Մյուս կողմից, հարկ է շեշտել, որ Սփյուռքում այդ տարիներին ծավալված շարժման տեսանկյունից այս թեման եւս դեռ ուսումնասիրության կարոտ է:

Անտարակույս, Հայոց Ցեղասպանության պատմության համակողմանի ուսումնասիրությունը կարեւորագույն եւ հրատապորեն արդիական նշանակություն ունի, մեզ համար ոգեկոչման, դաստիարակության ու վերարժեքավորման, իսկ օտարների համար քարոզչական առումներով:

Հարկ է դիտարկել, որ եթե 1965թ. Եղեռնի 50-ամյակը նշվում էր խորհրդային հասարակարգի պայմաններում, ապա ներկայումս քաղաքական իրավիճակը արմատապես փոխվել է՝ անկախ Հայաստանի Հանրապետությունում, որն ունի միջազգային ատյաններում հանդես գալու եւ իր պահանջները հետապնդելու լայն իրավունքներ, Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչման ձգտելու գործընթացը պետք է կրի ավելի նպատակասլաց ու հետեւողական բնույթ:

Բոլոր փաստաթղթերը եւ նյութերը հրապարակվում են նույնությամբ՝ անհրաժեշտ ուղղագրական շտկումներով, եւ ըստ ժամանակագրական կարգի: Ռուսերենից թարգմանված փաստաթղթերում եզրերը համապատասխանեցվել են հայոց լեզվի արդի պահանջներին:

Անհրաժեշտության դեպքում կատարվել են տողատակային ծանոթագրումներ:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում Արմեն Դալլաքյանին (Ուկրաինա), ում հովանավորության շնորհիվ հնարավոր դարձավ ներկա հրատարակությունը:



# Փ Ա Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր

## Թ Ի Վ 1

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը Սփյուռքի կոմիտե ստեղծելու մասին]**

*Հուլիւ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 1 3**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**10 ապրիլի 1964թ.**

**Կետ 5. Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական Կոմիտեի ստեղծման մասին[1]**

(ընկ. Դ. Դանիելյան)

Արտահայտվեցին՝ ընկ. ընկ. Հ. Բաղդասարյանը, Գ. Տեր-Ղազարյանցը, Ա. Քոչինյանը, Բ. Գրիգորյանը, Յա. Զարոբյանը

ԽՄԿԿ Կենտկոմի Քարտուղարության 1963 թվականի ապրիլի 23-ի «Հայրենիք վերադառնալու Խորհրդային Կոմիտեն արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Խորհրդային Կոմիտեի վերակազմակերպելու մասին» որոշման համապատասխան ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշում է.

1. Ստեղծել Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական կոմիտե:[2]

Կոմիտեի հիմնական խնդիրներ համարել. սփյուռքահայերի շրջանում հայրենասիրական աշխատանքի իրականացում, արտասահմանում հայրենակիցներին Խորհրդային Միության արտաքին եւ ներքին քաղաքականության հիմնական դրույթների պարզաբանում, խորհրդային կարգի քաղաքական եւ տնտեսական առավելությունների, խորհրդային ժողովրդի բարեկեցության անշեղ աճի, ազգային հարցի ճշմարիտ լուծման, Խորհրդային Միությունում գիտության, մշակույթի եւ արվեստի ծաղ-

---

[1] Թարգմանությունը բառացի է: ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը 1964թ. մայիսի 26-ին թիվ 226 որոշում ընդունեց այս մարմնի կազմավորման մասին: Ուշագրավ է, որ սկզբում այն պետք է լիներ որպես «Կամավոր ընկերություն», սակայն հաշվի առնելով կոմիտեի կարեւոր նշանակությունը եւ համազգային հնչեղությունը՝ դարձվեց պետական: Կոմիտեի նախագահ նշանակվեց Վարդգես Համազասպյանը: Տես – ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 191, թթ. 2-3; գ. 192, թ. 2:

[2] Սփյուռքի կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը եւ հաստիքները ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը հաստատեց 1964թ. ապրիլի 28-ին: Տես – ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 43, թ. 40:

կման համակողմանի լուսաբանումը, այդ հիման վրա հայրենակիցների մոտ Խորհրդային Հայաստանի համար հայրենասիրության ու հպարտության դաստիարակության եւ դրանով իսկ հակախորհրդային խմբերի, կազմակերպությունների ու առաջին հերթին դաշնակների հետադիմական գործունեության մերկացմանը աջակցելը,

Արտասահմանյան առաջադիմական կազմակերպությունների, հայրենակցական միությունների, նրանց տպագիր մարմինների, գրադարանների եւ առանձին անձանց հետ կապի իրականացում,

Հայկական գաղութներում անցկացվող հայրենասիրական աշխատանքում նրանց գործնական օգնության ցուցաբերում, ինչպես նաեւ անհրաժեշտության եւ նպատակահարմարության առաջացման դեպքում նոր կազմակերպությունների, միությունների, ակումբների, գրադարանների ու այլնի ստեղծում,

Սփյուռքահայերի շրջանում թերթերի, ամսագրերի, դպրոցների համար ուսումնական ձեռնարկների, լուսանկարների ալբոմների ու այլ հրատարակությունների հրատարակություն եւ տարածում, ինչպես նաեւ գեղարվեստական եւ այլ գրականության, շարժանկարների, երաժշտության մագնիտոֆոնային ձայնագրությունների եւ այլնի ուղարկում,

ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի Ռադիոհաղորդումների եւ հեռուստատեսության Պետական Կոմիտեի միջոցով սփյուռքահայերի համար հատուկ ռադիոհաղորդումների կազմակերպում,

Առաջադիմական կազմակերպությունների ղեկավարների ակտիվ գործիչների ՀԽՍՀ հրավիրում է մեր հանրապետության կյանքի եւ հաջողությունների հետ ծանոթացնելու համար՝ որպես Կոմիտեի կամ ուրիշ տեղական կազմակերպությունների հյուրեր,

Առաջադիմական կազմակերպությունների ակտիվիստների երեխաների ՀԽՍՀ միջին եւ բարձրագույն ուսումնական հաստատություններ ուսման եւ պիոներական ճամբարներում հանգստի գալուստի կազմակերպում,

Հարազատների փնտրման գործում հայրենակիցներին օգնության ցուցաբերում հրատարկվող եւ տարածվող թերթերի ու այլ հրատարակությունների միջոցով,

Պատվիրակությունների, ստեղծագործական կոլեկտիվների եւ մշակույթի, գիտության, գրականության եւ արվեստի առանձին գործիչների այցերի կազմակերպում այն երկրներ, որտեղ կենտրոնացված են առավել բազմաթիվ հայկական գաղութները՝ հայրենասիրական եւ մշակութային-լուսավորչական աշխատանքի անցկացման խնդիրներով,

Խորհրդային քաղաքացիներին սփյուռքահայ գաղութների կյանքի եւ գործունեության հետ ծանոթացում, նրանց հայտնի գրողների, մշակույթի եւ գիտության գործիչների երեկոների, դասախոսությունների, զրույցների եւ մամլո ասուլիսների կազմակերպման ճանապարհով՝ արտասահմանյան երկրներ այցերից վերադարձած ՀԽՍՀ ժամանող հանրապետության մշակույթի գործիչների ընդգրկմամբ,



Հենց այդ նպատակներով ՀԽՍՀ-ում սփյուռքահայ գրողների եւ լրագրողների գրքերի եւ գրքույկների հրատարակում:

**2.** Բարեկամության եւ մշակութային կապերի Հայկական ընկերության տպագիր օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը հանձնել Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական Կոմիտեին եւ հրատարակել որպես այդ Կոմիտեի պաշտոնաթերթ:

**3.** Սփյուռքահայ գաղութներում հանրապետության կյանքի առավել լայն լուսաբանման, Խորհրդային իրականության քարոզչության ուժեղացման եւ արտասահմանում հայրենակիցների մոտ իրենց հայրենիքի համար հայրենասիրության զգացմունքի դաստիարակության նպատակներով նպատակահարմար գտնել հրատարակել Կոմիտեի տպագիր օրգան «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ:

Խնդրել ԽՄԿԿ Կենտկոմին թույլատրել:[1]

**4.** Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեն ստեղծել Բարեկամության եւ մշակութային կապերի Հայկական ընկերության հաստիքային միավորների հաշվին, որոնք զբաղվում էին սփյուռքահայ կազմակերպությունների հետ մշակութային կապերի հարցերով:

Պարտավորեցնել ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական եւ վարչական մարմինների բաժիններին տասնօրյա ժամկետում նախապատրաստել եւ Կենտկոմի նախագահության հաստատմանը ներկայացնել Կոմիտեի եւ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի կանոնադրությունը, կառուցվածքը եւ հաստիքները:

**5.** Հանձնարարել ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, հանրապետության գիտության, մշակույթի եւ արվեստի գործիչներից 1964 թվականի մայիսի առաջին կեսին հիմնադիր ժողովի հրավիրման նախաձեռնող խումբ ստեղծել, որտեղ կամավոր հասարակական կազմակերպության՝ «Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեի» կազմավորման մասին որոշում ընդունել եւ ընտրել այդ կազմակերպության ղեկավար մարմիններ:

**6.** Պարտավորեցնել ՀԽՍՀ Մշակույթի, Լուսավորության, Արտաքին գործերի նախարարություններին, Հայաստանի արհմիությունների խորհրդին, Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմին, Բարեկամության եւ մշակութային կապերի Հայկական ընկերությանը, Բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթության կոմիտեին, Ռադիոհաղորդումների եւ հեռուստատեսության Պետական Կոմիտեին, Գիտահետազոտական աշխատանքների համակարգման Պետկոմիտեին, Արտասահմանից վերադարձող

[1] Այս 3-րդ կետը գրիչով ջնջված է: Հետագայում ընդունվել է առանձին որոշում:

հայերի ընդունման եւ տեղավորման Կոմիտեին բազմակողմանի օգնություն ցուցաբերել Հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեին՝ սփյուռքահայերի շրջանում աշխատանքի կազմակերպման եւ իրականացման գործում:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
***Յա. Զարոբյան*** [ստորագրություն]

Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 1, ց. 44, գ. 42, թթ. 95-97:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 2

**[Նամակ ՀԿԿ Կենտկոմին Եղեռնի 50-ամյակը նշելու վերաբերյալ]**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ [1]

## ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԲՆԱՋՆՋՄԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի բազմադարյան պայքարում Հայաստանում օտար լուծ, ահաբեկչության եւ բռնակալության վարչակարգ հաստատած սուլթանական Թուրքիայի եւ շահական Պարսկաստանի դեմ մղած ազատագրական շարժումը հատուկ տեղ է զբաղեցնում: Անհավասար պայքարում իր գոյությունը պաշտպանելով՝ հայ ժողովուրդը երբեք թուրքական յանիչարների եւ պարսկական սատրապների լծի հետ չհաշտվեց, համառորեն իր փրկության ուղիներ փնտրելով:

Արդեն 18-րդ դարի վերջին եւ 19-րդ դարի սկզբին Հայաստանում պարսկական լծի տապալման համար հնարավորություն ստեղծվեց: Ռուսաստանին Արեւելյան Հայաստանի միացմամբ երկրի այդ մասի բնակչությունը իր ճակատագիրը կապեց պատմության դժվարին ժամանակաշրջանում նրան օգնության եկած մեծ ռուս ժողովրդի ճակատագրի հետ:

[1] Անշուշտ, այս ծրագրային փաստաթղթի հիմնական նախաձեռնողն ու հեղինակը Ջոն Կիրակոսյանն է: Այն հիմք է ծառայել ԽՄԿԿ Կենտկոմին ուղարկած ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանի նամակի համար: Այս փաստաթուղթը գրեթե նույնությամբ (առանձին ոճական եւ ոչ էական ձեւափոփոխություններով) նույն հեղինակները ՀԿԿ Կենտկոմին հասցեագրել են նաեւ 1964թ. սեպտեմբերի 17-ին, որի վրա կա Յա. Զարոբյանի հետեւյալ մակագրությունը. «Յույժ գաղտնի: Ընկ. Խ. Խաչխայանին: ***Խնդրում եմ բազմացնել եւ բաժանել Կենտկոմի Նախագահության անդամներին եւ անդամության թեկնածուներին:*** **18.09.1964թ.»**: Տես - ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 73, թթ. 105-109:



Սակայն, Հայաստանի տարածքի մեծ մասը, բացառապես բնակեցված բնիկ հայերով, շարունակեց մնալ Թուրքիայի լծի տակ:

Հայաստանի վերամիավորումը, թուրքական լծի տապալումը, դեռ անցյալ դարի կեսերին հայկական իրականության առավել հրատապ հարցը դարձավ: Հայկական հարցը դառնում է միջազգային քաղաքականության առարկա:

Առավել առաջադիմական գործիչները, ինչպես Խաչատուր Աբովյանը, Հայաստանի ճակատագիրը Ռուսաստանի, իսկ մյուսները՝ արեւմտյան տերությունների հետ էին կապում: Հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանը Հայաստանի ազատագրումը ռուսական հեղափոխության հաղթանակի հետ էր կապումը:

Սոցիալ-դեմոկրատական շարժման եւ բոլշեւիզմի առաջացմամբ բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրությունը, այդ թվում եւ հայ ժողովրդի, ավելի հստակ ծրագիր ստացավ:

Հայ բոլշևիկները՝ Վ.Լենինի ցուցումներով ղեկավարվելով, սոցիալական եւ ազգային լծից հայ եւ մյուս ժողովուրդների ազատագրության նոր, ամենից իրական ուղին պրոլետարական հեղափոխության, ազգերի ինքնորոշման մասին կուսակցության ռազմավարական ծրագրի իրականացման մեջ էին տեսնում՝ ռուսական ցարիզմի եւ թուրքական բռնատիրության տապալման ճանապարհով:

Հայկական բուրժուական կուսակցությունների՝ մասնավորապես Դաշնակցություն կուսակցության կողմից, ղեկավարված մյուս գիծը հարեց ցարիզմի ու արեւմտյան կայսերապաշտական տերությունների քաղաքականությանը:

Քաղաքական ուժերի հենց այսպիսի դասավորությամբ սկսվեց առաջին կայսերապաշտական պատերազմը: Վ.Լենինի գլխավորությամբ բոլշեւիկները դեմ հանդես եկան թալանչիական կայսերապաշտական պատերազմին՝ նվաճողական պատերազմը քաղաքացիականի վերափոխելու նշանաբան տալով, կոչ արեցին սվինները ուղղել սեփական բուրժուազիայի, կայսերապաշտության դեմ, բարեկամության ձեռք մեկնել բոլոր ազգությունների աշխատավորներին եւ բարձրացնել հանուն սոցիալիզմի պայքարի դրոշը:

Հայկական բուրժուազիան եւ նրա կուսակցությունները ձգտում էին Անտանտի օգնությամբ Հայկական հարցի լուծմանը հասնել: Նրանք կարծում էին, որ կայսերապաշտների օգնությամբ իրենց կհաջողվի Թուրքիայի լծից հայկական վիլայեթները ազատագրել եւ բուրժուական պետություն ստեղծել: Այդպիսի խոստում Կովկասյան ռազմաճակատում հայկական կամավորական ջոկատների օգնությունը ստանալու նպատակով նրանց տվել էին ցարական սատրապները (Վորոնցով-Դաշկով եւ ուրիշներ): Դրա հետ մեկտեղ, ցարական իշխանության որոշ ներկայացուցիչներ կառավարությանը խորհուրդ տվեցին բոլոր ուժերով հայկական ազ-

ատագրական շարժման զարգացմանը ընդդիմանալ: Ոչ հեռատես դաշնակ քաղաքագետները, ինչպես միշտ, կրկին խաբվեցին, քանզի այդ ժամանակ Անտանտի տերությունների միջեւ գաղտնի պայմանագրեր կնքվեցին, համաձայն որոնց Մերձավոր Արեւելքը՝ այդ թվում եւ Արեւմտյան Հայաստանը, Գերմանիայի եւ Թուրքիայի պարտությունից հետո պետք է Անտանտի պետությունների միջեւ բաժանվեին: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեծ տերությունների քաղաքականության հակաժողովրդական կայսերապաշտական էությունը ցույց տվող այդ պայմանագրերի տեքստերը հրապարակվեցին:

Սակայն, նույն ժամանակ, դարերով թուրքական բռնապետների լծի տակ տանջվող ազատասեր հայ ժողովուրդը մեծ ցանկությամբ ձգտում էր օգտվել ռուսական բանակի մոտեցումից (ի դեմս ռուսական զինվորների հայերը միշտ իրենց անշահախնդիր բարեկամին են տեսել) եւ ազատագրության հասնել: Սակայն, կայսերապաշտական տերությունները՝ իրենց «Բաժանիր եւ տիրիր» ագահ նշանաբանին հավատարիմ, հայ ժողովրդին հանձնեցին թուրքական բարբարոսների հոշոտմանը (1915):

Օսմանյան կայսրությունում հայերի ֆիզիկական բնաջնջման ճանապարհով հայկական հարցի «լուծման» ծրագրերն դեռ 19-րդ դարի 90-ական թվականներին Աբդուլ-Համիդ սուլթանի կողմից առաջ քաշվեցին: Այդ պլանները իրականացնելով, մի քանի տարիների ընթացքում, Արեւմտյան Հայաստանում հազարավոր բնակավայրեր հրի եւ սրի մատնվեցին, ինչի արդյունքում զոհվեցին հարյուր հազարավոր հայեր:

Հայերի բնաջնջման քաղաքականությունն առավել լայն ծավալներով երիտթուրքերը շարունակեցին: Նրանց ծրագիրը սուլթանական Թուրքիայի տիրապետող շրջանակների համաթուրանական նվաճողական ձգտումներից էր բխում: Նրանք ձգտում էին խլել Կովկասը եւ Ռուսաստանի ուրիշ տարածքներ: Այդ ծրագրերի իրականացման ճանապարհին, երիտթուրքերի հայտարարությամբ, ավանդականորեն ռուսական կողմնորոշման հետեւող հայ ժողովուրդն էր կանգնած:

Սկսած 1915թ. գարնանից, ռազմական դրությունից օգտվելով, թուրքական կառավարությունը անմիջականորեն ձեռնարկեց հայերի հանցավոր ցեղասպանության քաղաքականության իրականացումը:

Անզեն բնակչությունը անխղճորեն ոչնչացվում էր: Բնաջնջվեցին շուրջ մեկ ու կես միլիոն հայեր, այդքան էլ փրկվեցին փախուստով եւ սփռվեցին ամբողջ աշխարհում: Հայկական շրջանները ամայացվեցին: Մարդկության պատմության մեջ աննախընթաց հանցագործություն կատարվեց: Ներքին գործերի նախարար Թալաաթ փաշայի ցինիկ հայտարարության համաձայն երեք ամսում երիտթուրքերը արեցին այն, ինչ երեսուն տարիների ընթացքում սուլթան Աբդուլ-Համիդը չկարողացավ կատարել: Թուրքական բարբարոսները, արեւմտյան կայսերապաշտները



հայկական հարցը ողջ ժողովրդի ոչնչացմամբ «լուծեցին»: Այդ բոլոր սարսափները մարդկանց հիշողության մեջ դեռ վառ են:

Այդ նոր ժամանակների պատմության մեջ ազգային հարցի լուծման եղանակի մարդակերական ցեղասպանության քաղաքականության առաջին դրսեւորումն էր: Պատահական չէ, որ իրականացնելով հրեաների, սլավոնների եւ Արևելյան Եվրոպայի ուրիշ ժողովուրդների ստրկացման եւ բնաջնջման քաղաքականությունը, Հիտլերը 1939թ. օգոստոսին ասաց, որ պատմությունը չի դատապարտի իրենց դրա համար, քանզի «Թուրքիայում հայերի կոտորածը մեր ժամանակ ոչ ոք չի հիշում»:[1]

Մարդկության պատմության մեջ աննախադեպ ցեղասպանության քաղաքականությունը ամբողջ աշխարհում զայրույթ առաջացրեց: Առաջադեմ հասարակայնության լավագույն ներկայացուցիչները այդ չարագործությունների դեմ իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին: Նրանց թվում հատկապես համարձակ հնչեց գերմանական ժողովրդի ականավոր զավակ Կառլ Լիբկնեխտի ձայնը, ով 1916թ. հունվարին Ռայխստագում իր ելույթում զայրույթով դապարտեց երիտթուրքերի բարբարոս քաղաքականությունը եւ նրանց հովանավորներին՝ ի դեմս գերմանական կայսերապաշտության:

Հայերի բնաջնջման թուրքական կառավարող շրջանների հանցավոր քաղաքականության զայրալից դատապարտմամբ հանդես եկան նաեւ Ս. Մ. Կիրովը, Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Անատոլ Ֆրանսը, Ռոմեն Ռոլլանը եւ ուրիշներ:

Ռուսաստանում պրոլետարական հեղափոխության հաղթանակով հարյուր հազարավոր հայ գաղթականներ եւ որբացած երեխաներ իրենց փրկությունը Հոկտեմբերի մեծ դրոշի ներքո գտան:

Հայ ժողովրդի պատմության այդ ողբերգական պահին միայն Խորհրդային Ռուսաստանը նրա իսկական բարեկամն ու փրկիչը դարձավ: Նա միջազգային ասպարեզում հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ հանդես եկավ: 1917թ. դեկտեմբերին հրատարակվեց «Թուրքական Հայաստանի մասին» դեկրետը: Վ.Ի.Լենինի եւ նրա համախոհների՝ Ստ. Շահումյանի, Ս.Օրջոնիկիձեի, Գ.Չիչերինի եւ շատերի, աշխատավոր ժողովրդի շահերին համապատասխան հայկական հարցի լուծման մեջ հսկայական շահագրգռվածությունը ցույց տվող բազմաթիվ ուրիշ փաստաթղթեր կան: Կոմունիստական կուսակցության քաղաքականությունը հայ ժողովրդին հնարավորություն տվեց բարձրանալ մոխրից, ոտքի կանգնել, սոցիալիզմի եւ կոմունիզմի կառուցման ուղի մտնել:

ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդը գիտության, տնտեսության եւ մշակույթի բոլոր բնագավառներում

---

[1] Ա. Հիտլերը 1939թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգում հրամկազմին ուղղված Լեհաստանի հարցի նվիրված ելույթում ասել է. **«Վերջիվերջո, ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը»**: Ըստ - **The New York Times**, October 18, 1942, p. 6.

հսկայական հաջողությունների հասավ: Հենց այդ պատճառով արտասահմանում հայ առաջադեմ հասարակայնությունն իր ապագան Խորհրդային Հայաստանում է տեսնում: Հազար եւ հազարավոր հայեր ձգտում են Խորհրդային Հայաստան վերադառնալ:

Դրա հետ մեկտեղ, իրենց հայրենիքից արտաքսված հայերը 1915 թվականի ողբերգությունը չեն կարող մոռանալ եւ ամեն տարի ապրիլին ցեղասպանության քաղաքականությունը դատապարտելով այդ տարեթիվը նշում են: 1965թ. ապրիլին լրանում է ողբերգական իրադարձության՝ հայերի զանգվածային կոտորածի, 50 տարին:

Արտասահմանում հայերը պատրաստվում են այդ տարեթիվը լայնորեն նշել:

Նախապատրաստական աշխատանքների ծավալների մասին է վկայում սփյուռքահայ առաջադիմական թերթերի էջերում այդ հարցին նվիրված հոդվածների եւ նյութերի օրեցօր աճող քանակը: Սփյուռքահայերի տարբեր հասարակական, մշակույթային եւ ուրիշ կազմակերպություններ իրենց գործունեությունը նկատելիորեն աշխուժացրել են: Անցկացվում են մրցույթներ, կատարվում են փորձեր 50-ամյակի նախապատրաստման հատուկ մարմիններ ստեղծելու, հայկական հարցի պատմության հետ համաշխարհային հասարակայնությանը ծանոթացնելու համար օտար լեզուներով գրականության հրատարակման, ինչպես նաեւ սփյուռքահայերի ազգային համագումարի նախապատրաստման համար: Պատրաստվում են ուղերձներ ՄԱԿ-ին:

Հակահեղափոխական, ազգայնական Դաշնակցություն կուսակցությունը ամեն կերպ փորձում է այդ հարցը հակախորհրդային տրամադրությունների բորբոքման նպատակով օգտագործել: Որպես հիմնական փաստարկ օգտագործելով այն փաստը, որ Խորհրդային Հայաստանում, որտեղ ապրում են Արեւմտյան Հայաստանից հարյուր հազարավոր հայ գաղթականներ, որոնց հիշողության մեջ դեռ վառ են 1915թ. ողբերգական իրադարձությունները, ոչ մի ձեւով չի նշվում հայերի զանգվածային կոտորածի տարեթիվը, դաշնակները պնդում այն մասին, իբր մեր երկրում թուրքական դահիճների ձեռքից անմեղ զոհված մեր հարյուր հազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերվում, եւ դրանով հանդերձ ցեղասպանության քաղաքականությունը առարկայաբար արդարացվում է: Մեզ թվում է, որ հայերի զանգվածային կոտորածների 50-ամյակի լռության մատնելը քաղաքականապես ձեռնտու չի լինի:

Կայսերապաշտների եւ համաթուրանականների քաղաքականության մերկացման նպատակով, ինչպես նաեւ արտասահմանում բնակվող եւ աշխույժ խաղաղության ու ժողովրդավարության համար պայքարող հայ աշխատավորների վրա մեր կապերի ու ազդեցության ուժեղացման համար, նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակի առթիվ կազմակերպել հետեւյալ միջոցառումները.



1. 1965թ. ապրիլին ԽՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի, ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի եւ Երեւանի պետական համալսարանի հետ համատեղ գիտական նստաշրջան անցկացնել:[1]

2. Հրատարակել հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը մերկացնող փաստաթղթերի նյութերի հավաքածու:[2]

3. Մամուլում եւ ռադիոյով այդ տարեթվին նվիրված հոդվածներ եւ նյութեր հրապարակել: Կազմակերպել կենտրոնական մամուլում հոդվածների հրապարակում:[3]

4. Հանձնարարել Սփյուռքահայության հետ մշակութային կապի Հայկական Կոմիտեին եւ Մշակութային կապերի Հայկական ընկերությանը արտասահմանյան մամուլին ուղարկելու համար հոդվածներ եւ նյութեր պատրաստել:[4]

5. Հանձնարարել Մշակույթի նախարարությանը, Հայաստանի նկարիչների եւ լրագրողների միություններին պատրաստել ցուցահանդես «Վերածնված հայ ժողովուրդը խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում» թեմայով:[5]

6. Նպատակահարմար գտնել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 44-րդ տարեդարձին նվիրված զեկույցում նշել հայերի կոտորածների 50-ամյակի քաղաքական նշանակությունը:[6]

7. Հանձնարարել Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղին, ԳԱ Պատմության ինստիտուտին, Արեւելագիտության սեկտորին ու «Գիտելիք» ընկերությանը ՀԿԿ Կենտկոմի հաստատմանը ներկայացնել զեկույցների եւ դասախոսությունների թեմաներ, որակյալ զեկուցողների ու դասախոսների ցուցակ:[7]

8. Բնակչության միջոցների հաշվին կառուցել առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի զոհերի հուշարձան: Հուշարձանը պետք է խորհրդանշի հայ ժողովրդի վերածնունդը:[8]

---

[1] Այս գիտական նստաշրջանը անցկացվեց 1965թ. ապրիլի 20-ին:

[2] **Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, պրոֆ. *Մ. Գ. Նեսիսյանի*** խմբագրությամբ, Երեւան, 1966, 1982 (ռուսերեն), 1991 (հայերեն):

[3] ***Մ.Ներսիսյան, Ն.Ուշակով*, «Գենոցիդը ամենածանր հանցագործությունն է մարդկության հանդեպ»**, «Պրավդա», 1965, ապրիլի 25, թ. 115, էջ 4: «Պրավդա»-ի մեր տեսած օրինակը տպվել է Թբիլիսիում: Հայերեն թարգմանությունը տես - **«Սովետական Հայաստան»**, 1965, ապրիլի 25, թ. 97:

[4] Պարզել չհաջողվեց:

[5] Նման միջոցառում կազմակերպվել է:

[6] Նման նշում եղել է:

[7] Նման հանձնարարություն կատարվել է:

[8] Ծիծեռնակաբերդի բլուրի վրա, 1967թ. նոյեմբերի 29-ին բացվել է 1915թ. Հայոց Ցեղասպանության նահատակների հուշահամալիրը:

9. Հանրապետության կինեմատոգրաֆիայի կոմիտեին հանձնարարել 1965թ. գարնանը թողարկել «Վերածնված ժողովուրդ» վավերագրական շարժանկար:[1]

10. 1965թ. գարնանը սփյուռքահայ խոշոր գաղութներում խորհրդային շարժանկարների փառատոններ կազմակերպել: Այդ շրջանում Խորհրդային Հայաստանի ձեռքբերումների քարոզչության համար արտասահման գիտության, գրականության եւ արվեստի աշխատողների ներկայացուցիչներից պատվիրակություններ ուղարկել:[2]

11. ԽՍՀՄ եղբայրական հանրապետությունների եւ սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների մասնակցությամբ 1965թ. մայիսի սկզբին Երեւանում «Գարնան եւ վերածննդի տոն» անցկացնել:[3]

ՄԼԻ-ի Հայկական մասնաճյուղի տնօրեն

*Աղայան Ծ. Պ.* [ստորագրություն]

ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորի վարիչ

*Ինճիկյան Հ. Գ.* [ստորագրություն]

ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ

*Կիրակոսյան Ջ. Ս.* [ստորագրություն]

16 հուլիսի 1964թ.
ք. Երևան

ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 66-73:

Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

[1] Դրա նկարահանման հարցը չհաջողվեց պարզել: 1965թ. «Երեւան» կինոստուդիան նկարահանել է 19 րոպեանոց **«Նամակները պատմում են»** վավերագրական շարժանկարը, (բեմադրիչներ՝ *Մ.Սաղաթելյան, Շ.Տատուրյան*), հայրենադարձների՝ հարազատներին գրած նամակների հիման վրա: Տես - **«Հայկական կինո - Լիակատար կատալոգ, 1924-1999»**, Երեւան, 2000:

[2] Պարզել չհաջողվեց:

[3] Ապրիլի 24-ի նախօրեին մի քանի օրեր շարունակ Երեւանում տեղի էին ունենում Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի մայրաքաղաքների ներկայացուցիչների օրեր: Նման հանձնարարություն կատարվել է: Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների մասնակցության վերաբերյալ չհաջողվեց պարզել:



## Թ Ի Վ 3

**[Յա. Զարոբյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին Եղեռնի 50-ամյակը նշելու վերաբերյալ]**

## ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ

### 1915 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԵՐԻ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԲՆԱՋՆՋՄԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ [1]

1965 թվականի ապրիլին լրանում է հայերի զանգվածային բնաջնջման 50 տարին: 1915 թվականին, առաջին համաշխարհային պատերազմում, Արեւմտյան Հայաստանում, ինչպես նաեւ Թուրքիայի ուրիշ քաղաքներում եւ վայրերում ապրող երեք միլիոնանոց հայկական բնակչությունը ենթարկվեց զանգվածային կոտորածի, աքսորի եւ բնաջնջման: Դա սուլթանական Թուրքիայի կառավարող հանցախմբի կողմից խոշոր մասշտաբներով ցեղասպանության մարդատյաց քաղաքականության իրականացում էր:

Օտտոմանյան կայսրությունում հայերի ֆիզիկական բնաջնջման ճանապարհով հայկական հարցի «լուծման» ծրագրերը իրականացվում էին դեռ 19-րդ դարի 70-90-ական թվականներին սուլթան Աբդուլ-Համիդի կողմից: Այդ քաղաքականությունը ավելի լայն մասշտաբներով շարունակեցին երիտթուրքերը: Նրանց ծրագրերը բխում էին Ռուսաստանից Կովկասի եւ որոշ այլ տարածքների անջատման Թուրքիայի տիրապետող շրջանների համաթուրանական նվաճողական ձգտումներից: Այդ ծրագրերի իրականացման ճանապարհին, երիտթուրքերի հայտարարությամբ, կանգնած էր հնուց եւ ավանդաբար իր պատմական ճակատագիրը Ռուսաստանի հետ կապել ձգտող հայ ժողովուրդը:

Սկսած 1915 թվականի գարնանից այն ժամանակվա Թուրքիայի կառավարող հանցախումբը անմիջապես ձեռնարկեց հայերի ֆիզիկական ոչնչացման-ցեղասպանության քաղաքականության գործնական իրականացումը: Կանխամտածված ոչնչացվում էին հայ մտավորականության ներկայացուցիչները: Գազանային հաշվեհարդար բաժին հասավ խոշորագույն հայ գրողներ Զոհրաբին, Վարուժանին, Սիամանթոյին եւ շատ ուրիշներին: Զանգվածային ահաբեկչության զոհ դարձավ եւ հանրահայտ հայ կոմպոզիտոր Կոմիտասը: Այդպիսի ճանապարհով բնաջնջվեցին մոտ մեկ ու կես միլիոն հայեր, այդքան էլ փրկվեցին փախուստով և աշխարհով մեկ սփռվելով:

[1] Պատճենը ժամանակավոր ծանոթանալու եւ անպայման վերադարձնելու պայմանով Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վ. Ախունդովի խնդրանքով ՀԿԿ Կենտկոմի Հատուկ սեկտորի վարիչ Խ. Խաչխայանը 1965թ. ապրիլի 3-ին ուղարկել է՝ ***«անձամբ Նրան հանձնելու»*** շեշտմամբ:-ՀԱԱ, ֆ.1,ց.45,գ.44, թ.47:

Բազմաթիվ դարերի ընթացքում հայ ժողովրդի կողմից ստեղծված նյութական և մշակութային արժեքները, պատմական եւ ճարտարապետական հուշարձանները բարբարոսական ոչնչացման եւ թալանի ենթարկվեցին, կրակի հանձնվեցին: Արեւմտյան Հայաստանը ամայացվեց:

Այն ժամանակվա Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ցինիկ հայտարարությամբ երեք ամիսների ընթացքում կատարվեց այն, ինչը սուլթան Աբդուլ Համիդը երեսուն տարիների ընթացքում չկարողացավ անել: Թուրքական ազգայնամոլները արեւմտյան կայսերապաշտների հավանությամբ հայկական հարցը ողջ ժողովրդի ոչնչացման ճանապարհով էին ցանկանում «լուծել»: Դա ցեղասպանության քաղաքականության՝ որպես ազգային հարցի լուծման մարդակերական եղանակի, դրսեւորում էր: Իզուր չէ, որ Հիտլերը, իրականացնելով հրեաների, սլավոնների եւ Արեւելյան Եւրոպայի ուրիշ ժողովուրդների բնաջնջման քաղաքականությունը, 1939թ. օգոստոսին ասել է, որ պատմությունը չի դատապարտի գերմանացիներին դրա համար, քանզի «մեր ժամանակ ոչ ոք չի հիշում Թուրքիայում հայերի բնաջնջումը»:

Հայ ժողովրդի կողմից ապրած այն տարիների սարսափները դեռ վառ են նրա հիշողության եւ ուրիշ ժողովուրդների հիշողության մեջ:

Թուրքական ռասիստների աննախադեպ գազանությունները, հայերի զանգվածային կոտորածները եւ ջարդերը ամբողջ աշխարհի զայրույթ առաջացրեցին, այդ թվում եւ նույն Թուրքիայի առաջադեմ հասարակայնության շրջանում: Առաջադեմ հասարակայնության լավագույն ներկայացուցիչներն այդ չարագործությունների դեմ բողոքի ծայն բարձրացրեցին: Նրանց մեջ հատկապես համարձակ հնչեց գերմանական ժողովրդի ականավոր զավակ Կառլ Լիբկնեխտի ծայնը, ով 1916թ. հունվարին ռեյխստագում իր ելույթում դատապարտեց երիտթուրքերի բարբարոսական քաղաքականությունը եւ նրանց հովանավորներին՝ ի դեմս գերմանական կայսերապաշտության: Հայերի բնաջնջման հրեշավոր քաղաքականության դատապարտմամբ հանդես եկան Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Անատոլ Ֆրանսը, Ռոմեն Ռոլլանը եւ շատ ուրիշներ:

Հայ ժողովրդի պատմության ամենից ողբերգական օրերին միայն Խորհրդային Ռուսաստանը նրա իսկական բարեկամը եւ փրկիչը դարձավ: Նա հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ հանդես եկավ: 1917 թ. դեկտեմբերին հրատարակվեց «Թուրքական Հայաստանի մասին» դեկրետը: Գոյություն ունեն մի շարք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս թե ինչ հսկայական հետաքրքրություն էին ցուցաբերում Վ.Ի.Լենինը եւ նրա համախոհները՝ Ստ.Շահումյանը, Ս.Կիրովը, Ս.Օրջոնիկիձեն, Գ. Չիչերինը եւ ուրիշներ, աշխատավոր ժողովրդի ակնկալիքներին համապատասխան հայկական հարցի լուծման նկատմամբ: Վ.Ի.Լենինի նախաձեռնությամբ Խորհրդային Ռուսաստանը, չնայած ծանր պայմաններին, հայ գաղթականներին եղբայրական օգնություն ցուցաբերեց՝ հարյուր հազարավոր փրկված հայերի Հյուսիսային Կովկասում, Ղրիմում եւ հանրապետության մյուս մարզերում ապաստան տալով, նրանց բնակարան, պարեն եւ նյութական միջոցներ տրամադրելով: Դրանով իսկ տասնյակ հազարավոր հայ գաղթականների կյանքը փրկվեց:



Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումից, Խորհրդային Միության անբաժան մաս Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմավորումից հետո՝ շնորհիվ Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության իրականացման, հայ ժողովուրդը ոչ միայն հնարավորություն ստացավ բարձրանալ մոխրից եւ ոտքի կանգնել, այլեւ կանգնեց սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման ճանապարհին: ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդը տնտեսության, մշակույթի եւ գիտության բոլոր ոլորտներում հսկայական հաջողությունների հասավ:

Հայ ժողովրդի ճակատագրի մասին Խորհրդային կառավարության հոգածության վառ արտահայտությունն էր Խորհրդային Հայաստան հայերի ծրագրավորված հայրենադարձության կազմակերպումը: Խորհրդային իշխանության տարիներին շուրջ 200 հազար հայեր վերադարձան Հայրենիք:

Հենց դրա համար կոտորածից փրկված եւ ամբողջ աշխարհում թափառող հայերի գերակշիռ մեծամասնությունն իր ապագան Խորհրդային Հայաստանի հետ է կապում:

Սփյուռքահայ գաղութներում, որտեղ ապրում է շուրջ 1.5 միլիոն մարդ, ամեն տարի ապրիլին այդ տարեթիվը ցեղասպանության քաղաքականության դատապարտման նշանի ներքո է նշվում: Հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի մոտեցման կապակցությամբ արտասահմանյան երկրներում հայկական առաջադիմական թերթերի եւ հանդեսների էջերում մեծ քանակությամբ հոդվածներ եւ նյութեր են հրատարակվում: Սփյուռքահայերի տարբեր հասարակական, մշակութային եւ այլ կազմակերպություններ իրենց գործունեությունը նկատելիորեն աշխուժացրել են: Ստեղծվում են 50-ամյակի նախապատրաստման հատուկ մարմիններ, հրատարակվում է հայերեն եւ օտար լեզուներով գրականություն:

Սփյուռքահայ հետադեմ ուժերն այդ տարեթիվը շահադիտական եւ սադրիչ նպատակներով են ծգտում նշել: Որպես հիմնական փաստարկ օգտագործելով այն փաստը, որ Խորհրդային Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման տարեդարձերը ոչ մի ձեւով չեն նշվում, հակահեղափոխական, ազգայնական «Դաշնակցություն» կուսակցությունը պնդում է, որ իբր թե մեր երկրում թուրքական դահիճների ձեռքից անմեղ զոհված մեր հարյուր հազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերվում, եւ որ իբր դրանով իսկ մեզ մոտ ցեղասպանության քաղաքականությունը առարկայաբար արդարացվում է:

Ելնելով այդ ամենից, նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակը Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակի, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո նշել:

Այդ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի այնպես, որպեսզի այն բացասաբար չազդի հարևան երկրների հետ եւ մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունների բարելավման քաղաքականության վրա, եւ հետապնդի նպատակ, որպեսզի ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգություն այլեւս չկրկնվի:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Նախագահությունը այդ առթիվ անհրաժեշտ է համարում իրականացնել հետեւյալ միջոցառումները.

1. Մամուլում եւ ռադիոյով դրան նվիրված հոդվածներ ու նյութեր հրապարակել ու հաղորդել, ուր դասակարգային, մարքս-լենինյան դիրքից իրադարձությունների նկատմամբ մեր վերաբերմունքը կարտացոլվի, քարոզել Կոմկուսի եւ Խորհրդային կառավարության անշեղ իրականացվող խորհրդային ժողովրդի պայքարը հանուն ամբողջ աշխարհում խաղաղության եւ ժողովուրդների բարեկամության քաղաքականության: ***Նշել Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների բարելավման կարեւորությունը, մշակութային եւ տնտեսական կապերի ամրապնդման ուղղությամբ կատարված առաջին քայլերի՝ մասնավորապես սահմանային Մխուրյան գետի վրա Մխուրյանի ջրամբարի համատեղ շինարարության վերաբերյալ ձեռքբերված համաձայնության մասին:***[1] Դրա հետ մեկտեղ, մերկացնել ազգային թշնամանք հրահրող կայսերապաշտների եւ նրանց գործակալ դաշնակների սադրիչ գործողությունները:

2. 1965թ. ապրիլին Երեւանում անցկացնել 50-ամյակին նվիրված հասարակայնության ներկայացուցիչների ժողով. «Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ հայ ժողովրդի վերածնունդը» օրակարգով: ***Ժողովին հրավիրել սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչներին:***

3. Երեւանում կանգնեցնել առաջին համաշխարհային պատերազմում զոհված հայ նահատակներին նվիրված կոթող:

Կոթողը պետք է խորհրդանշի հայ ժողովրդի վերածնունդը:

4. ***1965թ. գարնանը խոշոր սփյուռքահայ գաղութներում կազմակերպել խորհրդային ֆիլմերի փառատոններ եւ խորհրդահայ գրքերի ցուցահանդեսներ: Այդ ընթացքում խորհրդային Հայաստանի նվաճումների քարոզչության համար սփյուռքահայ գաղութներ ուղարկել գիտության, գրականության եւ արվեստի աշխատողների պատվիրակություն:***

Խնդրում ենք թույլատրել:

[1] 1964թ. նոյեմբերին նամակի նախնական տարբերակում ձեռագրով ավելացված են շեղատառ եւ ընդգծված հատվածները: - ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 70, թթ. 170-174:



ՀԿԿ Կենտկոմի քարտուղար

***Յա. Զարոբյան***

13 դեկտեմբերի 1964թ.
թիվ 1012/գ[1]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 170-174:
Թարգմանություն ռուսերենից: Պատճեն: Մեքենագիր:

**Թ Ի Վ 4**

**[Ա. Քոչինյանի նամակը ՀԿԿ Կենտկոմին հայրենադարձության վերաբերյալ][2]**

***Գաղտնի***

**Հ Կ Կ Կ Ե Ն Տ Կ Ո Մ Ի Ն**

ՀԿԿ Կենտկոմի եւ ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի 1961թ. սեպտեմբերի 29-ի որոշմամբ հաստատվել է արտասահմանից հայերի 1965 թվականին 15 հազար մարդկանց ընդունման պլան:

Հաշվի առնելով, որ մի շարք արտասահմանյան երկրների կառավարություններ զանգվածային հայրենադարձության համաձայնություն չտվեցին, ինչպես նաեւ լավագույն աշխատատեղավորման նպատակներով, ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը նպատակահարմար է գտնում արտասահմանից հայերի ընդունման 1965 թվականի պլանը 15 հազարի փոխարեն հաստատել 6 հազար մարդ:

Ներկայացնելով 1965 թվականին արտասահմանից հայերի ընդունման որոշման նախագիծը Նախարարների Խորհուրդը խնդրում է քննարկել:

Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհուրդի Նախագահ

***Ա. Քոչինյան*** [ստորագրություն]

9 հունվարի 1965թ.
թիվ 2/9

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 49:

Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

[1] գ - գաղտնի:
[2] 1964թ. մարտի 6-ին Նախարարների Խորհուրդը որոշում էր ընդունել հայրենադարձների ընդունման միջոցառումների մասին: - ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 70, թթ. 2-6:

## Թ Ի Վ 5

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը սփյուռքահայ ուսուցիչների հրավիրման մասին]**

*Յույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 4 8**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**26 հունվարի 1965թ.**

**Կետ 9. Սփյուռքահայ դպրոցների ուսուցիչներին Հայկական ԽՍՀ հրավիրման մասին**

(ընկ. Ս. Թովմասյան)
Արտահայտվեց՝ ընկ. Յա. Զարոբյանը

Սփյուռքահայ գաղութներում եւ առաջին հերթին աճող սերնդի շրջանում Խորհրդային Հայաստանի ձեռքբերումների քարոզչության ուժեղացման նպատակով ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշում է.

1. Ընդունել ՀԽՍՀ Լուսավորության նախարարության առաջարկը 1965թ. ամռանը վերապատրաստման դասընթացների հրավիրել 45 օր ժամկետով սփյուռքահայ դպրոցների ուսուցիչների խմբի՝ 30 հոգի:

2. Հանձնարարել Արտաքին գործերի նախարարությանը եւ Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեին երկամսյա ժամկետում ներկայացնել հրավիրվելիք ուսուցիչների ցուցակը:

3. Հանձնարարել ՀԽՍՀ Լուսավորության նախարարությանը միջոցառումների մշակել արտասահմանյան ուսուցիչների խմբի հետ նրա պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման ուղղությամբ աշխատանքների կազմակերպման համար:

4. Պարտավորեցնել Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեին՝ Լուսավորության նախարարության հետ համատեղ սփյուռքահայ դպրոցների ուսուցիչների խմբի հետ քաղաքական եւ մշակութային-զանգվածային աշխատանքի կազմակերպման կոնկրետ ծրագիր մշակել:

5. Հանձնարարել ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին քննարկել հանրապետություն վերոնշյալ խմբի հրավիրման հետ կապված կազմակերպչական եւ ֆինանսական հարցերը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
***Յա. Զարոբյան*** [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 47:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:



## Թ Ի Վ 6

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը հայրենադարձության վերաբերյալ]**

*Յույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 4 8**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**26 հունվարի 1965թ.**

**Կետ 10. 1965թ. արտասահմանից հայերի ընդունման մասին**

(ընկ. Ս. Վարդանյան)

Արտահայտվեցին ընկերներ Գ. Տեր-Ղազարյանցը, Հ. Բաղդասարյանը, Յա. Զարոբյանը

1. Հաստատել արտասահմանից Հայկական ԽՍՀ վերադարձող հայերի ընդունման 1965թ. համար 6 հազար մարդ քանակ:

2. Հանձնարարել Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեին մեկամսյա ժամկետում Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդի հաստատմանը ներկայացնել ըստ բնակության վայրերի հայրենադարձների տեղաբաշխման պլան:

3. Պարտավորեցնել Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեին, կուսակցության քաղկոմներին եւ շրջկոմներին, աշխատավորների պատգամավորների քաղաքային եւ գյուղական Խորհուրդների գործկոմներին նոր ժամանող քաղաքացիների կազմակերպված ընդունման եւ տեղավորման, նրանց բնակարանով ապահովման, աշխատանքի տեղավորման հարցերի ժամանակին եւ օպերատիվ ձեւով լուծման ուղղությամբ միջոցներ ընդունել:

4. Հաստատել արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման Կառավարական հանձնաժողով հետեւյալ կազմով՝ ընկ. ընկ. Ս.Հ.Մովսեսյան (նախագահ), Հ.Մ.Բաղդասարյան, Ս.Վ.Առաքելյան, Բ.Գ. Մարտիրոսյան, Գ.Տ.Գեւորգյան, Գ.Ա.Բադամյանց, Ս.Ա.Արզումանյան:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար

***Յա. Զարոբյան*** [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 48
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 7

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը «Հայրենիքի ձայն»-ի հրատարակման մասին]**

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 4 8**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**26 հունվարի 1965թ.**

**Կետ 11. «Հայրենիքի ձայն» թերթի հրատարակման մասին**

(ընկ. Ս. Վարդանյան)

Արտահայտվեցին՝ ընկերներ Հ. Բաղդասարյանը, Յա. Զարոբյանը

Արտասահմանում ապրող հայ աշխատավորների վրա ազդեցության ուժեղացման, Կոմունիստական կուսակցության ներքին եւ արտաքին քաղաքականության, հանրապետության տնտեսության, գիտության, մշակույթի ձեռքբերումների քարոզչության, բուրժուական գաղափարախոսության դեմ հակաքարոզչության հաջող վարման նպատակներով,

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշում է.

Հիմնել Սփյուռքահայության հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեի կողմից հրատարակվելիք «Հայրենիքի ձայն» թերթ: Հաստատել. թերթի պարբերականությունը՝ շաբաթը մեկ, տպաքանակը՝ 7 հազար օրինակ, չափսը՝ «Պրավդա»-ի 4-ական սյունակներով, հոնորարը՝ 350 ռուբլի մեկ համարին, յուրաքանչյուր համարի գինը՝ 5 կոպեկ:

Խնդրել ԽՄԿԿ Կենտկոմին թույլատրել:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան* [ստորագրություն]

### ՀԱՎԵԼՎԱԾ

**«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագրության աշխատակիցների հաստիքները եւ աշխատավարձի դրույքաչափերը**

| | Պաշտոնի անվանումը | Միավորների քանակը | Պաշտոնական դրույքը |
|---|---|---|---|
| 1 | Խմբագիր | 1 | 200 |
| 2 | Պատասխանատու քարտուղար | 1 | 180 |
| 3 | ԽՍՀՄ տնտեսության եւ մշակույթի նվաճումների | 1 | 125 |



| | | | |
|---|---|---|---|
| | քարոզչության բաժնի վարիչ | | |
| 4 | Սփյուռքահայ գաղութների գծով բաժնի վարիչ | 1 | 125 |
| 5 | Նամակների բաժնի վարիչ | 1 | 125 |
| 6 | Գրական աշխատող | 2 | 85+85 |
| 7 | Ֆոտոթղթակից | 1 | 70 |
| 8 | Թողարկող | 1 | 80 |
| 9 | Սրբագրիչ | 2 | 80+80 |
| 10 | Գործավար-մեքենագրուհի | 1 | 60 |
| 11 | Մեքենագրուհի | 1 | 60 |
| 12 | Ավագ հաշվապահ | 0,5 | 90/45 |
| 13 | Տնտեսվար-գանձապահ | 1 | 60 |
| 14 | Հավաքարար | 1 | 40 |
| 15 | Ցրիչ | 1 | 40 |

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թթ. 51-52:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 8

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը հայրենադարձների ժողովի վերաբերյալ]**

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 1 3**
**ՀԿԿ Կենտկոմի Քարտուղարության նիստի**
**8 փետրվարի 1965թ.**

**Կետ 1. Հայրենիք վերադարձած հայերի ներկայացուցիչների ժողովի անցկացման մասին[1]**

(ընկ. Ս. Վարդանյան)

Արտահայտվեցին՝ ընկերներ Հ. Բաղդասարյանը, Գ. Տեր-Ղազարյանցը, Յա. Զարոբյանը

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Քարտուղարությունը որոշում է.

[1] ժողովի մասին տես - **«Սովետական Հայաստան»**, 1965, մարտի 13:

1. 1965թ. մարտի 12-ին Երեւանում անցկացնել արտասահմանից վերադարձած հայերի ներկայացուցիչների ժողով՝ «Խորհրդային Հայաստանը բոլոր աշխատավոր հայերի հայրենիքն է» օրակարգով:

Ձեկուցող հաստատել ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ ընկ. Ն. Խ. Հարությունյանին:

2. ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին պարտավորեցնել ժողովի նախապատրաստման եւ անցկացման համար նախատեսել անհրաժեշտ միջոցներ:[1]

3. Հաստատել ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնի ներկայացրած ժողովի անցկացման ծրագիրը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան* [ստորագրություն]

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
### Հայրենիք վերադարձած հայերի ներկայացուցիչների ժողովի նախապատրաստման եւ անցկացման

1. ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնին հանձնարարել.

ա) Մինչեւ փետրվարի 20-ը պատրաստել ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Նախարարների Խորհրդին եւ Գերագույն Խորհրդի Նախագահությանը, ՀԿԿ Կենտկոմին, Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդին եւ Գերագույն Խորհրդի Նախագահությանը ուղղված ողջույնի նամակի տեքստը,

բ) Մինչեւ փետրվարի 20-ը պատրաստել մինչեւ 50 հոգի հայրենադարձների ցուցակ Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատվոգրով պարգեւատրելու համար,

գ) Մամուլում, ռադիոյով եւ հեռուստատեսությամբ, կինոյով ապահովել հավաքի եւ իրականացվող միջոցառումների լայն լուսաբանումը:

2. ՀԿԿ Կենտկոմի մշակույթի եւ գիտության բաժնին հանձնարարել մինչեւ փետրվարի 20-ը պատրաստել հայրենադարձների ցուցակներ պատվավոր կոչումներ (ժողովրդական, վաստակավոր դերասանի, գիտության վաստակավոր գործիչի, ուսուցչի, բժշկի եւ ուրիշների, յուրաքանչյուր մասնագիտությունից 5-10 մարդ), արդյունաբերության եւ տրանսպորտի բաժնին՝ վաստակավոր ճարտարագետի, նորարարի, գյուտարարի, երկրաբանի, շինարարության բաժնին՝ վաստակավոր շինարարի, շնորհելու համար:

3. ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին հանձնարարել մինչեւ փետրվարի 20-ը ներկայացնել հյուրերի սպասարկման (տրանսպորտ, հյուրանոց, սնունդ, ընդունելության կազմակերպում 250 հոգու համար) ծրագիր:

[1] ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը 1965թ. փետրվարի 25-ին ընդունեց համապատասխան թիվ 140 կարգադրությունը:



## ԾՐԱԳԻՐ
### Հայրենիք վերադարձած հայերի ներկայացուցիչների ժողովի նախապատրաստման եւ անցկացման

1. Ժողովը անցկացնել Օպերայի եւ բալետի թատրոնի շենքում:
2. Հանրապետության հետեւյալ քաղաքներից եւ շրջաններից հրավիրել.

Երեւանից - 400 մարդ
Լենինականից - 100 մարդ
Կիրովականից - 100 մարդ

Շրջաններ՝

Հրազդանի - 50 մարդ
Հոկտեմբերյանի - 50 մարդ
Արտաշատի - 30 մարդ
Էջմիածնի - 25 մարդ
Վեդիի - 25 մարդ
Աշտարակի - 5 մարդ
Իջեւանի - 20 մարդ
Ալավերդու - 5 մարդ
տարբեր հյուրեր - 400 մարդ

ընդհանուր - 1230 մարդ

3. Բացման խոսք - Ա. Ե. Քոչինյան - 5 րոպե:
4. «Խորհրդային Հայաստանը բոլոր աշխատավոր հայերի հայրենիքն է» - Ն. Խ. Հարությունյան - 30 րոպե:
5. Ելույթներ.

Վ. Համբարձումյան - 5 րոպե
Ս. Կապուտիկյան - 5 րոպե
Պ. Սեւյան - 5 րոպե
Հայրենադարձ-ուսանող - 5 րոպե
Հայրենադարձ-քարավանի ղեկավար - 5 րոպե
Հայրենադարձ-արվեստի գործիչ - 5 րոպե
Յա. Զարոբյան - 20 րոպե

6. Դպրոցականների ողջույն - 10 րոպե
7. Պատվոգրերով եւ վաստակավոր կոչումներով պարգեւատրելու մասին Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրերի ընթերցում (Ա. Գալստյան[1]) - 10 րոպե
8. ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Նախարարների Խորհրդին եւ Գերագույն Խորհրդի Նախագահությանը, ՀԿԿ Կենտկոմին, Հայկական ԽՍՀ Նախա-

[1] ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության քարտուղար:

րարների Խորհրդին եւ Գերագույն Խորհրդի Նախագահությանը ուղղված ողջույնի նամակի ընթերցում - 10 րոպե

---

մինչեւ 2,5 ժամ

9. Համերգ երկու բաժանմունքից

1-ին բաժանմունք - հայրենադարձների մասնակցությամբ գեղարվեստական ինքնագործունեության ելույթ

2-րդ բաժանմունք - արհեստավարժ-արտիստներ, հայրենադարձներ, Գ. Գասպարյան, Մ. Երկաթ, Ա. Թութունջյան, Օ. Դուրյան (սիմֆոնիկ նվագախմբով), Հ. Չեքիջյան (երգչախմբով) եւ ուրիշներ, երգի եւ պարի համույթ, պարի համույթ:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 31, թթ. 39-42:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 9

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին]**

*Յույժ զաղտնի*

**Արձանագրություն թիվ 52**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**15 փետրվարի 1965թ.**

**Կետ 3. Հայերի զանգվածային բնաջնջման զոհերի հիշատակի կոթողի կառուցման մասին Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդի որոշման նախագիծը**

(ընկ. Ա. Քոչինյան)

Արտահայտվեցին՝ ընկերներ Հ. Բաղդասարյանը, Յա. Զարոբյանը

Հաստատել 1915 թվականին հայերի զանգվածային բնաջնջման արդյունքում զոհվածների հուշարձանի կառուցման մասին Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդի որոշման նախագիծը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար

*Յա. Զարոբյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 6, թ.171:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:



## Թ Ի Վ 10

**[Յա. Զարոբյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին «Հայրենիքի ծայն»-ի հրատարակման մասին]**

**Խ Մ Կ Կ Կ Ե Ն Տ Կ Ո Մ Ի Ն**

Ներկայումս արտասահմանյան երկրներում ապրում են շուրջ մեկ ու կես միլիոն հայեր:

Հայկական գաղթավայրերի բնակչության գերակշիռ մասը հայրենասիրաբար է տրամադրված, իրենց միակ հայրենիք են ճանաչում Խորհրդային Հայաստանը, խանդավառությամբ են ընդունում հանրապետության եւ ողջ Խորհրդային Միության տնտեսական եւ մշակութային զարգացման հսկայական հաջողությունների վերաբերյալ ցանկացած լուր:

Հայկական առաջադիմական կուսակցությունները եւ կազմակերպությունները պայքար են մղում կայերապաշտների ձեռքում հակախորհրդային քարոզչության խոսափող ծառայող հակահեղափոխական, ազգայնական «դաշնակցություն» կուսակցության հետ: Բուրժուական կառավարություններից ստանալով առատածեռն նյութական աջակցություն դաշնակները Բեյրութում, Կահիրեում, Թեհրանում, Աթենքում, Նյու-Յորքում հրատարակում են բազմաթիվ ճրաթերթեր եւ մեծ քանակի շաբաթաթերթր եւ ամսագրեր:

Առաջադիմական կազմակերպությունները ի վիճակի չեն նրանց հակադրել իրենց հրատարակությունների բավարար քանակություն, ինչը դժվարացնում է Խորհրդային Միության, Հայկական ԽՍՀ ձեռքբերումների քարոզչությունը:

Արտասահմանում ապրող հայ աշխատավորության վրա մեր ազդեցության հետագա ուժեղացման, կոմունիզմի գաղափարների, Կոմունիստական կուսակցության եւ Խորհրդային կառավարության ներքին եւ արտաքին քաղաքականության, Խորհրդային Հայաստանի տնտեսության, գիտության, մշակույթի ձեռքբերումների քարոզչության, բուրժուական գաղափարախոսությունների դեմ հակաքարոզչությունների նպատակներով ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը 1965 թվականի հունվարի 26-ին որոշեց հիմնել Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեի հրատարակություն «Հայրենիքի ծայն» թերթ՝ սփյուռքահայ գաղթավայրերում տարածելու համար: «Հայրենիքի ծայն» թերթի նյութերը նշանակալից օգնություն ցույց կտան բուրժուական ազգայնականների-դաշնակների դեմ պայքարում հայկական առաջադիմական կազմակերպություններին, ընկերությունների, միություններին:

**Խնդրում ենք թույլատրել «Հայրենիքի ծայն» թերթի հրատարակությունը:**

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան*

„ „ փետրվարի 1965թ.

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 35:
Թարգմանություն ռուսերենից: Մեքենագիր պատճեն:

**Թ Ի Վ 11**

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը Սփյուռքի հետ կապերի ընդլայնման մասին]**

*Յույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 53**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**2 մարտի 1965թ.**

**Կետ 5. Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի ընդլայնման միջոցառումների մասին**

(ընկ. Ս. Վարդանյան)

Արտահայտվեցին՝ ընկերներ Հ. Բաղդասարյանը, Ա. Մարտիրոսյանը, Յա. Զարոբյանը

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը նշում է, որ վերջին տարիներին հանրապետությունում կատարվել է որոշակի աշխատանք արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի զարգացման ուղղությամբ: Եթե 1958թ. կապ էր պահպանվում 23 երկրների 53 կազմակերպությունների հետ, ապա ներկայումս միայն Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի գծով կապեր են ձեւավորվել 42 երկրների 860 կազմակերպությունների եւ առանձին անհատների հետ: Սփյուռքահայության հետ մշակութային կապեր են պահպանում նաեւ հանրապետության Գիտությունների ակադեմիան, Մատենադարանը, Պետական համալսարանը, Պետական պատմական թանգարանը եւ ուրիշ կազմակերպություններ:

Խորհրդային Հայաստանի նվաճումների քարոզչության, սփյուռքահայ գաղութների առաջադիմական կազմակերպությունների եւ բնակչության վրա գաղափարական ազդեցության ուժեղացման գործում օգտագործվում են աշխատանքի այնպիսի ձեւեր, ինչպես արտասահմանյան գրականության, շարժանկարների, ձայնասկավառակների, լուսանկարների ցուցադրության ուղարկումը, սփյուռքահայ մամուլում հրապարակման համար հոդվածների եւ նյութերի ուղարկումը, գեղարվեստական կոլեկտիվների, առանձին գրողների, գիտնականների, դերասանների,



մարզական պատվիրակությունների այցելությունները: 1964թ. արտասահմանյան կազմակերպություններին պարբերաբար ուղարկվել են 24 անվանում թերթեր եւ ամսագրեր, 32 հազար գիրք, 3 անվանում 32 օրինակ հայկական խորհրդային շարժանկարներ, դպրոցների համար 17 հազար դասագրքեր, ֆիզիկայի եւ քիմիայի դպրոցական լաբորատորիաների համար սարքավորումներ: Արտասահման հյուրախաղերի են մեկնել Երգի-պարի պետական համույթը, Պարի պետական համույթը, հանրապետության առաջատար դերասանների խումբը եւ ուրիշներ:

Արտասահմանում հայկական դպրոցների հետ կապերի ուժեղացման ուղղությամբ տարվում է լուրջ աշխատանք: Բարելավվել են սփյուռքահայ կանացի կազմակերպությունների հետ շփումները:

Հանրապետության աշխատավորության կյանքի հետ սփյուռքահայերի ծանոթացման համար Խորհրդային Հայաստան են հրավիրվում առաջադեմ հասարակական գործիչներ, գրողներ, գիտնականներ եւ այլոք: Սփյուռքահայ կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցեցին Հայաստանի խորհրդայնացման եւ Կոմունիստական կուսակցության 40-ամյակի, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի, Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի եւ ուրիշ միջոցառումների տոնակատարությանը: Այդ գործում կարեւոր դեր է խաղում նաեւ Խորհրդային Հայաստան հայ-գբոսաշրջիկների այցելությունը: Վերջին երեք տարիների ընթացքում միայն «Ինտուրիստ»-ի գծով հանրապետություն են այցելել տարբեր երկրներում ապրող ավելի քան 2630 հայրենակիցներ: Սփյուռքահայ դպրոցների ուսուցիչների համար հանրապետությունում ստեղծվել են որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք արդեն ավարտել են 70 հոգի: Անցյալ տարում հանրապետության պիոներական ճամբարներում հանգստացել են հայերի երեխաներ Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից: Հանրապետության բուհերում ներկայումս սովորում են մոտ 200 ուսանող-հայեր արտասահմանից:

Տարվում է աշխատանք եւ հանրապետության հասարակայնությանը սփյուռքահայ գաղութների կյանքի հետ ծանոթացնելու ուղղությամբ:

Այս ամենի հետ մեկտեղ, ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը գտնում է, որ արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի ընդլայնման եւ ամրապնդման գործում առկա են էական բացթողումներ:

Սփյուռքահայ գաղութների աշխատավորության շրջանում դեռեւս անբավարար չափով է քարոզվում արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության ոլորտներում հանրապետության ձեռքբերումները, կոմունիզմի շինարար-խորհրդային մարդու բարձր բարոյական հատկանիշները:

Իրականացվող աշխատանքում անբավարար են հաշվի առնվում սփյուռքահայ գաղութներում քաղաքական իրավիճակի առանձնահատկությունները, տարբեր խմբերի, կազմակերպությունների, հայրենակցական միությունների առկայությունը:

Դեռեւս թույլ են Խորհրդային Հայաստանի նկատմամբ լոյալ հարաբերություններ ցուցաբերող հայրենակցական միությունների հետ շփումները:

Արտասահման ուղարկված գրականությունը, շարժանկարները, ձայնասկավառակները եւ այլն չեն բավարարում հայկական գաղութների հարաճուն պահանջները ինչպես քանակական, այնպես էլ թեմատիկ առումներով:

Հայրենակիցների հետ մշակութային կապերի ամրապնդման համար անբավարար են օգտագործվում հանրապետություն այցելող հայզբոսաշրջիկները:

Արտասահման ուղարկվող նյութերի գործում բացակայում է անհրաժեշտ օպերատիվությունը: Արտասահման ուղարկված քարոզչական նյութերը եւ հոդվածները չեն արտացոլում այն արագ փոփոխությունները, որոնք տեղի են ունենում հանրապետության տնտեսության մեջ, դրանցում չկա նրա նոր ճյուղերի բուռն աճի, մշակութային կյանքի նորույթների եւ այլնի ցուցադրումը:

Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի ընդլայնման նպատակով ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշում է.

1. Սփյուռքահայության հետ կապեր պահպանող մյուս հանրապետական կազմակերպությունների գլխավոր խնդիրը համարել սփյուռքահայերի առաջադիմական կազմակերպությունների հետ կապերի բազմակողմանի ընդլայնման մասին Հայաստանի Կոմկուսի 22-րդ եւ 23-րդ համագումարների որոշումների անշեղ իրականացումը, նրանց ուժերը դաշնակցություն հակահեղափոխական բուրժուա-ազգայնական կուսակցության հետ պայքարում համախմբելու, կապիտալիստական երկրներում ապրող հայրենակիցների վրա մեր ազդեցության ուժեղացման, նրանցում իրենց միակ հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հանդեպ հայրենասիրության եւ սիրո դաստիարակության նպատակով:

2. Սփյուռքահայության հետ մշակութային կապերի Հայկական Կոմիտեին.

ա) Բարձրացնել արտասահման ուղարկվող նյութերի գաղափարա-քաղաքական եւ գեղարվեստական մակարդակը: Հատուկ ուշադրություն դարձնել տնտեսության, մշակույթի, բնակչության նյութական բարեկեցության բարձրացման ոլորտներում Խորհրդային իշխանության տարիներին հանրապետության աշխատավորության նվաճումների քարոզչությունը:



Համոզիչ եւ ցայտուն օրինակներով յուրաքանչյուր հայրենակցի գիտակցությանը հասցնել հայ ժողովրդի ազգային վերածննդի գաղափարը: Նյութերի պատրաստման ժամանակ լայնորեն ներգրավել գիտության, գրականության եւ արվեստի անվանի գործիչներին, արդյունաբերության եւ գյուղատնտեսության մասնագետներին:

Ավելացնել արտասահման ուղարկվող գրքերի, շարժանկարների, հոդվածների, լուսանկարների ցուցադրությունների եւ այլնի քանակը, ձգտելով հայկական առաջադիմական կազմակերպությունների հարաճուն պահանջների մաքսիմալ բավարարմանը: Կանոնավորապես ուղարկել գրքեր, թերթեր, հանդեսներ եւ այլ նյութեր խորհրդային դեսպանատներ, հատկապես Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում, նրանց ցանկություններին համապատասխան, սփյուռքահայերի հետ քարոզչական աշխատանքի վարման համար,

բ) Հաշվի առնելով ստեղծագործական աշխատողների, գեղարվեստական կոլեկտիվների, մարզական պատվիրակությունների արտասահմանյան այցելությունների դրական արդյունքները՝ Մշակույթի նախարարության, ստեղծագործական միությունների, Գիտությունների ակադեմիայի եւ ուրիշ հանրապետական կազմակերպությունների հետ համատեղ համակարգված սփյուռքահայ գաղութներ ուղարկել գիտնականների, գրողների, լրագրողների, երաժշտահանների, նկարիչների, դերասանների խմբեր, Ֆիլարմոնիայի պետական համույթներ, մարզական թիմեր եւ ուրիշ կոլեկտիվներ, այդ այցելությունները օգտագործելով որպես խորհրդային իրականության քարոզչության, սփյուռքահայերին իրենց սոցիալիստական հայրենիքին հարաբերման միջոց,

գ) Քարոզչական նյութերի ուղարկման, ինչպես նաեւ «Սովետական Հայաստան» ամսագրի աշխատանքի ծրագրավորման ժամանակ ելնել ռեակցիոն բուրժուական գաղափարախոսության, եւ մասնավորապես, «դաշնակցություն» կուսակցության հակաժողովրդական քաղաքականության մերկացմանն ուղղված հակաքարոզչության ուժեղացման անհրաժեշտությունից,

դ) Համակողմանիորեն բարելավել սփյուռքահայ գաղութների երիտասարդության հետ աշխատանքը: Համակարգված երիտասարդական կազմակերպություններին ուղարկել խորհրդային պատանիների եւ աղջիկների կյանքի, ուսման, աշխատանքի եւ կենցաղի վերաբերյալ տարաբնույթ նյութեր: Այդ նպատակներով ուժեղացնել նաեւ հանրապետության ուսումնական հաստատություններում սովորող արտասահմանից հայ ուսանողների հետ աշխատանքը: Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմի ու Բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթության կոմիտեի հետ համատեղ համակարգված կազմակերպել նրանց համար էքսկուրսիաներ արդյունաբերական ձեռնարկություններ, շինարարություններ, կոլտնտեսություններ, խորհտնտեսություններ, մշակութային կենտրոններ, անցկացնել հանդի-

պումներ գիտության, գրականության եւ արվեստի գործիչների, արտադրության առաջավորների հետ: Հասնել այն բանին, որպեսզի այդ ուսանողներից յուրաքանչյուրը վերադարձին դառնա Խորհրդային Հայաստանի նվաճումների աշխույժ քարոզիչ,

**ե)** Աշխուժացնել զբոսաշրջիկ-հայերի հետ աշխատանքը: Այդ նպատակներով «Ինտուրիստ»-ի հետ համատեղ կազմակերպել նրանց հետ համակարգված նպատակաուղղված աշխատանք, այդ գործում ներգրավելով քաղաքականապես պատրաստված, հանրապետության տնտեսությունը եւ մշակույթը լավ իմացող մարդկանց,

**զ)** Լուսավորության նախարարության ու Բարձրագույն եւ միջին մասնագիտական կրթության կոմիտեի հետ համատեղ համակարգված շրջանառել արտասահմանյան երկրներից ուսուցիչների հրավիրումը՝ որակավորման բարձրացման, ուսանողների՝ հանրապետության բուհերում ուսանելու, դպրոցականներին՝ պիոներական ճամբարներում հանգստի համար:

**3.** ՀԽՍՀ ԳԱ Նախագահությանը հանձնարարել.

**ա)** Ուժեղացնել սփյուռքահայ կազմակերպությունների հետ գրքափոխանակությունը,

**բ)** Հաշվի առնելով որոշ երկրներում գիտության եւ տեխնիկայի մի շարք կարեւոր ոլորտներում խոշոր գիտնական-հայերի առկայությունը, լայնորեն շրջանառել հանրապետություն նրանց հրավիրումը՝ դասախոսությունների ընթերցման, խորհրդատվությունների տրման, գիտական աշխատանքի անցկացման համար, աշխատանք կատարել հայագիտության եւ բնագիտության տարբեր ոլորտներում գիտական պատրաստվածություն ստանալ ցանկացող սփյուռքահայերի շրջանից երիտասարդ ընդունակ մասնագետներին ասպիրանտուրա ներգրավելու համար,

**գ)** Աշխատանք իրականացնել Հայաստանում մշտական բնակության եւ աշխատանքի՝ հայրենադարձության կարգով, սփյուռքահայերի շրջանից արժեքավոր մասնագետների ներգրավման ուղղությամբ,

**դ)** Ուժեղացնել եւ ընդլայնել սփյուռքահայ գիտնականների հետ գիտական կապերը,

**ե)** Հրատարակել սփյուռքահայերի համար գիտա-հանրամատչելի գրքույկների մատենաշար հայերեն եւ անգլերեն լեզուներով Հայկական ԽՍՀ-ում տնտեսական շինարարության, մշակույթի եւ գիտության հաջողությունների վերաբերյալ, հանձնարարել Պատմության ինստիտուտին կազմել եւ հրատարակել սփյուռքահայերի համար ոչ մեծ գիրք հայ ժողովրդի պատմության մասին՝ հայերեն եւ անգլերեն լեզուներով,

**զ)** Սփյուռքահայության հետ մշակութային կապերի Կոմիտեին ցույց տալ համակարգված օգնություն հանրապետություն այցելող արտասահմանյան զբոսաշրջիկ-հայերի եւ հյուրերի համար Հայաստանում



գիտության նվաճումների մասին զրույցների եւ գիտա-հանրամատչելի դասախոսությունների անցկացման ճանապարհով,

**է)** Մշակել եւ ներկայացնել առաջարկություններ 1966թ. Երեւանում հայագիտության գծով գիտաժողովի գումարման մասին, Միությունից[1] եւ արտասահմանից՝ այդ թվում սփյուռքահայության շրջանից, գիտնականների հրավիրումով:

**4.** Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդին առընթեր Ռադիոհեռարձակման եւ հեռուստատեսության Պետական Կոմիտեին ուժեղացնել արտասահմանյան հեռարձակմամբ հանրապետության նվաճումների քարոզչությունը, լայնորեն ներգրավելով այդ աշխատանքին անվանի գրողների, գիտության, արվեստի գործիչների, ռադիոյով ելույթ ունենալու համար հրավիրել հայրենադարձների, արտասահմանից հյուրերի, մշտապես բարելավել ռադիոհեռարձակման որակը:

**5.** Պարտավորեցնել Հայաստանի Արհմիությունների Խորհրդին, Արտասահմանի հետ բարեկամության եւ մշակութային կապերի Հայկական ընկերությանը, Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմին արտասահմանյան երկրներ՝ որտեղ կան մեծ հայկական գաղութներ, մեկնող զբոսաշրջիկային խմբերի համալրումը իրականացնել Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի առաջարկությունների հաշվի առնելով:

**6.** ԽՍՀՄ Նախարարների Խորհրդին առընթեր ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի Մշտական ներկայացուցչության (ընկ. Ս. Մելքումյան) վրա դնել ՀԿԿ Կենտկոմի Նախագահության որոշմամբ հանրապետություն ժամանող արտասահմանյան հյուրերի դիմավորումը եւ ճանապարհումը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
***Յա. Զարոբյան*** [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 7, թթ. 19-23:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 12

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը Դ. Վարուժանի անունով դպրոց անվանակոչելու մասին]**

***Հույժ գաղտնի***

**Արձանագրություն թիվ 5 5**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**9 մարտի 1965թ.**

[1] Նկատի ունի ԽՍՀՄ-ը:

**Կետ 6. Երեւան Շահումյանի շրջանի թիվ 89 միջնակարգ դպրոցը Դ. Վարուժանի անունով անվանակոչելու մասին[1]**

(ընկ. Ս. Թովմասյան)
Արտահայտվեց՝ ընկ. Յա. Զարոբյանը

Ընդունել Երեւանի Շահումյանի շրջանի թիվ 89 միջնակարգ դպրոցը նշանավոր հայ գրող Դանիել Վարուժանի անունով անվանակոչելու մասին Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի առաջարկությունը:[2]

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
***Յա. Զարոբյան*** [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 35:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

**Թ Ի Վ 13**
**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը գաղափարա-դաստիարակչական աշխատանքի մասին]**

***Հուլիս գաղտնի***

**Արձանագրություն թիվ 55**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**9 մարտի 1965թ.**

**[Քաղվածք]**

**Կետ 1. Հանրապետության կուսակցական կազմակերպությունների գաղափարա-դաստիարակչական աշխատանքի ուժեղացման միջոցառումների մասին**

(ընկ. Ս. Վարդանյան)

Ելույթ ունեցան՝ ընկերներ Բ. Մուրադյանը, Հ. Բաղդասարյանը, Յա. Զարոբյանը

... ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը գտնում է, որ հանրապետության կուսակցական կազմակերպությունների աշխատանքում առկա են էական թերություններ:

... Որոշ կուսակցական կազմակերպություններ իրենց գործնական քաղաքական-դաստիարակչական գործունեության մեջ անբավարար են հաշվի առնում նաեւ ներկա ժամանակում հանրապետությանը յուրահատուկ առանձնահատկությունները. սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների գործունեության ակտիվացումը, հայրենադարձության գործոնը, արտասահմանում ազգականների եւ բարեկամների հետ հայրենադարձների կապերը, Խորհրդային Հայաստան զբոսաշրջիկ-հայերի եւ այլոց այցելությունները:

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը գտնում է, որ օգտվելով որոշ կուսկազմակերպությունների պասիվությունից, առանձին հետադեմ տարրեր հայերի կոտորածի 50-ամյակի կապակցությամբ փորձում են ստեղծել անառողջ տրամադրություններ, որոնք կարող են աշխատավորության ուշադրությունը իրենց առջեւ կանգնած կենսական խնդիրներից շեղել: Նեղ ազգայնական զգացմունքներով ղեկավարվելով այդ տարրերը փորձում են աշխատավորության եւ հատկապես երիտասարդության մի մասի շրջանում ազգային կրքեր հրահրել:

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշում է.

6. ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը կուսակցության քաղկոմներին, շրջկոմներին, սկզբնական կուսկազմակերպություններին պարտավորեցնում է աշխատավորության շրջանում անցկացնել նպատակասլաց բացատրական աշխատանք այնպես, որպեսզի կոտորածի հիսունամյակի հետ կապված միջոցառումները աշխատավորության լայն խավերի վրա ուժեղացնեն գաղափարախոսական ազդեցությունը, ավելի վառ ցույց տան հայ ժողովրդի ճակատագրում Խորհրդային իշխանության պատմական դերը, Լենինյան ազգային քաղաքականության իրականացման բարենպաստ ազդեցությունը, Խորհրդային պետության կողմից անշեղորեն իրականացվող խաղաղության եւ խաղաղ համագոյակցության քաղաքականության իմաստությունը եւ մարդասիրությունը:

Թուրքիայում հայերի զանգվածային բնաջնջման հիսունամյակի տարթիվը պետք է նշել ցեղասպանության մարդատյաց քաղաքականության դատապարտմամբ: Այն պետք է դասակարգային, մարքս-լենինյան դիրքերից, կենսահաստատ լավատեսության դիրքերից նշվի, որի գլխավոր շարժառիթը ցեղասպանության քաղաքականության դատապարտմանը զուգահեռ պետք է վերածնված հայ ժողովրդի ծեռք բերած ծաղկ-

[1] Ընդհանրապես, խորհրդային իշխանության տարիներին, որպես կանոն, ուսումնական հաստատություններն անվանակոչվում էին այսպես, կոչված հայտնի կուսակցական-պետական գործիչների, իսկ եզակի դեպքերում՝ պաշտոնական ճանաչում գտած անվանի մտավորականների անուններով: Մինչդեռ, 1965թ նախորդող ժամանակաշրջանում ոչ միայն անտեսված էր Հայոց եղեռնի երեւույթը, այլեւ մոռացության էին մատնված եղեռնի նահատակ արեւմտահայ գրողներն ու նրանց սեղծագործությունները: Իսկ արդեն ՀԿԿ Կենտկոմի կողմից դպրոցի անվանակոչման փաստն ինքնին պաշտոնական ուղի էր բացում նահատակ մյուս գրողների քաղաքական «արդարացման» համար, ինչի կարիքը հայոց համար նրանք երբեւէ չեն ունեցել:

[2] ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը 1965թ. մարտի 23-ին ընդունեց համապատասխան թիվ 118 որոշումը:

ման համար հպարտությունը եւ նրա ապագայի անսասանելի հավատը, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետագա զարգացման եւ բարգավաճման, իրենց Հայրենիք Խորհրդային Հայաստանի շուրջը ճակատագրի բերումով աշխարհի բազմաթիվ երկրներով սփռված հայերի հետագա համախմբման երաշխիք խորհրդային ժողովուրդների բարեկամության եւ մեր Խորհրդային հայրենիքի հզորացման ամրապնդումը լինի:

Հաստատել հայերի կոտորածի 50-ամյակի կապակցությամբ միջոցառումները (կցվում է):

**7.** Պարտավորեցնել կուսակցության քաղկոմներին եւ շրջկոմներին մշակել եւ իրականացնել բուրժուական գաղափարախոսության դեմ հակաքարոզչության ուժեղացման միջոցառումներ, ապահովել աշխույժ, հարձակողական պայքար անառողջ տրամադրությունների առանձին արտահայտությունների հետ:

Կապված կոտորածի հիսունամյակի հետ սփյուռքահայ բուրժուական կազմակերպությունների՝ մասնավորապես դաշնակ կուսակցության, թշնամական ազգայնական գործունեության աշխուժացման հաշվի առնելով, հանրապետության բնակչության որոշ խավեր թափանցող անառողջ եւ ըստ էության խորը սխալ ու վտանգավոր միտումների ու տրամադրությունների ցանկացած արտահայտությունների դեմ վճռական գաղափարախոսական պայքար ծավալել արտասահմանյան ռադիոյի միջոցով, զբոսաշրջիկ-հայերի անմիջական շփումների ճանապարհով, փոստային կապի միջոցով եւ այլն:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
### Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված

**1.** Մարտին բնակչության շրջանում զեկուցումներով եւ դասախոսություններով հանդես գալու եւ տեղերում գաղափարախոսական աշխատանքի բարելավման գործում օգնություն ցուցաբերելու համար հանրապետության բոլոր քաղաքներ եւ շրջաններ ՀԿԿ Կենտկոմի քարոզչական խմբեր ուղարկել:

(Պատասխանատու՝ ընկ. Ս. Վարդանյան)

**2.** Մարտ-ապրիլին հանրապետության ղեկավար աշխատողների հետ Երեւանի ուսանողների եւ երիտասարդության հանդիպումներ կազմակերպել:

(Պատասխանատու՝ ընկ. Բ. Մուրադյան)

**3.** ՀԿԿ Կենտկոմի դասախոսական խմբի եւ «Գիտելիք» ընկերության ուժերով հանրապետության քաղաքներում եւ գյուղերում, ձեռնարկություններում, հիմնարկներում եւ ուսումնական հաստատություններում դասախոսություններ, զեկուցումներ եւ զրույցներ կազմակերպել հետեւյալ թեմաներով.



- Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումը,
- Վ. Ի. Լենինը մեր կուսակցության եւ պետության ստեղծող,
- Վ. Ի. Լենինը եւ հայ ժողովրդի փրկությունը,
- ԽՍՀՄ ժողովուրդների լենինյան բարեկամությունը,
- Խորհրդային հայրենասիրությունը եւ սոցիալիստական ինտերնացիոնալիզմը,
- Հայ եւ ռուս ժողովուրդների մեծ բարեկամությունը,
- Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում,
- Խորհրդային Հայաստանի տնտեսության եւ մշակույթի բուռն աճը,
- Խորհրդային պետության խաղաղասեր արտաքին քաղաքականությունը:

(Պատասխանատուներ՝ ընկերներ Մ.Խառազյան, Բ.Ավչյան, Է.Սահակյան)

**4.** Մինչեւ ապրիլի 20-ը «Հայաստան» հրատարակչությամբ եւ «Գիտելիք» ընկերությամբ հրատարակել հայերեն եւ ռուսերեն լեզուներով գրքույկներ այս թեմաներով.

- ԽՍՀՄ-ում լենինյան ազգային քաղաքականության հաղթահանդեսը,
- Հայ ժողովուրդը ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում,
- Հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը,
- Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ կապերը,
- Նոր մարդու դաստիարակությունը:

(Պատասխանատու՝ ընկ. Ս. Վարդանյան)

**5.** Մինչեւ կոտորածի 50-ամյակի տարեթիվը թերթերում տպագրել եւ ռադիոյով հաղորդել նյութեր կոտորածի ժամանակ նահատակված անվանի հայերի մասին, ինչպես նաեւ ցեղասպանության քաղաքականությունը դատապարտող հոդվածներ:

(Պատասխանատու՝ ընկ. Զ. Կիրակոսյան)

**6.** Մինչեւ մարտի 20-ը սփյուռքահայ մամուլի համար նախապատրաստել եւ ուղարկել տնտեսության, գիտության եւ մշակույթի բնագավառներում Խորհրդային Հայաստանի նվաճումները ցույց տվող նյութեր:

(Պատասխանատու՝ ընկ. Վ. Համազասպյան)

**7.** «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Սովետ էրմանիստանի», «Ռյա Թազա», «Ավանգարդ», «Կոմսոմոլեց» թերթերի ապրիլի 24-ի համարներում այդ տարեթվին նվիրված առաջնորդող հոդվածներով էջեր հատկացնել: Այդ օրը համապատասխան նյութեր հաղորդել ռադիո-

յով, ինչպես նաեւ տեղադրել հանրապետության թերթերում եւ ամսագրերում:

(Պատասխանատու՝ ընկ. Ջ. Կիրակոսյան)

**8.** Ապրիլի 1-ից Խորհրդային իշխանության տարիներին հանրապետության նվաճումները, կոմունիզմի կառուցման համար Հայաստանի աշխատավորության պայքարը ցույց տվող լավագույն հայկական շարժանկարների փառատոն կազմակերպել:

(Պատասխանատուներ՝ ընկ. ընկ. Վ. Ավետիսյան, Ս. Գասպարյան)

**9.** Մարտին իրականացնել Խորհրդային Հայաստանի նոր քաղաքացիների հավաք:

(Պատասխանատու՝ ընկ. Ս. Վարդանյան)

**10.** Մինչեւ ապրիլի 15-ը Երեւանի բոլոր շրջաններում, Լենինականում եւ Կիրովականում «Երջանիկ երջանկություն» թեմայով երիտասարդական երեկոներ իրականացնել:

(Պատասխանատուներ՝ քաղկոմների քարտուղարներ)

**11.** Կոտորածի 50-ամյակի կապակցությամբ մինչեւ ապրիլի 20-ը Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի եւ Երեւանի պետական համալսարանի համատեղ գիտական նստաշրջան անցկացնել:

(Պատասխանատու՝ ընկ. Ս. Թովմասյան)

**12.** Ապրիլի 24-ին Երեւանում «Վերածնված հայ ժողովուրդը» թեմայի զեկուցումով քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով անցկացնել:

(Պատասխանատու՝ ՀԿԿ Երեւանի քաղկոմ)

**13.** Ապրիլին հանրապետության քաղաքներում 1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակին ծառատնկումների զանգվածային կիրակնօրյակներ անցկացնել:

(Պատասխանատուներ՝ ՀԿԿ քաղկոմներ)

**14.** 1965 թվականի ընթացքում Երեւանում կոտորածի ժամանակ զոհվածների հիշատակին կոթող տեղադրել, որը պետք է Խորհրդային իշխանության տարիներին հայ ժողովրդի հերոսական պայքարը եւ նրա վերածնունդը խորհրդանշի: Կոթողի տեղադրման մասին ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի որոշման շարադրումը հրապարակել մամուլում:

**15.** Հայաստանի Կոմերիտմիության Կենտկոմին թույլատրել ապրիլին անցկացնել «Ուսանողական գարուն» փառատոն:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թթ. 1-2, 4-5, 8-10:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:



## Թ Ի Վ 14

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը սփյուռքահայ երեխաների հրավիրման մասին]**

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 5 5**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**9 մարտի 1965թ.**

**Կետ 15. Արտասահմանից հանրապետության պիոներական ճամբարներում հանգստի հայ երեխաների հրավիրման մասին**

(ընկ. Ս. Վարդանյան)

Արտահայտվեց՝ ընկ. Յա. Զարոբյանը

Հավանություն տալով 1964թ. ամռանը սփյուռքահայ դպրոցների երեխաների խմբերի հանրապետություն հրավիրման փորձին որպես սփյուռքահայ գաղութներում մեր երկրի ձեռքբերումների քարոզչության ուժեղացման ուղղությամբ եւ հատկապես աճող սերունդի շրջանում աշխատանքի օգտակար ձեւ, ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշում է.

**1.** Ընդունել 1965թ. ամռանը հանրապետության պիոներական ճամբարներ մեկ ամիս ժամկետով 60 հոգի հայ երեխաների հրավիրման մասին ՀԽՍՀ Լուսավորության նախարարության առաջարկը, հետեւյալ երկրներից.

Լիբանան – 15 հոգի
Սիրիա - 13
Ֆրանսիա - 8
ԱՄՆ – 2
Իրան – 5
Եթովպիա - 3
ՄԱՀ[1] – 2
Հունաստան – 5
Կիպրոս – 3
Քուվեյթ – 2
Հորդանան – 2

**2.** Հանձնարարել ՀԽՍՀ Լուսավորության եւ Արտաքին գործերի նախարարություններին, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեին՝ ՀԼԿԵՄ Կենտկոմի եւ Հայաստանի Արհմիությունների Խորհրդի հետ համատեղ արտասահմանյան երեխաների ընդունման, տեղավորման եւ աշխատանքի կազմակերպման ուղղությամբ միջո-

[1] Միացյալ Արաբական Հանրապետություն - Եգիպտոս:

ցառումներ մշակել, պիոներական ճամբարներում նրանց հանգիստը Խորհրդային իշխանության տարիներին մեր երկրի հաջողությունների, խորհրդային երեխաների կյանքի եւ ուսման պայմաններին ծանոթացման հետ խելամտորեն համադրելով:

3. Հանձնարարել ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին քննարկել հանրապետություն արտասահմանյան երեխաների հրավիրման հետ կապված կազմակերպչական եւ ֆինանսական հարցերը:[1]

Խնդրել ԽՄԿԿ Կենտկոմին թույլատրել:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 30:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 15

**[Հայրենադարձների նամակը ԽՍՀՄ ղեկավարությանը]**

## ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ

Ստորեւ ուղարկում ենք Խորհրդային Հայաստանի նոր քաղաքացիների հանրապետական հավաքում միաձայն ընդունված ԽՄԿԿ Կենտրոնական Կոմիտեին եւ ԽՍՀՄ Նախարարների Խորհրդին ուղղված նամակը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան*

13 մարտի 1965թ.
թիվ 249/գ

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԽՍՀՄ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ**

Մենք՝ Խորհրդային Միության նոր քաղաքացիներս, հավաքված այս հանդիսավոր հավաքում, հարյուր հազարավոր հայ-հայրենադարձների անունից Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեին եւ Խորհրդային կառավարությանը օտարության մեջ ապրող հայ ժողովրդի զավակների մասին ջերմ հոգատարության համար, նրանց հայրենիք վերադառնալու, ազատ Խորհրդային երկրում ապրելու, աշխատելու եւ սովորելու հնարավորություն ընձեռելու համար, հղում ենք սրտալից խոսքեր:

Կոմունիստական կուսակցությունը, Խորհրդային իշխանությունը հայ ժողովրդին ցույց տվեցին փրկության միակ ճշմարիտ ուղին, նրան սոցիալական, քաղաքական եւ ազգային ճնշումից ազատեցին:

Մեծ Հոկտեմբերի կենսատու արևը ծաճանչեց Հայաստանի վրա 45 տարի առաջ, նրա պատմության ամենից ծանր ու ողբերգական դժնդակ պահին: Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ սկսվեց նոր՝ ազգային վերածննդի դարաշրջան:

Շնորհիվ Կոմունիստական կուսակցության իմաստուն լենինյան ազգային քաղաքականության հայ ժողովուրդը Խորհրդային Միության ժողովուրդների բարեկամական ընտանիքում՝ մեծ ռուս ժողովրդի անշահախնդիր օգնությամբ, պատմական կարճ ժամկետում նյութական եւ հոգեւոր կյանքի բոլոր բնագավառներում հասավ հսկայական հաջողությունների:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը օտարության մեջ ապրող աշխատավոր հայերի միակ Հայրենիքն է:

Օտար երկնքի տակ գտնվող բոլոր ազնիվ հայերի սրտերն ու մտքերը, երազանքներն ու ակնկալությունները մայր-հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի հետ է: Օտարության մեջ ապրող հայի համար ամենից մեծ երջանկությունը՝ Հայրենիք վերադառնալն է, նախնիների հողում իր մշտական օջախ ունենալը: Մենք երբեք չենք մոռանա այն հուզիչ պահը, երբ առաջին անգամ ոտք դրեցինք Խորհրդային հողի վրա եւ Հայրենիքը մեզ ընդունեց գրկաբաց, ստեղծելով մեզ համար աշխատանքի, ստեղծագործության, նոր կյանքի համար բոլոր պայմանները:

Մեր սրտերը լցվում են անսահման հպարտությամբ այն գիտակցումից, որ մենք հզոր Խորհրդային սոցիալիստական տերության քաղաքացիներ ենք, որը տնտեսության, գիտության և մշակույթի բոլոր բնագավառներում պատմական նվաճումներով, անօրինակ խիզախություններով զարմացրեց աշխարհին, ողջ աշխատավոր մարդկության համար դարձավ փարոս:

Մենք՝ Խորհրդային Հայաստանի նոր քաղաքացիներս, շփվելով սոցիալիստական կյանքին, գործարաններում եւ ֆաբրիկաններում, կոլտնտեսային եւ խորհտնտեսային դաշտերում, հիմնարկներում եւ գիտական ինստիտուտներում մեր սոցիալիստական Հայրենիքի բարօրության համար աշխատում ենք ուժ եւ եռանդ չխնայելով:

Մենք Կոմունիստական կուսակցության եւ Խորհրդային կառավարության հայրական հոգատարությանը կպատասխանենք մեր լավ եւ ազնիվ աշխատանքով, կոմունիստական հասարակության կառուցման մեծ գործում մեր աշխույժ մասնակցությամբ: Մենք մեր սրբազան պար-

[1] ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը 1965թ. ապրիլի 20-ին ընդունեց թիվ 288 համապատասխան կարգադրությունը:

տականությունն ենք համարում ինքնամոռաց աշխատանքով արժանի լինել խորհրդային քաղաքացու մեծ կոչմանը:

Կեցցե՛ մեր մեծ Հայրենիքը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը՝ խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքի իրավահավասար անդամը:

Փա՛ռք լենինյան Կոմունիստական կուսակցությանը եւ Խորհրդային կառավարությանը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45 գ. 41, թթ. 43-45:
Թարգմանություն ռուսերենից: Մեքենագիր օրինակ:

## Թ Ի Վ 16

**[ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի կարգադրությունը Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին]**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**
**Կարգադրություն թիվ 1 0 1**
**16 մարտի 1965թ.**

**1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու համար կոթող կառուցելու մասին**

Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Սուլթանական Թուրքիայի կառավարողների կազմակերպած հայկական կոտորածների հիսնամյակի կապակցությամբ, ընդառաջելով հանրապետության աշխատավորների ու հասարակական կազմակերպությունների ցանկություններին, Երևան քաղաքում կանգնեցնել կոթող՝ ի հավերժա-ցումն 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակի:

2. Հանձնարարել Հայկական ԽՍՀ Պետշինին՝ հայտարարել կոթողի լավագույն նախագծի մրցանակաբաշխություն: Մրցանակաբաշխության ժամկետ սահմանել մեկ ամիս՝ սկսած հայտարարության օրվանից:

3. Առաջարկել Երևանի քաղաքային խորհրդի գործկոմին՝ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք կատարել եւ կոթողի կառուցումն ավարտել 1965 թվականին:

ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի Նախագահ՝
*Ա. Քոչինյան* [ստորագրություն]
ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի Գործերի կառավարիչ՝
*Հ. Մելքոնյան* [ստորագրություն]
ՀԱԱ, ֆ. 113, ց. 96, գ. 88, թ. 2:
Բնագիր: Մեքենագիր:



## Թ Ի Վ 17

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը «Հայրենիքի ձայն»-ի լույս ընծայման մասին]**

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 5 7**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**6 ապրիլի 1965թ.**

**Կետ 6. «Հայրենիքի ձայն» թերթի լույս ընծայման մասին**

(ընկ. Ս. Վարդանյան)

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշում է.

1. ԽՄԿԿ Կենտկոմի Քարտուղարության 1965թ. մարտի 10-ի որոշման համապատասխան Սփյուռքահայության հետ մշակութային կապերի Հայկական կոմիտեի հրատարակություն «Հայրենիքի ձայն» թերթի համար հաստատել. ծավալ - «Պրավդա» թերթի չափսի 4 սյունակներ, հատի գինը - 5 կոպեկ, մեկ համարի հոնորարը - 280 ռուբլի:

2. Համաձայն հավելվածի հաստատել «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրության հաստիքները եւ աշխատավարձի դրույքաչափերը:

3. Հանձնարարել ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնին խմբագրությունը համալրել որակյալ կադրերով:

4. Հանձնարարել Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդին լուծել «Հայրենիքի ձայն» թերթի ֆինանսավորման հետ կապված հարցերը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան* [ստորագրություն]

**Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ**
**«Հայրենիքի ձայն» թերթի խմբագրության աշխատակիցների հաստիքները եւ աշխատավարձի դրույքաչափերը**

| | Պաշտոնի անվանումը | Միավորների քանակը | Պաշտոնական դրույքը |
|---|---|---|---|
| 1 | Խմբագիր | 1 | 280 |
| 2 | Պատասխանատու քարտուղար | 1 | 180 |
| 3 | Բաժնի վարիչ | 3 | 125 |
| 4 | Գրական աշխատող | 2 | 90 |
| 5 | Ֆոտոթղթակից | 1 | 75 |
| 6 | Թողարկող | 1 | 90 |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Սրբագրիչ | 2 | 75 |
| 8 | Տեխնիկական քարտուղար-մեքենագրուհի | 1 | 65 |
| 9 | Մեքենագրուհի | 1 | 65 |
| 10 | Հաշվապահ-գանձապահ | 1 | 70 |
| 11 | Տնտեսվար | 1 | 65 |
| 12 | Հավաքարար-ցրիչ | 1 | 45 |

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 19, թթ. 61-62:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 18

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը եղեռնի 50-ամյակի մասին հոդվածի եւ զեկույցի վերաբերյալ]**

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 6 0**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության նիստի**
**23 ապրիլի 1965թ.**

**Կետ 1. Հարցում. 1915 թվականին Թուրքիայում հայերի կոտորածի 50-ամյակի մասին հոդվածի եւ զեկույցի տեքստերի վերաբերյալ**

Հավանություն տալ Թուրքիայում հայերի կոտորածի 50-ամյակի մասին «Ողբերգությունից դեպի վերածնունդ» հոդվածի տեքստին: Հոդվածը հրապարակել մամուլում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գալոյանի եւ պատմական գիտությունների թեկնածու Ջ. Կիրակոսյանի ստորագրությամբ:[1]

Հավանություն տալ Թուրքիայում հայերի կոտորածի 50-ամյակի մասին Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանի ներկայացրած զեկույցի տեքստին, Կենտկոմի Նախագահության անդամների դիտողությունների հաշվի առնելով:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թ. 74:
Բնագիր: Մեքենագիր:

[1] Տես - *Գալոյան Գ., Կիրակոսյան Ջ.*, «Ողբերգությունից վերածնունդ», «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 2:



## Թ Ի Վ 19

**[Մկրտիչ Արմենի ճամակը ՀԿԿ Կենտկոմին 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին]**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**
**Ջ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր**

Երեւանում 1965թ. ապրիլի 24-ին կայացած ժողովրդական ցույցի շարքային մասնակից եւ ականատես
**Մկրտիչ Արմենից**

Որպես խորհրդային հայ գրող իրավասու եւ պարտավոր լինելով միշտ գտնվել իմ ժողովրդի հետ, մանավանդ նրա կյանքի կարեւոր պահերին, ես 1965թվի ապրիլի 24-ի ամբողջ օրը, ինչպես նաեւ երեկոյան, ականատես էի այն իրադարձություններին, որոնց մասին ուզում եմ գրել մեր կուսակցության կենտրոնական կոմիտեին: Իմ զեկուցագիրը կարող է հետաքրքիր լինել որպես մի շարքային մասնակցի եւ ականատեսի ազնիվ եւ անաչառ վկայություն: Նախապես վերապահություն եմ անում, որ ես առնչություն չունեմ բարձր քաղաքականության հետ եւ չեմ շոշափելու դրա հետ կապված խնդիրներ, այլ միայն նկարագրելու եմ եղելությունը, իհարկե, ցույց տալով նաեւ իմ վերաբերմունքը դրա նկատմամբ: Ուստի եւ խնդրում եմ նախապես, ներողամիտ լինել, եթե ես սխալվեմ որոշ հարցերում: Կաշխատեմ, իհարկե, չսխալվել, իսկ ինչ վերաբերվում է անաչառությանը եւ ազնվությանը, դրանում կարող եք բոլորովին չկասկածել:

Դեռեւս նախքան ապրիլի 24-ը ժողովրդի մեջ լուրեր էին տարածվում այն մասին, որ տոնվելու է եղեռնի 50-երորդ տարեդարձը, որ դա թույլատրված է կենտրոնից, որ դա լինելու է լայն, որ դա, ընդհակառակը, լինելու է նեղ, քանի որ այդտեղ դեր են խաղում բարձր քաղաքականության մի շարք գործոններ եւ այլն եւ այլն: Ամեն դեպքում երիտասարդությունը պատրաստվում էր արժանավայել կերպով տոնել այդ տոնը:

Այս լուրերը, որոնք հասնում էին ամենուրեք, բնականաբար, հասնում էին նաեւ մեր ղեկավար ընկերներին, եւ, իմ կարծիքով, նրանք չէին կարող հաշվի առած չլինել ժողովրդի եւ մասնավորապես երիտասարդության տրամադրությունը:

Որոշված էր եղեռնին նվիրված սգահանդեսը կատարել Օպերայի եւ բալետի թատրոնում: Գուցե եւ այդպես էր պետք եւ ոչ թե, ասենք, ստադիոնում: Դա իմ գիտենալու բանը չէ: Սակայն, հատնի էր, որ երիտասարդությունը պատրաստվում էր չգոհանալ այդ փակ, կամերային նշումով, այլ հավաքվելու էր Լենինի հրապարակում:

Վաղ առավոտից հրապարակում հավաքվել էին մի քանի հազար երիտասարդներ եւ միտինգ էին անում: Գտնվելով Լենինի արձանի մոտ, նրանք չէին բարձրանում Լենինի արձանի տակ գտնվող ամիբիոնը, այլ հռետորներին բարձրացնում էին իրենց թեւերի վրա եւ պահում նրա խոսելու ընթացքում: Դա արդեն, ապացուցում էր այն օրինակելի կարգապահությունը, որը պահպանում էին նրանք: Իրենց տրամադրության տակ չունենալով բարձրախոսներ եւ միկրոֆոններ, նրանք մինչեւ իսկ գլխի չէին ընկել օգտվել հասարակ ձայնափողերով-ռուպոր-մեգաֆոններով, եւ խոսում էին իրենց ձայնի զորությամբ, լսելի լինելով միայն մոտիկ կանգնածների համար:

Հրապարակում գտնվում էին նաեւ որոշ թվով միլիցիոներներ, բայց նրանք, թեկուզ եւ լինեին շատ ավելի մեծ քանակությամբ, չպիտի կարողանային զսպել հավաքվածների ամբոխը, եթե վերջինս չլիներ օրինակելի կերպով կարգապահ եւ լոյալ:

Հայտարարում եմ ականատեսի եւ ազնիվ մարդու ամենայն պատասխանատվությամբ, որ այդ հավաքույթի եւ ճառերի մեջ չկար եւ ոչ մի դատապարտելի խոսք կամ նախադասություն: Միայն մի անգամ, ինչ որ պատահական բախտախնդիր մարդ, փորձեց ինչ որ անլոյալ բան ասել՝ ցույց տալով Լենինի արձանը, բայց երիտասարդներն իսկույն վար շպրտեցին նրան եւ վռնդեցին:

Հավաքվածների ամբոխը շարունակ ավելի էր մեծանում, նրանք սպասում էին աշխատանքային օրվա վերջին, որպեսզի բանվորները նույնպես միանային նրանց:

Ահա այդ ժամանակ ամբիոն բարձրացան ընկերներ Քոչինյանը, Վիկտոր Համբարձումյանը, Էդվարդ Թոփչյանը եւ ուրիշներ: Դա շատ ուրախալի բան էր, քանի որ հարկավոր էր, որպեսզի մեր ղեկավար ընկերները հունի մեջ դնեին ժողովրդական ընդվզումը, ընթացք տային դրան, վերցնեին իրենց ձեռքը:

Ընկերներ Քոչինյանի եւ Վ. Համբարձումյանի ճառերն ընդհանուր առմամբ շատ լավ էին եւ խելացի, միայն այն թերությամբ, որ վերջում նրանք կոչ արեցին «ստեղծագործական աշխատանքի» անցնելու, այսինքն տվեցին մի ընդհանուր լոզունգ եւ ոչ թե կոնկրետ կերպով ուղի ցույց տվեցին, թե ինչ անեն հավաքվածները հենց այսօր, հենց հիմա:

Այդ ուղին փորձեց ցույց տալ մի մարդ, որին ես չէի ճանաչում, եւ որին անվանեցին ուրիշները. - Բադալ Մուրադյան: Նա ասաց. «Իսկ հիմա, ով որ գործ չունի այստեղ, թողեք հրապարակը, թողեք հրապարակը, թողեք հրապարակը»...

Ավելի անխելք բան հնարավոր չէր ասել: Եւ բնական է, որ ինքն ընկավ խիստ ծիծաղելի վիճակի մեջ, քանի որ հենց ինքն ստիպված եղավ «թողնել հրապարակը», իսկ հավաքվածների ոչ մեկը չշարժվեց տեղից: Նրա այդ կոչը որոշակի կերպով թելադրված էր իր ուժերի խիստ



գերագնահատությունից, այն համազումից, որ բավական էր իր մի խոսքը, որպեսզի բոլորը, մի մարդու պես, «թողնեին հրապարակը»: Ցավալի է, բայց փաստ է, որ վճռական պահին քաղկոմի քարտուղարը անկարող դուրս եկավ ազդել մասսաների վրա: Նա ասաց հենց այն, ինչ որ չպետք էր ասել:

Երիտասարդներից մեկը, բարձրանալով ամբիոն, ընկ. Քոչինյանին տվեց մի կույտ թղթեր, ըստ երեւույթին հավաքվածների բանաձեւը կամ խնդիրը կամ դրա նման մի բան: Ընկեր Քոչինյանը վեր բարձրացրեց թուղթը բռնած իր ձեռքը, այսինքն թե՝ստացա, ինձ մոտ է: Դա, իհարկե, լավ էր եւ տեղին:

Ղեկավարների գնալուց հետո հավաքվածները, որոնց թիվն արդեն հասնում էր, ամենահամեստ թվերով հաշված, երեսունից մինչեւ քառասուն հազար մարդու, ճանապարհ ընկավ շրջելու մեր մայրաքաղաքի փողոցներով: Ցուցարարներն իրենց առջեւից տանում էին երկու տրանսպարանտ, որոնց վրա գրված էր **«2.000.000»**, ապա մի պլակատ, որի վրա գրված էր՝ **«Արդար լուծեք հայոց հարցը»** եւ նկարված Մասիսը, ապա եւս մի պլակատ, որի վրա գրված էր՝ **«Ազատություն յոթը հայրենասերներին»**, եւ վերջապես, շարքերի առջեւով տարվող գլխավոր տրանսպարանտը, որի վրա գրված էր.- **«Ազնիվ հայեր, միացեք մեզ»**: Ցուցարարները տանում էին նաեւ Կոմիտասի եւ նահատակված գրողներից մեկի նկարը:

Ամիրյան փողոցով դուրս գալով Լենինի պողոտա, ցուցարարներն անցան ամբողջ պողոտայով: Անհեռատես մարդիկ վախենում էին, թե նրանք թեքվելու են դեպի Բարեկամության փողոցը, ցույց սարքելու համար Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի շենքի առաջ: Բայց այդպես մտածողները խիստ վատ կարծիքի էին խորհրդային եւ կոմունիստական դաստիարակություն ստացած մեր երիտասարդների մասին: Նրանց մտքովն էլ չէր անցնում ցույց կազմակերպել հարազատ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի շենքի առջեւ: Նրանք շարունակեցին քայլել պողոտայով վեր, ապա Կիրովի փողոցով դուրս ելան Տերյան փողոցը եւ կանգ առան Պոլիտեխնիկ ինստիտուտի շենքի առջեւ:

Չգիտես որ խելացիի կարգադրությամբ, ուսանողներին լցրել էին լսարանները եւ չէին թողնում դուրս ելնել: Ցուցարարները միահամուռ կանչում էին **«մի - ացեք մեզ»**, սակայն ներսում գտնվող ուսանողները բավականանում էին միայն դուրս նայելով եւ ոմանք էլ հասկացնելով, թե ուզում են դուրս գալ, բայց չեն կարող:

Ցուցարարներից մի քանի հարյուր հոգի մոտեցան ինստիտուտի դռներին եւ ստիպեցին բաց անել դռները: Նրանք, եթե լինեին անկարգապահ կամ հիմար, կարող էին ներխուժել ինստիտուտ, այսպես ասած՝ «ազատել» այնտեղի ուսանողներին: Սակայն այնքան օրինակելի էր կարգապահությունը եւ այնքան բարձր էր գիտակցությունը, որ նրանք չարեցին

այդ, քաջ գիտենալով, որ եթե ուսանողներն իրենք ուժեղ ցանկություն ունենան դուրս գալու, մի կողմ կշպրտեն իրենց «ցերբերներին», կջարդեն դռները՝ եթե հարկ լինի, եւ դուրս կգան, ինչպես դա արեցին համալսարանի հանրակացարանում «բանտարկվածները»: Գոչելով **«ա - մոթ ձեզ, ա - մոթ ձեզ»**, ցուցարարները շարունակեցին իրենց ճանապարհը, Ղուկասյանի այգու մոտով դուրս ելան Աբովյան, պետական համալսարանի հին շենքի մոտ:

Հայտնում եւ հայտարարում եմ ամենայն պատասխանատվությամբ, որ ամբողջ ճանապարհին, սկզբից մինչեւ վերջ, ցուցարարները չտրորեցին ոչ մի խոտ կամ սեզ, մի բան, որ համարյա անխուսափելի է նման մասսայական երթերի ժամանակ: Հանդիպող տրանսպորտը կանգ էր առնում՝ ճանապարհ տալով երիտասարդությանը, եւ վարորդները, ի նշան համերաշխության, շչակում էին ամբողջ ժամանակ: Ցուցարարները թակում էին տրամվայի եւ ավտոբուսի վագոնների ապակիները, առաջարկելով այնտեղ նստածներին՝ դուրս գալ եւ միանալ իրենց: Միայն մի անգամ, մի երիտասարդ, պորտֆելով խփելով ապակուն, անզգուշաբար ջարդեց այն, բայց իսկույն վրա հասան ուրիշները եւ խրատեցին ու սաստեցին նրան:

Համալսարանի հին շենքի մոտով իջնելով նորից Կիրովի փողոց եւ ապա Նալբանդյանի մոտով մտնելով Չարենցի փողոցը, ցուցարարները անցան համալսարանի նոր շենքի մոտով, իջան Սայաթ-Նովայի փողոցը, ապա Նալբանդյան, եւ անցնելով հրապարակով դեպի Շահումյան եւ Պիոներական փողոցները, դուրս ելան Օրջոնիկիձեի պողոտա եւ քայլերն ուղղեցին դեպի Պանթեոն, դեպի Կոմիտասի գերեզմանը: Գերեզմանի վրա ելույթներ ունեցան մեր մի քանի գրողները, գիտնականներ եւ երիտասարդ տղաներ ու աղջիկներ: Դա սկզբից մինչեւ վերջ մի օրինակելի եւ հիանալի ցույց էր, որը հպարտությամբ էր լցնում մեր սրտերը մեր սքանչելի երիտասարդության համար:

Ի՞նչ էին ուզում նրանք: **«Հողերը, հողերը»**՝ բղավում էին նրանք իրենց գլխավոր լոզունգը: Ուղղված էր ցույցը որեւէ մեկի դեմ: Ո՛չ, քանի որ մեր մայրաքաղաքում չկային ոչ թուրքական դեսպանություն, ոչ մի այլ այդպիսի բան: Ցույցը ուղղված չէր ոչ ոքի դեմ: Ցույցն ուղղված էր պատմական անարդարության դեմ: Եւ ցույցը հասցեագրված էր մեր ժողովրդին եւ նրա հարազատ կառավարությանն ու կուսակցությանը: Դիալեկտիկական միասնությամբ հանդես էին գալիս բուռն ընդվզումը եւ օրինակելի գիտակցականությունն ու կարգապահությունը: Ոչ մի անքույլատրելի արարք, ոչ մի դատապարտելի խոսք, ոչ մի մեղանչում ժողովուրդների եղբայրության դեմ եւ այլն եւ այլն: Եվ եթե գտնվեին էլ ցույցը ծուռ շավղով տանել ցանկացողներ, նրանց առաջին իսկ փորձը պիտի խեղդվեր իր բնի մեջ: Դա խորհրդային հայ երիտասարդների, հայ ժողովրդի երիտասարդ զավակների ցույցն էր:



Վերադառնալով տուն եւ մի ժամ հետո շտապելով Օպերայի թատրոն՝ սգահանդեսի, ես տեսա Լենինի պողոտայով անցնող տասնյակ ու տասնյակ հազարավոր ցուցարարներին: Օպերայի թատրոնն օղակված էր մի քանի շրջանակներով, միլիցիոներներով: Գուցե այդպես էր պետք պետականորեն, ես այդ չգիտեմ, բայց տպավորությունը շատ վանող էր եւ տհաճ: Եվ արդեն խիստ գարշելի էր, երբ մուտքի մոտ, երկու տեղով, անծնագիր էին հարցնում յուրաքանչյուր ներս մտնողից... Ես ասացի. «Ես գրող Սկրտիչ Արմենն եմ»: Բայց ի՞նչ Արմեն, տա աստված, որ նրանք ճանաչեին գոնե Զոհրապին ու Վարուժանին, այդ հայակերպ անհայրենիք մարդիկ, երեսունյոթ թվից մնացած, որոնց վրա է դրվում այդպիսի դեպքերում ժողովուրդը ժողովրդից «պաշտպանելու» պարտականությունը ...

Ի՞նչ կարող եմ ասել հանդիսավոր երեկոյի մասին: Դա ավելի հանդիսավոր էր, քան սգավոր: Չեմ ասում, թե պետք էր վերածել լացի ու կոծի երեկոյի: Բայց բեմի վրա ոչ մի տեղում գրված չէր ոչ **«50»** եւ ոչ էլ **«1915»** ... Ծափերը հաջորդում էին ծափերին, կարծես քեֆի եւ ուրախության երեկույթ էր հրավիրված: Ընդ որում, դահլիճի մի կողմում, զգվելի ափաշկարայությամբ, նստեցված էին «ծափեր սկսողների» կադրերը, որոնք ծափահարում էին հանրահայտ տեղերում, իսկ մի շարք կարեւոր մոմենտներում լռում էին, որ «հանկարծ մի բան դուրս չգա» ...

Ընկ. Ն. Հարությունյանի խոսքը եւ Վ. Համբարձումյանի զեկուցումը, ինչ խոսք, լավ էին եւ խիստ արժեքավոր: Դահլիճը եւ, ինչպես հետո իմացվեց, հեռուստատեսությամբ ու ռադիոյով լսողները, գոհ մնացին:

Դեռ չէր ավարտվել ընկ. Համբարձումյանի զեկուցումը, երբ դրսից սկսեցին լսվել ցուցարարների թնդուն ծայները: Բեմի վրա նստածներն անհանգստացան, խառնվեցին իրար, սկսեցին ներս ու դուրս անել: Հանդիսավոր մասը փակվեց, մենք դուրս ելանք ֆոյե:

Դուրս գալով վերին ֆոյե, ես լսեցի նախազգուշական խոսքեր. «չմոտենալ լուսամուտներին, խփում են քարերով»:

Ես ապշեցի եւ մինչեւ իսկ չհավատացի: Ի՞նչպես կարող են քարեր նետել ամբողջ օրվա ընթացքում իրենց այդքան օրինական պահած երիտասարդները, ուսանողությունը: Առաջին միտքը, որն ըստ շաբլոնի գալիս է մեր գլուխն այդպիսի դեպքերում, այդ այն է, որ՝ «խուլիգանական տարրերը, օգտվելով առիթից, կատարում են վարկաբեկիչ արարք»: Քիչ մնաց, որ ես եւս մտածեի այդպես:

Բոլորովին չարդարացնելով Օպերայի թատրոնը քարկոծելու ամոթաբեր դեպքը, ես, այնուամենայնիվ, պիտի ետ վանեմ այն ծեւակերպումը, թե դա խուլիգանական տարրերի գործն էր: Ես կասեի այսպես. դա ցուցարարների առավել անզուսպ տարրերի գործն էր, անզուսպ տարրերի, որոնց առիթ էր տվել մի վերին աստիճանի խայտառակ եւ զայրացուցիչ դեպք:

Ինչպես հետագայում պարզվեց, ցուցարարները, ընկ. Համբարձումյանի զեկուցման ավարտից հետո, իրենց մի քանի ընկերներին ուղարկել էին ներս, իմանալու համար ընկ. Քոչինյանից իրենց նրան տված թղթերի պատասխանը: Բայց, ներս ընդունելով այդ մի քանի երիտասարդներին, այլեւս դուրս չէին թողել եւ, ըստ բազմաթիվ վկայությունների, ծեծել էին եւ ուղարկել շտապ օգնության մեքենաներով: Ապա այդ պատճառով էլ գազազել էին հավաքվածները եւ քարկոծել շենքը:

Ինչպես հայտնի է, միջազգային օրենքները խիստ կերպով դատապարտում են նույնիսկ այն դեպքերը, երբ թշնամու բանակից թշնամու բանակն ուղարկված պատգամավորությանը դիմավորեն այդպես: Ուր մնաց այն դեպքը, երբ խորհրդային ուսանողությունն իր ներկայացուցիչներին ուղարկում է իր հարազատ կառավարության նախագահի հետ խոսելու:

Եթե ստույգ է այս խայտառակ արարքը, ապա դրա հեղինակին կամ հեղինակներին հարկավոր է դուրս շպրտել մեր կուսակցության շարքերից եւ վտարել իր իզուր գրաված վարչական դիրքից:

Այսպիսով, շենքի քարկոծումը ոչ թե արդարացվում, այլ միանգամյան պայմանավորվում է դրան նախորդող այդ զայրացուցիչ արարքի հետ:

Սակայն, դժբախտաբար, դրանով չսահմանափակվեց անխելք վերաբերմունքը դեպի ցուցարարները: Ինչ որ անպատասխանատու մարդու կարգադրությամբ բաց արվեցին շենքի հրշեջ ծորակները եւ սկսեցին ջուր շպրտել հավաքված ժողովրդի վրա...

Սա այնպիսի զայրացուցիչ արարք է, որ ես խոսքեր չեմ գտնում բնորոշելու համար: Եվ դրա հեղինակ բախտախնդիրը, ով էլ լինի նա, մի՞թե մնալու է մեր կուսակցության շարքերում: Վզակոթին պիտի տալ այդպիսի «ղեկավարի», որը գիտե ղեկավարել միայն ստալինյան ահաբեկումից ավտոմատների վերածված մարդկանց, բայց իսկական ժողովրդի հետ առաջին իսկ անգամ երես առ երես հանդիպելով կորցնում է իր չունեցած գլուխը եւ մեր սքանչելի ժողովրդին շփոթում կապիտալիստական երկրների իրավազուրկ պրոլետարների հետ, որոնց ցրում են ջրի շիթերով ... Թող ուրեմն միանգամյան բանական ու բնական համարի այդ մարդն այն փաստը, որ այդպիսի խայտառակ, ամոթաբեր արարքից հետո ապակի չմնաց շենքի լուսամուտներում եւ վրա տվող երիտասարդությունը դեպի ներս ուղղեց ջրի շիթերը:

Հարյուր կամ երկու հարյուր երիտասարդ ցուցարարների հաջողվեց վերջապես մտնել դահլիճ: Ես սխալ ասացի: Եթե ուզենային ներս մտնել բոլորը, դա կհաջողվեր բոլորին, քանի որ շենքի մուտքի մոտ փաստորեն ճզմված էր պաշտպանությունը: Բայց, ի պատիվ մեր սքանչելի երիտասարդության, պիտի ասել, որ հնարավորություն ունենալով բոլորը միասին ներխուժել դահլիճ, նրանք չարեցին այդ, այլ ուղարկելով մի կամ



երկու հարյուր մարդու, հանգիստ սկսեցին սպասել նրանց դուրս գալուն եւ պատասխան բերելուն:

Բայց այդտեղ, դահլիճում, տեղի ունեցավ մի բան, որի մասին ես չեմ կարող չարտահայտել իմ միանգամայն բացասական վերաբերմունքը: Ես այդ մասին ուզում եմ որոշակի եւ առանց դես ու դեն գցելու ասել մեր Կենտրոնական կոմիտեին, մեր ղեկավարներին: Վերջիվերջո, եթե մեր կառավարության եւ կուսակցության ղեկավարները ներկայացուցիչներն են մեր ժողովրդի, ապա ես եւս, որպես մեր գրողներից մեկը, իրավունք ունեմ համարելու ինձ նույն այդ ժողովրդի ներկայացուցիչներից եւ հոգեւոր ղեկավարներից մեկը եւ խոսելու ձեզ հետ այդ մասին բացեիբաց:

Նախագահության սեղանի ետեւում նստածները, փոխանակ հանդես գալու եւ երիտասարդների ներկայացուցիչների հետ խոսելու, բացատրելու, հուսի մեջ դնելու նրանց ընդվզումը եւ զսպելու չափազանցությունները, փակեցին վարագույրը եւ շտապեցին հեռանալ Օպերայի թատրոնից... Առաջին անգամը լինելով, վար իջավ բեմի երկաթե վարագույրը: Մի սիմվոլիկ արարք, որն անջրպետեց ժողովուրդն իր կառավարությունից եւ կուսակցության կենտրոնական կոմիտեից... Մի՞թե դա այդպես է իրականում, միթե մեզ մոտ միասնական չեն ժողովուրդ, կուսակցություն, կառավարություն: Ինչի՞ էր հարկավոր դա...

Ես դահլիճում էի եւ պիտի հայտարարեմ ամենայն պատասխանատվությամբ ներս եկած մի կամ երկու հարյուր երիտասարդներից եւ ոչ մեկը, կրկնում եմ, եւ ոչ մեկը իրեն թույլ չտվեց որեւէ անվայել արարք կամ խոսք: Ուղղակի խղճահարություն էր առաջացնում, թե ինչպես նրանք, հրշեջ խողովակներից ջրից թրջված, հագուստները մարմիններին կպած, ներս եկան եւ համեստաբար գրավեցին ամենաետին աթոռները, թեեւ կարող էին գրավել նաեւ ամենաառաջինները, քանի որ հրավիրատոմսավոր «թորված» հասարակությունը, վախենալով, թե «հանկարծ մի բան դուրս չգա», շտապել էր հեռանալ դահլիճից եւ համարյա բոլոր տեղերն ազատ էին մնացել:

Այն,ինչ որ պիտի աներ մեր կառավարության կամ կուսակցության ղեկավարներից որեւէ մեկը, այսինքն՝ խոսեր դահլիճ մտած կամ դրսում սպասող երիտասարդության հետ, արեց ... ամենայն հայոց կաթողիկոսը:

Յուրաքանչյուր ազնիվ կոմունիստ, ազնիվ հայ, հեռատես քաղաքագետ, տակտի տեր ղեկավար, հմուտ հռետոր, երկու ձեռքով կստորագրեր նրա ամեն մի բառի տակ: Նա ասաց այն, ինչ որ պետք էր ասել տվյալ պահին: Նա խոսեց ոչ թե «սեւասքեմ կրոնավորի» պես, այլ իսկական խորհրդային մարդու: Պատիվ նրան:

Ես չեմ կարող վերարտադրել նրա սքանչելի խոսքը, առանց վախենալու, որ իմ անօգնական բառերով կփչացնեմ դա: Նա խոսեց մի քանի անգամ, մոտ մի ժամ, եւ մոտավորապես սա էր նրա խոսքը. - «Սիրելիներ, սիրելի երիտասարդներ, ես միանգամայն բաժանում եմ ձեր զգաց-

մունքները, սակայն հասկացեք, սիրելիներ, ամեն ինչ այնքան հեշտ չի լուծվում, որքան որ դուք եք ցանկանում: Կան միջազգային նշանակություն ունեցող հանգամանքներ, կան այլեւայլ շատ պատճառներ: Մենք սպասել ենք հիսուն տարի, մի՞թե չպիտի կարողանանք սպասել եւս այնքան, որքան որ հարկավոր է: Վստահ եղեք, որ ձեր կառավարությունը եւ կուսակցությունը կանեն եւ անում են ամեն բան, որպեսզի լուծվեն մեր առաջ կանգնած բոլոր հարցերը» եւ այլն եւ այլն:

Եթե, կրկնում եմ, այդ իմաստուն խոսքերն ասեր ոչ միայն մեր եկեղեցու, այլեւ մեր կառավարության մի ղեկավար ընկեր, ամեն ինչ կընկներ հունի մեջ եւ տեղի չէին ունենա չափազանցություններ, կամ ընդվզումը դուրս չէր գա խելացիության կոնտրոլի տակից:

Ինչ ապացուցեցին 1965 թվի ապրիլի 24-ի այդ դեպքերը: Ապացուցեցին այն, որ մեր մի շարք ղեկավար ընկերները նախապատրաստված չէին ղեկավարելու այսօրվա մեր ժողովրդին: Նրանք դեռ դատում էին երեկվա օրով, ստալինյան ժամանակի ժողովրդի մասին ունեցած իրենց պատկերացումներով, երբ բավական էր, որ որեւէ Բադալ ասեր՝ «թողեք հրապարակը», եւ մարդիկ թողնեին հրապարակը: Բայց այսօր մեր ժողովուրդն այլ է, իսկական ժողովուրդ է, եւ նրան հարկավոր է ղեկավարել այլ կերպ: Կա մի հին եւ իմաստուն ասացվածք. «ղեկավար՝ աստծու ողորմածությամբ»: Այժմ հարկավոր է ղեկավար լինել «աստծո ողորմածությամբ», այսինքն՝ ունենալ իսկական տվյալներ այդպիսին լինելու եւ ոչ հույս դնել այն բանի վրա, որ Կենտկոմն առաջադրել է իմ թեկնածությունը եւ ժողովուրդը քվեները կիջեցնի իմ քվեատուփի մեջ:

Ներողություն եւ հազար ներողություն, որ ես, բարձր քաղաքականությունից միանգամյան բոբիկ մարդս, սովորական եւ հասարակ գրողս, այսպիսի խոսքեր եմ գրում մեր կուսակցության կենտրոնական կոմիտեի կարող եւ հմուտ ընկերներին: Բայց ես դա անում եմ ոչ թե նրա համար, որ ինձ համարում եմ նրանցից ավելի խելք, ոչ բոլորովին, այլ որ այդտեղից, ներքեւից, իրերն ու երեւույթները երեւում են ավելի հստակ, իրենց գույներով, եւ ես պարտավոր եմ համարում ինձ՝ ասել այդ մասին իմ ճիշտ կամ սխալ մտքերը մեր կուսակցության կենտրոնին:

Իսկ այն, ինչ տեղի ունեցավ հաջորդ օրը, ապրիլի 25-ին, վեր է ամեն մի խայտառակությունից: Այն, որ զինվորները, միլիցիոներները, դրուժինննիկները եւ այլ մարդիկ շրջափակել էին հրապարակը, որպեսզի թույլ չտան երիտասարդությանը հավաքվել այդտեղ, գուցե եւ ճիշտ էր, թեեւ, իմ կարծիքով, ճիշտը կլիներ հայտարարել ռադիոյով եւ հենց ինքներդ հավաքել նրանց հրապարակում կամ ստադիոնում: Կրկնում եմ, դա իմ խելքից բարձր բան է եւ չեմ ուզում այդտեղ ինչ որ հատուկ կարծիք ունենալ: Բայց այն, ինչ որ կատարվում էր դատարկ հրապարակի վրա բացվող փողոցների անկյուններում, ամենամեծ խայտառակությունն էր այդ օրերի ընթացքում: Միանգամայն անմեղ կանգնած երիտասարդներին ու պատանիներին բռնում, ոլորում էին թեւերը եւ նետելով երիցս անիծյալ «սեւ ագռավ» ավտոմեքենաները տանում: Եւ այդ խայտառակ օպերացիան անձամբ ղեկավարում, անձամբ մեր պատանիների թեւերը ոլորում էին մեր շրջկոմների որոշ քարտուղարներ: Զզվելի էր այդ բոլորին նայելը եւ նրանք ոչինչ չէին շահում՝ բացի բուռն ատելությունից, այդ թվում նաեւ իմ ատելությունից եւ ինձ նման հազարավորների:



Ես գիտեմ, երեխա չեմ, որ միջազգային ինչ-ինչ նկատառումներով հարկավոր չէր կպչել «թուրքերի խաթրին»: Բայց միթե դա նշանակում էր կպչել սեփական ժողովրդի խաթրին, վիրավորել նրա ամենանվիրական զգացմունքները:

Մեր ղեկավար ընկերները պետք է լուրջ դասեր հանեն այս ամենից: Թող ոչ ոք չկասկածի, որ այսուհետեւ մեր ժողովրդն ամեն տարի է տոնելու եղեռնի սգատոնը: Եւ եթե Թուրքիայի լկտի ղեկավարներն այնքան անամոթաբար հարձակվում են բաց անել իրենց մոտ հայ ժողովրդի դահիճ Թալեաթի արձանը, ապա մենք խիստ ուշացել ենք, որ չենք բաց արել նրան շանսատակ անող, ժողովրդական անմակ վրիժառու եւ հերոս Սողոմոն Թեհլիրյանի արձանը: Բայց ես գիտեմ, որ սա ցանկությունների մինիմում չէ, այլ գուցե առայժմ մաքսիմում, եւ ես սա չեմ ասում որպես գործնական առաջարկ: Բայց որ հարկավոր է գլուխ խոնարհել մեր ժողովրդի վերածնված ոգու առջեւ եւ հունի մեջ դնել դրա ամեն մի արտահայտություն, չքողնել, որ դա թեկուզ մի փոքր չափով շեղվի իր խորհրդային, կոմունիստական ընթացքից, անկասկած է:

Թույլ տվեք սրանով ավարտել իմ այս նամակը եւ մի անգամ եւս վստահեցնել, որ մեր կուսակցության եւ կառավարության հետ են ոչ միայն մեր գրողները, մեր ինտելիգենցիան, մեր հասակավոր աշխատավորությունը, այլեւ այն սքանչելի երիտասարդությունը, որը հիսուն տարի առաջ դեռ գոյություն չունեցած ընդամենը երկու-երեք տասնամյակ առաջ ծնված, իր ազգային եւ սոցիալիստական պարտքն է համարում հավատարիմ ժառանգորդը դառնալ մեր ոչ միայն ազգային կուլտուրայի գանձերի, այլեւ ազգային մեծ եղեռնի, իր վրա վերցնել դրա մեկ եւ կես միլիոն զոհերի վերջին երազանքի իրագործման պարտականությունը, Խորհրդային Հայաստանն ավելի երջանիկ դարձնելու, իր հազարամյա հայրենիքըն ամբողջովին ազատ տեսնելու եւ շենացնելու պատմական պարտքը:

*Մկրտիչ Արմեն* [ստորագրություն]

26 ապրիլ 1965թ.
Երեւան

ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 165, թթ. 2-10:
Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 20

**[Գրողների միության կուսակազմակերպության ժողովի արձանագրություն]**

## ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ

**1965թ. ապրիլի 27-ի Հայաստանի Խորհրդային Գրողների միության կուսկազմակերպության դռնբաց ժողովի**

Ներկա էին 75 կուսակցականներ:
Ժողովի նախագահ Ս.Խանզադյան:
Ժողովի քարտուղար Ս.Ալաջաջյան:

**Օրակարգ**
**Հաղորդում «Եղեռնի 50-ամյակի նշման մասին»:**
Բանավոր զեկուցում՝ ընկ. Էդ. Թոփչյանի

*Էդ. Թոփչյան*

Ընկերներ, Հայաստանի Կենտրոնական Կոմիտեի Նախագահության որոշմամբ, մեր հանրապետությունում նշվեց եղեռնի 50-ամյակը: Եւ, իմ կարծիքով, նշվեց լավ: Հենց այս փաստն էլ ցույց է տալիս, որ մեր ժողովուրդը լավ է գիտակցում հիսուն տարի առաջ տեղի ունեցած ոճրի եւ այսօրվա մեր վերելքի նշանակությունը: Հիսուն տարի առաջ տեղի է ունեցել մի ահավոր կոտորած, մի կոտորած, որը մեր ժողովրդին զրկում էր հողից, կյանքից եւ իր ունեցվածքից: Անցել է հիսուն տարի, եւ ահա մեր ժողովուրդը ապրում է վերելք եւ վերածնություն: Եւ այս վերածնված ժողովուրդն է, որ հիմա նշում է եղեռնի հիսնամյակը, եղեռնը սուգ է, բայց վերածնված ժողովրդի սուգն է, ուստի պատշաճ ձեւով պետք է կատարվեր նրա նշումը: Ուզում եմ ասել, որ եղեռնը, եթե անգամ որպես սուգ նշեինք, ապա դա էլ սխալ ու անբնական չէր լինի, որովհետեւ մենք կորցրել ենք մեր ժողովրդի կեսին, եւ մենք հումանիստներ չէինք լինի, եթե անտարբեր լինեինք այդ մեծ վշտի հանդեպ, մենք մարդասեր չէինք լինի, եթե չդատապարտեինք այդ մեծ մարդասպանությունը: Ճիշտ վարվեց ՀԿԿ Կենտկոմը՝ նշելով եղեռնը, թե ոչ: Ես գտնում եմ, որ ճիշտ վարվեց:

*Ռեպլիկա*

Կան այնպիսի մարդիկ, որոնք կարծում են, թե սխալ էր նշելը:

*Ռեպլիկա*

Կան:

*Ռեպլիկա*

Չկան:

*Էդ. Թոփչյան*



Եղել են, բայց նշվեց եղեռնը: Եվ մեր ինտելիգենցիան մեծ մասնակցություն ունեցավ այս լավ գործին, այն տարավ ինտերնացիոնալիզմի ոգով, լինի դա շրջաններում, քաղաքներում, գործածարաններում կարդացված դասախոսություններով, լինի ելույթներով, որտեղ եւ որոնցով մեր մտավորականները դատապարտեցին գենոցիդը, եւ եղբայրության, բարեկամության կոչ արեցին, որպեսզի այլեւս չկրկնվեն նման ոճիրներ, չպատահի այն, ինչ պատահեց հայ ժողովրդի մյուս հատվածի հետ:

Այս իմաստով էլ մեր մտավորականության կատարած աշխատանքը, եղեռնի այս նշումը պետք է կատարվեր եւ սխալ կլիներ չնշելը: Այս հարցը վերացական չէր եւ կապված էր ավելի քան մեկ եւ կես միլիոն հայության բախտի հետ, որ դեգերում էր արտասահմանում: Եւ մենք լավ կոմունիստներ չէինք լինի, եթե հարազատ ժողովրդի նկատմամբ հոգատարություն չցուցաբերեինք:

Բայց այն, ինչ տեղի ունեցավ ապրիլի 24-ին, պետք ունի ճիշտ մեկնաբանության եւ ճշմարիտ գնահատության: Մենք պետք է մեր գնահատականը տանք կատարված դեպքերին:

Այսպես եղավ 24-ին: Ցերեկը Լենինի հրապարակում հավաքվել էին բազմաթիվ երիտասարդներ: Հավաքույթը տարերային էր, եւ անհրաժեշտ էր, որ այդ տարերային հավաքի առաջ հանդես գային Քաղկոմի քարտուղար Բադալ Սուրադյանն ու Սերո Խանզադյանը, կեսօրին ելույթ ունեցան նաեւ Մինիստրների Սովետի նախագահ Քոչինյանը, Ակադեմիայի պրեզիդենտ Համբարձումյանը, որից հետո թափորը շարժվեց դեպի պանթեոն, ապա պանթեոնից դեպի Սպանդարյանի անվան հրապարակը, իսկ երեկոյան հասել էր օպերայի շենքի մոտ, լցվել շենքի հրապարակը: Հենց այստեղ էլ խուլիգանները օգտվել էին խառնաշփոթ հավաքից, քար էին նետել, ջարդել ապակիները եւ ներս խուժել: Նրանք ձեռք էին բարձրացրել մեր կուլտուրայի տաճարի վրա, նրանք թույլ էին տվել ամենակոպիտ անկարգություն: Ահա այս երեւույթի գնահատականն էր, որ մենք պետք է տանք: Ինչպես կարող ենք գնահատել այն:

Ընկերներ, պարզ է բոլորիս համար, որ մեր քաղաքականությունը անջատ չէ ԽՍՀՄ-ի քաղաքականությունից: Մենք ունենք պետականություն, չենք կարող անկազմակերպ, տարերային, թափթփված ելույթները չդատապարտել: Վայել է մեր ժողովրդին, որ երբ նշվում է եղեռնն ու երբ այն հաղորդվում է հեռուստատեսությամբ, ռադիոյով, ջարդել դռներն ու ապակիները: Ում վրա էին քար նետում նրանք եւ ինչի վրա: Եվ այդ մարդիկ Կոմիտասի սրբազան նկարը վերցրած, կուլտուրայի մեծ հանճարի նկարը բերելով իրենց հետ, քար էին նետում կուլտուրայի մի մեծ օջախի վրա, որ հանճարեղ Սպենդիարյանի անունն է կրում: Այս արարքը ըստ էության խուլիգանական արարք է եւ չենք կարող չդատապարտել այս երեւույթը: Այդ տականքները խանգարեցին երեկոն, որի միայն առաջին մասն էր ավարտել: Ինչ պիտի ասեին այդ քար նետողները եղեռնի առ-

թիվ: Միթե նրանք ավելի խելացի, ավելի հմուտ, ավելի բնորոշող բան կարող էին ասել սուլթանական երկրի կազմակերպած գենոցիդի մասին, քան ասվեց զեկուցողի կողմից: Շատ լավն էր այդ երեկոյի զեկուցումը:

*Ռեպլիկա*

Սքանչելի էր:

*Ռեպլիկա*

Հարուստ էր եւ բովանդակալից:

*Էդ. Թոփչյան*

Եվ այդ անարժան մարդիկ խանգարեցին երեկոն, իսկ մենք չենք կարող այդ անարժան մարդկանց վերաբերմունքը չդատապարտել:

Պիտի ասել, որ խոհեմ վարվեց մեր Կենտկոմը եւ բռի միջոցների չդիմեց: Վերջին տարիներին, ի միջի այլոց ասեմ, որ մեծ գործեր է կատարել Հայաստանի Կենտկոմը: Ես մոտիկից գիտեմ եւ այս ասում եմ վստահ: Հենց եղեռնը նշելը ինքնին մի փաստ էր: Հնարավոր է, որ կատարված միջոցառումները չէին սպառում մեր հոգեկան պահանջները եւ հնարավոր է, որ լինեին ու կային կազմակերպական թերություններ, գուցե լուրջ թերություններ, բայց դրանք չեն արդարացնի կատարված խուլիգանական արարքը, այսինքն դա առիթ չէր կարող տալ նման խուլիգանության: Վատն այն է, որ այս արարքից օգտվեցին թափթփուկ էլեմենտներ եւ հակահասարակական տարրեր ու գրգռեցին ժողովրդին:

Ահա սա էր ցավալի, եւ այն դատապարտելի է:

*Սիլվա Կապուտիկյան*

**(ելույթը գրավոր է)**

1965 թվի ապրիլի 24-ին երեկոյան Երեւանի օպերայի թատրոնի առաջ տեղի ունեցած դեպքերի պատճառները քննելիս կարելի է եւ շատ խորքերը գնալ, հասնել մինչեւ դարերի հեռուները եւ մեղքը գցել մեր նախահոր՝ Հայկ Նահապետի վրա, որ իր տոհմին իբրեւ բնակատեղի ընտրեց՝ ցեղերի ու բանակների ոտքի կոխան դարձած, այս բազմաչարչար հողը, ու նաեւ կարելի է հարցը բացատրել մի երկու տասնյակ հակահասարակական տարրերի անվայել արարքով: Այսօրվա մեր ժողովրդի շրջանակների մեջ չի մտնում այդքան խորաթափանց էքսկուրսաները, թերեւս մի ուրիշ տեղ եւ մի ուրիշ անգամ այդ արվի... Մեզ մնում է այդ դեպքերը գնահատել եւ վերաբերմունք ցույց տալ ավելի նեղ առումով:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի որոշմամբ, որը հավանություն էր գտել Խորհրդային Միության Կոմկուսի Նախագահության կողմից, պետք է նշվեր 1915 թվին իթթիհադական Թուրքիայի կազմակերպած հայկական կոտորածների հիսունամյակը:

Մենք գիտեինք, որ մեր հայաստանյան կյանքում միշտ անպակաս բանսարկու «մատերիալիստները» ինչպես միշտ, այնպես էլ եղեռնի առթիվ նամակներ էին ուղարկում կենտրոնական օրգաններին, հանդես գալով այդ տարեթվի նշման դեմ: Եւ հիմա, երբ, ի երջանկություն իրենց, տոնակատարության ընթացքում տեղ գտան որոշ հիվանդագին երեւույթներ, նրանք չարախնդում եւ կարծում են, ահա եկավ ժամանակը հաստատելու իրեն «ճշմարտությունը»: Կան մարդիկ էլ, որոնք այդ ամբողջ ժամանակ ջուրը բերանն առած սպասում էին եւ հիմա փորձում են հետին թվով մարգարեանալ եւ հայտարարել, թե կարիք չկար անդրադառնալ այդ տարեթվին:



Կարծում եմ, որ մեր ժողովրդի ընդհանուր կարծիքը պիտի հայտնած լինեմ, եթե ասեմ, որ անհրաժեշտ էր, պատմական եւ քաղաքական մոմենտի թելադրանք՝ անդրադառնանք այդ տարեթվին, նշել այն պետականորեն, այն անհրաժեշտ լայնությամբ եւ լրջությամբ:

Այս կարծիքի ընդդիմախոսները բացատրում են, թե չպետք է առաջնորդվել էմոցիաներով, բանաստեղծական ոգեկոչումներով, այլ քաղաքականության թելադրանքով: Իսկ այս տեսակետից ելնելով, ըստ այդ ընկերների, չէր հասունացել պատմական այն իրողությունը, երբ եղեռնը կարող էր դառնալ քաղաքական կամպանիա, ստանալ քաղաքական հնչեղություն:

Ես քաղաքագետ չեմ, այլ բանաստեղծ, սակայն կփորձեմ առայժմ մի կողմ դնել էմոցիաները եւ փաստարկել իմ ասելիքը քաղաքական տեսակետից:

Հայկական հարցը հին հարց է: Աշխարհի մեծ պետությունները ուզածին պես շահագործել են այդ հարցը, արծարծել այն, քաշել-քաշքշել, երբ դա անհրաժեշտ է եղել իրենց շահերին: Հիմա էլ քիչ չեն այդպիսի դեպքերը: Հիշենք միայն ամերիկյան պրեզիդենտության հավակնորդ Գոլդուոտերը, որը փորձեց՝ յուրովի հարթություն տալ իր նախորդների կողմից բազմիցս քաշքշված պրոբլեմին եւ իրեն ձայն խոստացող դաշնակցական պարագլուխների թելադրանքով առաջ քաշեց «Հայաստանը ազատագրելու» հարցը: Եվ ահա այն դեպքում, երբ ողջ աշխարհի հայությունը եւ նրանց հետ միասին՝ օտարերկրյա շատ գործիչներ, գրողներ, կազմակերպություններ, երկրներ, եկեղեցիներ, նույնիսկ Հռոմի պապը, նշում են հայկական եղեռնի հիսնամյակը, երբ հայաշատ գաղութներ ունեցող օտար պետությունները, ինչպես Լիբանանը, Ուրուգվայը, Ամերիկայի որոշ նահանգներ, եւ այլն, այդ տարեթիվը նշում են պետականորեն՝ ապրիլի 24-ը սգի օր հայտարարելով, ինչ պատկեր կստացվեր, եթե հայ ժողովրդի բուն հայրենիքում լռության մատնվեր եղեռնի հիսնամյակը: Արդյոք դա նոր, ավելի խոսուն ապացույց ու զենք չէր դառնա գոլդուոտերների ձեռքին՝ ուղղված Սովետական Միության ազգային քաղաքականության դեմ, մանավանդ պատմական ներկա պայմաններում, երբ երկու տարբեր սիստեմների՝ իմպերիալիզմի ու սոցիալիզմի բախումները գնում են նաեւ աշխարհի զարթնող ազգերին, ազգային-ազատասիրական շարժում ծավալողներին՝ իրենց կողմը գրավելու ուղղությամբ:

Մյուս խնդիրը: Աշխարհասփյուռ հայությունը նայում է Խորհրդային Հայաստանի վրա, որպես իր հայրենիքի, իր հույսի ու ապավենի վրա: Ինչ պատկեր կստացվեր, եթե այդ հայրենիքը չհարգեր իր միլիոն ու կես զոհերի հիշատակը, որ տեր չկանգներ փրկված մյուս կեսի՝ սփյուռքահայության՝ բաղձանքներին, իր զայրութի ծայնը բարձրացներ ցեղասպանության դահիճների դեմ: Արդյոք դա չէր խարխլի հայության հավատը դեպի իրենց հայրենիքը, չէր սառեցնի մեր բարեկամ հայ կուսակցություններին, հիմնավորապես չէր խանգարի մեր գաղափարակիցների աշխատանքին արտասահմանում: Իհարկե, իրենց ժողովրդի ճակատագրով չմտահոգված, ապահով պաշտոնը, սեփական անդորրն ու առատ ճաշասեղանը ամեն ինչից վեր դասող մարդկանց համար՝ հերն էլ անիծած, թե ինչ-որ հեռու տեղ ապրող մի հայ պաղ կնայի հայրենիքին: Բայց չէ որ հայ ժողովրդի ճակատագրից բացի, կա նաեւ մի ուրիշ մոմենտ:

Արտասահմանի հայաշատ երկրներում, հատկապես արաբական արեւելքում հայրենասեր հայերը՝ սիրելով Հայաստանը, սիրո եւ համակրանքի մթնոլորտ են ստեղծում նաեւ ողջ Խորհրդային Միության շուրջը: Մի բան, որ շատ գնահատելի եւ օգտակար է Խորհրդային Միության արտաքին հարաբերությունների համար: Արտասահմանյան հայերի հիասթափությունը վնաս չէր բերի նաեւ այս տեսակետից:

Եւ վերջապես ուրիշ, ամենակարեւոր քաղաքական նկատառումը: Պատմական փաստ է. կիսամեռ հայ ժողովուրդը աչքերը բացեց, կյանքի կոչվեց եւ սկսեց նորից ապրել շնորհիվ խորհրդային կարգերի: Խաբված «եղբայրություն եւ հավատարմություն» լոզունգներին հավատացող, բայց նույն պահին «եղբայրների» կողմից տմարդորեն սրահարվոր մեր ժողովուրդը միայն խորհրդային ժողովուրդների ընտանիքում կարողացավ ապահով զգալ իրեն, ստացավ ինքնավստահություն եւ հավատով ու հույսով սկսեց կառուցել իր հայրենիքը: Այս բոլորի մասին ասել, ապացուցել, ցույց տալ աշխարհին եւ սրանով իսկ հաստատել կոմունիստական գաղափարների ճշմարտությունը, միթե սա պակաս քաղաքական կամպանիա է, ունի պակաս քաղաքական հնչեղություն:

Սակայն, թողնենք քաղաքականությունը եւ այնուամենայնիվ վերադառնանք անիծյալ էմոցիաներին:

Ամեն օր մեր թերթերը լցված են ֆաշիստների անցյալ գործունեությունների պատկերներով, արդարացի կոչերով՝ չբավարարվել նյուրենբերգյան դատավարություններով, այլ շարունակել այդ գազանությունների հեղինակներին հետապնդելու գործը, չներել գենոցիդի դահիճներին՝ թեկուզ անցնի քսան տարի եւ ավելի: Ամեն օր մեզ արդարացի կոչեր են ուղղվում ծայն բարձրացնել՝ ի պաշտպանություն այս կամ այն նահանգում խոշտանգված նեգրերի կամ բռնաբարված աֆրիկուհու, դատապարտել աշխարհի այս կամ այն ծայրում անարդարորեն սպանված աֆրիկացի կամ իսպանացի հայրենասերի դահիճներին եւ այլն, եւ այլն:



Ինչպես կարող է որ հայ մարդու, իր հարազատների մահուն ու խոշտանգումն տեսած կամ պատմածներից իմացած հայ մարդու հոգում չառաջանան անխուսափելի զուգահեռներ, չհառնի ամենաարդար հարցումը. հապա ինչու են մոռացության մատնվել մեր զոհերը, ինչու ժամանակին ի լուր աշխարհի չդատապարտվեցին հիտլերյան ցեղասպանների նախորդները, ինչու գոնե հիմա մեր խորհրդային պետությունը եւ աշխարհի ամբողջ ծայնով չի նշանակվում մի ողջ ժողովրդի կեսը բնաջնջող թայլաթներին եւ այլն եւ այլն: Ճիշտ է, սրանք էմոցիաներ են, այն էլ փոքրաթիվ ժողովրդի էմոցիաներ, բայց չպետք է արհամարհել այդ էմոցիաները, պետք է հաշվի նստել դրանց հետ, որքան էլ դրանք երբեմն անհարիր լինեն պետության ընդհանուր քաղաքականությունը: Շատ ցավ տեսած ազգի պսիխիկան նման է շատ ցավ տեսած մարդու պսիխիկային: Այն ավելի նրբազգաց է, հհիվանդագին չափերի ինքնասեր, դյուրագրգիռ: Լենինը ժամանակին իրեն հատուկ խորաթափանցությամբ նկատել է սա եւ զգուշացրել, որ փափկանկատ պետք է լինել եւ չվիրավորել փոքր ժողովուրդների նույնիսկ ամենաչնչին ազգային զգացումները: էլ ուր մնաց դիպչել հայ ժողովրդի ամենացավոտ տեղին, անուշադրության մատնել նրա կյանքի ամենաողբերգական էջը, արժանին չմատուցել նրա անհամար անմեղ նահատակների հիշատակին:

Եւ ահա տեղի ունեցավ հոգեբանական բարդ պրոցես:

Համարյա երկու տարի Հայաստանի ժողովուրդը սպասողական վիճակի մեջ էր. պետք է նշեն թե չնշեն եղեռնի հիսնամյակը: Անընդհատ գալիս էին ժխտող ու հաստատող լուրեր, թերահավատ ու լավատես պնդումներ: Վերջապես ապրիլի 24-ից միայն ամիս ու կես առաջ պաշտոնապես հայտարարվեց, թե տարեդարձը նշվելու է: Սա որոշ չափով հանգստացրեց լարված ներվերը, քանի որ բոլորը կարծեցին, թե ապրիլից սկսած թերթերում եւ ռադիոյում մինչ այդ երեւացող հատ ու կենտ հոդվածները ավելի հաճախակի պիտի դառնան, պիտի սկսվի եղեռնին նվիրված միջոցառումների շարքը՝ գիտական սեսիաներ, գրական-երաժշտական երեկոներ, ցուցահանդեսներ, ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ եւ այլն:

Սակայն, դժբախտաբար, հենց ապրիլի սկզբներին գործը հակառակ ընթացք ստացավ: Հարգելի եւ անհարգելի նկատառումներով սեղմվեցին բոլոր զսպանակները: Ռադիոն եւ պաշտոնաթերթերը աշխարհում էլ ինչի մասին ասես որ չգրեցին ու չասացին, բացի եղեռնին վերաբերող նյութերից: Չկայացան ենթադրելիք ցուցահանդեսները, ֆիլհարմոնիայի գրական երաժշտական երեկոները եւ այլն: Հապճեպ կազմակերպված բարեկամության երեկոներին՝ փոխանակ մեզ հյուր եկած եղբայրական ժողովուրդների ներկայացուցիչներին վստահորեն եւ հարազատորեն մասնակից դարձնելու մեզ համակած զգացումներին եւ ամբիոնից լսելի անելու նրանց սրտացավ խոսքը մեր անցյալ ողբերգության մասին,

անհեռատես եւ աննրբանկատ ձեւով այդ երեկոների ընթացքում բառ իսկ չարտասանվեց եղեռնի մասին, կարծես թե անվայել մի բան էր դա, որը պետք է թաքցնել հյուրերից:

Ահա այս բոլորը միասին վերցրած վիրավորեց ու նյարդայնացրեց մարդկանց, նորից ստեղծեց լարված իրավիճակ, կրքերի բորբքում: Մինչդեռ հարկավոր էր հիսուն տարվա լռությունից, եւ այնուհետեւ երկու տարվա սպառողական անորոշ դրությունից ստեղծված՝ զգացումների կուտակումը ապրիլ ամսին մաս առ մաս սպասել, ձեւեր ու միջոցներ գտնել այդ կատարվածը հունի մեջ դնելու համար: Հայ ֆիլհարմոնիային՝ հայ արվեստի ու գրականության անցյալը եւ ներկան խորհրդանշող իր տասնօրյակը պիտի ունենար, նկարիչներ՝ իրենց ցուցահանդեսը, թատրոնն ու օպերան՝ իրենց ներկայացումները, գրողները՝ իրենց լայն երեկոները: Մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը պետք է վճռական դեր խաղային այդ գործում, հատկապես ապրիլ ամսին պարբերաբար անդրադառնային այդ տարելիցին, ինչպես անում էին Մաշտոցի, Սայաթ-Նովայի օրերին: Պետք է բաց թողնվեին հիսնամյակին նվիրված կրծքանշաններ, ալբոմներ, զոհված գործիչների դիմանկարներ: Ու վերջապես հատուկ ուշադրություն պետք է դարձվեր ապրիլի 24-ի օրը ինչ որ ձեւով հագեցնելու վրա:

Պետք է կայանար հուշարձանի հիմնադրման արարողությունը, որտեղ արտասանվող խոսքերը կօգնեին դուրս հորդելու հոգիներում կուտակված ազնիվ ու մաքուր զգացումները: Եւ այս բոլորը պետք է ընթանար ոչ միայն սուգի մթնոլորտում, այլ ժողովրդի վերածնունդը, կենսահաստատ ոգին ընդգծելու տեսանկյունով: Օրինակ, ինչպես լավ կլիներ, եթե ապրիլի 24-ին ստադիոնում, նահատակների հիշատակը արժանավայել նշելուց հետո, այդ եւ մյուս օրերին սկսվեր համաժողովրդական հանդես-ֆեստիվալ, այնպես, ինչպես դա արվեց 1939թ. «Սասունցի Դավիթ» հազարամյակի օրերին: Տրվեցին թատերայնացված պատկերները, ելույթ ունենային մեր անսամբլները եւ արտիստները, Երեւան հրավիրվեին մեր հպարտությունները՝ Բաղրամյանը, Իսակովը, Խաչատրյանը, Ալիխանյանը, Տ. Պետրոսյանը, Դոլուխանյանը, հրավիրվեցին եղբայրական ժողովուրդների ներկայացոիցիչները, տեղի ունենային լայնածավալ սպորտային մարտահանդեսներ: Եւ այս բոլորը ցուցադրեր մեր ժողովրդի հավերժ երիտասարդությունը, ուժն ու կենսունակությունը՝ հուն գտած միայն վերջին 45 տարում, խորհրդային կարգերի շնորհիվ, ժողովուրդների ընտանիքում:

Սակայն, ցավոք սրտի, այս բոլորը համարյա տեղի չունեցավ: Այն, ինչ արվեց, արվեց շատ մասնակի, կիսաբերան ասված խոսքով, կիսատ-պռատ միջոցառումներով: Եւ արդյունքը եղավ այն, որ համաժողովրդական այդ պոռթկումը ստացավ տարերային բնույթ, իր հետ բերելով անառողջ երեւույթներ:



Ճշմարիտ չի լինի կարծել, թե անխոհեմ վանկարկումներ անող, բայց իրենց մղումների մեջ ազնիվ մի երկու տասնյակ երիտասարդներին էին միայ, որ ստեղծեցին այդ համաժողովրդական շարժումը: Ոչ: Երեւանի փողոցներով քայլող ու հետո Լենինի հրապարակ եւ այնտեղից էլ պանթեոն ուղեւորվող մարդիկ՝ բանվորը, ուսանողը, գիտնականը, երաժիշտը, նկարիչը, թոռանը ուսերին բարձրացնող պապիկը, տնային տնտեսուհիները, բոլորը, բոլորը ուզում էին իրար տեսնել այդ օրը, հաղորդվել միմյանց, անխոս ասելու համար՝ իրար, ամենքին աշխարհին, թե՝ տեսեք, ի հեճուկս ցեղասպանների եւ նրանց լռելյայն հովանավորողների, ի հեճուկս ամենի ու ամենքին, մենք ապրում ենք, մենք ծնվեցինք, մենք կանք, մենք քայլում ենք մեր նորաստեղծ մայրաքաղաքի փողոցներով ու մենք պիտի քայլենք՝ խրոխտ, հպարտ, հաղթականած... Ահա այս խորհուրդը ու սեր այդ տարերային շարժումը, իր խոսքի մեջ՝ առողջ, բարձր, համամարդկային խորհուրդ:

Սակայն, ամեն տարերային շարժում իր հետ բերում է հիվանդագին պոռկումներ, բերում է տիղմ ու քարեր: Այդ տիղմն ու քարերն էին, որ երեկոյան ջարդեցին օպերայի ապակիները, քսվեցին նրա գրանիտե պատերին: Մի երկու հակահասարակական տարրեր, օգտվելով իրադարձությունից, ուզեցին հաշիվ մաքրել հասարակական կարգ պաշտպանողներից: Եղան անվայել բաներ, որոնց պատճառները պետք է գիտականորեն քննել եւ հայտնաբերել իսկական մեղավորներին: Սակայն, ինչէլ լինի, չի կարելի թույլ տալ, որ ոմանք այդ արարքները հիմք ընդունելով, ստվեր գցեն եղեռնի նշման քաղաքականորեն անհրաժեշտ փաստի վրա, եւ, մանավանդ, օգտվելով մեկ երկու պրովակտորական տարրերի բացակայություններից, (որոնք տեղն ու տեղը լռվել էին բազմության կողմից) իրենք էլ իրենց հերթին պրովակացիայի ենթարկեն մեր ժողովրդին, վերագրելով նացիոնալիստական, հակառուսական տրամադրություններ:

Ընկերներ. անխիղճ, անարդար բան է մեր ժողովրդին այսպիսի բաներ վերագրել՝ այն ժողովրդին, որի հիմնական ձգտումը եղել է բարեկամության ձգտումը հարեւան ազգերի հետ, մոռանալու տալը ավերն ու կոտորածը, եղել է հաշտության խաղաղարար ոգին: Այն ժողովրդին, որի զավակները՝ սկսած Հովսեփ Էմինից մինչեւ Աբովյան, մինչեւ Վահագն Դավթյան, իրենց հայացքն ուղղել են Ռուսաստանին, միշտ էլ նրա հետ կապելով հայրենիքի փրկության ճանապարհը: Նայեցեք սովետահայ գրողների գրքերը, պոեմները, բանաստեղծությունները: Բացի մի երկու ազգային սահմանափակությամբ տառապող եւ անօգուտ կրքեր բորբքող ոտանավորներից, մեր ամբողջ գրականությունը հագեցված է ինտերնացիոնալիզմի, հարեւան ժողովուրդների նկատմամբ սիրո եւ բարեկամության ոգով: Նույնիսկ սփյուռքահայ գործիչ եւ բանաստեղծ, Խորհրդային Հայաստանին սկզբում ոչ այնքան հաշտ նայող կուսակցությամբ՝ ռամկավար Վահան Թեքեյանը, 1944թ. Կահիրեում, խորհրդային դեսպա-

նի ներկայությամբ կայացած հանդեսի ժամանակ, այսպիսի տողեր է կարդում՝ ուղղված հայրենական պատերազմից հաղթանակով դուրս եկող Ռուսաստանին,-

*Ճշմարտապես սրբազան Ռուսաստան,*
*Դու, որ ինքնամփոփ, երազում էիր ստեպներիդ մեջ*
*Քաղաքներ կառուցել եւ կատաղի կռվում էիր ոսոխներիդ հետ,*
*Դու, որ հերկերիդ մեջ դատում էիր տաժանքով՝*
*Դուրս բերելու համար ամենքին անհրաժեշտ ցորենը,*
*Եվ ճակատդ սրբում երկնքի մի պատառով...*
*Նայիր, ով Ռուսաստան, զավակներիդ, որ պաշտպանում են քեզ*
*Այն եղբայրաշունչ ազգերի հետ, որոնց դու պաշտպանեցիր,*
*Եվ որոնք քեզանով այսօր իրենց են պաշտպանում.*
*Նայիր հինավուրց Հայաստանին, որ քո շնորհիվ*
*Վերագտել է իր ուժըն ու հանճարը՝*
*Մարտերի մեջ, որ քեզ հետ մղում է նա*
*Եվ մարտի տաք րոպեին նայում է քեզ, ով Ռուսաստան,*
*Եվ մոտից ու հեռվից ասում՝ շնորհակալություն:*

Այս բոլորից հետո, համառորեն, տարիներ շարունակ բարձրագույն օրգանները ողողել նամակներով, զրպարտել մեր ինտելիգենցիային, նրա հայրենասիրական սուրբ զգացումները որակել որպես նացիոնալիզմ եւ դրդել միջոցներ առնել «Հայաստանում մոլեգնող նացիոնալիզմը» ճնշելու համար, սա նշանակում է վնասել լենինյան ազգային քաղաքականությանը: Որովհետեւ անտեղի ճնշումները, անշրջահայաց հապճեպ վճիռները եւ արգելակումները գրգռում, արհեստականորեն հրահրում են դժգոհություններ, որոշ անկյուն, դեռ երիտասարդ եւ բորբոքվող մարդկանց արհեստականորեն մղում քաղաքականապես տհաս արարքների: Ով չի հիշում լեզվագետ թե գրականագետ Աղայեւի անհեռատես հոդվածների ցավագին արձագանքները ազգային հանրապետություններում: Ուրեմն ապրիլի 24-ի առանձին երեւույթները բացատրելիս ու գնահատելիս, հարկավոր է թափանցել երեւույթների խորքը, փնտրել պատճառները՝ բազմակողմանիորեն, առանց կանխորոշված ծեւակերպումների եւ հանգել արդար ու ճշմարիտ եզրահանգումների:

Ընկերներ, մենք գրողներ ենք, մեր ժողովրդի ձգտումների արտահայտողները: Մենք պատասխանատու ենք ոչ միայն րոպեի, օրվա, տարվա առջեւ, այլեւ տասնամյակների, հիսնամյակների, գալիքի առջեւ: Մենք պետք է այնպես ապրենք եւ աշխատենք, որ գալիքի սերունդները մեզ ամոթով չհիշեն եւ համոզվեն, որ մեր գերագույն մտահոգությունը եղել է մեր ժողովրդի ընդհանուր շահը:

Ավարտելով իմ խոսքը, ես գտնում եմ, որ մենք՝ արձագանքելով եղեռնի հիսնամյակի կազմակերպման աշխատանքներում եղած անթույլատրելի սխալները, պետք է հավանություն տանք Հայաստանի Կոմկուսի



Կենտկոմի վերջին տարիների գաղափարական աշխատանքներին, հատկապես՝ մեր անցյալ արժեքների վերագնահատության, խեղաթյուրված պատմական ճշմարտությունների վերահաստման, սփյուռքահայության հետ կապերի ընդլայնման հարցերում եւ համոզմունք հայտնենք, որ հետագայում եւս այդ բոլորը կշարունակվեն եւ կխորացվեն:

Վերջում ուզում եմ ավելացնել, եւ վստահ եմ, որ ինձ կմիանան իմ բոլոր գրչակից ընկերները, թե խորապես գնահատում ենք այն փաստը, որ ապրիլի 24-ի հախուռն եւ զանազան սուր ինցիդենտների տեղիք տվող օրը, մեր գերագույն կարգադրիչ մարմինները նրբանկատ իմաստություն ունեցան հասկանալու մեր ժողովրդի հոգեվիճակը եւ համբերատարորեն ջանացին գործը վերջացնել առանց կոպիտ միջամտությունների: Պիտի խնդրեինք, որ այդ նրբանկատ վերաբերմունքը հանդես բերվեր նաեւ հետագայում, եւ հոգատար, մարդասիրական ներթափանցությամբ հասկանալով՝ թե օպերայի մոտ եւ թե այլուր կատարված հիվանդագին դեպքերի հոգեբանական դրդապատճառները, ազատ արձակվեն բոլոր այն՝ իսկապես անմեղ երիտասարդները, որոնք՝ ենթարկվելով տարերքին, տհասության եւ անփորձության հետեւանքով, թույլ են տվել զանազան տաքարյուն արարքներ: Չէ որ, ինչպես ասացինք վերեւում, ստեղծված հիվանդագին մթնոլորտի համար առաջին հերթին մեղավոր են մեծահասակները...

Այնուհետեւ պիտի խնդրեինք, որպեսզի հայ մտավորականության ներակայացուցիչներին առիթ տրվեր հանդիպելու մեր միութենական ղեկավարներին: Դա հնարավորություն կստեղծեր սրտաբաց խոսել եւ պարզաբանել շատ խնդիրներ, որոնք վաղուց հասունացած են եւ պահանջում են իրենց ճշմարիտ, արդարացի լուծումը:

*Սիլվա Կապուտիկյան* [ստորագրություն]

***Սողոմոն Տարոնցի***

ԽՄԿԿ Կենտկոմը եւ ՀԿԿ Կենտկոմը միանգամայն ճիշտ որոշում են կայացրել դատապարտելով ցեղասպանությունը արեւմտյան Հայաստանում: Ինչպես կարելի էր այն չհիշել: Չէ որ մենք այդ կոտորածից ազատվածներն ենք, եւ այդ ցեղասպանությանը զոհ են գնացել մեր հարազատները: Սարմենը, Նորենցը, ես եւ բազմաթիվ այլ ընկերներ այդ եղեռնից ազատված խլյակներ ենք: Չնշել, նշանակում էր ֆիզիկապես կորցնել սփյուռքահայությանը, որ հեռացել է իր հայրենիքից այդ եղեռնի պատճառով, եւ կկորցնենք սփյուռքահայության վստահությունն այն իմաստով, որ մենք կուրանայինք մեր պատմության այդ էջը: Ես կողմնակից եմ Թոփչյանի եւ Կապուտիկյանի ասածներին, եւ դատապարտում եմ տարերայնությունն ու թափթփուկությունը, բայց ինչու զայրացավ երիտասարդությունը: Որովհետեւ եղեռնը նշելու պլանի սեղմումներ եղան: Ցույցին մասնակից պրովակատորներ էլ են եղել, բայց պրովակատորները կային դրա-

նից էլ առաջ: Ուզում եմ ասել, որ անհատների, մեկ երկուսի պատճառով, ամբողջ ելույթը չի կարելի խուլիգանություն ծեւակերպել: Չէ որ դեռ ոչ մի տարերային հավաքույթ էլ չէր եղել, երբ պրովակատորները գործում էին: Ադրբեջանցի մի անձնավորություն ասել էր, թե 23-ին ինձ կսպանեն, եւ գնացել է ու դիմել զանազան մարդկանց: Հարցնում են, թե որտեղից գիտե, ով է նրան սպառնացել: Չի կարողանում պատասխանել, որովհետեւ սուտ էր ասում, ասում է պրովակացիա ստեղծելու համար: Քուրդ մի գրող, որ բոլորիս էլ ծանոթ է, եկավ ինձ մոտ, թե ընկ. Տարոնցի, վախենում ենք եւ ամբողջ ընտանիքով ուզում ենք տեղափոխվել ձեզ մոտ: Զարմացա, ապա ես նրան հանգստացրի, սփոփեցի եւ առաջարկեցի որդուս ուղարկել նրանց տուն: Բայց նա չուզեց, գիտեր, որ եղածը սուտ լուր էր, որ տարածվել էր, թե հիմար նացիոնալիստները վրեժի կոչ են անում:

***Ռեպիկա (Գարեգին Բեյ)***

Նույնիսկ այն խուլիգանները, որոնք ջարդեցին շենքի ապակիները, նրանք անգամ նացիոնալիստական ոչ մի արարք թույլ չտվեցին:

***Ռեպիկա***

Լսել եմ, որ ադրբեջանցի ընկերներն են եղել օպերայի շենքի մոտ:

***Սողոմոն Տարոնցի***

Ընկերներ, մեր ժողովուրդը եղել է մարդասեր, հյուրասեր եւ երբեք չի հակադրվել մյուս ժողովուրդներին, առավել եւս ռուս ժողովրդին: Քաղաքական ոչ մի հակադրություն չի եղել եւ հակառուսական ոչ մի նշույլ անգամ չկա եղեռնի նշման մեջ: Մեզ խաբել են եվրոպացիները, անգլիացիները, ֆիանսիացիները, մեր ջարդելուն մասնակցել են գերմանացիները, բայց ռուսները եւ կոզակները միշտ էլ հանդես են եկել որպես փրկարար, ես անձամբ փրկվել եմ նրանց շնորհիվ, ինքծ փրկել է մի ռուս՝ ծիու վրա նստած փախցրել է ինձ: Եվ ոչ միայն ինձ, այլեւ այստեղ նստած միա այլ գրչակից ընկերոջ: Մենք ապերախտ չենք եղել, չենք լինի, եւ այդ օրն էլ ոչ ոք ապերախտության նշան ցույց չի տվել: Հայ ժողովուրդը, որպես ինտերնացիոնալ ժողովուրդ հարգում է ու հարգելու է հարեւան ժողովուրդներին:

Բանավոր բոլոր մեղադրանքները մեր ժողվրդի հասցեին դատապարտում եմ եւ համարում զրպարտություն, եւ մենք շատ ենք համբերում եւ երես տալիս զրպարտիչներին: Եւ որքան դատապարտելի եւ զրպարտիչները, նույնքան դատապարտելի են նաեւ խուլիգանները: Ցավոք սրտի պատահել է, այն, ինչ պետք է լիներ: Մենք շնորհակալություն պիտի հայտնենք Համբարձումյանին լավ զեկուցման համար եւ այն ընկերներին, որոնք թույլատրել էին նշել եղեռնը:

***Գ. Սեւունց***

**(Սկսում է կարդալ, ապա անցնում բանավոր խոսքի)**

Եվ այսպես: Պարզվում է, որ երկու տեղ է նշվում եղեռնը՝ մեկը այնտեղ փողոցում, մյուսը՝ պաշտոնական: Նշանակում է վատ է կազմա-



կերպված շատ բան: Եթե ճկուն միջոցներ ձեռք առնվեին եւ գային կուսակցականներն ու խառնվեին ամբոխին, կցրվեր ամբոխը, այսինքն կուսակցականները կցրեին այն: Չպետք էր երկրորդ ամբիոն ստեղծել: Մեր միասնությունը չպետք է պառակտվեր: Նրանք խանգարում էին հրապարակում ելույթ ունեցող Վ.Համբարձումյանին եւ Քոչինյանին: Ինչու: Որովհետեւ Կենտկոմից սկզբում լայն հայտարարություններ արեցին, եղեռնը նշելու մասին, հետո ետ կանգնեցին: Ճիշտ է, ահազանգումներ են եղել, եղել են նաեւ պրովակացիաներ: Դրանք ամենուրեք կլինեն, բայց ամոթանք կլիներ, եթե պրովակացիաներն ուժեղանային եւ մեր խորհրդային ազգայնությունները բախվեին: Դա կլիներ, եւ միամիտներն են կարծում, թե չէր լինի: Կլիներ, եթե Կենտկոմը միջոցներ ձեռք չառներ:

***Ռեպիկա***

Մի հորինեք, այդպիսի բան չէր լինի: Ամբոխը պրովակատորներին իսկույն մեկուսացրել էր:

***Սերո Խանզադյան***

Կանխագուշակումներ չպետք է անել, ոչ մի բախում էլ չէր լինի ազգությունների միջեւ:

***Գ. Սեւունց***

Եթե չկանխվեր, կլիներ, ես փաստեր գիտեմ...

***Ռեպիկա***

Ոչ մի փաստ չկա, միայն խոսակցություն է, ենթադրություն:

***Էդ. Թոփչյան***

Կարող եմ հայտարարել, որ 24-ի օրը տարբեր ազգությունների միջեւ ոչ մի անպատեհ դեպք տեղի չի ունեցել:

***Գ. Սեւունց***

Ես ասում եմ «Եթե» ես էլ եմ կարծում, որ չի եղել: Բարեխիղճ պիտի լինել մարդկանց չպետք է մեղադրել նացիոնալիզմի մեջ, հայրենիքի դավաճանության մեջ: Եւ ոչ ոքի չէին մեղադրի եթե մտածված անցկացվեր եղեռնի նշումը:

***Ռեպիկա (Ս. Կապուտիկյան)***

Քո անձնական կարծիքն ասա:

***Գ. Սեւունց***

Սիլվան երեկ հարցապնդում էր, թե ես ինչո՞ւ չեմ արտահայտվում:

***Ռեպիկա***

Երեկ, երբ, ինչ առիթով:

***Գ. Սեւունց***

Երեկ նախագահության եւ պարտբյուրոյի համատեղ նիստն էր՝ այսօրվա մեր ժողովը անցկացնելու առթիվ: Երեկ էլ հենց Սիլվան պրովակացիա արեց ինձ, թե ինչո՞ւ չես արտահայտվում, հիմա էլ հարցնում է

ինչու քո կարծիքը չես հայտնում: Այդ «ինչուն» պրովակացիոն հարց է... Ինչու է Սիլվան ուզում պրովակացիա անել:

*Ռեպլիկա*

Այդ հարցը պրովակացիա չէ:

*Ռեպլիկա*

Ինչու ես սխալ մեկնաբանություն տալիս:

*Ռեպլիկա*

Բոլորովին էլ պրովակացիոն հարց չէ, երբ հայտնում են թե ինչու չես արտահայտվում:

*Ս. Կապուտիկյանց*

Ես գրգռելու համար չեմ հարցնում, այլ պարզապես իմանալու նրա կարծիքը: Միթե վատ է դա:

*Գ. Սեւունց*

Դե լավ, ներողություն եմ խնդրում՝ սխալ ձեւով հասկանալու համար:

*Ն. Զարյանց*

Թողեք մարդը սխալվի, կուղղենք:

*Գ. Սեւունց*

Միշտ չէ որ մենք ընդունակ ենք պատասխանելու մարդկանց, կան հարցեր, որոնք չէինք կարող պատասխանել: Այ օրինակ հողերի հարցը: Միթե կա մարդ, որ դեմ լինի մեր հողերի վերադարձվելուն: Եթե մենք պարզ ու որոշակի խոսեինք մեր երիտասարդության հետ ու ասեինք, որ ինչու չենք այդ հարցին պատասխանել, ապա այդ խուլիգանությունը չէր լինի:

Մեզ կոտրել են, մենք դրան պատասխանում ենք մեր նվաճումներով: Ահա մեր ասելիքը: Հրապարակում էլ եւ դրանից առաջ էլ պետք է երիտասարդներին բացատրվեր, որ հողերը վերցնելը Զարոբյանի ու Քոչինյանի ցանկությամբ չեն լինում, որ հողերի հարցը լուծելու ժամակը չէ հիմա: Պետք է հստակ խոսել, չվախենալ, պետք էր ասել, թե ինչպես կարող ենք այդպիսի հարց բարձրացնել կապիտալիզմի դեմ, երբ կա ատոմական ռումբ, երբ կարող է պատերազմ լինել: Իսկ մենք չխոսեցինք, չբացատրեցինք: Ահա թե որտեղ էր գլխավոր սխալը:

Ես ուզում եմ խոսել մի ուրիշ սխալի մասին: Ես օպերայի շենքի մոտ էր, երբ բազմությունը եկավ հողերի պահանջով, նրանք թակում էին դուռը, որպեսզի մարդ ուղարկեն ներս: Եվ հինգ հոգու ներս թողեցին: Եվ ահա փոխանակ նրանց թողնելու դահլիճ խոսելու, համոզելու, սկսել են ծեծել, արգելափակել:

Այս երեւույթը պրովակացիա է:

*Ռեպլիկա*

Ում կողմից:

*Ռեպլիկա*



Միլիցիայի պրովակացիա է:

(Աղմուկ)

*Ս. Խանզադյանց*

Իմ կարծիքով պետք է խոսել նրանց հետ, պետք է ղեկավարները մոտենային նրանց, բայց Կենտկոմի ղեկավարությունը չի խոսել նրանց հետ, եւ այդ ֆունկցիան հանձնել է կաթողիկոսին, իսկ ինքը հեռացել է դահլիճից:

*Ռեպլիկա*

Փախել են:

*Գ. Սեւունց*

Կատարվել է ցավալի դեպքեր: Մեղքը հիմա սկսել են բարդել զանազան մարդկանց վրա: Վրդովեցնում է ինձ այն, որ Շիրազի վրա մեղք են բարդում:

*Ռեպլիկա*

Նա լուր է տարածել, թե նրան կալանքի են վերցրել:

*Գ. Սեւունց*

Լուրը տարախվել է, եւ նրա անունը հնչել է հրապարակում ու ցուցարարության ժամանակ, նա ինչ մեղք ունի դրա համար: Չպետք է հետեւել 37 թվականի ձեւերին ու տրադիցիաներին, խուլիգաններին կարելի է դատապարտել, բայց դա չի նշանակում, որ զոհերի թիվը պետք է ավելացնել:

*Ս. Խանզադյանց*

Ընկերներ, պահպանեք ռեգլամենտ:

*Ռեպլիկա*

Հինգ րոպե:

*Ս. Խանզադյանց*

Հինգ րոպե հերիք է:

*Բաղիշ Հովսեփյանց*

Սկզբից հայտնում եմ, որ միանում եմ Ս. Կապուտիկյանի ելույթին:

Պատմության մեջ տեղի է ունեցել ահավոր անարդարություն: Իմ աչքի առաջ են կենդանի թաղված մարդկանց պատկերները եւ ես չեմ կարողանում ազատվել այդ ահավոր տեսարաններից: Եղել է եղեռն եւ լռել ենք: Լռությամբ անցնելը կոպիտ սխալ է եղել: Մենք իրավունք չունենք մոռանալու այդ եղեռնը: Կոմունիստը իրավունք չունի մոռանալու: Եւ չենք կարող մոռանալ, որ երկու միլիոն հայություն թափառում է առանց հողի, առանց տուն ու տեղի: Փաստը կոծկել, թաքցնել չի լինի:

Չենք կարող մենք մեզանից թաքցնել: Մարդը իրենից թաքնվել չի կարող:

Այստեղից հողերի հարց եղավ: Բայց հարցը խուլիգանորեն չի հարուցված: Ով քար վերցնի ու կգցի Թամանյանի կառուցած շենքի՝ կոթողի վրա, մենք նրա հետ չենք եւ նա էլ մեզ հետ չէ: Նրանք հավատ եւ

սկզբունք չունեն: Նրանք խուլիգաններ են եւ ազգային արժանապատվության նկատմամբ հարգանք չունեն: Այսպիսի խուլիգաններ բոլոր տեղերում էլ կան: Մենք իրավունք չունենք քրեական հանցագործների կատարածը փաթաթել մեր ժողովրդի վզին:

Խոսքը այստեղ եղեռնը նշելու կազմակերպման մասին է: Իհարկե կարելի էր ավելի լավ կազմակերպել: Մենք գրողներս էլ վատ ենք կազմակերպված: Ես, ընկերներ, գնացի քայլողների շարքի հետ, որպեսզի թույլ չտամ պրովակացիա եւ խուլիգանություն եւ եթե մենք բոլորս լինեինք այնտեղ, ապա ոչ մի խուլիգանություն չէր լինի, չէինք թողնի: Մենք շատ վախեցանք մեր աթոռներից, մեր պաշտոններից, չկարողացանք ինչպես պետքն է կազմակերպել սգահանդեսը: Սեղմվեց, սեղմվեց, սեղմվեց եղեռնի նշումը եւ ժողովուրդը գրգռվեց: Ես այն մարդկանցից եմ, որոնք հաշիվ են պահանջում խուլիգանից՝ կատարված անկարգության համար: Բայց կային մարդիկ, որոնք ճիշտ պահանջներ էին ներկայացնում: Միթե դժվար էր պետական դրոշի վրա, որպես սգո նշան, մի սեւ երիզ անցկացնել. դրանից ոչ կոմունիստական շարժումը կտուժեր, ոչ սոցիալիզմի կառուցումը եւ ոչ էլ մեր ողջախոհությունը: Մենք կոպիտ սխալներ թույլ տվինք, եւ այդ պետք է, որ ընդունենք:

***Մեւակ Արզումանյան***

Ես լիովին համաձայն եմ ընկ. Կապուտիկյանի ելույթում արտահայտված մտքերին, միանում եմ նրան, միայն թե այդ մտքերը համարում եմ ոչ թե էմոցիաներ, այլ քաղաքական լուրջ հարցադրումներ՝ կապված մեր ժողովրդի բախտի ու ճակատագրի հետ, նրա անցյալի, այսօրվա ու ապագայի հետ: Ես մեկն եմ այն մարդկանցից, որոնք եղել են ցուցարարների շարքում: Եւ, չեմ ծածկում, քայլել եմ հպարտության զգացումով, որովհետեւ, վերջապես հիսուն տարի անց մեզ թույլ տրվեց նշելու մեր կորուստների, մեր անմեղ զոհերի հիշատակը: Ես նույնպես դատապարտում եմ արարքը այն մի բուռ խուլիգանների, որոնք այնքան լավ ընթացող ցույցը ավարտեցին անվայել, հակահասարակական գործողությամբ: Միաժամանակ դատապարտում եմ խորհրդային միլիցիայի դերին ու կոչմանը անվայել մի շարք միլիցիոներների գռեհիկ գործողությունները: Այն, ինչ ես տեսա ապրիլի 25-ին հրապարակում՝ սեւ դուբինկաներով միլիցիոներներին, անխնա ծեծը մի քանի երիտասարդների ու անչափահասների, խիստ անպատվաբեր է բոլորիս համար:

Սակայն, ընկերներ, այդպիսի երեւույթները՝ խուլիգանական որոշ տարրերի կատարածը, սեւ դուբինկաները տեսնելու, որ մեր ժողովուրդը ապրիլի 24-ին արժանապատվությամբ, այսօրվա նվաճումների գիտակցությամբ նշեց Մեծ եղեռնի 50-ամյակը: Հարց է առաջանում: Ինչու հիսուն տարի հետո միայն մենք կարողացանք սգալ մեր կորուստը: Ստալինի եւ Բերիայի քաղաքականության պայմաններում, բնական է այդ անել անհնարին էր: Բայց մենք կարող էինք նշել 40-ամյակը, 45-ամյակը: Չնշեցինք:



Ու այսօր, երբ դատապարտում ենք որոշ (ես կարծում եմ նույնիսկ պրովակացիոն ձեւով կատարված) անկարգություններն ու խուլիգանությունները, դրանք չպետք է հանգեցնեն այն բանին, որ մենք նորից մոռանանք Մեծ եղեռնը: Ոչ, մոռանալ չի կարելի, միշտ պետք է նշել, ամեն տարի՝ կրկնապատկելով մեր նվաճումները, ավելի ծաղկեցնելով մեր գյուղերն ու քաղաքները:

Ես կոմունիստ եմ եւ պետք է անկեղծորեն ասեմ, որ այնուամենայնիվ ցույցը կազմակերպված ձեւով չանցկացվեն մինչեւ վերջ: Պատճառը: Քիչ մեղք չունեն այն ղեկավարները, որոնք մի կողմ քաշվեցին եւ ինքնահոսի մատնեցին տարերայնորեն ստեղծված մասսայական մեծ ցույց-հանդեսը: Այդ էր պատճառը, որ ամբիոն ստացան նույնիսկ այնպիսի մարդիկ, ոլույթներ ունեցան մի շարք անծինք, որոնք չպետք է ունենային, եթե համապատասխան միջոցառումներ ձեռնարկվեր, եթե վերեւից հատուկ կազմակերպչական աշխատանք տարվեր: Ինչու օրինակ մարդիկ այն սեւ երիզներն էին կրում: Կոմիտասի եւ հայ գրողների այն նկարներն էին կրծքներին ամրացրել, որոնք պատրաստված էին ինչ-որ տեղերում, ոմանց ձեռքով, թերեւս դժվարությամբ կամ ինչ-որ մտավախությամբ: Հայաստանի կառավարությունը չէր կարող ինքը նախատեսել, պատրաստել այդ ամենը, նույնիսկ կրծքանշանն էր թողարկել՝ նվիրված եղեռնի 50-ամյակին: Ինչու պետք է սփյուռքում արվեր դա, մեզ մոտ՝ ոչ:

Անհասկանալի է ինձ երկու չափի, երկու կշեռքի այն սկզբունքը որ կիրառվում է որոշ դեպքերում: Այդ առումով, ես իմ դժգոհությունն չեմ կարող չհայտնել Կենտրոնական մամուլի հանդեպ: Ամիսներ շարունակ մեր մամուլը պաշտպանում էր ալժիրցի Ջամիլեի, հույն Մանոլիս Գլեզոսի դատը: Դա Լենինյան մեր քաղաքականությունից է բխում եւ ճիշտ է կատարվել: Տարիներ շարունակ մեր մամուլը Կոնգոյի ժողովուրդների պայքարի ու ողբերգության մասին է գրում: Իրավացի քայլ է դա: Իսկ ինչու գոնե մեկ հոդվածով «Իզվեստիա»-ն ապրիլի 24-ին հարմար չհամարեց նշել հայ ժողովրդի պատմական ողբերգության փաստը: Ինչու «Պրավդա»-ն հարմար գտավ համաշխարհային գենոցիդի ամբողջ հարցերի մեջ տարալուծել Մեծ եղեռնի փաստը եւ ընդամենը երկու պարբերություն նվիրեց դրան: Կարծում եմ այդպես վարվել չի կարելի, անարդար է:

Ընկերներ: Մեր ժողովուրդը շատ փորձություններ է տեսել: Առաջինն է տեսել ահավոր ցեղասպանության հաշվեհարդարը: Բայց նա այսօր, Հոկտեմբերի շնորհիվ, հասել է այնպիսի բարձունքների, որոնց նախանձով են նայում Թուրքիան եւ այլ երկրներ: Մեր կորուստները, մեր զոհերը իրենց գերեզմաններից ձայնում են եռապատկել ժողովրդի նվաճումները: Դա եւս պատասխան է, ու արժանի պատասխան, բոլոր ցեղասպաններին: Սակայն եւ չմոռանանք պատմության մեծ հատուցումը, որ դեռ պետք է գա, որին սպասում ենք:

***Անահիտ Սահինյան***

Ապրիլի 23-ին քաղաքային կոմիտեում գումարված խորհրդակցության ժամանակ, երբ փորձեր էին արվում կանխատեսելու թե ինչ է սպասում մեզ վաղը՝ ապրիլի 24-ին, եւ թե ինչպես պետք է կանխել անկարգությունները, եթե լինեն, նույնիսկ երկյուղ հայտնվեց, թե քանի որ հավաքվելու են հրապարակում, կարող են եւ փորձ անել հարձակում գործելու փոստի վրա... Ովքեր: Ինչու:

Որքան վատ ենք ճանաչում ինքներս մեզ:

Ով առավոտյան ժամը 10-ից հրապարակում էր գտնվում, ականատես եղավ, թե ինչպես հրապարակ մտնող երիտասարդներն ու դպրոցականները գալիս էին ցաք ու ցրիվ, հատ-հատ, տրտում ու մտամոլոր, հեռու որեւէ գործողության մտադրությունից ու տրամադրվածությունից:

Ինչն էր նրանց հրապարակ բերում:

Առաջին անգամ մեզ բախտ էր վիճակվել հրապարակայնորոն հարգելու 1915 թվի զոհերի հիշատակը, այսինքն նշելու մեր ժողովրդի արեւմտյան հատվածի պապենական բնակավայրերից տեղահանելու եւ բնաջնջելու 50-րդ տարեդարձը: Աշխարհին էր ցնցել այդ եղեռնը: Իսկ մեր մատղաշները այսօր էին իմանում դրա մասին, այն էլ ոչ թե աստիճանաբար, տարեց տարի, այլ միանգամից հեռանում էր մի քող պատմության վրայից ու երեւում էր ահավոր պատկերը: Հասկանալի պետք է լինի, թե ինչպես կարող էր ծառա լինել նրանց հոգին կատարված մեծ անարդարության դեմ:

Եվ ահա նրանք այդ զգացումներով լցված, որոշել են ապրիլի 24-ին հավաքվել հրապարակում:

- Ինչու եք հրապարակ եկել,- հարցնում ենք մեկին, երկուսին, տասին եւ բոլորը նույն պատասխանն են տալիս:

- Այսպիսի մի օր ինչպես նստենք տանը, դաս լսենք, կամ ուրիշ բանի մասին մտածենք:

Առայժմ եկողները խմբվում են պատերի տակ, հյուրանոցի առջեւ: Նրանց ասվում է հեռանալ այդտեղից, նրանցից պահանջվում է հեռանալ: Ըստ որում պահանջվում է ոչ միլիցիայի աշխատողների կողմից, հանգիստ, համոզող տոնով: Կարծես թե ենթարկվում են: Բայց ահա փոստի կողմից ուսանող երիտասարդների մեծ խմբեր են գալիս, միանում իրար, քայլում շարքերով, լուռ, հանդարտ: Անցնում են այդպես կանոնավոր շարքերով տրիբունայի առջեւից, ապա հյուրանոցի, ապա ժողտնտխորհի շենքի, եւ Աբովյան փողոցի բերանից թեքվում աջ, քայլում դարձյալ հրապարակով, դարձյալ լուռ, անաղմուկ, մյուս կողմից գալիս շարքերին են միանում նորերը, շարքերը ծգվում են երկարում:

- Ուր եք գնում,- հարցնում են մեկին, երկուսին, տասին ու բոլորը նույն պատասխանն են տալիս:

- Հեչ, քայլում ենք, էլի...- ասում են ու գլխահակ գնում:



Լսվում է միայն ոտքերի քստքստոց, ինչպես հուղարկավորության ժամանակ:

Եւ իրոք, դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ սգո թափոր, որ չգիտեր ուր գնա հրապարակը շրջանցելուց հետո, ինչ անի... ու բնականաբար եկավ, ծով կապեց Լենինի ոտքերի մոտ:

Ու դարձյալ լուռ են: Սպասում են: Ինչի են սպասում: Իրենք էլ չգիտեն: Մեկ էլ լսում ենք խմբական, հստակ վանկ առ վանկ աղաղակը.

**- Տրի-բո՛ւն... տրի-բո՛ւն...**

Ուզում են, որ մեկն ու մեկը բարձրանա ամբիոն խոսի իրենց հետ, սիրտները խոսք է ուզում, ջերմ, ամոքող խոսքեր:

- Ընկերներ, մենք կառավարություն ունենք, մենք անգլուխ չենք, մենք ղեկավարներ ունենք,- ասում է մի երիտասարդ, որը հավանաբար հենց այդտեղ, անհրաժեշտության թելադրանքով որոշեց հանդես գալ կարգադրիչի դերում: Եվ նա մոտեցավ ընկեր Բադալ Մուրադյանին, խնդրեց հանդես գալ, մի երկու խոսք ասել:

Ընկեր Բադալ Մուրադյանը, որ շատ հուզված էր եւ անպատրաստ խոսք ասելու, (ոչ միայն անպատրաստ էր, այլեւ իր ասելով «նախատեսնված չէր խոսք ասելու»), բարձրացավ ամբիոն: Նրա ձայնը վատ էր լսվում, բայց ջանում էին ոչ մի բառ բաց չթողնել:

Այնուհետեւ խոսեց Սերո Խանզադյանը, շատ փայլուն շատ սրտառուչ խոսեց: Նրան լսում էին շնորհակալության զգացումով:

Ուր էին մեր մյուս մեր գրողներն ու բանաստեղծներ այդ ժամանակ, բոլոր նրանք, որոնց ծախահարելուց մազոլակալվել էին այդ երիտասարդների ձեռքերը: Ցավի հետ գլուխ չուներին, նրանց գլուխները միայն դափնիներ կրելու համար են: Սիրում են ամբիոններ, ահա ամբիոն էր: Հրապարակում ծով կապած երիտասարդների ու պատանիների ցավից սեղմված սրտերը էլի էին խոսք ուզում: Պարզ երեւում էր, որ ցավն է նրանց այստեղ բերել, որ լրջորեն նախապատրաստված ու կազմակերպված որոշակի մտադրություններով ու ծրագրերով չեն նրանք փողոց եկել: Պետք է, որ բոլոր այն մարդիկ, որոնց խոսքը մի բան արժեր նրանց համար, այդ պահին լինեին նրանց հետ, հանդես գային նրանց առաջ, մեղմեին նրանց ապրած ցավը, անհարկի կրքերը մարեին:

Այդ չեղավ: Անգլուխ այդ զանգվածը ստիպված եղավ իր միջից հրապարակ նետել այսպես կոչված հռետորներ: Խակ, անմիտ, տարագլուխ երեխաներ, որոնց թվում էր թե աշխարհը չոխով է ծածկված: մեկը մյուսի ուսին թռչելով ճչում է.

**- Մեր հողերն ենք ուղում ... մեր հողերը ...**

Բարձրացավ հիստերիկ մի ալիք: Այդպես ճչալու ժամանակ մեկին էպիլեպսիայի նոպան գետնով խփեց: Մյուսները շարունակում էին ճըչալ: Պահ էր լինում, որ ամբոխի ուսերին թառած օդում ծոծվում էին հինգ-

վեց մարմին միաժամանակ: Հինգ-վեց բերան միանգամից բացվում ու փակվում էին. աղաղակելով նույն բառը, մեկը մյուսի ծայնը խլացնելով:

Օդում կախվել էին երկու լաթի կտոր, որոնցից մեկի վրա գրված էր. **«Վերադարձրեք մեր վեց վիլայեթները»**, ում էր ուղղված, ումից են պահանջում: Մյուսի վրա՝ **«Ազատեցեք յոթ հայրենասերներին»**:

Ի դեպ այս «յոթ հայրենասերների» մասին. դեռեւս նրանց դատավարությունից շատ ամիսներ առաջ, առիթ եղավ մի տեղ հանդիպելու ներքին գործերի մինիստրության աշխատակիցներից մեկին, եւ իմ ներկայությամբ Կապուտիկյանը նրանց հարցրեց դրանց մասին, եւ ստացավ այսպիսի պատասխան. «լուրջ ոչինչ չկա, նրանք կալանքի տակ պահվում են պրոֆիլակտիկ նպատակներով եւ շուտով ազատ կարձակվեն»:

Բայց ինչպես տեսանք՝ դատվեցին, եւ հանրապետությունով մեկ հռչակվեցին նրանց անունները, ըստ երեւույթին գործին տվեցին այնպիսի կարեւորություն եւ այնպիսի արժեք, որով հերոսների պսակը դրվեց նրանց գլխին:

Եվ այսպես, հրապարակում ծավացած այդ երիտասարդներն ու պատանիները, որ ուրիշ չէին, այլ մեր երեխաները, մեր քույրերի եւ եղբայրների երեխաները, ամբողջ օրը անգլուխ թափառում էին՝ մեկ դեպի պանթեոն, մեկ դեպի ուսանողական թաղամաս, ոչ մի կերպ տեղ չգտնելով իրենց համար:

Մինչեւ որ երեկոյան, օպերայի առջեւ, ինչ-որ թափթփուկներ՝ գողերը, հարբեցողները, մորֆինիստները, որ հավանաբար դարանակալ սպասում էին հարմար մոմենտի, փորձեցին խժդխությունների իրենց ծարավին հագուրդ տալ: Դրանով պսակվեց այդ մարդուրաց, ազգուրաց տականքների ամենօրյա հանցագործությունների շարքը, որին շարունակաբար ենթարկվում են քաղաքի բնակչությունը:

Բազմաթիվ անգամ, նաեւ մեր այս ամբիոնից, բողոքի ծայն է բարձրացրել նրանց դեմ: Վաղուց հայտնի է բոլորիս, որ ըստ գոյություն ունեցող վիճակագրության, մեր հանրապետությունը միության մեջ առաջիններից մեկն է արձանագրված գողությունների, սպանությունների, այլ եւ այլ հանցագործությունների քանակով:

Ահա եւ քանակը վերածվեց որակի: Նրանք մինչեւ այժմ թունավորում էին մեր ամենօրյա հալալ հացը, իսկ ահա թույն խառնեցին եւ մեր սրբազան զգացումներին:

Չկա չարիք, առանց բարիքի:

Գուցե այս տխուր դիպվածը ստիպի նրանց, ովքեր կոչված են այդ անելու, մաքրելու քաղաքը խուլիգանական հանցագործ տարրերից: Միայն թե անելու այդ զգուշությամբ: Թաց ու չոր չխառնել: Առիթ չտալ, որ թեկուզ հեռավոր կերպով հիշվի ահաբեկչության այն շրջանը, որ հետեւում ենք թողել:



Նրբամտորեն հասկանալ ու բացատրել կատարվածը, թույլ չտալ ոչ ոքի պղտոր ջրում ձուկ որսալ: Չենթարկվել պրովակացիաների ու շանտաժի:

Եթե պետք է դատապարտվի որեւէ մեկը, ապա եկեք դատապարտենք ինքներս մեզ, որ չկարողացանք այդ երիտասարդների ու պատանիների զգացումների խորքը թափանցել:

Այդպիսի զանգվածային հավաքույթի ժամանակ շատ անախորժ անակնկալների առաջ կարող էինք կանգնել, բայց հենց նրանք, այդ երիտասարդները իրենք էին բռնում խեղդում հանդես եկող նման ամեն մի փորձ:

Ամբողջ օրվա ընթացքում ես չլսեցի մեր պատմությանն եւ մեր գաղափարները վիրավորող որեւ խոսք: Ականատեսներ են եղել, թե ինչպես մեկը փորձել է վատ բացել բերանը եւ ծեփել են, դուրս մղել իրենց շարքերից:

Այն ինչ, կատարվեց քիչ է ասել, թե ցավալի էր: Դա պետք է առիթ դառնա խորը խորհելու շատ հարցերի շուրջ:

***Համո Սահյան***

Կապուտիկյանի եւ մյուսների ելույթից հետո, երեւում է, որ իմ ասածները կրկնություն կլինեն, բայց կրկնությունն էլ հենց կասի, որ մենք նույնն ենք զգում, նույնն ենք մտածում: Կատարվածը տարերային, եւ տարերքը կազմակերպված դուրս եկավ: Այս դեպքը ցույց է տալիս, որ մենք մեր ժողովրդին լավ չգիտենք, լավ չենք ճանաչում: Կատարվել է խուլիգանություն: Ջարդել են ապակիներ: Չէ որ այդպիսի բաներ լինում են նաեւ մայիսմեկյան ցույցերի ժամանակ եւ ֆուտբոլի ստադիոններում: Եվ դեռ ավելին էլ է լինում, շատ ավելին: Իսկ այստեղ, այս անգամ ոչ մի սիզամարգ չի կոխոտվել, ոչ մի ծաղիկ չի փչացել, ոչ մի քար չի փշրվել: Եվ սա ասում է, որ շատ բան պիտի սովորել ժողովրդից եւ պիտի վստահել ժողովրդին: Մենք դատապարտում ենք, որ քարկոծել են Օպերայի շենքը: Եվ դա դատապարտելի է: Բայց դուք պատկերացրեք, որ դա չի վերաբերում հանդեսի այն իսկական մասնակիցներին, որոնք առավոտից մինչեւ երեկո քայլել են փողոցներով եւ ոչ մի բանի ձեռք չեն տվել. դա մի մեծ բազմություն էր, որ իր պահանջները ուներ: Դա այն չէ, ինչ մենք ենք ասում: Խոսքը հարբեցողների եւ խուլիգանների մասին չէ, որ կային դրանց մեջ. բայց կային նաեւ եղեռնով անկեղծորեն հարբած, մաքուր ու ազնիվ երիտասարդներ, որոնք ուզում էին իրենց պապերի զոհվելը նշել: Եւ շնորհակալություն մեր կառավարությանը, որ չմիջամտեց դա արգելելու: Հետո: Ախր, սառը ջուր ենք բաց թողել նրանց վրա, եւ ուզում ենք նրանց դատապարտել: Մեղք չեն այդ երիտասարդները: Մենք ինքներս մեզ պիտի դատապարտենք, որ չկազմակերպեցինք գործը, մենք կարող էինք նրանցից առաջ ընկնել պատշաճ ձեւով, եւ նրանք կմնային ետեւում:

***Ռեպիկա***

Ցուցակ չկար. ով պիտի գնար առջեւից: Օպերայի տոմսերն էլ հատուկ ցուցակով էին:

*Համո Սահյան*

Ցուցակ չկար, եւ պիտի դատապարտել, բայց ում: Բարբարոսություն ցուցաբերեցին միլիցիոներները, եւ պիտի դատապարտենք ջահելներին: Ընկերներ, դեպքի հաջորդ օրը ես տեսա, թե ինչպես Կենտկոմի պատասխանատու աշխատողներից մեկը ընկերակցում էր միլիցիոներներին եւ հրապարակում ճչում-կարգադրում, „ловить и бить, бейте"[1]:

Ինչ է պատահել. սա հո արտասահման չէ, որ ցույց անեն ստեղծեն իշխանություն, եւ ոստիկանները ամեն ինչ շուռ տան: Մեզ մոտ ոչ մի բան շուռ չտրվեց, մինչդեռ միլիցիոներները դիմեցին ծայրահեղության: Մենք ուզում ենք դատապարտել դեպքը, բայց վախենում եմ, որ իսկական խուլիգանները ազատ կմնան եւ անմեղ մարդիկ զոհ կգնան եղելության. անմեղ մարդիկ կդատապարտվեն: Միլիցիան շատ լավ գիտե, թե ովքեր են մեր քաղաքի խուլիգանները, ովքեր են մի քանի անգամ բանտ նստած ու ազատված: Թող ներբակալի նրանց եւ վերջ:

*Սաղաքել Հարությունյան*

Ընկերներ, փորձ անել մեղմացնելու այն, ինչ կատարվել է, սխալ կլիներ: Իմ կարծիքով չի կարելի կողքից նայել եւ չդատապարտել գողերին, խուլիգաններին եւ մեր կուլտուրայի կոթողի վրա քար նետողներին: Բայց նաեւ պետք է դատապարտենք ամբողջ իրադարձությունը, եղածը, որը փոքր բան չէ: Հարյուր հազար մարդ էր դուրս եկել եւ ոչ ոքի կողմից կազմակերպված չի եղել: Միթե սար համար դատապարտել պետք չէ. բայց ում. պարզ ասած, մեր ղեկավարների անկազմակերպվածությունը: Խոսակցություններ են եղել, թե պիտի դատապարտել սրան կամ նրան եւ այլն: Բայց պիտի դատապարտել նրանց, ովքեր չէին մտածել, որպեսզի այս դեպքը տեղի չունենար: Նրանք կարճամիտ, անհեռատես մարդիկ են եղել: Ինչ էին անում նրանք, երբ քաղաքում զրույց էր գնում, թե ցույց է լինելու: Նրանք շախմատի մրցումներ էին կազմակերպում, 45-ամյակին նվիրված երեկոներ, ֆեստիվալներ, մինչդեռ պետք է այնպես անեին, որ այս դեպքերը չկատարվեին:

*Ռեպիևա*

Երեւի չգիտեին:

*Սաղաքել Հարությունյան*

Ավելի վատ իրենց համար, որ դեռ մեկ ամիս առաջ չգիտեին, թե ինչ պիտի կատարվի, երբ մենք գիտեինք: Ճիշտ արեց քաղկոմի քարտուղար ընկ. Բադալ Մուրադյանը, երբ հրապարակի ամբոխի ղեկավարությունը վերցրեց իր ձեռքը: Բայց դրանից առաջ: Ամիսներ շարունակ ձգձգում էին, խաբում էին եղեռնի նշման հարցի կապակցությամբ: Խոսքս վերաբերում է մեր Կենտկոմի եւ ես քննադատում եմ ԽՄԿԿ Կենտկոմին էլ,

[1] Բռնել եւ ծեծել, ծեծեցեք (ռուսերեն - Ա. Հ.):



որ չհասկացավ, թե 1915 թվականի ապրիլի 24-ին ինչպիսի դժբախտություն է պատահել հայ ժողովրդի հետ: Հրամայական է արձակվում, որ ֆաշիստական հանցագործներին չենք ներում, չպիտի ներել: Իսկ թուրքերի արածն ինչ էր. ֆաշիստական հանցագործություն չէ՞ր: Գենոցիդ էր եւ պիտի ներեինք: Ինչ արեց «Պրավդա»-ն. ոչ, չարձագանքեց, մի տող գրեց կարծես հազար անգամ ներողություն էր խնդրում թուրքերից այդ մի տողի համար, իսկ «Իզվեստիան» իշայծամի մասին էր գրում: Ավելին. դեռ դրանից շատ առաջ, մեր ղեկավարները եկան մեզ մոտ, եղան այլ դահլիճներում եւ ասացին, թե նրանք, այսինքն Մոսկվայի ընկերները, մեզ թույլ չէին տալիս նշել եղեռնը, բայց մենք մի կերպ համոզեցինք նրանց եւ թույլտվություն վերցրինք, ասացին, թե Բրեժնեւը եւ մյուսները մի կերպ հասկացան: Ինչ էր նշանակում սա. այն, որ այս երեւույթների համար պատասխան պետք է տան մեր ղեկավարները:

Այո, հենց նրանք վատ կազմակերպեցին ամեն ինչ: Նրանց պատճառով եղավ այս ամենը: Ինչու չէր կարելի կոթողի հիմքը դնել հենց այդ օրը, որպեսզի, փոխանակ հրապարակում հավաքվելու, հավաքվեին այնտեղ եւ այդպիսի էլեմենտները գլուխ չբարձրացնեին:

Հիմա անցնենք Օպերայի շենքի դեպքերին: Ինչու Օպերայից ներս մտնել ցանկացողներին միլիցիաները ուզում էին հոշոտել: Ով էր թելադրել այդ նրանց: Իսկ նրանք ուզեցել են ներս մտնել խաղաղ եւ հանգիստ: Այստեղ մանրամասն ասացին, թե ինչպես է եղել, ինչպես է ջուր բաց թողնվել:

Սակայն, այդ բոլորը սեղմումների, բարոյական ճնշման արդյունք են: Տպարան է գնում ընկ. Բադալյանը եւ հանում է «եղեռն» բառը, «թուրք» բառը: Ինչ է պատահել, էչ որ դա լրագրություն է, գրականություն: Ես կռվել եմ ֆաշիզմի դեմ եւ գրելիս գրում եմ՝ «գերմանացիների» դեմ, որպես ծեւ. իսկ ինչու չի կարելի «թուրքեր» բառը գրել: Ես ուզում եմ այստեղ բերել մի փաստ:

Հենց ապրիլի 24-ի օրը Կենտկոմի մի աշխատող մեղադրում էր մեզ, թե մենք ենք պատճառը, որ այսպիսի դեպք կատարվեց: Իբր մենք գրել ենք, շատ ենք գրել եղեռնի մասին եւ գրգռել ենք ժողովրդին: Ընդհակառակը, ընկերներ, ինչքան գրում էինք, ինչքան գրվում էր այդ մասին, այնքան հանգստացնում էին ընթերցողները:

Ճշմարտությունը պիտի ասել եւ չպետք է վախենալ ճշմարտությունից:

*Աննուշավան Շիրոյան*

Ես իրավունք ունեմ այստեղ եղեռնի մասին խոսելու. ես մասնակից եմ եղել Վանի ինքնապաշտպանության եւ 1500 դիմադրողներից, պաշտպաններից մեկն էի:

Կենտկոմը ճիշտ է վարվել, թույլ տալով նշել եղեռնը: Այդ մասին դեռ գիտեինք երկու ամիս առաջ: Բայց ինչու երկու ամիս առաջվանից

չսկսվեց գործարաններում, հիմնարկներում, շրջաններում բացատրական աշխատանքներ տանելը: Ես գիտեմ, թե ինչ է նշանակում ամբոխ: Եթե ամբոխը չղեկավարվի, ապա սոսկալի բաներ կլինեին: Եւ հենց չղեկավարվելու համար Կենտկոմը մեղավոր է: Ինչ է նշանակում ջուր բաց թողնել ժողովրդի վրա: Դա հո ապակի ջարդել չէ, դիմացը մարդ է: Եւ հետո, ինչ է նշանակում սգատոնը նեղ շրջանակի մեջ կատարելը, տոմսով, հատուկ մարդկանց համար: Դա պետք էր անել ստադիոնում: Հետո, եթե ամբոխը կա, ուրեմն եւ կլինի պրովակատոր: Այո, կան մարդիկ, որ չեն հասկանում եղեռնի նշանակությունը: Մեր գրողներից մեկն ինձ ասաց, թե ինչ է պատահել, որ ազմուկ է լինում. մենք թուրքերին ենք կոտորել եւ նրանք էլ մեզ: Սա պրովակատորական մտածողություն է, դեմագոգիա: Եւ ադրբեջանցի ընկերները վախենում էին այդ պրովակացիաների պատճառով: Սուտ լուրեր էին տարածվում, եւ Կենտկոմից ոչ մեկը չէր փորձում պաշտոնապես հերքել, սկզբից պետք էր դատապարտել սուտ լուրեր տարածողներին:

Ես կարծում եմ, որ մեր պատմությունը, օրինակ 1915 թվականին...

***Ռեպիկա***

Մի կրկնեք ուրիշներին. նոր խոսք ասեք:

***Անուշավան Շիրոյան***

Ես ուզում էի մեր եւ թուրքերի փոխհարաբերության մասին մեր պատմությունից:

***Ռեպիկա***

Խոսեք այս դեպքերի մասին:

***Անուշավան Շիրոյան***

Ես միանում եմ ընկերների ելույթներին...

***Վազգեն Մնացականյան***

Մեծ եղեռնի 50-ամյակի նշումը քաղաքական, բարոյական եւ գաղափարական խոշոր ակտ էր: Եղան մարդիկ, որոնք չըմբռնելով դրա նշանակությունը, ցանկացան կուզեկուզ սգալ: Կուզեկուզ կարելի է միայն գոհություն գնալ: Ոմանք էլ պարզապես դեմ էին այդ միջոցառմանը, վերստին հրապարակ հանելով նացիոնալիզմի հին, անմեղ զոհեր պահանջող թիրախը. դրանք այն անուղղելի զրպարտիչներն ու դեմագոգներն են, որոնց բարոյական հանցագործությունը հարուստ է 1937 եւ 1949թթ. փորձով: Իրավացի էին նրանք, ովքեր գտնում էին եւ գտան, որ եղեռնի 50-ամյակի նշումը անհրաժեշտ է, կարեւոր եւ պատճառաբանված: Այդ տարելիցի գաղափարական-բարոյական նախապատրաստումը սկսվել էին ամիսներ առաջ. պարբերաբար լույս էին տեսնում հոդվածներ, առանձին գրքույկներ, դրան զգալի տեղ էր հատկացվում նաեւ ռադիոհաղորդումներում: Օդը, ինչպես ասում են, կամաց-կամաց հագենում էր բազմաթիվ ազնիվ ու մեծ զգացումով:Դա լավ էր: Բայց տարելիցի նախօրյակին հանկարծ արգելակվեցին այդ նախապատրաստությունները: Մինչեւ մարդիկ



կարողանային ուշքի գալ, թե ինչ է կատարվում, վրա հասավ Ապրիլի 24-ը եւ տեղի ունեցան մեզ բոլորին հայտնի դեպքերը՝ լավ եւ վատ: Քանի որ այդ եղեռնին մի անգամ էլ ենք անդրադառնալու, անհրաժեշտ է պարզել, թե ինչ սխալներ ենք թույլ տվել, որպեսզի հուշարձանի բացման արարողության օրը կարողանանք կանխել հիվանդագին երեւույթները:

Ճիշտ են ասում ընկերները, որ անհրաժեշտ էր Ապրիլի 24-ին խելացիորեն զբաղեցնել ժողովրդին, հատկապես երիտասարդությանը: Այստեղ դժգոհություն հայտնվեց «Պրավդա»-ում տպագրված հոդվածից: Այդ հոդվածին ես մոտենում եմ այլ տեսանկյունից: «Պրավդան» հայերի գենոցիդը դիտել է, որպես համաշխարհային հասարակայնության զայրույթին ու դատապարտմանը արժանի երեւույթ. Դա առավել եւս իրավունք է տվել մեր ղեկավար ընկերներին Ապրիլի 24-ին ցույցը կազմակերպել Երեւանում եւ այլ քաղաքներում, դատապարտելու համար ոչ միայն հայերի, այլեւ իսպանացիների, լեհերի գենոցիդը, անարգանքի սյունի գամելու Օսվենցիմի, Մայդանեկի հանցագործներին: կես դար առաջ Դերզորում կատարված հրեշավոր հանցագործությունը «Պրավդան» գրեց Մայդանեկում կատարվածի կողքին եւ ընդգծեց հայ ժողովրդին պատճառած ողբերգության կազմակերպիչների՝ համիդյան բարբարոսներին դատապարտելու արդիական նշանակությունը:

Այս միանգամայն, դիվանագիտական ոչ մի ստատուս չխախտող իրավունքը խելացիորեն չօգտագործվեց: Ես գտնում եմ, որ հայերի վիշտը առաջին հերթին պետք է կիսեին նաեւ Վրաստանն ու Ադրբեջանը: Այս երեք ժողովուրդների ճակատագիրը նույնն է եղել պատմության օրհասական տարիներին: Մենք շատ ու շատ հանգույցներով ենք կապված իրար հետ, այսօր եւ ընդմիշտ: Այդ մասին գրել է Աբովյանը, այդ մասին գիտեին Շահումյանն ու Սպանդարյանը: Այդ ճշմարտության հաստատումն էր նաեւ Բաքվի 26 կոմունարների փառավոր կյանքն ու հերոսական ողբերգությունը: Սթափ ու խելամիտ գործունեության դեպքում մեր ժողովրդի վիշտը պետք է դառնար եւ չէր չդառնալ նաեւ վրաց ու ադրբեջանցի ժողովուրդների վիշտը: Բայց դա չարվեց: բարեկամության այն երեկոները, որ կազմակերպվեցին մեր հանրապետությունում վերջին 10 օրում, կարծես թելադրում էին, որպեսզի բարեկամությունը շարունակվի նաեւ վշտի ու բողոքի դեպքում: Այդ էլ չեղավ: Ժողովրդական վիշտը միշտ էլ ունեցել է երկու կարեւոր ակունք՝ հոգեւոր առաքինության եւ ժողովուրդների փոխադարձ հարգանքի ու ճվիրվածության: Այդ ակունքները դարավոր են, բայց չգիտես ինչու չցանկացան օգտվել դրանից: Ըստ երեւույթին որոշ մարդիկ, ղեկավար եւ շարքային, չեն վստահում ժողովրդական վշտի մարդկային, մարդասիրական ուժին, չեն կարողանում ըմբռնել, որ մեր կեսդարյա վիշտը ու թե ժողովուրդներ է թշնամացրել, այլ ավելի է մտերմացրել իրար. որովհետեւ մենք գիտենք ժողովրդին տարբերել նրա դահիճներից:

Դեռեւս Չարենցը, եղեռնի արդարամիտ ականատեսներից մեկը 20-ական թվականներին Ստամբուլի մասին բանաստեղծություն է գրում, ապա Լենինի եւ Ալու մասին, որոշակիորեն ընդգծելով երկու Թուրքայի գոյությունը. աշխատավորի, կոմունիստ Մուստաֆա Սուբխու եւ արնախում փաշաների: Խորհրդային դիվանագիտությունը, խաղաղ գոյակցության մեր քաղաքականությունը բնավ չեն ջնջում սահմանները երկու Թուրքիայի միջեւ, օրակարգից չեն հանում պատմության մարքսիստական լուսաբանման խնդիրը, մոնոլիտ չեն դարձնում Թուրքիան: Եղեռնի նշումը չէր կարող եւ ուղղված չէր թուրք ժողովրդի դեմ, որովհետեւ կան բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ աշխատավոր ժողովուրդը դեմ էր տիրող կառավարության գազանություններին:

Մտաբերելով Մայդանեկը, ոչ մեկի մտքով չի անցնում, որ դրանով վիրավորում ենք գերմանական ժողովրդին՝ Մայդանեկի հոգեբանությունը ուղղված էր նաեւ գերմանական ժողովրդի դեմ: Դատապարտելով լեհական նվաճողների գազանությունները Ուկրաինայում, ոչ ոքի մտքով չի անցնում, որ դրանով վիրավորում ենք լեհ ժողովրդին, վերջապես Դերզորի համար ոչնչով պատասխանատու չէ թուրք ժողովուրդը: Սա վաղուց են հասկացել հայ ժողովուրդն ու նրա առաջավոր մտավորականությունը: Հիմա առավել խորն են ըմբռնում: Ազնիվ զգացումների այդ աշխարհը, որ ապրիլի 24-ին իրավունք էր ստացել ալեկոծվելու, անհրաժեշտ էր ղեկավարել. դա չարվեց: Արդարությունը պահանջում է ասել, որ որոշ ղեկավար եւ շատ կոմունիստներ գիտակցելով դեպքերի լրջությունը, փորձեցին ժողովրդական ինքնաբուխ ցույցին կազմակերպված բնույթ տալ:

Թեեւ ուշացած, բայց դրական աշխատանք կատարվեց: Ես էլ եմ դատապարտում այն պրովակատորներին, որոնք ապրիլի 24-ի երեկոյան խանգարեցին սգո նիստը. ես դրանց անջատում եմ այն հազարավոր ազնիվ հայրենակիցներից, որոնց երթը նույնիսկ կանաչներ չտրորեց: Նրանք չէին կարող քարերով մտնել այն տաճարը, ուր հիշատակի խոսք էր ասվում մեծ եղեռնի զոհերին: Դրանք, ըստ երեւույթին, այն տարրերն էին, որոնք ոչ միայն այդ օրը, այլ ամեն օր ցանկանում են մեր կյանքը պղտորել գաղափարական ու բարոյական խուլիգանությամբ: Առիթն այնպիսին էր, որ նրանք կարողացան ինչ որ չափով հասնել իրենց նպատակին: Ցերեկը նրանք չհանդգնեցին, որովհետեւ ցույցի հիմնական կորիզը առողջ էր, սթափ մարդիկ շատ էին: Այդ տխուր փաստը մեզ մի անգամ եւս համոզում է, որ անհրաժեշտ էր կազմակերպել 50 տարի զսպանակված վշտի երթը: Սա անառարկելի է:

Մենք արդեն բավականին ճանապարհ ենք անցել եւ գիտենք, որ գաղափարական-բարոյական նման կարեւոր իրադարձությունների ժամանակ, զրպարտիչների մի խումբ իսկույն մոլեգնող նացիոնալիզմ է տոնում Հայաստանում եւ սկսում ահաբեկել ղեկավարներին: Դրանք անհատի պաշտամունքի շրջանից մնացած կատաղիներն են, որոնք շարունա-



կում են ապրել ժողովրդին, մտավորականներին տածած անվստահության, կասկածամտության զգացումներով: Դա Ստալինի թողած ամենաահավոր արատն է, որ ոմանք դեռ չթաքցնելով եղեռնի տարիների կապակցությամբ թույլ տրված սխալներն ու բացերը, մենք միաժամանակ պետք է ասենք. ճիշտ է վարվել պարտիան, նրա լենինյան ղեկավարությունը, նշելով այդ տարելիցը: Չնշել, կնշանակեր հավանություն տալ այսօրվա գենոցիդին, արդարացնել ֆաշիստական հանցագործներին: Եղեռնի նշումը խաղաղասեր ժողովրդի հիշողության իրավունքի պաշտպանումն է. ջնջել այդ հիշողությունը, նշանակում է զրկել նրա առաջ գնալու հնարավորությունից: Խոսքն երկարեց. մի փաստի մասին էլ կուզենայի խոսել: «Կոմունիստ» թերթը եղեռնի նախօրյակին ինձ հոդված էր պատվիրել Ար. Մնացականյանի «Կոմունիստական պարտիան հայ ժողովրդի փրկարարն է» գրքի մասին: Ես գրեցի, մի անգամ էլ ընդգծելով այն միտքը, որ ֆիզիկական բնաջնջումից հայ ժողովրդին փրկել են Հոկտեմբերը, պարտիան եւ Լենինը, միայն մի նախադասություն կա հոդվածում այն մասին, որ 1915 թիվ է եղել հայ ժողովրդի կյանքում, որ այդ թվականը կարող էր կրկնվել նաեւ Արեւելյան Հայաստանում, եթե վրա չհասներ Խորհրդային Ռուսաստանը: Թերթի խմբագիրը, որի միակ առավելությունը նրա ահավոր տգիտությունն է. ես զարմանում եմ, թե ինչպես են մինչեւ հիմա հանդուրժում այդպիսի մարդկանց: Այն սխալները, որ հաճախակի թույլ է տալիս «Կոմունիստ» թերթը, բավական են, որպեսզի լրջորեն անհանգստացնեն ղեկավար ընկերներին: Իմ հոդվածը չեն տպագրում, ասելով. «Դա չեզոք թերթի համար է գրված», ինչ ասել է չեզոք թերթ: Այդպիսին կա: Մի թերթ, որ պարտավոր էր այդ օրերին ճիշտ ընթացք տալ մեր գաղափարական կյանքին, փորձեց նույնիսկ մեզ, գրողներիս, ապակողմնորոշվել, ցավալի հանդուրժողականություն:

Ո՞րն է եզրակացությունը:

Հարկ չկա ջղային կացություն ստեղծել. պետք է հանգիստ, առանց խուճապի, առանց պատեպատ ընկնելու, խորհել կատարվածի եւ չկատարվածի, լավի ու վատի մասին եւ ժողովրդին, մտավորականությանը, հատկապես երիտասարդությանը օգնող եզրակացություններ անել: Ամեն կերպ պետք է օգնել ղեկավարությանը, որպեսզի զրպարտիչները, պղտոր ջրում նացիոնալիզմ որոնող ազգային նիհիլիստներն ու բախտախնդիրները, չկարողանան առանձին վատառողջ փաստարկների հաշվին քաղաքական հասունության վկայական ձեռք բերել: Այս դեպքում ինչ ասելը չպետք է ապակողմնորոշվի մեզ, կարեւորն այն է, թե ով է ասողը. զրպարտիչը, դեմագոգը, ազգային նիհիլիստը (մանավանդ 1937 թվականից մնացած) իրավունք չունի նույնիսկ ճշմարիտ փաստի անունից խոսել-քննադատել, իրավունք ունի միայն ազնիվ եւ մեր գործին նվիրված մարդը: Ես այս բարոյականության կողմնակիցն եմ:

Դեպքերն այնքան թարմ են, որ ելույթներում կարող են նաեւ չափազանցություններ, ավերլորդ սրություններ լինել: Դեռեւս չխաղաղված հուզմունքը, ապրումը այդպիսի ավելցուկներ տալիս են: Դրանք, սակայն, կշիռ ունենալ չեն կարող, ինչ ցանկացել եւ կատարել ենք, թեկուզ կիսով չափ, թեկուզ սխալներով, չի կարելի դեն նետել: Եղեռնի նշումը ինչ որ կամպանիա չէր, այլ պատմության ճշմարտության վերականգնում:

Այդ ճշմարտությունը դեռ երկար պիտի զբաղեցնի գաղափարական ֆրոնտի աշխատողներին. մի ժողովուրդ, որ աշխարհ է եկել, աշխարհում մնալու համար, չի կարող խեթ աչքով նայել իր պատմության նաեւ ողբերգական էջերին:

***Գարեգին Բես***

Ընկերներ, թույլ տվեք գնամ, որդուս դպրոցից բերելու: Իսկ քվեարկելիս Սիլվայի ելույթին միանում եմ:

***Աշոտ Գրաշի***

Ցավալին այն է, որ ընկերներ, որ թուրք դահիճներին պաշտպանողներ կան, կան նաեւ այստեղ եւ Մոսկվայում, կան պատմության կեղծարարներ: Մոսկվայում նրանք շշուկներ են տարածում եւ ահաբեկում բաժինների վարիչներին: Եվ ինչ է, միթե մենք նրանց չափ չգիտենք մեր պատմությունը: Միթե մենք չենք կարող զանազանել այսօրվա թուրքն ու սուլթանական ռեժիմը: Մենք այո սահմանազատել գիտենք թուրք առաջադեմ մարդկանց ու շովինիստներին, մենք թուրք առաջադեմ մարդկանց անունով փողոցներ ունենք, բայց դատապարտում ենք Թալիաթի Թուրքիան:

Ինչ կարիք կա եղեռնը նշելու,- հարցնում են նրանք, այն կեղծարարները եւ դրանք մյուլլերականներն են: Մենք աբովյանականներ ենք, սակայն թույլ տվեցինք, որ մեզ պրովակացիայի ենթարկեն: Նրանց հաջողվեց այդ պրովակացիաներով ահաբեկել մեր ղեկավարներին: Եւ եղավ այնպես, իբր մի կողմից նշվում է եղեռնը, մյուս կողմից հանվեցին հոդվածներ: Մի տեղ, օրինակ «Գրական թերթում» թույլատրվեց տպագրել մի բան, մի ուրիշ տեղ՝ «Կոմունիստ» թերթից հանեցին նյութերը եւ թույլ չտվին նշել:

Մենք խաղաղության կողմնակից ժողովուրդ ենք եւ մենք ջարդարարությունը դատապարտող ժողովուրդ ենք: Հենց եղեռնի նշումը հակաջարդարարական փաստ էր, հենց եղեռնը նշել խաղաղասեր լինելու ապացույց էր, խաղաղության կողմնակից լինելու ապացույցը: Մենք գիտենք, որ կա Գերմանիա, բայց կա ռեւանշիստական Գերմանիա, եւ կա Թելմանի Գերմանիա: Հայտի է, որ կան նաեւ տարբեր թուրքեր եւ մենք զանազանել գիտենք նրանց: Վախեցաս, որ չենք կարող զանազանել: ԱԴՐ-րիում երեկո պիտի լիներ՝ արգելեցին, փակեցին բուհերի դռները եւ փականքի տակ դրին ուսանողներին: Հարգանքը դեպի ժողովուրդը չկար, չհասկացվեց: Մենք դատապարտում ենք խուլիգաններին, բայց հայրենասերներին



չպետք է շփոթել նրանց հետ: Աստեղ, Երեւանում կատարված եղբայրական հավաքույթում Լեոնիձեն մի շատ լավ խոսք ասաց. նա ասաց, որ հայ ժողովուրդը թշնամական շատ արշավանքներ է տեսել եւ հիմա, հայ ժողովուրդը պետք է տեսնի սիրո, եղբայրության արշավանքներ: Սա հարգանքի եւ սիրո արտահայտություն է: Իսկ մենք մեզ չհարգեցինք: Ինչ կլիներ, եթե գործարաններում մեկ րոպե որպես հարգանքի դադարեցվեր աշխատանքը եւ հոտընկայս հարգվեր զոհվածների հիշատակը: Լավ չէին մտածել, ահա թե ինչն է դատապարտելին:

***Վաղարշակ Նորենց***

Ընկերներ, կուզենայի, որ Կենտկոմից այստեղ ներկա եղող ընկերները օբյեկտիվորեն ներկայացնեին մեր խնդիրները: Շնորհակալ ենք Կենտկոմից, որ որոշում կայացրեց եղեռնը նշելու, բայց որոշումից հետո, որոշումը ի չիք դարձնելու փորձի համար, այդ որոշումը չիրագործելու փորձի համար շնորհակալ լինել չենք կարող:

Հենց այստեղ, այս դահլիճում շաբաթներ առաջ խոստումներ եղան հուշարձան կանգնեցնելու, մրցանակաբաշխության արդյունքները մինչեւ ապրիլի 24-ը հրապարակելու մասին, եւ այդ խոստումը չկատարվեց, չիմացանք նույնիսկ, թե ինչպես եղավ մրցանակաբաշխությունը: Մեր «Կոմունիստ» թերթը պետք է լինի մեր ժողովրդի իղձերի արտահայտիչը, բայց չգիտենք, թե ում իղձերի արտահայտիչ էր: Եղեռնը պետք է նշվեր լայն առումով, ավելի հանդիսավոր, ավելի ժողովրդական, բայց չնշվեց:

Հենց այս պատճառների համար անկազմակերպ մասսան փողոց դուրս եկավ: Մտավախություն ուներ Կենտկոմը, թող ուրեմն ոչ թե եղեռնը նշվեր պարտիական գծով, եթե այդ չէին ուզում, այլ հասարակական կազմակերպությունները, պրոֆմիութենական կազմակերպությունների միջոցով: Այս բոլոր դեպքերի համար, մենք ենք մեղավոր, մեր քաղկոմն է մեղավոր, մեր Կենտկոմն է մեղավոր: Մենք չկարողացանք կատարել պատգամը, որովհետեւ թույլ չտվին: Այնի ինչ թույլատրվեց, ավելի շուտ մենք վերցրինք մեզ վրա, կատարվեց լավ, ուզում եմ ասել, ինչու մեր գրողների կազմկերպած երեկոն անցավ այնքան հաջող: Հաջող կանցներ նաեւ այլ տեղերում կազմակերպվելիք երեկոները:

Մենք լվից ուղտ չինենցինք, եւ ընդհանրապես լվից ուղտ ենք չինում: Մենք ուռեցրինք յոթ տարվա ածաջվա այս դահլիճում մեր ընկերների ունեցած ելույթները, նացիոնալիզմ որոնեցինք ու գտանք եւ ապա հայտնեցինք ԽՄԿԿ-ին: Մենք չենք կարող մեր ինտերնացիոնալիստ, ողջախոհ ժողովրդին դատապարտել. բայց պետք է դատապարտենք խուլիգանությունն ու խուլիգաններին, որոնք կապ չունեն ինտերնացիոնալ, հումանիստական զգացումների հետ. վշտի ու սգո հետ:

Ես իմ դժգոհությունն եմ հայտնում Կենտկոմից, որ մատերիալիստներ են գալիս քաղաքական մեղադրանքներով, որոնցում մեզ զրպարտում են, բայց զրպարտիչները չեն դատապարտվում: Դրանք ավելի մեծ

խուլիգաններ են, պրովակատորներ: Պիտի ասեմ, որ մենք ենք հաճախ տեղիք տալիս պրովակացցիայի: Ինչու պիտի ադրբեջանական դպրոցի մոտ միլիցիան պահակ կանգներ. ով պիտի գնար ադրբեջանցի եղբայրների վրա հարձակվելու: Հենց այդ պրովակացիոն երեւույթ է: Սա վիրավորական փաստ է, եւ ավելի վիրավորական է, որ կենտրոնական մամուլը չանդրադարձավ մեր հանրապետության վշտին: Իմ կարծիքով Մկրտիչ Ներսիսյանին նրանք անպատվեցին եւ նա բողոքելու իրավունք ունի: Միթե պատմությունը կարելի է այնպես նեղացնել, միթե դա հանդուրժելի է:

Ինչ վերաբերում է խուլիգաններին, ապա, ինչպես ասվեց, խուլիգանների, գողերի մասին շատ լավ գիտեն Ներքին գործերի մինիստրությունում, եւ նրանց ցուցակն էլ ունեն, թող հենց նրանց էլ դատապարտեն, իսկ անմեղներին, հայրենասեր տղաների հետ պիտի բացատրական աշխատանք տանել:

Մեկ խոսքով, ընկերներ, եղեռնի 50-ամյակը չնշվեց պատշաճ ձեւով:

***Հովիկ Սաֆյան***

**(Տեղից, հայտարարության կարգով)**

Ինձ հայտնի, որ երբ օպերայի դրսի տղաներին թողեցին ներս. ամիջապես հետո նրանց կալանքի վերցրին ու ծեծեցին, ապա միայն սկսվեց դրսի քարկոծումը, որը ոչ թե ապակիներին էր ուղղված, այլ պրովակատոր միլիցիոներներին: Միլիցիան գռեհկություն թույլ տվեց եւ խուլիգանություն առաջացրեց: Առաջարկում եմ միլիցիայի վարքագիծը քննել, նրանց խրախուսողներին, եւ դրանց մեջ եղել են Կենտկոմի աշխատողներ, ինչպես Համո Սահյանն էր ասում:

***Ռեպիկա***

Թող ասվի, թե ով էր:

***Համո Սահյան***

Եղեռնի նշման հաջորդ օրը, ես տեսա, թե ինչպես Կենտկոմի պատասխանատու աշխատող Կիմ Պողոսյանը, որի մայրը այստեղ նստած է եւ չէի ուզում ասել, բայց պիտի ասեմ, իմ եւ շատերի ներկայությամբ կարգադրում էր միլիցիային. **ловить и бить**: Սա ստոր բռնություն էր. սա դաժան արարք էր. **"бейте"**[1],- գոռում էր նա, եւ Կոմիտասի նկարը կրծքներին դրած լինելու համար, կարծես խուլիգաններ լինեին նրանք, մինչդեռ կանոնավոր, հանգիստ զբոսնող պատանիներ էին:

***Աշոտ Պապայան***

**(տեղից)**

Ես 12 կիլոմետր քայլել եմ այդ երիտասարդների հետ եւ դա արել եմ սուրբ զգացմունքներով: Պահը շատ հանդիսավոր էր եւ երիտասարդությունն էլ շատ կանոնավոր պահեց իրեն երթի ժամանակ:

***Ռեպիկա***

[1] Ծեծեցեք (ռուսերեն - Ա. Հ.)



Առաջարկ կա սահմանափակելու:

***Սերո Խանզադյան***

Ընկերներ ես եւս միահամուռ պաշտպանում եմ մեր Կենտկոմի ու կառավարական գիծը եւ եղեռնի տարեդարձը նշելու որոշումը:

Սուտ է եւ պրովակացիա է, թե հայ եւ ադրբեջանցի եղբայրների միջեւ տարաձայնություններ եւ դեպքեր են եղել, եղել են իբր անկարգություններ. ես եղա մեր սահմանամերձ գյուղերում, չլսեցի ոչ մի դեպք, չի արձանագրվել ոչ մի փաստ. սա ճիշտ է: (Ապա պատմում է ականատեսի իր վկայությունները հրապարակում, զրույցները երիտասարդների հետ, խոսում է իր եւ Բ.Մուրադյանի ելույթների մասին, այնուհետեւ պատմում է օպերայի մոտ եղած դեպքերը, որոնք նույնպես տեսել է):

Պետք է ասեմ,- շարունակում է Ս.Խանզադյանը,- որ կային մարդիկ, որոնք դեռ եղեռնի նշման որոշումից առաջ էլ զրպարտագիր էին ուղղարկում Կենտկոմ, թե այս է լինելու, թե այն է լինելու, թե կարիք չկա նշելու այդ տարեթիվը: Կենտկոմի որոշ ընկերներ վախեցել են դրանից եւ մինչեւ հիմա էլ վախենում են: Մեզանում հատուկենտ մարդիկ կան, որոնք Կենտկոմին հակադրվելու, իրենց նեղ անձնական շահի համար փորձում են ամբողջ հայ ժողովրդին նացիոնալիստ համարել: Պետք է ժամանակին պատժվեն այդ զրպարտիչները եւ նրանց ասվեր, որ տեղ չունեն նրանք մեր հասարակության մեջ: Ապրիլի 24-ին եւ 25-ին ոչ մի նացիոնալիստական ելույթ չի եղել: Մեր ժողովուրդը ազնիվ ինտերնացիոնալիստ է: Տխուր դեպք էր կատարվել նաեւ գրողների միության շենքի առաջ, մի քանի միլիցիոներ ծեծել են Շիրազին որոնող պատանիներին: Ով, որտեղ, ինչպես է տարածել, թե իբր Շիրազին կալանքի տակ են պահել մեզ մոտ Գրողների միությունում, եւ տղաները եկել են ազատելու Շիրազին: Միլիցիան միջամտել էր, եւ քիչ էր մնացել ոճիր գործվեր, ծեծել էին իրար:

***Ռեպիկա***

Այդ սուտը ուրիշներն են տարածել:

***Սերո Խանզադյան***

Ոչ, հենց ինքը՝ Շիրազն է տարածել. երեկ մենք տեսանք նրան եւ հարցրինք, թե որտեղ էիր, իսկ նա պատասխանեց, թե կալանքի տակ էի. ես թուք ու մուր տվի նրան, եւ ասացի, որ ստում է. պապանձվեց: Դեպքերը, ընկերները, առաջ եկան բազմաթիվ թյուրիմացություններից, եւ կարեւորն այն է, որ դա մեծ չափերի չէր հասնում, այլ բարեկիրթ, խելոք երիտասարդների կողմից իսկույն զսպվում էր: Մենք դատապարտում ենք հատուկենտ խուլիգաններին, որոնք ապակիներ են ջարդել, իսկ սգո հանդեսը վերածվեց անկարգության: Բյուրոն առաջարկում է բանածեւի նախագիծ: Դա կարդալու համար ծայնը տրվում է ընկ. Բ. Հովսեփյանին:

***Բանածեւի ընթերցում***

Դիտողություններից, լրացումներից հետո, բանածեւն ընդունվում է միաձայն:

# ԲԱՆԱՁԵՎ

Հայաստանի Խորհրդային Գրողների միության սկզբնական կազմակերպության դռնբաց ժողովը լսելով թուրքական բարբարոսների ձեռքով կատարված Հայկական եղեռնի 50-ամյակին նվիրված սգո հանդեսի մասին հաղորդումը, ամենից առաջ նշում է, որ ԽՄԿԿ-ի Նախագահության հավանությանը արժանացած ՀԿԿ Կենտկոմի որոշումը՝ պատմության մեջ իր նախընթացը չունեցող հայ եղեռնական կոտորածների 50-ամյա տարելիցը նշելու մասին, ***միանգամայն տեղին էր եւ համարում է ճիշտ:***

50 տարի առաջ թուրքական իշխող բարբարոսների կազմած ծրագրով ու ձեռքով հոշոտվեց հայ ժողովրդի արեւմտյան հատվածը: Մոտ մեկ ու կես միլիոն հայություն զոհ գնաց այդ բարբարոսությանը եւ երկու միլիոն հայ մնաց առանց հայրենիքի ու ցրվեց աշխարհով մեկ: Դա սովորական ջարդ չէր, դա նախամտածված ու խնամքով ծրագրված ժողովրդասպանություն էր, ցեղասպանություն: Իսկ ժողովրդասպանությունը եւ ցեղասպանությունը (գենոցիդ) երբ եւ որտեղ էլ կատարված լինեն, թշնամի են մարքս-լենինյան ուսմունքի էությանը, դատապարտվել ու դատապարտվում են Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության եւ Խորհրդային կառավարության կողմից:

Կուսակցական ժողովը նշում է, որ եղեռնի նախօրյակին եւ եղեռնի օրերին հանրապետության կուսակցական եւ գրական մամուլում հանդես եկած հայ գրողներն ու գիտնականները, ամբողջ մտավորականությունն իրենց հոդվածներում, ելույթներում եւ գեղարվեստական ստեղծագործություններում եղել են կուսակցության հետ, ժողովրդի հետ եւ կանգնած են եղել քաղաքականապես հստակ եւ ճիշտ ուղու վրա: Բոլոր հոդվածներում եւ ելույթներում Հայաստանի գրողներն ու մտավորականությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից պարզաբանելով ու դատապարտելով թուրքական ջարդարարների բարբարոսական քաղաքականության էությունը, միեւնույն ժամանակ ցույց են տվել, որ միայն Խորհրդային իշխանությունը, միայն ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը հայ ժողովրդին փրկեցին ֆիզիկական բնաջնջումից: Չլիներ 11-րդ կարմիր բանակը եւ չլիներ ռուս մեծ ժողովրդի փրկարար ձեռքը, Արարատյան դաշտն ու Շիրակի հարթավայրը ներխուժած թուրքական հրոսակները կբնաջնջեին նաեւ Արեւելյան Հայաստանը:

Եղեռնի 50-ամյակի օրերին հանրապետության քաղաքներում ու շրջաններում տեղի են ունեցել ժողովուրդների բարեկամությանը նվիրված երեկույթներ ու ցերեկույթներ, որոնք անցել են պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների եղբայրության նշանաբանով: Դրանց ակտիվ մասնակցել ու գաղափարապես ճշմարիտ ելույթներ են ունեցել հանրապետության կուսակցական, պետական աշխատողներ, գրողներ ու մտավորականության այլ ներկայացուցիչներ:



Եղեռնի առթիվ կազմակերպված գիտական նստաշրջաններն ու առանձին զեկուցումները նույնպես անցել են ցեղասպանությանը դատապարտելու, թուրք ջարդարարների հրեշավոր հանցագործությունները բացահայտելու, ժողովուրդների եղբայրության լենինյան սկզբունքը բարձր պահելու նշանաբանով:

Ապրիլի 24-ին, եղեռնի 50-ամյակի օրը, տարերայնորեն, բայց եւ ինքնաբուխ կարգապահությամբ մայրաքաղաքի Լենինի հրապարակը հավաքվեցին տասնյակ հազարավոր մարդիկ: Հետո այդ հոծ բազմությունը շարժվելով քաղաքի փողոցներով ուղեւորվեց դեպի Պանթեոն, որտեղ թաղված է հրեշավոր եղեռնի զոհ դարձած հանճարեղ Կոմիտասը:

Թե Լենինի հրապարակում, եւ թե պանթեոնում տեղի ունեցան ելույթներ: Այդ ելույթները հիմնականում եւ գերազանցապես դատապարտում էին գենոցիդը, թուրքական ոճրապարտ ջարդարարներին ու իրենց էությամբ առողջ էին: Որոշ հատուկենտ տարրերի անմտածված, հիվանդագին եւ վատառողջ հատուկենտ արտահայտությունները անմիջապես խեղդվում էին հենց հավաքված բազմության կողմից: Տեղի չունեցավ որեւէ խուլիգանական, հակահասարակական արարք: Հրապարակում եւ պանթեոնում ելույթ ունեցան Նախարարների Խորհրդի նախագահ ընկ. Ա. Քոչինյանը, ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանը, Երքաղկոմի քարտուղար ընկ. Բ.Մուրադյանը, գրողներ Ս.Խանզադյանը, Ս.Կապուտիկյանը եւ Պարույր Սեւակը: Այդ ելույթները տոգորված էին խորհրդային հայրենասիրության, ազգային արժանապատվության խոր գիտակցությամբ, ցեղասպանությունը դատապարտելու ոգով՝ նշելով հայ ժողովրդի մեծ վերածնունդը խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Բազմության միջից բացականչություններով թուրք բռնակալների զավթած հայկական հողերը ետ պահանջելու առաջարկներ եղան:

Գրողների միության կուսակցական ժողովը գտնում է, որ պահանջի նման ամբոխավարական ձեւերը չեն համապատասխանում միջազգային ներկա քաղաքականության պահանջներին: Հայաստանի գրողները կրկին անգամ հավանություն են տալիս Խորհրդային Միության խաղաղասիրական քաղաքականությանը եւ միջազգային վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքին:

Սակայն, Հանրապետությում կան առանձին անառողջ տրամադրություններով մարդիկ, որոնք չհասկանալով եւ խեղաթյուրելով լենինյան ազգային իմաստուն քաղաքականությունը, եղեռնի 50-ամյակ նշելու օրերից դեռ շատ առաջ եւ ապա հետո, իրենց գրավոր ու բանավոր խոսքով հայկական հողերի ամեն տեսակի պահանջները համարում են ազգայնական պահանջներ եւ գտնում, որ այդ մտայնությունը իբր թե եղեռնի 50-ամյակը պետականորեն նշելու արդյունք էր:

Հայաստանի Խորհրդային Գրողների միության սկզբնական կուսկազմակերպությունը գտնում է, որ այդ ընկերները կտրված են ռեալ իրա-

կանությունից եւ իրերին ու փաստերին նայում են հին ու հնացած մտայնությամբ, այն մտայնությամբ, որը ճշմարտացիորեն դատապարտվեց մեր կուսակցության 20-21 եւ 22-րդ համագումարների[1] կողմից:

Ճշմարտությունն այն է, որ տեղի է ունեցել պատմական մեծ անարդարություն: Ոչ միայն գազանաբար հոշոտվել է մեկ ու կես միլիոն հայություն, այլեւ երկու միլիոն հայ դարձել են պանդուխտ, անհող ու անհայրենիք: Սա գաղտնիք չէ, սա մի փաստ է, որին տեղյակ է ամբողջ աշխարհը: Թաքցնել այն, ինչ հայտնի է ողջ աշխարհին, նշանակում է անջրպետվել ժողովրդից, դադարել նրա արդար ձգտումների եւ ճշմարիտ ցանկությունների արտահայտիչը լինելուց: Միևչդեռ, մեր լենինյան կուսակցության ուժն ու հզորությունն այն բանի մեջ է, որ նա մեծ Լենինի իմաստուն ցուցումով միշտ քայլել է ժողովրդի հետ, դարձել նրա իղձերի ու ձգտումների արտահայտիչը:

Կուսակցական ժողովը նշում է, որ եղեռնի 50-ամյակին նվիրված սգո նիստում թե ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի ընկ. Ն.Հարությունյանի բացման խոսքը եւ թե ակադեմիկոս ընկ. Վիկտոր Համբարձումյանի զեկուցումը խորապես կուսակցական էին իրենց էությամբ եւ դրսեւորում էին ամբողջ հայ ժողովրդի ցանկությունները:

Սակայն, Գրողների միության սկզբնական կուսկազմակերպության ընդհանուր ժողովը արձանագրում է, որ սգո հանդիսավոր նիստից հետո Օպերայի հրապարակում հավաքված բազմության մեջ եղած մի խումբ քրեական տարրեր օգտվելով առիթից՝ ցուցաբերեցին հակահասարակական, խուլիգանական արարք: Ջարդելով Օպերայի դռների ապակիները նրանք ներս խուժեցին դահլիճ եւ խանգարեցին սգո հանդիսավոր նիստի առթիվ տեղի ունեցող համերգը:

Գրողների միության կուսակցական կազմակերպությունը միահամուռ կերպով դատապարտում է այդ խուլիգանական արարքը:

Ժողովը նշեց եւ միահամուռ հավանություն տվեց ՀԿԿ Կենտկոմի վերջին տարիներին կատարված գաղափարախոսական աշխատանքներին՝ անցյալի մեր արժեքները վերագնահատելու, անհատի պաշտամունքի տարիներին խեղաթյուրված պատմական իրողությունները լենինյան ճշմարտությամբ վեր հանելու, սփյուռքահայության հետ կապերը ընդլայնելու, հայրենադարձություն կազմակերպելու եւ այլ գաղափարական միջոցառումների վերաբերյալ:

Ժողովն արձանագրում է, որ սգո մասսայական հանդեսի ժամանակ, հատկապես կիրակի օրը, ապրիլի 25-ին, միլիցիայի եւ ադմինիստրատիվ օրգանների որոշ աշխատողների կողմից անմեղ բնակչության նկատմամբ թույլ են տրվել որոշ կոպիտ վերաբերմունք եւ ծեծ: Նման արարքները անհարիր են խորհրդային օրինականությանը, եւ ժողովը դատապարտում է այն:

1 Տեղի են ունեցել համապատասխանաբար՝ 1956, 1959, 1961 թվականներին:



Եղեռնի 50-ամյակը նշելու միջոցառումների ընթացքում եղել են կազմակերպչական բնույթի լուրջ թերություններ, անբավարար են եղել ռադիոյի, հեռուստատեսության, մասնավորապես կենտրոնական մամուլի լուսաբանումները:

Հայաստանի Խորհրդային Գրողների միության կուսակցական կազմակերպության ժողովը որոշեց.

1. Միահամուռ հավանություն տալով եղեռնի 50-ամյակը նշելուն, միաժամանակ դատապարտել սգո հանդիսավոր նիստի ժամանակ Օպերայի շենքի առջեւ տեղի ունեցած որոշ խուլիգանական տարրերի հակահասարակական արարքները:

2. Առաջարկել Գրողների միության կուսբյուրոյի նախագահությանը՝ երիտասարդության մեջ քաղաքական-բացատրական աշխատանքներ կատարելու համար հանրապետության գործարաններ եւ ուսումնական հաստատություններ ուղարկել գրողների բրիգադներ: Խնդրել ՀԿԿ Կենտկոմին, նույն նպատակով բրիգադներ կազմակերպել նաեւ հանրապետության մյուս ստեղծագործական կազմակերպություններից ու գիտական հիմնարկներից:

3. Հանձնարարել գրական մամուլին՝ պարբերաբար մեկնաբանել հայ ժողովրդի սոցիալիստական վերածնունդը, գեղարվեստական ստեղծագործություններով լուսաբանել խորհրդային մարդու հերոսական աշխատանքը, լենինյան սկզբունքով շարունակել, վեր հանել անցյալի մեր գրական արժեքները:

4. Հանձնարարել կուսբյուրոյին եւ Գրողների միության նախագահությանը միջոցառումներ մշակել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 եւ Լենինի ծննդյան 100-ամյակը արժանավայել նշելու համար: Գրական ստեղծագործություններում արտացոլել Հոկտեմբերի հռչակած սկզբունքների մեծ նշանակությունը հայ ժողովրդի բախտի համար:

5. Հանձնարարել բյուրոյին եւ նախագահությանը՝ խնդրել ՀԿԿ Կենտկոմին՝ հանդիպում կազմակերպել կուսակցական եւ պետական ղեկավարների եւ գրողների հետ:

Գրողների միության կուսակցական կազմակերպությունը հավատիացնում է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմին, որ այսուհետեւ եւս պատվով կկատարի կուսակցության օգնականի իր բարձր կոչումը:

Ժողովի նախագահ *Ս.Խանզադյան* [ստորագրություն]
Քարտուղար *Մ.Ալաջաջյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:
Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 21

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին]**

*Հուժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 60**
**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության**
**28 ապրիլի 1965թ.**

**Կետ 1. Երեւան քաղաքում 1965թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին**

(ընկ. Յա. Զարոբյան)

Արտահայտվեցին՝ ընկերներ Ս.Արզումանյանը, Վ.Մուսախանյանը, Ս.Վարդանյանը, Վ.Ավետիսյանը, Հ.Շահինյանը, Շ.Սիմոնյանը, Մ.Քոչարյանը, Բ.Մուրադյանը, Հ. Բաղդասարյանը, Ա. Ստեփանյանը, Ա. Կիրակոսյանը, Ն. Հարությունյանը, Գ. Պետրոսյանը, Ա. Քոչինյանը, Վ. Ձախարյանը, Մ. Ասատրյանը, Յա. Զարոբյանը:

Սուլթանական Թուրքիայի կառավարողների կողմից հայերի կոտորածի 50-ամյակի 1965թ. ապրիլի 24-ին լրանալու առթիվ ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշեց այդ տարեթիվը ցեղասպանության քաղաքականության դատապարտման, ԽՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության հաղթահանդեսի քարոզչության, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո նշել:

Հաշվի առնելով այդ տարեթվի անցկացման հետ կապված առանձնահատկությունները՝ կուսկազմակերպությունները կատարեցին որոշակի աշխատանք մեր կուսակցության քաղաքականության բացատրման, աշխատավորներին ժողովուրդների բարեկամության ու ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակության աշխատանքների ուժեղացման ուղղությամբ: Հանրապետության շրջաններ եւ քաղաքներ ուղարկվեցին քարոզչական խմբեր, անցկացվեցին մեր կուսակցության ներքին եւ արտաքին քաղաքականության վերաբերյալ դասախոսություններ եւ զեկուցումներ, հրատարակվեցին մի շարք գրքույկներ եւ գրքեր: Երեւանում տեղի ունեցավ ուկրաինական, ադրբեջանական եւ հայ ժողովուրդների բարեկամության մեծ երեկո, որտեղ այդ հանրապետությունների մայրաքաղաքների աշխատավորների ներկայացուցիչները ի մի բերեցին սոցիալիստական մրցության արդյունքները:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Նախագահությունը անհրաժեշտ է համարում նշել, որ կոտորածի 50-ամյակի նախապատրաստման եւ իրականացման ընթացքում ք. Երևանում ի հայտ



եկան որոշակի անառողջ երեւույթներ: Առանձին անձինք, խաղալով երիտասարդության որոշ չհասունացած մասի ազգայնական զգացմունքների վրա, սկսեցին նրան հրահրել անկազմակերպ գործողությունների:

Ապրիլի 24-ի առավոտյան ժամը 10-ին Երեւանի Լենինի հրապարակում հավաքվեց մարդկանց խումբ՝ գերազանցապես երիտասարդություն, որը ծաղիկներ դնելով Վ.Լենինի հուշարձանին, սկսեց բացականչել «Արդարացի լուծեք հայկական հողերի հարցը»: Աստիճանաբար նրանց միացավ մի քանի հազար մարդուց բաղկացած մեծ ամբոխ:

Հրապարակում ցույցի մասնակիցներին հանձնվեց ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Նախարարների Խորհրդին եւ Գերագույն Խորհրդի Նախագահությանը հասցեագրված նամակ, որտեղ պարունակվում էին խնդրանքներ. «Հայկական ԽՍՀ-ին հանձնել Ղարաբաղը, Նախիջևանը եւ Խորհրդային Միության տարածքում հայերով բնակեցված պատմականորեն հայկական հողեր, հայրենադարձ հայերին բնակեցնել Նախիջեւանում, քանզի Խորհրդային Հայաստանի բնակչության խտությունը հասել է ճգնաժամային մակարդակի, ազատել յոթ հայրենասերներին (նկատի ունեն 1964թ. իբր թե սխալ դատապարտված խումբը), արագացնել արտասահմանից հայերի հայրենադարձությունը»:

Նամակի վերջում ասվում է. «Նշելով մեր խորին սուգը մենք միաժամանակ արտահայտում ենք մեր ի սրտե շնորհակալությունը ԽՄԿԿ Կենտկոմին եւ Խորհրդային կառավարությանը մեր ներկայի ու լուսավոր ապագայի համար»:

Որպեսզի միտինգին ճշմարիտ ուղղություն տրվի՝ հավաքվածների առջև ելույթ ունեցան կուսակցության Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար ընկ. Մուրադյանը, գրող Ս. Խանզադյանը, Գիտությունների Ակադեմիայի նախագահ Վ.Համբարձումյանը եւ Նախարարների Խորհրդի նախագահ ընկ. Ա.Քոչինյանը, որոնք հավաքվածներին բացատրեցին կոտորածի, 50-ամյակի առթիվ իրականացվող միջոցառումների մասին եւ նրանց կոչ արեցին չխախտել հասարակական կարգը:

Հանրապետության եւ քաղաքի ղեկավարների ելույթներից հետո հավաքվածները ազատեցին հրապարակը եւ «2000000» (նկատի ունենալով 1915թ. կոտորածի զոհերի թիվը), «Արդարացի լուծեք հայկական հարցը», «Ազատեք յոթ հայրենակիցներին» պաստառներով եւ Կոմիտասի դիմանկարով ուղղվեցին դեպի Համալսարան եւ դեպի Կոմիտասի գերեզման, Սպանդարյանի հրապարակ, որտեղ այդ նույն հարցերի շուրջ հավաք էին անում: Շարժման ճանապարհին երթի մասնակիցները բնակչությանը կոչ արեցին միանալ իրենց: Սակայն, աջակցություն չստանալով, նրանք ուղղվեցին դեպի օպերայի եւ բալետի թատրոն, որտեղ երեկոյան ժամը 7-ին նշանակված էր Երեւանի հասարակայնության ներկայացուցիչների ժողովը: Օպերային թատրոնի առջեւ, հրապարակում, հավաքվել էր թատրոնի շենք ներս մտնել պահանջող մեծ ամբոխ: Խուլիգանների

խումբը, որոնց շարքերում կային եւ հարբածներ, օգտվելով շենքի թույլ պահպանությունից, ուժով բացեց դռները և քարերով ջարդեց թատրոնի ճակատային մի շարք ապակիներ: Հասարակայնության ներկայացուցիչների ժողովի ավարտից հետո հավաքվածների մի մասը թափանցեց շենքի ներս եւ հանդիսասրահում սկսեց միտինգ անել: Բացատրություններից եւ միջոցների ձեռնարկումից հետո հավաքվածները թողեցին թատրոնի շենքը, եւ երթի մասնակիցների մնացած մասը ուշ երեկոյան միլիցիայի դրուժիննիկների կողմից ամբողջությամբ ցրվեցին:

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը համարում է, որ այս տարվա ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունները Երեւանի բնակչության եւ հատկապես սովորող երիտասարդության շրջանում գաղափարական աշխատանքի մեջ լուրջ թերացումների անմիջական հետեւանք էին:

Այն փաստը, որ երիտասարդության զգալի խումբը մասնակցություն ունեցավ չկազմակերպված ցույցերում եւ հանրահավաքներում, վկայում է ուսանողության որոշ մասի վրա կուսակցական կազմակերպությունների թույլ ազդեցության մասին, մի շարք բուհերի, ռեկտորատների եւ տեխնիկումների ղեկավարների, սովորողների գաղափարա-քաղաքական դաստիարակության գծով:

Որոշ բուհերի կուսակցական կազմակերպություններ բացարձակապես անբավարար են զբաղվում ուսանողական քաղաքական դաստիարակության համար պրոֆեսորա-դասախոսական կազմի պատասխանատվության բարձրացման հարցերով, անսկզբունքայնորեն են վերաբերվում այն դասախոսներին, որոնք իրենց սխալ պահվածքով փաստացիորեն նպաստում են ուսանողության մասի շրջանում անառողջ տրամադրությունների տարածմանը:

Որոշ կազմակերպություններում թույլ է դրված հակաքարոզչությունը, բացակայում է ազգայնական տրամադրության առանձին արտահայտությունների հետ պայքարում հարձակողականությունը, տեղ ունի բուրժուական գաղափարախոսության թափանցման վտանգի թերագնահատում, չեն տրվում գաղափարապես օտար հայացքների քարոզ անձանց սկզբունքային հակահարված, ժամանակին խորը եւ կուսակցական դիրքերից չեն բացատրվում արդիականության ցավալի եւ հրատապ հարցերը:

Կուսակցության երեւանյան քաղկոմը եւ քաղշրջկոմները չեն ցուցաբերում բարձր պահանջկոտության սկզբնական կուսակցական կազմակերպություններին, ուսումնական հաստատությունների ռեկտորատներին եւ կոմունիստներին, ձեռնարկությունների եւ հաստատությունների ղեկավարներին աշխատակազմերի անդամների՝ հատկապես երիտասարդության, բարոյա-քաղաքական իրավիճակի եւ դաստիարակության համար:



ՀԼԿԵՄ Կենտկոմը, Երեւանի քաղկոմը, կոմերիտմիության շրջկոմները, Երեւանի շատ սկզբնական կոմերիտական կազմակերպություններ չեն ցուցաբերում անհրաժեշտ քաղաքական ազդեցություն երիտասարդության վրա, չապահովեցին ապրիլի 24-ի տարեթվի հետ կապված հանրապետությունում իրականացվող միջոցառումների հանդեպ ամբողջ երիտասարդության ճշմարտացի ընկալումը:

ՀԿԿ Կենտկոմը գտնում է, որ ՀԽՍՀ Հասարակական կարգի պահպանության նախարարությունը օպերայի եւ բալետի թատրոնի շենքի անհրաժեշտ պահպանություն չի ապահովել, որտեղ անց էր կացվում քաղաքի հասարակայնության ժողովը:

ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին կից ՊԱԿ-ը ժամանակին անկարգությունների հրահրիչների բացահայտման, նրանց գործողությունների նախազգուշացման ուղղությամբ օպերատիվ միջոցներ չի ընդունել:

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը նշում է, որ ապրիլի 24-ին տեղի ունեցած խուլիգանական գործողությունները եւ անկարգությունները Երեւանի հասարակայնության կողմից առաջ բերեցին արդարացի վրդովմունք եւ դատապարտում:

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը անթույլատրելի է համարում Երեւանում երթերին մասնակցություն ընդունած առանձին կոմունիստների, կոմերիտականների, գիտական հիմնարկների, բուհերի աշխատակիցների, ստեղծագործական միությունների անդամների պահվածքը:

Նշել, որ որ ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը թույլ է տվել մի շարք լուրջ բացթողումներ ապրիլի 24-ի տարեթվի հետ կապված միջոցառումների նախապատրաստման եւ իրականացման կազմակերպման գործում՝ արտահայտված այդ կարեւոր քաղաքական աշխատանքի իրականացման բոլոր դժվարությունների եւ առանձնահատկությունների ոչ լրիվ ընկալման մեջ:

ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը որոշում է.

1. Երեւանի կուսակազմակերպությունների ուշադրությունը հրավիրել արդունաբերական ձեռնարկությունների, աշխատակազմերում, գիտական հաստատություններում եւ հատկապես սովորող երիտասարդության շրջանում գաղափարախոսական աշխատանքի լուրջ բարելավման անհրաժեշտության վրա, հատկացնելով հատուկ ուշադրություն աշխատավորներին ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակության աշխատանքի հետագա բարելավմանը:

Երեւանի քաղկոմին, կուսակցության շրջկոմներին եւ սկզբնական կազմակերպություններին անհրաժեշտ է մշտապես աշխատանք տանել աշխատավորներին արտասահմանյան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների բարելավմանն, ամբողջ աշխարհում խաղաղություն ապահովմանն ուղղորդված ԽՄԿԿ եւ Խորհրդային կառավարության քաղաքականության բացատրման առումներով:

2. Քաղաքական դաստիարակչական եւ կազմակերպչական աշխատանքներում լուրջ թերացումների եւ ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների համար Հայաստանի Կոմկուսի Երեւանի քաղկոմի բյուրոյին ի ցույց դնել:

3. Հանձնարարել կուսակցության Երեւանի քաղկոմին եւ քաղշրջկոմներին քննարկել Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերը: Ընդունել վճռական միջոցներ բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական, հասարակական կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում եւ ստեղծագործական կոլեկտիվներում կուսակցական եւ պետական կարգապահության ամրապնդման ուղղությամբ: Խիստ պատասխանատվության ենթարկել ուսումնական հաստատությունների, հիմնարկների եւ ձեռնարկությունների ղեկավարներին՝ իրենց կոլեկտիվների անդամների անկարգապահություններում մասնակցություն չկանխման ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ չընդունելու համար: Սկզբնական կուսկազմակերպությունների ժողովներում քննարկել անկարգություններում մասնակցություն ունեցած կոմունիստների անհատական հարցերը՝ կիրառելով նրանց նկատմամբ պատժի խիստ միջոցներ:

4. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական կոմիտեի նախագահ ընկ. Սիմոնյանի ուշադրությունը հրավիրել բարձրագույն եւ միջին ուսումնական հաստատությունների ուսանողների եւ դպրոցների սովորողների շրջանում կոմունիստական դաստիարակության եւ կարգապահության ցածր մակարդակի գործում առկա լուրջ թերացումների, ինչպես նաեւ դասախոսական կազմի նկատմամբ թույլ պահանջկոտության վրա:

5. Նշել Երեւանի երրիտասարդության շրջանում եւ հատկապես սովորող երիտասարդության շրջանում ՀԼԿԵՄ Կենտկոմի, կոմերիտմիության Երեւանի քաղկոմի եւ շրջկոմների անբավարար աշխատանքը:

Պարտավորեցնել ԼԿԵՄ Կենտկոմին, քաղկոմին, շրջկոմներին, սկզբնական կոմերիտական կազմակերպություններին արմատապես բարելավել երիտասարդության շրջանում դաստիարակչական աշխատանքը, վարել համակարգված աշխատանք մեր կուսակցության քաղաքականության բացատրման ուղղությամբ, երիտասարդությանը դաստիարակել խորհրդային հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության եւ պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով:

Երիտասարդության կոմունիստական դաստիարակության մեջ լուրջ թերացումների համար ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյին ի ցույց դնել:

6. Պարտավորեցնել ստեղծագործական կազմակերպություններին եւ ղեկավարությանը ապրիլի 24-ի դեպքերից իրենց աշխատանքներում կատարել համապատասխան հետևություններ, գրողների, նկարիչների, կոմպոզիտորների եւ մյուս ստեղծագործական աշխատողների



ստեղծագործական ջանքերը ուղղորդել աշխատավորությանը եւ երիտասարդությանը սոցիալիստական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակող գեղարվեստական ստեղծագործությունների ստեղծման ուղղությամբ:

7. Պարտավորեցնել ուսումնական հաստատությունների կուսակցական կազմակերպություններին, բուհերի ռեկտորներին, տեխնիկումների եւ դպրոցների տնօրեններին կոլեկտիվներում ուժեղացնել քաղաքական-դաստիարակչական կազմի պահանջկոտությունը բարձրացնել, ընդունել ազդեցության լուրջ միջոցներ նրանց հանդեպ, ովքեր իրենց պահվածքով վարկաբեկում են խորհրդային մանկավարժի կոչումը:

8. Ի ցույց դնել Հասարակական կարգի պահպանման նախարար ընկ. Արզումանյանին օպերայի և բալետի թատրոնի շենքի պետքական պահպանության չապահովելու համար, որտեղ տեղի ունեցավ քաղ. Երեւանի հասարակայնության ներկայացուցիչների ժողովը:

Պարտավորեցնել հասարակական կարգի պահպանման նախարարությանը, հանրապետության Դատախազությանը, Նախարարների Խորհրդին կից ՊԱԿ-ին անցկացնել հանգամանալից հետաքննություն ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի, պատասխանատվության ենթարկելու համար բացահայտել հիմնական սկսողներին և մեղավորներին:

9. Պարտավորեցնել թերթերի եւ հանդեսների խմբագրություններին, ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի Ռադիոհաղորդման եւ հեռուստատեսության կոմիտեին ավելի շատ ուշադրություն դարձնել աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության հարցերին, լայնորեն ցույց տալ Խորհրդային իշխանության տարիներին վերածնված հայ ժողովրդի ծեռքբերումները, Կոմկուսի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը:

* * *

ՀԿԿ Կենտկոմը ամուր վստահություն է հայտնում այն բանում, որ հանրապետության կուսակցական, խորհրդային, արհմիութենական եւ կոմերիտական կազմակերպությունները Երեւանում ապրիլի 24-ին տեղի ունեցած դեպքերից կանեն ճշմարտացի քաղաքական հետեւություններ, քննդատաբար եւ ինքնաքննադատաբար կգնահատեն գաղափարական աշխատանքում թերացումները, հատկապես երիտասարդության շրջանում, միջոցներ ծեռք կառնեն աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության եւ ողջ գաղափարա-քաղաքական աշխատանքի արմատական բալելավման ուղղությամբ, կհասնեն կուսակցական եւ պետական կարգապահության հետագա ամրապնդմանը, իրենց կոլեկտիվների բարոյա-քաղաքական իրավիճակի համար ղեկավար կադրերի եւ բոլոր կոմունիստների պատասխանատվության զգացման բարձրացման, կմո-

բիլիզացնեն աշխատավորության բոլոր ջանքերը տնտեսական եւ քաղաքական խնդիրների հաջող կատարման ուղղությամբ՝ կուսակցության եւ կառավարության կողմից մեր առջեւ դրված:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ.1, ց.45, գ.20, թթ.28-35:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 22
## [ՀԿԿ Կենտկոմի Պլենումի որոշումը 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին]

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 7**
**ՀԿԿ Կենտկոմի պլենումի նիստի**
**29-30 ապրիլի 1965թ.**

[Ներկա է հանրապետական և շրջանային
կուսակցական, խորհրդային, տնտեսական ողջ ղեկավարությունը]
[Նիստը տեղի է ունեցել ժամը 16-ից հետո]

**Կետ 2. 1965թ. ապրիլի 28-ի ՀԿԿ Կենտկոմի Նախագահության «1965թ. ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին» որոշման մասին հաղորդմամբ ելույթ ունեցավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Յա. Ն. Զարոբյանը:**

ՀԿԿ Կենտկոմի Նախագահության ապրիլի 28-ի որոշման քննարկմանը մասնակցեցին ընկերներ Գ.Պետրոսյանը, Ա.Դովլաթյանը, Գ.Նարիբջանյանը, Գ.Քամալյանը, Վ.Համբարձումյանը, Պ.Մելքոնյանը, Է.Թոփչյանը, Ռ.Գալստյանը, Կ.Ուդումյանը, Ա.Այվազյանը, Վ.Համազասպյանը, Վ. Ղարիբյանը, Բ. Մուրադյանը:

Հակիրճ եզրափակիչ խոսքով ելույթ ունեցավ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Զարոբյանը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար ընկ. Գ.Ա. Տեր-Ղազարյանցը կարդաց Կենտկոմի պլենումի որոշման նախագիծը:

Դիտողություններից հետո ապրիլի 28-ի ՀԿԿ Կենտկոմի Նախագահության որոշման տեքստի խմբագրության համար մինչեւ հաջորդ օրվա առավոտյան ժամը 10-ը ընդմիջում հայտարարվեց:



Ընդմիջումից հետո, ապրիլի 30-ին, առաջարկություններով ելույթ ունեցան ընկերներ Ա. Կարինյանը, Գ. Իկիլիկյանը, Վ. Մուսախանյանը, Գ. Տեր-Ղազարյանցը, Օ. Հովակիմյանը, Ա. Դովլաթյանը, Հ. Հովսեփյանը:

ՀԿԿ Կենտկոմի պլենումը մեկ ձեռնպահով (ընկ. Ա. Դովլաթյան) ընդունեց հետեւյալ որոշումը.

Լսելով եւ քննարկելով Երեւանում 1965թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Յա. Զարոբյանի հաղորդումը, ՀԿԿ Կենտկոմի պլենումը որոշում է .

1. Հավանություն տալ հայերի կոտորածների 50-ամյակի կապակցությամբ ՀԿԿ Կենտկոմի Նախագահության միջոցառումներին եւ ՀԿԿ Կենտկոմի Նախագահության ապրիլի 28-ի «1965թ. ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին» որոշմանը:

2. Հանձնարարել Կենտկոմի Նախագահությանը մշակել եւ իրականացնել կոնկրետ միջոցառումներ աշխատավորության՝ հատկապես երիտասարդության, շրջանում գաղափարա-քաղաքական, դաստիարակչական աշխատանքների հետագա արմատական ուժեղացման, ինչպես նաեւ հանրապետության ադմինիստրատիվ մարմինների աշխատանքների բարելավման ուղղությամբ:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Յա. Զարոբյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 1, թթ. 2-4:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 23
## [ՀԿԿ Կենտկոմի Պլենումի արձանագրությունը 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին]

*Հույժ գաղտնի*

**Սղագրական հաշվետվություն**
**ՀԿԿ Կենտկոմի 7-րդ պլենումի**
**29-30 ապրիլի 1965թ.**[1]

**Մասնակցում են** [2]

---

[1] Պլենումի օրակարգի առաջին կետն էր. ԽՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումի որոշման՝ «ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության հետագա զարգացման անհետաձգելի միջոցների մասին» քննարկումը: Ուշագրավ է, որ ՀԿԿ պաշտոնական ժամանակագրության մեջ նշվում է միայն օրակարգի առաջին կետի մասին: Տես - **Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն, 1920-1980**, Երեւան, 1981, էջ 427:

[2] Ազգանունների ցանկը տրվում է ըստ այբբենական հերթականության:

**ՀԿԿ Կենտկոմի անդամները** – ընկերներ Գ.Ալեքյան, Վ.Ալեքսեւսկի, Ա.Ավետիսյան, Գ.Աղաբաբյան, Ծ.Աղայան, Մ.Անտոնովա, Ս.Առաքելյան, Մ. Ասատրյան, Ե.Ասծատրյան, Ս.Արզումանյան, Մ.Բախչինյան, Հ.Բաղդասարյան, Գ.Բաղրամյան, Գ.Բատիկյան, Ա.Գալստյան, Ռ.Գալստյան, Ա.Գասպարյան, Դ.Դանիելյան, Գ.Դավթյան, Վ.Դարբինյան, Ա.Դովլաթյան, Դ.Դրագունսկի, Խ.Դրամփյան, Վ.Զախարյան, Յա.Զարոբյան, Գ.Թադեւոսյան, Հ.Թարջումանյան, Ս.Թեւոսյան, է.Թերլեմեզյան, Ն.Թորոմանյան, Ն.Թուխիկյան, Ս. Թումանյան, Հ.Իկիլիկյան, Ռ.Խաչատրյան, Ս.Խաչատրյան, Ց.Խաչատրյան, Ա.Կարինյան, Ա.Կիրակոսյան, Գ.Հակոբյան, Վ.Համազասպյան, Վ.Համբարձումյան, Հ.Հասանով, Գ.Հասրաթյան, Գ.Հարությունյան, Ն.Հարությունյան, Վ.Հարությունյան, Խ.Հովակիմյան, Օ.Հովակիմյան, Զ.Հովսեփյան, Օ.Հովսեփյան, Յու.Ղալումյան, Կ.Ղամբարյան, Գ.Ղարիբջանյան, Լ.Ղարիբջանյան, Զ.Մարգարյան, Գ.Մարտիրոսյան, Լ.Մելիքյան, Մ.Մելքոնյան, Պ.Մելքոնյան, Ռ.Մինասյան, Ս.Մինասյան, Տ.Մինասյան, է.Միրզոյան, Ս.Մովսեսյան, Մ.Մստոյան, Բ.Մուրադյան, Վ.Մուսախանյան, Գ.Նախշքարյան, Լ.Ներսեսյան, Գ.Պետրոսյան, Խ.Պետրոսյան, Ս.Պետրոսյան, Ս.Պողոսյան, Յու. Ռզաեւ, Կ.Ռուխիկյան, Վ.Սահակյան, Գ.Ստեփանյան, Գ.Ստեփանյան, Լ. Ստեփանյան, Բ.Վարդանյան, Լ.Վարդանյան, Ս.Վարդանյան, Գ.Տեր-Ղազարյանց, Կ. Քոչարյան, Մ. Քոչարյան, Ա. Քոչինյան, Ռ. Օհանյան:

**ՀԿԿ Կենտկոմի անդամության թեկնածուները** – ընկերներ Ա.Ալեքսանյան, Գ.Ալիխանյան, Վ.Ամիրխանյան, Մ.Արզումանյան, Ս.Արիստակեսյան, Գ.Գալոյան, Մ.Գեղամյան, Ա.Գեւորգյան, Ա.Գրիգորյան, Լ.Երաանոսյան, Ռ.Զաքոյան, Ի.Թամրազովա, Բ.Խաչատրյան, Կ.Խուդոյան, Ա.Հասանով, Դ. Հասրաթյան, Ա.Հարությունյան, Գ.Հարությունյան, Ս.Հարությունյան, Շ. Վարդումյան, Օ.Չվակերյան, Լ.Ղազարյան, Ա.Մարջանյան, Գ.Մարտիրոսյան, Ռ.Մովսեսյան, է.Նարիմանով, Ռ.Պարսամյան, Ա.Պողոսյան, Վ.Սեկոյան, Կ. Ուդումյան, Ժ. Փյուսքյուլյան, Գ. Քամալյան:

**ՀԿԿ Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները** - ընկերներ Գ.Ալեքսանյան, Ա.Աղաբաբով, Ա.Ասլանյան, Ա.Բարսեղյան, Լ.Բդոյան, Ի.Դավթյան, Մ.Դրագա, Զ.Երմոլաեւա, Տ. Թուսուզյան, Ա. Խաչատրյան, Վ. Հակոբյան, Ս. Հովհաննիսյան, Ե. Մելքոնյան, Գ. Մուղնեցյան, Ա. Շահինյան, Զ. Շողերյան, Գ.Սադոյան, Ա. Սաիլյան, Ա. Սահակյան, Պ. Սաֆյան, Խ. Վաթինյան, Գ. Տեր-Գրիգորյան, Ս. Օհանյան, Ռ. Օհանջանյան, Ս. Օհանջանյան:

**Պլենում հրավիրվել են 193 հոգի** – Կենտկոմի ոչ անդամ շրջկոմների առաջին քարտուղարները, շրջխորհուրդների գործկոմների նախագահները, գյուղական արտադրական վարչությունների պետերը, հանրապետության գյուղատնտեսական մարմինների պատասխանատու աշխատողները:



[ՀԿԿ Կենտկոմի 99 անդամներից պլենումի աշխատանքին մասնակցում են 90 մարդ, անդամության 37 թեկնածուներից՝ 32, Վերստուգիչ հանձնաժողովի 31 անդամներից 28-ը]

Նախագահում է ընկ. Հովի. Բաղդասարյանը

**Օրակարգ**

**Կետ 2. Տեղեկատվություն 1915 թվականին հայերի կոտորածների 50-ամյակի նշման արդյունքների եւ ապրիլի 24-ին ք. Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին**

***Ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Ընկերներ, Կենտկոմի Նախագահությունը որոշեց պլենումին տեղեկացնել 1915թ. հայերի կոտորածների 50-ամյակի նշման արդյունքների մասին եւ պլենումի քննարկմանը ներկայացնել Նախագահության «Ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին» որոշման նախագիծը:

Կենտկոմի Նախագահությունը երկարատեւ ժամանակ ուսումնասիրեց կոտորածի 50-ամյակի նշման հարցը: Հաշվի առնելով այդ հարցի բարդությունը, բոլոր դրական եւ բացասական կողմերը՝ մենք վճռեցինք այդ տարեթիվը նշել: Չէր կարելի հաշվի չառնել, որ 1915թ., այն ժամանակվա սուլթանական կայսրության կառավարող հանցախմբի իրականացրած ցեղասպանության քաղաքականության արդյունքում զոհվեց ավելի քան մեկ ու կես միլիոն հայ, այսինքն՝ ժողովրդի կեսը: Այդ հարցը ոչ միայն հուզում էր մեր ժողովրդին, այլեւ դուրս եկավ հանրապետության սահմաններից, ընդունեց միջազգային բնույթ: Սփյուռքահայերը ամեն տարի նշում են այդ տարեթիվը: Հանրապետության մտավորականության եւ երիտասարդության որոշ մասի տրամադրության վրա որոշակի ազդեցություն ունեցան ներգաղթող հայերը եւ բազմաթիվ հայ զբոսաշրջիկներ:

Կոտորածի 50-ամյակի մոտենալով՝ ազգային զգացմունքները, հատկապես մտավորականության և սովորող երիտասարդության մի մասի շրջանում, ավելի սրությամբ էին արտահայտվում:

Ուսումնասիրելով քաղաքական տրամադրությունները՝ ՀԿԿ Կենտկոմը որոշեց նշել այդ տարեթիվը, որպեսզի զգացմունքներին եւ տրամադրություններին հաղորդի ճշմարիտ ուղղություն:

Երկարատեւ մտորումներից հետո Կենտկոմի Նախագահությունը ԽՄԿԿ Կենտկոմ միջոցառումների ծրագիր ներկայացրեց: ԽՄԿԿ Կենտկոմը հանձնաժողով առանձնացրեց ընկերներ Սուսլովի, Պոդգոռնու, Գրոմիկոյի եւ ուրիշների կազմով: Այդ հարցի երկարատեւ ուսումնասիրությունից հետո ԽՄԿԿ Կենտկոմը թույլատրեց մեզ նշել հայերի կոտորածի 50-ամյակը՝ ցեղասպանության քաղաքականության դատապարտման,

մեր կուսակցության գլխավոր գծի լայն քարոզչության՝ ուղղորդված խաղաղության եւ ժողովուրդների միջեւ բարեկամության, ինչպես նաեւ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության հաղթանակից եւ Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումից հետո հայ ժողովրդի վերածննդի նշանի ներքո:

Ինչպիսի՞ միջոցառումներ նախատեսվեցին. նախ եւ առաջ թույլատրեցին Հայաստանի կառավարությանը Երեւանում 1915թ. զոհվածների հիշատակին կոթող տեղադրել, որը պետք է արտահայտի հայ ժողովրդի վերածնունդը: Որոշեցին նաև անցկացնել Երեւանի հասարակայնության ներկայացուցիչների ժողով, զոհվածների հիշատակին ծառատունկ, Ակադեմիայի եւ Համալսարանի բարձր մակարդակով անցնող գիտական նստաշրջան, հոդվածներ հրապարակել մամուլում եւ մի շարք այլ միջոցառումներ:

Մենք գիտենք, որ դա քաղաքականապես շատ սուր, ծանր գործընթաց է, եւ որ այն կպահանջի որոշակի ծախսեր: Այլ գործ է, որ մենք չէինք ենթադրում ճշգրիտ ծախսերի աստիճանը: Բայց գիտեինք, որ կլինի որոշակի բորբոքում այն բանի համար, որ 1915թ. ողբերգական իրադարձությունը կապված է բազմաթիվ, տասնյակ հազարավոր մարդկանց զգացմունքների եւ ապրումների հետ: Անվիճելի է եւ այն, որ առանձին ազգայնական տրամադրված եւ անբարեացակամ տարրեր փորձեցին օգտագործել այդ սուր քաղաքական գործընթացը նրա համար, որպեսզի իրականացնեն սադրիչ գործողություններ:

Բազմաթիվ բարդ արտահայտություններ շատ կային. Կենտկոմը իրականացրեց լրացուցիչ միջոցառումներ: Ամենից տհաճն ու վտանգավորն էին նախազգուշացումներն այն մասին, որ որեւե մեկն իրականացնում է որոշակի սադրիչ աշխատանք, որպեսզի խախտի ժողովուրդների միջեւ բարեկամությունը, հատկապես հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների միջեւ: Դրա հետ մեկտեղ կային եւ այնպիսինները, ովքեր սկսեցին երիտասարդության որոշ մասի մոտ բորբոքել ոչ ճիշտ եւ վտանգավոր զգացումներ: Սկսեցին հողային հարցեր դնել, 1964թ. աշխուժացան հակախորհրդային գործողությունների համար յոթ դատապարտվածների բազմաթիվ ազգականներ եւ բարեկամներ:

Այդ նույն տարրերը փորձեցին ապրիլի 24-ը հայտարարել համաժողովրդական ազգային սգի օր, որպեսզի մեր հանրապետության դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում պարապմունքները, ձեռնարկություններում եւ հիմնարկներում աշխատանքները խափանեն:

Ես պետք է ասեմ, որ դրա դեմ առաջին հերթին Երեւանի կուսակազմակերպությունը, Երեւանի կուսշրջկոմները կատարեցին մեծ աշխատանք եւ նրանք հասան որոշակի լավ արդյունքների: Ապրիլի 24-ի առավոտից մեր բոլոր բուհերը, դպրոցները, բոլոր ձեռնարկություններն ու



հիմնարկները նորմալ սկսեցին իրենց աշխատանքային օրը: Բայց դուք գիտեք, որ այդ օրը մի քանի հարյուրանոց նախաձեռնող խումբը փողոց դուրս եկավ, նրանց հարեցին մի քանի հազար ուրիշներ: Նրանք որոշեցին կազմակերպել սգո երթ:

Այժմ կասկած չկա, սկզբնապես առանձին ազգայնական եւ ամբոխավար[1] տրամադրված տարրերն իրենց առջեւ մեծ նպատակներ էին դրել: Բայց այն բանից հետո, երբ պաշտոնապես որոշվեց նշել այդ տրեթիվը, եւ ինչպես ձեզ հայտնի է, հանրապետության աշխատավորության մեծամասնությունը մեծ հավանությամբ ընդունեց այդ որոշումը, նրանք իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացրեցին այն հարցի վրա, ինչպիսին հողայինն է: Ամսի 24-ին ով եղել է Լենինի հրապարակում, նա գիտի, որ նրանք ամենից շատ բացականչում էին «հողեր, հողեր»: Դե իհարկե, նրանց հարեցին այն յոթնյակի ազգականները եւ բարեկամները, ովքեր անցյալ տարվա օգոստոսին դատապարտվել էին: Ցավալիորեն, մեզ մոտ կան ոչ քիչ քաղաքականապես անբավարար հասուն եւ գիտակից մարդիկ, ովքեր իրենց նեղ ազգայնական զգացմունքների գերին են, եւ ահա այդ երթերի կազմակերպիչների ձգտում էին իրենց հետևից տանել բնակչության որոշ անգիտակից մասը, հատկապես երիտասարդությանը: Եվ այդ նրանց հաջողվեց կատարել:

Հրապարակ մենք ստիպված եղանք ուղարկել ոչ քիչ թվով ակտիվ [անդամներ], այնպես որ նրանք եւս հավելեցին այդ ամբոխը: Որպեսզի տանք ճշմարիտ ուղղություն, մենք որոշեցինք, որ հավաքվածների առջեւ ելույթ ունենան ղեկավար աշխատողներ:

Ես մանրամասն չեմ խոսի, քանզի այդ մասին ասված է Կենտկոմի նախագահության որոշման մեջ, որը ես ձեզ կկարդամ:

Պետք է ասեմ, որ այդ օրերը՝ ապրիլի 24-25-26-ը, անցան առանց որեւէ ազգամիջյան երկպառակություն բնութագրող պատահարների: Մեր ժողովուրդն ամբողջութամբ, Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը ցույց տվեց իր քաղաքական գիտակցությունը, նրանք ցույց տվեցին, որ ժողովուրդների լենինյան բարեկամությունն անխախտ է, մասնավորապես հայերի եւ ադրբեջանցիների միջեւ, որ ադրբեջանցիները հանդիսացել, հանդիսանում եւ միշտ կլինեն մեր եղբայրները: Այն, որ ժողովուրդը ցույց տվեց իր բարձր քաղաքական գիտակցությունը, անպատճառ մեզ շատ է հիացնում: Մնացած միջոցառումները՝ բարակամության երեկոն, օպերային թատրոնում հասարակայնության ներկայացուցիչների ժողովը, անցան շատ լավ: Բայց հետո, երբ անկազմակերպ երթին հարեցին ամեն տեսակ թափթփուկներ՝ թմրամոլներ, հարբեցողներ, քրեականներ, Օպերայի և բալետի թատրոնի մոտ սկսվեցին անկարգություններ: Դա, իհարկե, խայտառակ դեպք է, ինչի համար մենք բոլորից շատ ապրումներ ունեցանք, քանզի մեր ժողովրդի պատմության մեջ առաջին

[1] Դեմագոգ:

անգամ մենք ձեռնարկեցինք արժանիորեն նշել 1915թ. ցեղասպանության զոհերի հիշատակը, իսկ որոշ մարդիկ իրենց խուլիգանական գործողություններով փաստորեն պղծեցին զոհվածների հիշատակը:

Հարց է առաջանում՝ կարող էին այդ այլանդակությունները քիչ լինեին: Կարող էր, եթե Կենտկոմի Նախագահությունը, կուսակցության քաղկոմը, մեր ադմինիստրատիվ մարմինները թույլ չտային մի շարք լուրջ բացթողումներ եւ թերություններ: Սակայն, այդ մեզ չի արդարացնում: Օպերային թատրոնում խայտառակ խուլիգանությունը կարելի էր կանխել, եթե նախօրոք կանխատեսեինք բոլոր մանրուքները, եւ եթե կուսակցական եւ ադմինիստրատիվ մարմիններն այդ հարցին ավելի մտածված մոտենային: Այժմ, երբ արդեն ամեն ինչ անցել է, պարզ տեսնում ես, որ կարելի էր անել, բայց մենք այդ ամենն ամբողջությամբ չկանխատեսեցինք: Այժմ մեր գլխավոր խնդիրն է այդ դեպքերին տալ սկզբունքային գնահատական, կատարել ճշմարիտ քաղաքական հետեւություններ:

Փաստ է, որ դեմագոգ տարրերի այդ ոչ մեծ խումբը, խաղալով ժողովրդի ազգային զգացմունքների վրա, կարողացավ հավաքել մարդկանց այդպիսի զանգված: Այդ խոսում է այն մասին, սկսած Կենտկոմից, կուսակցության քաղկոմից, շրջկոմներից եւ վերջացրած սկզբնական կուսակցական կազմակերպություններով, չունենք անհրաժեշտ ազդեցություն ողջ երիտասարդության վրա, որպեսզի հետ պահեինք այդ վտանգավոր գործողություններից: Ինչի մասին է այդ խոսում: Գլխավոր քաղաքական հետեւությունը կայանում է նրանում, որ կուսկազմակերպությունների գաղափարա-դաստիարակչական աշխատանքում, հատկապես սովորող երիտասարդության ու մտավորականության շրջանում, առկա է լուրջ թերացումներ եւ բացթողումներ:

Խորհրդային Միության ոչ մի հանրապետություն այնքան զբոսաշրջիկներ չեն այցելում, որքան մերը: Մեզ մոտ կապիտալիստական երկրներից եկած շուրջ 200 հազար հայրենադարձ է ապրում: Մամուլը, ռադիոն եւ շատ ուրիշ ալիքներ, որոնցով բուրժուական քարոզչությունը փորձում է ազդեցություն գործել բնակչության առավել կայուն մասի վրա: Մենք իրավունք չունենք թերագնահատել մեզ մոտ բուրժուական գաղափարախոսության ներթափանցման վտանգը, իսկ հակաքարոզչությունը մեզ մոտ դեռեւս բավական թույլ է դրված: Կուսակցական կազմակերպությունների աշխատանքում մյուս լուրջ թերությունն այն է, որ մի շարք սկզբնական կուսկազմակերպություններում, հատկապես բուհական եւ ստեղծագործական միություններում, բացակայում է բավարար աստիճանով սկզբունքային կուսակցական իրադրությունը:

Երեւանի կուսշրջկոմների բազմաթիվ աշխատողներ կարող են հաստատել, որ որոշ կուսակցական կազմակերպություններում, օրինակ Համալսարանի, իմանալով առանձին դասախոսների ոչ ճիշտ եւ անառողջ տրամադրությունների մասին, այդ արտահայտություններին ըսկզբունքային գնահատական չեն տալիս, նրան վերաբերվում են հաշտվողաբար, ըստ էության չեն արձագանքում նրանց: Սա բանի նման չէ: Անսկզբունքայնության նման իրադրության առկայության համար այդ կուսկազմակերպություններում մեղավոր են կուսակցության շրջանային, քաղաքային եւ Կենտրոնական կոմիտեները: Ըստ երեւույթին թույլ է տրվել առանձին սխալներ սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարների կադրերի ընտրության մեջ:



Հաշտվողականությունն այնտեղ է հասել, որ Պետհամալսարանի կուսակցական կազմակերպությունում նման բացասական կերպարներից մեկի հարցը չէր քննարկվում, քանի դեռ նա գողություն չէր արել: Նույնիսկ դրանից հետո սկզբնական կուսկազմակերպությունը մտածում էր. հեռացնել նրան կուսակցությունից, թե նկատողություն տալ:

Ձգալով այդպիսի լիբերալ վերաբերմունքը՝ այդ տարրերը գործում էին ավելի համարձակ եւ ընդլայնում սովորող երիտասարդության վրա իրենց բացասական ազդեցությունը:

Մեզ հարկավոր է ամբողջ խորությամբ հասկանալ եւ իմաստավորել մեր կազմակերպչական-կուսակցական եւ գաղափարա-դաստիարակչական աշխատանքի այդ մեծ միտումը:

Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի տանք ճշմարիտ գնահատական, կատարենք ճշմարիտ քաղաքական հետեւություններ, ինքնաքննադատաբար վերլուծենք կազմակերպչական-կուսակցական եւ գաղափարա-դաստիարակչական աշխատանքի թերությունները: Սկսած Կենտկոմից եւ վերջացրած սկզբնական կուսակցական կազմակերպություններով պետք է ապրիլի 24-ի դեպքերից քաղաքական դասեր քաղել եւ զանգվածների ու առաջին հերթին երիտասարդության հետ ողջ քաղաքական, դաստիարակչական աշխատանքի արմատական բարելավման իրական միջոցներ ընդունել:

Թույլատրեք, ընկերներ, կարդալ այդ հարցի մասին Կենտկոմի Նախագահության որոշումը, որը ձեր քննարկմանն ենք ներկայացնում:

(Կարդում է Կենտկոմի Նախագահության որոշումը)

***ընկ. Պետրոսյան***

Կենտկոմի Նախագահության որոշման մեջ ասվում է. դատապարտել այն դասախոսների և կոմունիստների պահվածքը, ովքեր մասնակցել են երթին: Հարկավոր է ճշգրտել տեղում. թե որ շատերին մենք ինքներս ենք ուղարկել:

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Մենք հանձնարարել ենք կուսակցության քաղկոմին եւ շրջկոմներին, որպեսզի նրանք ամեն մի առանձին դեպքում գլուխ հանեն: Նրանց պահվածքը, ովքեր իրենց նախաձեռնությամբ են մասնակցել, հարկավոր է խստորեն դատապարտել:

***ընկ. Օ. Դովլաթյան***

Իսկ միթե չէր կարելի այսօրվա քննարկման փոխարեն այդ հարցը մանրամասն դիտարկել մինչեւ կոտորածի 50-ամյակը, Կենտկոմի Պլենումում ուրվագծել համապատասխան միջոցառումներ:

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Այդ հարցը կոլեգիալ ձեւով երկար քննարկվել է Կենտկոմում: Բազմաթիվ անգամներ հավաքվել ենք կուսակցության քաղկոմների, շրջկոմների բոլոր առանձին քարտուղարների հետ, քննարկել, մտածել միջոցառումները: Կարծում եմ, որ հարցերի մշակման հարցում կոլեգիալություն եղել է:

***ընկ. Քամալյան***

Ես այդ օրը օպերայում չեմ եղել: Մենք քաղկոմի հանձնարարությամբ ժողով էինք անցկացնում: Նախորդ օրը ընկ. Չարչօղլյանը պատմեց, թե ինչպես խուլիգանները մտան օպերա եւ դահլիճում նստածներից ոմանք սկսեցին ծափահարել նրանց: Ես համարում եմ, որ այդ անձանց նկատմամբ հարկավոր է միջոցներ ձեռնարկել:

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Նրանք դահլիճ ներխուժեցին այն բանից հետո, երբ ժողովը վերջացել էր: Մարդկանց մի մասը հեռացել էր, իսկ մյուս մասը այնտեղ էր, երբ նրանք ներխուժեցին եւ սկսեցին բացականչել «հողեր, հողեր», եւ այնտեղ չէիր տարբերի՝ ով էր ծափահարում:

***Տեղից***

Սխալ եմ համարում, որ որոշման մեջ նշված է ընկ. Մուրադյանի ազգանունը:

***Տեղից***

Դիտողություն անել կուսակցության քաղկոմի բյուրոյին, իսկ ընկ. Մուրադյանի ազգանունը հանել որոշման տեքստից:

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Դա ձեր կամքն է. ինչպես որոշեք, այնպես էլ կանենք:

***ընկ. Գ. Բ. Ղարիբջանյան***

Նախագահության որոշման մեջ ասվում էր, որ առանձին ազգայնականորեն տրամադրված տարրեր կազմակերպել են երթը: Դուք ում նկատի ունեք:

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Ընկերներ, այժմ Կենտկոմի Պլենումում, ցավալիորեն, մենք չենք կարող անվանել այդ մարդկանց, քանզի մենք նրանց չգիտենք, բայց մեզ մոտ կան առանձին այդպիսի տարրեր: Պետանվտանգության մեր մարմիններին հարկավոր է այդ գործի գլխավորողների եւ ոգևորողների բացահայտման հնարավորություն տալ:

***ընկ. Վ. Համբարձումյան***

Ընկերներ, այն ինչ տեղի ունեցավ, ցույց է տալիս, որ Կենտկոմի Նախագահությունը պետք է ավելի շատ զբաղվի առաջացող քաղաքական հարցերով լրջորեն բարելավի մեր քարոզչական աշխատանքը: Գաղտնիք չէ, որ մեր ագիտատորներին երբեմն դժվար է լինում պատասխանել այն հարցերին, որոնք նրանց տալիս են: Տրվող հարցերի շարքում կան եւ այնպիսիք, որոնք վերաբերում են ազգային հարցին, Թուրքիայի հետ փոխհարաբերություններին եւ այլն: ՀԿԿ Կենտկոմն ավելի շատ զբաղվում է մանր հարցերով, իսկ խոշոր, արմատական հարցերի համար ժամանակ չի մնում: Դա վերաբերում է ոչ միայն Կենտկոմին. մենք բոլորս զբաղվում ենք մանր հարցերով, իսկ հիմնական հարցերը բաց ենք թողնում:



Երկրորդ հարցը, որի վրա ես ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել. դա մեր երիտասարդությանն աշխատանքի տեղավորելն է: Մեզ մոտ կան աշխատանքով չզբաղված բազմաթիվ երիտասարդներ: Դա ինչ-որ չափով ազդում է նրանց բարոյական վիճակի վրա: Ես կարծում եմ, որ հարկավոր է եւ հետագայում զարգացնել այդ գործը, որպեսզի ավելի շատ մեր երիտասարդությանը ներգրավենք աշխատանքում, ընդլայնենք արդյունաբերության աշխատատար բնագավառները: Կենտկոմի Նախագահությունն այդ ուղղությամբ վարում է ճիշտ գիծ՝ հանրապետությունում արդյունաբերության աշխատատար բնագավառների առաջնահերթ զարգացման համար, բայց այդ գիծը հարկ է վարել ավելի վճռական:

Որոշման նախագծում բերված է նամակ, որը հանձնել են երթի մասնակիցները ապրիլի 24-ին: Այդ նամակում ասվում է, որ Հայաստանը գերբնակեցված է: Յուրաքանչյուր ոք, ով գիտի ինչ բան է ժամանակակից տեխնիկան, արդյունաբերությունը, նա այդ չի կարող ասել: Եթե Հայաստանում լինի հինգ անգամ ավելի բնակչություն, ապա ժամանակակից տեխնիկայի դեպքում նրանք բոլորն աշխատանք կգտնեն: Եվ ինձ թվում է, որ այդ արտահայտությունից առաջ հարկավոր է դնել «իբր» բառը:

Երբ մենք ասում ենք ազգայնականորեն տրամադրված տարրեր, ապա կարելի է պատկերացնել շատ, նույնիսկ հազարավոր այդպիսի մարդկանց: Բայց այդպիսի բան չկա: Ես առաջարկում եմ գրել. «առանձին ազգայնականորեն տրամադրված անձինք»:

***ընկ. Հ. Հ. Մելքոնյան***

Ես համարում եմ, որ այդ միջոցառումը հարկավոր էր կատարել, բայց կազմակերպչորեն հարցը ոչ ճիշտ էր դրված: Կուսակցական ակտիվը, որ բոլորը գիտեին, ինչ-որ բան պարտավոր են կատարել, բայց չգիտեին ինչպես պետք է անել, որովհետև միջոցառումների ծրագիր գոյություն չուներ եւ գոյություն չունի:

Այդպիսի մեծ, առաքինի հարցը մեր ժողովրդի համար հարկավոր էր իրագործել ոչ միայն Հայաստանում: Անդրկովկասի ժողովուրդները որպես մեկ ժողովուրդ կապված են միմյանց հետ: Ադրբեջանցիները, վրացիները, հայերը հարազատ եղբայրներ են, հարազատ ընտանիքներ: Կարելի է, որ մի ընտանիքի երջանկության մեջ մասնակցություն չունենա

մյուս ընտանիքը: Ես համարում եմ, որ դա սկզբունքորեն ճիշտ չէ: Հարկավոր էր ցեղասպանության 50-ամյա տարեդարձը նշել նաեւ Վրաստանում եւ Ադրբեջանում: Հարկավոր էր դատապարտել ցեղասպանության քաղաքականությունը, դաշնակների, մուսաֆաթականների, մենշեւիկների քաղաքականությունը եւ այդ ճիշտ կլիներ, որպեսզի կրկնություններ[1] չլինեն:

Տարվա ընթացքում մենք մոբիլիզացրեցինք ռադիոն, հեռուստատեսությունը, հրատարակեցինք գրքույկներ, ժողովրդին պատրաստեցինք, նրան բարձրացրեցինք, իսկ հետո չգլխավորեցինք նրան: 200 - 300 խուլիգաններ մտան դահլիճ, եւ մենք խուճապի մատնվեցինք: Ինձ թվում է, որ հարկավոր չէր ակտիվին դահլիճից հեռանալ: Ես համարում եմ, որ այդպիսի դեպքերում հարկավոր էր դնել որոշակի սահմանագիծ, որպեսզի յուրաքանչյուրն իմանար իր տեղը: Այդ միջոցառմանը նման բան չկար. արդյունքում ստացվեցին այդպիսի անցանկալի երեւույթներ:

***ԸՆԿ. Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ***

Ընկերներ, ինչպես դուք գիտեք, հայերի կոտորածի մասին հարցը երկար ժամանակ զբաղեցնում էր բոլորիս: Եվ այժմ, երբ անցել են բազմաթիվ օրեր, մենք պարտավոր ենք քննարկել այդ հարցը հանգիստ իրավիճակում: Այդ կապակցությամբ անհրաժեշտ էր իրականացնել միջոցառումներ, եւ դրանք իրականացվեցին: Մենք թույլ տվեցինք որոշ սխալներ այդ հարցերում: Մենք ամեն ինչ հիշում ենք. կոտորածի մասին որոշման ընդունման ժամանակ մենք ավելի շատ խոսել ենք այն մասին, որ սխալներ թույլ չտրվեն: Լավ է, երբ Կենտկոմի Նախագահությունը նախազգուշացնում է, որպեսզի սխալներ թույլ չտրվեն:

Մենք այն մարդկանցից ենք, ովքեր անմիջապես շփվում են ժողովրդի հետ: Լենինականի կուսակցական կազմակերպությունն առաջավոր, մարտական, հեղափոխական կազմակերպություն է: Օրինակ՝ մեծ փորձառությամբ մեր ընկերներից մեկը դիմեց ինձ եւ ասաց. «Լավ որոշում է ընդունվել, ընկեր Ղարիբջանյան, եւ լավ մշակված միջոցառումներ»: Միայն Խորհրդային իշխանությունը, միայն ժողովուրդների բարեկամությունը հնարավորություն տվեցին բազմաչարչար հայ ժողովրդին նշել այդ ազգային տոնը: Մենք Խորհրդային իշխանության պայմաններում կարող ենք խաղաղության համար մեր պայքարում նշել մեր ազգային տոնը, չմոռանալ ցեղասպանության քաղաքականությունը՝ իրականացված Ֆաշիզմի, Չինգիզ խանի, թուրքական բարբարոսների կողմից:

Այստեղ որոշում ընդունելով՝ մենք պետք է նկատի ունենանք ազգային հարցում լենինյան ցուցումը, որ ազգային զգացմունքների մասին խոսելիս հարկ է լինել շատ զգույշ: Լենինը նախազգուշացնում է, որ ազգային հարցում չի կարելի ղեկավարվել վարչարարական մեթոդներով: Լենինը հանդիմանեց նույնիսկ այնպիսի անվանի գործիչների, ինչպիսիք

[1] Ռեցիդիվ:



էին Օրջոնիկիձեն եւ Ջերժինսկին, ովքեր Վրաստանում ազգային հարցում թույլ տվեցին անզգուշություն:

Ընկերներ, չի կարելի այդքան թեթև խաղալ ազգայնականության եզրի հետ: Մեզ մոտ՝ Լենինականում, այդ միջոցառումների կատարման ընթացքում ևս եղան առանձին երևույթներ. որոշներ գրեցին թռուցիկներ: Բայց միթե կարելի է դրանք թռուցիկներ անվանել: Ես բռնեցի մի երիտասարդի, որը փորձում էր պատի վրա սոսնձել այդպիսի թռուցիկ: Այնտեղ գրված էր. «Պահանջում ենք թուրքական և պարսկական հողերը» (ծիծաղ դահլիճում): Նա նույնիսկ չգիտեր, թե ինչ հողերի մասին է խոսքը: Յուրաքանչյուր սխալի չի կարելի կպցնել ազգայնական պիտակ: Ես համարում եմ, որ Կենտկոմի Նախագահության որոշումը կօգնի մեզ ուղղել առանձին տեղերում թույլ տրված սխալները: Ասում եմ «առանձին», քանզի ընդհանրապես բոլոր տեղերում լավ նշեցին կոտորածի 50-ամյակը: Երեւանի մի վայրում տեղի ունեցավ հակահասարակական երևույթ: Եթե ազգայնականություն համարենք այն, որ կոտրեցին ապակիները եւ խոսեցին հողերի մասին, ապա մենք հեռու կհասնենք: Այդպես չի կարելի: Ես կարծում եմ, որ մեր որոշումը պետք է այնպիսին լինի, որ այն ստանա ինչպես մեր Պլենումի, այնպես էլ սկզբնական կուսակցական կազմակերպությունների հավանությունը:

Ճիշտ է, մենք թույլ տվեցինք որոշ սխալներ: Մեր սխալը կայանում է այն բանում, որ մենք քիչ աշխատեցինք սկզբնական կուսակցական կազմակերպություններում: Դուք մտածում եք՝ ինչն է հեշտ: Մի մասն ասում էր.«Ինչու՞ մենք նշեցինք այդ հոբելյանը»: Մյուսներն ասում էին, որ հարկավոր էր նշել, իսկ այլոք պահանջում էին՝ ավելի լավ նշել: Այնպես, որ արտահայտվեցին բացարձակապես տարբեր կարծիքներ: Ես գտնում եմ, որ այդ դեպքի համար պետք չէ Երեւանի քաղաքային կոմիտեին մեծ հարված հասցնել:

***ԸՆԿ. ՔԱՄԱԼՅԱՆ***

Ընկերներ, ես համարում եմ, որ այդ հարցում Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Նախագահության որոշումը հիմնականում ճիշտ է, եւ հարկ է հավանություն տալ: Սակայն ես լրիվ համաձայն եմ ընկ. Ղարիբջանյանի հետ. որոշման մեջ պետք չի գրել, որ անկարգությունները ազգայնական տարրերի գործողությունների արդյունք են: Դա ավելի շատ կազմակերպչական բացթողումների արդյունք է: Ես համարում եմ, որ երբ հարած այդ զանգվածի մեծ մասը նվիրված մարդիկ են եւ ոչ մի ազգայնական տրամադրվածություն չունեին: Ես գտնում եմ, որ այդ կետը պետք է հանել, իսկ մնացած մասին հավանություն տալ եւ կուսակցական կազմակերպություններին հանձնարարել, որպեսզի նրանք մեր երիտասարդության դաստիարակչության գործում լավ աշխատեն:

Կենտկոմի հանձնարարությամբ ակտիվը մի ողջ ամիս զբաղվել է այդ հարցով: Սկզբում նույնիսկ առանձին դասախոսներ մեզ մոտ ունեին

կոտորածի 50-ամյակի նշման հարցերի շուրջ ոչ ճիշտ պատկերացում, բայց մենք այնպես համոզեցինք նրանց, որ նրանք սկսեցին մեզ օգնել: Ես կրկին ցանկանում եմ ասել, որ ինձ համար շատ ծանր էր, երբ ընկ. Չարչօղլյանն ասաց ինձ, որ երբ այդ խուլիգանները մտան դահլիճ, որոշ ներկաներ նրանց ծափահարեցին: Ես համարում եմ, որ հարկավոր է ընդունել խիստ միջոցներ, որպեսզի այսուհետ նման ժողովների գա միմիայն իսկապես կուսակցական ակտիվը:

***ընկ. է. Թոփչյան***

Ընկերներ, վեճերը ու դիտողություններն այն մասին, թե արժեր կամ չարժեր նշել հայերի ողբերգությունը, հարկ է համարել հիմնազուրկ: Եթե մենք չնշեինք կոտորածի 50-ամյակը, ապա կլինեինք շատ վատ կոմունիստներ. մենք չէինք արտահայտի մեր ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկությունը եւ չէինք կարողանա ասել, որ իր կեսը կորցրած ժողովուրդն իրավունք ունի նշել այդ կորուստը: Այդ ժողովուրդը, Կոմունիստական կուսակցության գաղափարների ուժի շնորհիվ, այժմ գտնվում է ծաղկող վիճակում:

Հետեւաբար, եթե առանձին մարդկանց մոտ կան կասկածներ այդ հարցում, ապա նրանք ճիշտ չեն: Հայաստանի կուսակցական կազմակերպությունը եւ Կենտկոմը բացարձակապես ճիշտ վարվեցին՝ հայերի կոտորածի 50-ամյակը նշելով:

Երկրորդ հարցը: Ես կուզեի անդրադառնալ Կենտկոմի որոշմանը: Այդ որոշումը հիմնականում ճիշտ է: Ես նույնպես գտնում եմ, որ հարկավոր է վերանայել ազգայնականության մասին ձեւակերպումը:

Երրորդ՝ հարկ է նաեւ վերանայել որոշման մեջ այն տեղը, ուր խոսվում է մտավորականության մասին: Մեր մտավորականությունը՝ գրողներ, նկարիչներ, կոմպոզիտորներ, քաղկոմի հանճնարարությամբ այդ գործողություններում մասնակցություն ունեցան եւ լավ աշխատեցին, այնպես որ ճիշտ չի լինի ստեղծագործական մտավորականության գործողությունները դատապարտել:

Չորրորդ՝ ես գտնում եմ, որ Կենտկոմի որոշման մեջ հարկ է հատուկ ուշադրություն դարձնել երիտասարդության մասին հարցին: Ես բացարձակապես ճիշտ եմ համարում ընկ. Համբարձումյանի առաջարկը երիտասարդության մասին, որ հարկավոր է երիտասարդությանը արդյունաբերության մեջ աշխատանքի ներգրավել: Դա շատ կարեւոր հարց է, սակայն այն չի սպառում բոլոր գործերը: Ամբողջ հարցն այն է, որ մեր երիտասարդությունն անբավարար հոգեւոր սնունդ է ստանում: Դա մեր աշխատանքի կարեւոր բացթողումներից մեկն է: Մենք մեր հիասքանչ քաղաքում չունենք Երիտասարդության մշակույթի տուն: Մեզանից շատերը երեկոյան կարող են տեսնել տոնական օրորվող մարդկանց, որոնք չգիտեն ինչպես սպանել իրենց ազատ ժամանակը: Մենք պետք է զբաղվենք նրանց դաստիարակության հարցերով:



Հաջորդ առաջարկությունը: Ես գտնում եմ, որ Կենտկոմի որոշման մեջ պետք է հատուկ կետ լինի հայրենադարձների մասին: Մենք այդ մարդկանց բերեցինք Խորհրդային Հայաստան, ապահովեցինք նրանց աշխատանքով եւ բնակարանով, բայց չենք զբաղվում նրանց դաստիարակությամբ: Դա նույնպես կարեւոր հարց է:

***ընկ. Ռ. Գալստյան***

Ընկերներ: Կգտնվի արդյոք մի ազնիվ քաղաքացի, էլ չեմ ասում կոմունիստ, որը մինչեւ իր հոգու խորքը վիրավորված չլինի մեր ժողովրդին, Հայաստանի կոմկուսին ու նրա կառավարությանը հասցված վիրավորանքի համար, որը տեղի ունեցավ 1965թ. ապրիլի 24-ին, արդյոք կգտնվի մի ազնիվ մարդ, ազնիվ խորհրդային քաղաքացի ու վերջապես մի ազնիվ հայ, որ չզայրանա այն անկարգություններով, որին ականատես եղավ կամ թե լսեց:

Արդյոք կարելի է այդ մասին խոսել եւ չհուզվել, ոչ չի կարելի:

Այսօր այդ դեպքերին մենք պլենումում պետք է տանք հստակ, ճիշտ կուսակցական, Լենինյան սկզբունքայնությամբ վերլուծություն ու գնահատական:

Որքան էլ այդ գնահատականը դառը լինի, այնուամենայնիվ այն պետք է ելնի կուսակցական սկզբունքայնությունից ու քննադատությունն ու ինքնադատությունը պետք է հետապնդի միայն ու միայն մեկ նպատակ:

1. Տալ դեպքերի օբյեկտիվ, ճիշտ վերլուծությունը.

2. Վեր հանել այն սխալներն ու թողտվությունները, որոնք թույլ են տրվել ինչպես եղեռնի 50-ամյա տարելիցի ամբողջ նախապատրաստման ժամանակաշրջանում, այնպես էլ հենց ապրիլի 24-ին:

3. Պետք է նշվեն միջոցառումներ շտկելու վիճակը, այդ միջոցառումները պետք է մշակվեն ամենայն լրջությամբ, հաշվի առնելով մեր կյանքի բոլոր բնագավառներն առանց բացառությամբ: Իրականությունն այն է, որ ՀԿԿ Կենտկոմի նախագահության կողմից ընդունված եւ ԽՄԿԿ Կենտկոմի կողմից հավանություն գտած որոշումը Մեծ Եղեռնի 50-ամյակը նշելու մասին եւ նրա հետ կապված միջոցառումները Երեւան քաղաքի կուսկազմակերպությունների կողմից մինչեւ ապրիլի 24-ը տարվել են ամենայն կազմակերպվածությամբ եւ հետապնդել են այն նպատակը, ինչ որ նախատեսել էր ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը, ինչին որ հավանություն էր տվել ԽՄԿԿ Կենտկոմի նախագահությունը: Այդ բոլոր միջոցառումներն անցել են բարձր կազմակերպությամբ, քաղաքական բարձր մակարդակով, որն ընդունվել է մեր քաղաքի հասարակայնության կողմից մեծ հարգանքով ու բավականությամբ:

Սակայն, ապրիլի 24-ին դեպքերն անցան ամեն մի, մինչ այդ սպասածից եւ ուղղակիորեն արատավորեցին ինչպես մեր ժողովրդին,

Հայաստանի կառավարությանն ու Հայաստանի կոմկուսին, որքան էլ այդ դառն է, բայց այդ է ճշմարտությունը:

Ինչ տեղի ունեցավ:

1. 1965թ. ապրիլի 24-ին առավոտյան ժամը 10-ից քաղաքի բոլոր կողմերից Կոմիտասի այգի եւ Լենինի հրապարակ հավաքվեցին սեւ շորեր հագած, հատուկ կրծքանշաններով ու տրանսպարանտներով երիտասարդություն: Նրանց հաջողվեց գրավել Լենինի հրապարակը, ինչպես ասվեց Կենտկոմի նախագահության հանձնարարությամբ, ամբիոնից ելույթ ունեցան գրող Ս. Խանզադյանը, քաղկոմի քարտուղար ընկ. Մուրադյանը, մեր կառավարության նախագահ ընկ. Քոչինյանը եւ աշխարհահռչակ գիտնական հայկական ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը: Որոնց ելույթները ոչ մի կերպ չեն կարողանում մեղմացնել առանձին շովինիստական էլեմենտների կողմից ազգային կրքերով բորբոքված ցուցարարներին, որոնք գոռում էին. - հողերը, Մասիսը, եւ ազատենք 7 հայրենասերներին: Ուրեմն անժխտելի փաստ է, որ առանց Հայաստանի կոմկուսի ցուցման կամ նրան տեղյակ պահելու կազմակերպվեց ցույց Լենինի հրապարակում:

Իհարկե այս միանգամայն անհանդուրժելի եւ աններելի է, ինչպես Կենտկոմի Նախագահությանն այնպես էլ քաղաքի կուսկազմակերպությանը:

Ցուցարարների մի մասը Կոմիտասի այգում միտինգ կազմակերպեցին, որտեղ ելույթ ունեցան բազմաթիվ մարդիկ, այնտեղ նույնիսկ հեռագիր ընդունվեց, հեռագիր ուղղված ընկ. Լ. Բրեժնեւին, Կոսիգինին եւ Միկոյանին, Ղարաբաղի եւ Նախիջեւանի հողերը Հայաստանին միացնելու մասին:

Այնտեղ ելույթ ունեցան համալսարանի դասախոս դոկտոր Վ. Առաքելյանը, գրողներ Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սեւակը, դասախոս Թ. Խաչատրյանը եւ ինձ անհայտ շատ ուրիշներ:

Ուրեմն մենք Կոմիտասի այգում էլ նրանց հնարավորություն տվեցինք ամբիոն ունենալու:

Ցուցարարները, որոնք նպատակով եկել էին Լենինյան շրջան, իրենց միացնելու բանվոր դասակարգին, կրեցին այդ օրը իրենց միակ պարտությունը: Նրանց ոչ ոք չմիացավ, ավելին այն հետաքրքրասերները, որոնք հետեւում էին նրանց, տեսնելով այդ խաժամուժը լքեցին նրանց: Նրանց շարքերը նոսրացած, նրանք վերադարձան դեպի օպերա:

Նրանք ձգտում էին ներխուժել օպերայի շենքը, որտեղ տեղի էր ունենում Երեւան քաղաքի հասարակության ներկայացուցիչների ժողովը, նվիրված 1915թ. եղեռնի զոհերի հիշատակին: Այդտեղ էլ նրանք ձգտում էին գրավել ամբիոն: Այդ էլ նրանց հաջողվեց, երբ արդեն զեկուցումը վերջացել էր, հանդիսավոր մասը փակվել, ջարդ ու փշուր անելով մեր կուլտուրական միակ օջախի դռներն ու նրա ապակիները, գրավեցին օպերայի հանդիսասրահը դուրս վանելով այնտեղից օրինական տերերին: Այս է իրական վիճակը, ցավալի է, բայց այս է: Այժմ մենք պետք է պատասխան տանք, թե ինչու այդպես ստացվեց, որոնք էին այն սխալներն ու թողտվությունները, որոնք ծնեցին այս բոլորիս համար չցանկալի, վարկաբեկիչ երեւույթները:



Առաջինը բոլորը հարցնում են, արդյոք ճիշտ է այս միջոցառումը, թե ոչ:

Մենք պետք է նշեինք եղեռնի 50-ամյակը, թե ոչ: Այդ հարցն ունի այսօր միայն մի պատասխան: Որն է այդ պատասխանը: Այո պետք է նշեինք, բայց ոչ այնպես ինչպես նշվեց:

ՀԿԿ Կենտկոմի նախագահության, ես կասեի առաջին եւ ամենալուրջ սխալն այս հարցում եղել է այն, որ կատարվող միջոցառումը, հասարակ, տեղական միջոցառում չէր, նա ուներ միջազգային նշանակություն՝ եւ դուրս էր գալիս մեր երկրի սահմաններից եւ որ ամենակարեւորն էր գործ ուներ մեր ժողովրդի ազգային ամենանուրբ զգացումների ու լարերի հետ, հետեւապես այս հարցի լրջությունը մինչեւ վերջը հասկանալու դեպքում, Կենտկոմի նախագահությունը պետք է անպայման խորհրդակցեր Կենտկոմի անդամների հետ, դներ Կենտկոմի պլենումի քննարկման, մշակվեր հստակ միջոցառումներ եւ կուսակցական կազմակերպություններն ունենալով Կենտկոմի կողմից արդեն մշակված միջոցառումները մինչեւ վերջ կհասցնեին այն եւ զերծ կպահեին անախորժություններից:

ՀԿԿ Կենտկոմի Նախագահության երկրորդ լուրջ սխալն իմ կարծիքով այն է, որ ինչպես այս միջոցառմանը նախապատրաստվելիս ես մինչեւ այդ էլ, առանձին գրողների, դասախոսների, գիտնականների ու հատկապես մեր երիտասարդությանը, ինձ կներեք փչացնող ինտելիգենտներին կարգի չեն հրավիրել եւ իրենց տեղը չեն նստացրել:

Մեր կարծիքով ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը ոչ մի զիջում չպետք է անի եւ ոչ մեկին անկախ նրա ով լինելուց, եթե դա վնասում է մեր ընդհանուր գործին:

Ապրիլի 24-ի դեպքերն ակնառու կերպով ցույց տվին, որ Երեւան քաղաքի երիտասարդության հետ տարվող քաղաքական-դաստիարակչական աշխատանքներում դեռեւս կան լուրջ ու աններելի թերություններ:

Այս հարցում ածաջին հերթին Կենտկոմի առջեւ պետք է պատասխան տան մեր Երեւան քաղաքի ՀԿԿ բոլոր շրջկոմներն առանց բացառության եւ ՀԼԿԵՄ Կենտկոմը:

Մեր սկզբնական կուսկազմակերպությունները լուրջ չեն զբաղվում երիտասարդության դաստիարակության հարցերով, իսկ կոմերիտական կազմակերպություններում դեռ ցածր է նախաձեռնությունը, դեռ ավելին, այդ զրույցի մասնակիցների մի զգալի մասը կոմերիտականներ են:

1. Մեզ բոլորիս հայտնի է, որ նախատեսվող հավաքատեղիները պետք է լինեն Կոմիտասի այգին, Լենինի հրապարակը եւ էջմիածինը:

Գուցե հարցնեք, թե որտեղից էր հայտնի: Ասեմ, այն կազմակերպությունը կամ ավելի ճիշտ այն խումբ մարդիկ, որոնք մինչեւ օրս հայտնաբերված չեն, ֆոտո թղթերի վրա բազմացրած հրավիրատոմսերով ժամերը գրած հրավիրում էին, իսկ բազմաթիվ թռուցիկներ, որոնց փակցվում էին պատերին այդ էին ազդարարում:

Իսկ ինչ ցուցում է տրվել ՀԿԿ Կենտկոմի կողմից: Դուրս հանել կուսակցական ակտիվին, հետեւել հասարակական կարգ ու կանոնին այն առումով, որ խուլիգանական արարքներ չլինեին, իսկ ցուցարարների հետ ինչ անել, այդ մասին ցուցում չի տվել:

Դա իհարկե իմ կարծիքով ճիշտ չէր, երբ նրանց մի մասը գալիս էր Կոմիտասի շիրիմի մոտ մենք կարող էինք մեկուսացնել մեր ուժերով, քանի որ նրանք 10-15 հոգուց ավելի չէին, նույնը եւ հրապարակում, իսկ դրանք այն հիմնական կազմակերպողներն էին, որոնք տարածում էին կրծքանշանները, զանազան նկարներ, կարգադրություններ էին անում, թե ուր գնան, առաջ ուր են գնալու եւ այլն:

Մենք պասիվ կերպով հետեւում էինք որպես դիտողներ եւ գործը հասավ նրան, որ արդեն որեւէ միջամտությունը կարող էր ծնել շատ անախորժ երեւույթներ, այդ պատճառով երբ ցուցարարները հոծ բազմություն էին կազմել, ՀԿԿ Կենտկոմի Նախագահության ցուցումները միանգամայն ճիշտ էին եւ պատճառաբանված, ճիշտ էր եւ այն, որ միլիցիան չմիջամտեց նույնիսկ երբ օպերայի դռները ջարդեցին:

Բայց կոպիտ սխալ էր, երբ մենք չկարողացանք պաշտպանել օպերայի շենքը, թույլ չտալ նրանց խանգարելու արդեն պետական միջոցառումը:

Եզրակացությունն այն է, որ թվածս հիմնական պատճառներով առաջացած անախորժությունները չէին լինի, եթե մենք դառնալով ապրիլի 24-ի տերն ու տնօրենը եւ ոչ թե լինեինք սոսկ դիտողներ, իսկ եթե ավելի ճիշտ ասենք մենք այդ օրը չգտնվեցինք մեր բարձրության վրա պարտություն կրեցինք: Ցավալի է բայց այդ դառը ճշմարտություն է:

Այս դեպքը պարտավորեցնում է մեզ, այսուհետ աչալուրջ լինել, այժմ պետք է Կենտկոմի պլենումը հանձնարարի ՀԿԿ Կենտկոմի նախագահությանը, առանց շտապողականություն ցուցաբերելու մշակել միջոցառումներ, պատշաճ կուսակցական կարգապահություն սահմանելու բոլոր տեղերում, որի բացակայության պատճառով հիմնականում եղան այս անախորժությունները:

*<u>ԸՆԿ. Ուղումյան</u>*

Ընկերներ, ինչպես՞ կարելի էր չնշել հայերի կոտորածի 50-ամյակը, երբ այդ նշում է համաշխարհային հասարակայնությունը, ինչպես նաեւ արտասահմանում եղբայրական կոմունիստական կուսակցությունները: Միթե արժանի կլիներ, եթե չնշեինք: Բայց ինչ պատահեց: Ես մտածում եմ այն, որ տեղի ունեցավ, զանգվածային բնույթի միջոցառումներին չի վերաբերում: Մենք կոնկրետ նախապատրաստվեցինք կոտորածի 50-ամյակի անցկացմանը: Դա բացարձակ ճշմարտություն է: Բայց կոնկրետ աշխատանքի մենք անցանք միմիայն վերջին օրերին: Մենք բարձրացրեցինք հայրենասիրության ալիք, իսկ հետո ցանկացանք այն դնել նեղ շրջանակում: Բայց ախր կոմունիստը պարտավոր է իմանալ ժողովրդի տրամադրությունը եւ ճիշտ ուղղորդի նրան: Բազմիցս դուք մեզ կանչել եք Կենտկոմ: Մենք գիտեինք, որ նման տրամադրություններ կան, բայց միթե չէր կարելի ամեն ինչ կանխատեսել եւ կանխարգելել: Իմանալով այդ տրամադրությունների մասին՝ մենք պետք է կազմակերպեինք կոթողի բացումը, թեկուզ ինքը կոթողը դեռ պատրաստ չէ, բայց կարելի էր քար տեղադրել եւ կազմակերպել հանդիսավոր բացումը: Այդ ժամանակ ոչ ոք չէր գնա հրապարակ եւ ոչինչ չէր պատահի: Կամ էլ վերցնենք կրծքանշանների հարցը: Ինչ կա այդտեղ վատ: Չէ որ եւ մենք կարող էինք այդ հոբելյանի կապակցությամբ որոշել կրծքանշանների թողարկման մասին: Բայց մենք այդ չարեցինք: Այդ արեցին ուրիշները եւ առաջացրեցին բացարձակապես այլ վերաբերմունք:



Ինձ բերեցին ֆրանսիական «Յումանիտե» թերթի առաջավոր հոդվածի թարգմանությունը: Այնտեղ գրված է հայերի կոտորածի մասին, ինչպես նաեւ այն մասին, թե ով է պարտավոր պատասխանատու լինել դրա համար: Եթե այդ թերթում գրված է այդպես, ապա եւ մենք կարող էինք հայ ժողովրդի ողբերգության հոբելյանն անցկացնել հակակայսերապաշտական նշանների ներքո: Կարծում եմ, որ այդ դեպքում մեզ հարկավոր էր ցուցաբերել առավել ճկունություն եւ շրջահայացություն: Ճիշտ է, մենք ժողով գումարեցինք, ցուցումներ եղան, բայց վերջում տեղի ունեցավ հրմշտոց, ինչը եւ վատ անդրադարձավ: Մենք պարտավոր էինք ժամանակին կոնկրետ ցուցումներ տալ յուրաքանչյուրին, բազմակողմանի քննարկեինք այդ հարցը մեր կուսկազմակերպություններում, որպեսզի սխալներ թույլ չտրվեին:

Ես կարծում եմ, որ հարկավոր է հաստատել որոշումը, եւ ինչպես նշեցին ընկերներ Ղարիբջանյանը եւ Թոփչյանը, հարկավոր է հանել ազգայնականության մասին ծեւակերպումը, որպեսզի տարբեր անպատասխանատու տարրեր դա չօգտագործեն մեր ժողովրդի ազգային զգացմունքների դեմ:

*<u>ԸՆԿ. Ա. Այվազյան</u>*

Ընկերներ, ինձ սխալ են թվում այն կարծիքները, որ պետք չէր նշել հայերի կոտորածի 50-ամյակը, իսկ այդպիսի կարծիքներ ցավալիորեն եղել են: Շտապողականությունը երբեք լավ խորհրդատու չի եղել: Նման տրամադրություններ կան, քիչ, բայց կան: Ինչու՞ աչք փակել դրա վրա: Ես գտնում եմ, որ բացարձակապես ճիշտ է վարվել մեր Կենտկոմը,

ցանկանալով նշել կոտորածի 50-ամյակը, եւ այդ կապակցությամբ ԽՄԿԿ Կենտկոմի առջեւ հարց բարձրացրել: Եւ ճիշտ վարվեց ԽՄԿԿ Կենտկոմը, որ թույլատրեց այդ: Ես պաշտպանում եմ Հայկ Մելքոնյանի առաջարկությունը եւ գտնում եմ, որ պետք չէր հարցը նեղացնել: Այդ հարցը պետք չէր նշել միայն Հայկական հանրապետության սահմաններում: Ես կարծում եմ, որ հայերի ողբերգությունը պետք է նշվեր եւ Միության հանրապետություններում: Նրանք, իհարկե, կարող էին նշել ոչ այդպիսի ծավալով, ինչպես մենք, բայց եւ այնպես պարտավոր էին նշել: Այդ առումով կարծում եմ, որ ոչ այնքան ճիշտ վարվեց եւ «Պրավդա» թերթը, երբ նա կիսածայն ասաց կոտորածի մասին, մանրամասն չքննարկեց հարցը: Նա պարտավոր էր տալ սկզբունքային գնահատական: Եւ ոչ միայն նա, այլեւ մեր բոլոր հանրապետական թերթերը պարտավոր էին խոսել թուրքական կառավարության կողմից իրականացված ցեղասպանության քաղաքականության մասին: Բայց դա արվեց ամոթխած եւ անշնորհք ձեւով:

Հաջորդ հարցը. ես կարծում եմ, որ Խորհրդային Միության Արտաքին գործերի նախարությունն այնքան շատ է վախենում Թուրքիայից, հանկարծ ինչ-որ բան ավելորդ չասվի Թուրքիայի հասցեին: Եթե խոսքը գնում է այն ժամանակաշրջանի մասին, որի համար պատասխանատվություն չեն կրում ներկա կառավարողները, ապա այդ մասին հարկ է խոսել լիածայն, վճռական: Այդ հարցում թերացումները ազդեցին եւ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի վրա, թուլացվեց կոտորածի 50-ամյակի նախապատրաստման թափը: Սկսեցին վախենալ նույնիսկ «կոտորած» բառից: Ես կարծում եմ, որ ընկ. Դովլաթյանը ճիշտ է հարց դնում: Անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը, նախքան այս կամ այն հարցի լուծման որոշումը, խորհրդակցի Կենտկոմի պլենումի, ակտիվի հետ: Դրա համար բազմաթիվ ալիքներ գոյություն ունեն: Ճիշտ է, Կենտկոմը մի քանի անգամ այդ հարցով խորհրդակցություններ գումարեց, օրինակ ես մասնակցել եմ ընկերներ Զարոբյանի, Բաղդասարյանի, Վարդանյանի մոտ խորհրդակցություններին: Բայց ինչ խորհրդակցություններ էին դրանք: Այնտեղ տեղեկացվում էին արդեն պատրաստի որոշումների մասին, իսկ տվյալ դեպքում խոսքը գնում է այն մասին, որպեսզի ակտիվի հետ խորհրդակցել մինչեւ որոշման ընդունումը:

Ընկ. Մուսայել Քոչարյանը ներկա էր, երբ ես դիմեցի երթի մասնակիցներից մեկին հարցով, թե ինչու է մասնակցում եւ ինչ է ուզում: Իսկ նա պատասխանեց. «Ձմռանը փլվեց իմ տունը. հիմա ես ապրում եմ բակում: Դրա համար մասնակցում եմ»: Նա գինու գործարանի բանվոր է: Ես ցանկանում եմ առաջարկ մտցնել, որպեսզի քաղկոմին, քաղխորհրդին, շրջկոմներին եւ շրջխորհուրդներին հանձնարարվի նկատի ունենալ այդ հանգամանքը, ուսումնասիրել աշխատավորության վիճակը, նրանց հարցումները: Այդ արտակարգ կարեւոր հարց է, մինչդեռ մենք խորամուխ չենք լինում այդ հարցի էության մեջ:



*Նախագահ*

Ձայնը տրվում է ընկ. Համազասպյանին:

*Ընկ. Վ. Համազասպյան*

Ընկերներ, ոչ մի կասկած չկա, որ Կենտկոմի Նախագահությունը հսկայական դժվարություններ հաղթահարեց եղեռնի 50-ամյակի կապակցությամբ եւ հասավ այն բանին, որ մենք նշեցինք այն: Եղեռնի նշումը արտահայտում էր ոչ միայն ողջ հայության ցանկությունը, նրա զգացմունքները, նահատակների հիշատակի հարգանքը, այլեւ մի քանի գլխով բարձրացրեց մեր հանրապետության եւ մեր միության հեղինակությունը հայրենիքում եւ հայրենիքից դուրս սփյուռքում: Սակայն, դժբախտաբար, այդ գեղեցիկ որոշումը եւ մեր Կենտկոմի մեծ ձեռնարկումը կատարվեց ոչ գեղեցիկ ձեւով: Ամենալավ որոշումը կարելի է անցկացնել շատ վատ ձեւով եւ հակառակը: Ընկեր Ղարիբջանյանը ճիշտ ասաց, մենք ընդունում ենք որոշում, հետո ետ ենք նայում, երկմտում, վախենում, մատածելով թե այդ որոշումը կարող է որոշ չափով վնասել մեզ, ազդել մեր հեղինակության վրա: դրա համար էլ հաճախ լավ որոշումներ ենք ընդունում եւ այն կիսատ-պռատ կենսագործում: Ես պետք է ասեմ, որ սկիզբը շատ լավ էր եւ Կենտրոնական Կոմիտեն լավ նախապատրաստել էր 50-ամյակի անցկացումը, երբ ընկ. Զարոբյանը Մոսկվայից եկավ, հրավիրվեց շատ լայն խորհրդակցություն, որտեղ մասնակցում էին հանրապետության բոլոր անվանի մարդիկ եւ կազմակերպությունների ներկայացուցիչները, շատ մանրամասն հաղորդում տրվեց կատարվող աշխատանքների մասին, նշվեց այդ մեծ գործի եւ պլյուսները, եւ մինուսները, ընտրվեց հանձնաժողով, միջոցառումներ ձեռնարկվեցին: Հանձնաժողովը հավաքվեց ընկ. Բաղդասարյանի մոտ եւ հավանություն տվեց միջոցառումներին, բայց երրորդ անգամ այդ հանձնաժողովը այլեւս չհավաքվեց: Ընտրված ընկերները չհավաքվեցին, չխորհրդակցեցին եւ որոշ մարդկանց միջոցով մեզ անհայտ պատճառներով նախատեսված միջոցառումները աստիճանաբար կանխվեցին: Խմբագիրները գալիս բողոքում էին թե թերթերի եւ ամսագրերի համար նախատեսված նյութերը հանվում են, չեն թույլատրում տպագրել, անհայտ պատճառներով ինչ-որ մարդիկ աշխատում էին եւ կատարել եւ չկատարել ձեռնարկումները: Ինչպես կարելի է մի ձեռքով որոշում ընդունել, մյուսով կանխել:

Երբ մենք առաջին անգամ նշեցինք մեր ժողովրդական հերոս Անդրանիկի ծննդյան 100-ամյակը, բոլոր թերթերում տպագրվեցին հատուկ հոդվածներ, մեծարվեց Անդրանիկը որպես ժողովրդական հերոս, սակայն նույն օրը երբ բացեցինք «Կոմունիստ» թերթը, կարդացինք շատ հետաքրքիր վերնագրված հոդված, որի վերնագիրը ազդարարում էր Անդրանիկին ժողովրդական հերոս, իսկ ծանոթության մեջ գրում 1918թ. «Իզվեստիա»-ի տպագրած թյուրիմացությունը Անդրանիկի մասին, որ իբր նա դաշնակցական նշանավոր գործիչ է եղել: Ես ներողություն եմ

խնդրում կենտրոնական կոմիտեից եւ ընկերներից, եթե Կենտկոմի քարտուղար լինեի, որի հավակնությունը երբեք չեմ ունեցել, նույն օրը եւեթ կհանեի խմբագրին եւ այն ընկերներին, որոնք նյութեր են տվել նման ապակողմնորոշման եւ աշխատել են խաղաղ երկու լարի վրա: Միթե պարզ չի, ընկերներ, որ դաշնակցության մամուլը կարող է շատ լավ օգտագործել այս հանգամանքը արտասահմանում մեր դեմ: Ինչ պրոպագանդա կարող է պատասխանել նման լարախաղացությանը: Մենք շատ լավ ճանաչում ենք Անդրանիկին եւ գիտենք թե ինչ գործեր է նա կատարել, եղել է դաշնակցական, թե ոչ, ինչու պետք է նրան այդ ձեւով մեծարել եւ միաժամանակ վարկաբեկել: Նույնը կարելի է ասել եղեռնի 50-ամյակի մասին: Մենք նախապատրաստվել էինք ինչպես հարկն է արժանավայել նշելու նահատակների հիշատակը եւ շատ լավ գիտակցում էինք, որ դա մեր ժողովրդի սրտի մոտ կանգնած գործն է: Հայտնի է, որ պետք է հիմքեր դրվեր հուշարձանի, ծառերը պետք է տնկվեին հավերժացնելու համար նահատակներին, գիտական սեսիաներ պետք է տեղի ունենային, համաքաղաքային ժողով, որտեղ պետք է զեկուցումով հանդես գար ընկ. Համբարձումյանը: Ինչու համար հենց այդ օրերը թերթերը մի փոքրիկ հայտարարություն չցանկացան տպագրել, որ տեղի է ունենալու եղեռնին նվիրված ժողովը, կամ ինչու հուշարձանի հիմնադրումը չկատարեցին: Ես ընկ. Մուրադյանին չեմ մեղադրում եւ ոչ էլ քաղաքային կոմիտեին, նրանք գիշեր ցերեկ աշխատել են: Բայց դեպքը կատարվելուց հետո իմ կարծիքով չի կարելի նկատողություն անել եւ հանձնարարել քննարկել այդ մարդկանց հարցը, որոնք հենց քաղաքային կոմիտեի հանձնարարությամբ գնացել են հրապարակ, Կոմիտասի պարկ, մարդկանց հանգստացնելու համար: Ինձ այդ հայտնի դարձավ միայն 24-ի նախօրյակին, որ մի խումբ գրողների եւ արվեստի աշխատողների կանչել են քաղկոմ, որպեսզի նրանք լինեն հրապարակում, պարկերում եւ խոսեն երիտասարդների հետ, որոնք պետք է հավաքվեին: Իմ կարծիքով այդ խմբի անդամները իրենց հերթին հայտնել են իրենց ընկերներին եւ ահա բավականին թվով մարդիկ հավաքվել են հավաքվողների մոտ եւ հենց իրենց ընկերների հանձնարարությամբ էլ որոշ ընկերներ հանդես են եկել ինչպես Սերո Խանզադյանը եւ ուրիշներ:

Մեզ հատնի էր, որ այդ օրերին յուրաքանչյուրը յուրովի նշելու էր ազգային սգի օրը: Մի մասը գնալու էր էջմիածին, մի մասը հրապարակ, մի մասը Կոմիտասի գերեզմանը: Եւ ահա Կենտկոմը իմանալով այս տրամադրությունը պետք է աշխատանք կատարեր, որպեսզի կազմակերպությունները գլխավորեին եւ ճիշտ ուղղություն տային ու դարձնեին այն ավելի նպատակասլաց: Ընկ. Մուրադյանը գնացել տեսել է, որ ժողովուրդը հրապարակում հավաքվել է, կազմակերպել է ելույթներ եւ ինքն էլ ելույթ է ունեցել: Իմ կարծիքով ճիշտ է վարվել: Կոմիտասի պարկում ելույթներ են ունեցել Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սեւակը եւ ուրիշներ:



Պարզ է, որ այդ ելույթները մեր կողմից նախատեսված չեն եղել, այդ ամենը կարող էինք անել շատ ավելի կազմակերպված եւ կլիներ մեր կազմակերպությունների, մեր կոլեկտիվների կողմից: Այն ժամանակ ոչինչ էլ չէր պատահի:

Ես գտնում եմ եւ համաձայն չեմ որոշման մեջ նշված «նացիոնալիստական տրամադրություն» արտահայտությանը, այն պետք է հանել: Ես համաձայն եմ ընկ. Գեւորգ Ղարիբջանյանի տված ձեւակերպման հետ: Նույնը պետք է ասեմ ստեղծագործական կոլեկտիվներին տրված գնահատականին:

***Նախագահ***

Ձայնը տրվում է ընկ. Մելքոնյանին:

***Ընկ. Պ. Գ. Մելքոնյան***

Ընկերներ: Անկասկած հարկ էր նշել կոտորածի 50-ամյակը: Բանը նրանում է, որ ամսվա ընթացքում մեր մամուլը, հրատարակչությունները զանգվածների շրջանում լայն բացատրական, ագիտ-քարոզչական աշխատանք վարեցին, որը ժողովրդին շատ բանի նախապատրաստեց, բայց ցավալիորեն արդյունքները նախապատրաստական աշխատանքին չհամապատասխանեցին: Մենք որոշ կազմակերպություններում կոտորածի զոհերի հիշատակին նվիրված երեկոներ անցկացրեցինք: Մինչդեռ, անհրաժեշտ էր այդ բոլոր կազմակերպություններում առավել լայն մասշտաբներով անցկացնել:

Պլենումին ներկայացված բանաձեւի նախագծում ասվում է, որ երթի մասնակիցների կողմից բանաձեւ է ընդունվել եւ հանձնվել Նախարարների Խորհուրդ: Երթի մասնակիցների պահանջների մասին նախագծում գրված է առանց որեւէ մեկնաբանությունների եւ առանց քաղաքական գնահատականի: Այդ նշանակում է հարցի կողքով անցնել: Մեր բանաձեւը պետք է մեկնաբանի, քաղաքական գնահատական տա, որը կբավարարի ժողովրդին, որպեսզի հետագայում թյուրիմացություններ չլինեն:

Ավարտելով իմ խոսքը ես եմ իմ համաձայնությունն եմ հայտնում այն բանի հետ, որ անհրաժեշտ է ուժեղացնել մեր երիտասարդության քաղաքական դաստիարակությունը:

Հարկավոր է ինտերնացիոնալ դաստիարակությունը, ժողովուրդների բարեկամության ամրապնդման աշխատանքը ուժեղացնել:

Գտնում եմ անհրաժեշտ հանձնարարել Նախագահությանը կրկին անգամ ուսումնասիրել հարցը եւ պլենումում եղած դիտողությունների համապատասխան վերախմբագրել բանաձեւը:

***Նախագահ***

Ձայնը տրվում է ընկ. Դարբինյանին:

***Ընկ. Վ. Դարբինյան***

Ընկերներ. մի քանի ընկերների վրդովեցուցիչ ելույթները ուղղակի ճնշող տպավորություն թողեցին: Կամա թե ակամա մտածում ես

քաղաքական ինչ նկատառումներով եւ հանգամանքների անալիզի ինչ տրամաբանությամբ այդպիսի ընկերները առանց խորը կշռադատելու փաստերն ու դեպքերը իրենց վրա պատասխանատվություն են վերցնում հայտարարելու, որ քաղաքական սխալ է թույլ տվել, երբ հարց է բարձրացվել նշելու մարդկության պատմության աննախադեպ ողբերգության 1915թ. ջարդերի 50-ամյակը: Ես խնդրում եմ համբերությամբ լսել ինձ, որովհետեւ ես ներկայացուցիչներից առայժմ առաջինն եմ, որ ելույթ եմ ունենում: Ճիշտ է, որոշ մարդիկ են անում հետին թվով, ցանկանում են կասկածի տակ առնել նույնիսկ մեծ եղեռնի 50-ամյակը նշելու անհրաժեշտությունը, բայց դա ինչպես ասում են քաղաքական ճաշակի հարց է: Անհատի պաշտամունքի ծանր տարիներին դատապարտվում էր այնպիսի խնդիրների եւ այրող հարցերի մասին խոսելը, որոնք պատմական տեսակետից լռության մատնելը սուբյեկտիվ մտայնության արդյունք է: Գուցե որոշ ընկերներ չեն կարողացել թոթափել այդ բեռը եւ նրանց ուղեղի վրա կապարի ծանրությամբ դեռ նստած է անհատի պաշտամունքի ժառանգությունը՝ մասնավորապես պատմական դեպքերն ու փաստերը լենինիզմի եւ մատերիալիստական տեսակետից մեկնաբանելու հարցում: Ես լիովին համաձայն եմ ընկերներ. Գ.Ղարիբջանյանի եւ Կ.Ուդումյանի ելույթներում արտահայտած մտքերին: Չի կարելի նացիոնալիզմ փնտրել այնտեղ, ուր նա չկա, չի կարելի այսպիսի լուրջ հարցի քննարկման եւ գնահատման ժամանակ ղեկավարվել մանր խնդիրներով եւ շահերով: Որոշ մարդիկ էլ հարմար առիթ են գտել հին-հին հաշիվներ մաքրելու համար: Նույնիսկ առանձին զրույցների ընթացքում առանձին տաքացած գլուխներ ջրի երես հանելով այս կամ այն ղեկավար մարդու նկատմամբ իր զգացումը ուրախացել է այս դեպքերի առիթով: Դե ինչ կարելի է ասել այդպիսի մարդկանց մասին՝ դուք ինքներդ դատեցեք: Մենք աններելի սխալ թույլ տված կլինենք, եթե լռության մատնեինք եղեռնի նշելու հարցը, մենք ծանր վիճակում դրած կլինենինք սփյուռքահայ դեմոկրատական կազմակերպություններին, որոնք իրենց գործունեությամբ օգնում են մեզ՝ Խորհրդային Հայաստանին, հանդիսանում են մեր բարեկամները: Մենք առատորեն սնունդ կտայինք դաշնակցական ռեւոլյուցիոներին[1], որոնք տարիներ շարունակ կվայրահաչեին մեր կուսակցության հասցեին: Միթե մարքսիստ լենինյանը պետք է անտարբեր անցի այս հարցերի մոտով: Լենինիզմը մեծագույն ուշադրություն եւ եռանդ էր գործադրում ազգային հարցի ճշմարիտ լուծման համար: Լենինիզմը սովորեցնում է, որ ազգային հարցը նուրբ հարց է, որ նա չի սիրում շուտափույթ հետեւություններ անել, առավել եւս նրա էությունը անհարիր է պեդանտրոնը[2], մակերեսայնությունը, դելետանտիզմը: Բոլոր հարցերից ամենա...լեկտիվ[3] հարցը

[1] Այսպես է տեքստում:
[2] Այսպես է տեքստում:
[3] Այսպես է տեքստում:



ազգային հարցն է: Այսպես չեն մտածում մեր որոշ ընկերներ: Անցած 50 տարիների ընթացքում առաջին անգամ մեր մամուլի էջերում երեւացին նյութեր 1915 թվականի մեկուկես միլիոն հայերի ջարդերի մասին: Առաջին անգամ ասված ճշմարտությունը ժողովրդին, զարհուրելի դեպքերի մասին, որ կատարեցին երիտթուրքերի պարագլուխները պանիսլամիզմի դրոշի տակ: Պատմությունը չդատապարտեց գենոցիդի կազմակերպիչներին, այս հարցի մոտով անտարբեր անցան անգլիական, ամերիկյան, ֆրանսիական իմպերիալիզմը. թուրքերի թիկունքում կանգնեցին գերմանական կապիտալիստները: Աշխարհի անտարբեր հայացքի առաջ գլխատվեցին 2 միլիոն հայերը ամենաանմարդկային միջոցներով: Ինձ պատմեցին, որ Ֆրանսիայի կոմկուսի օրգան «Յումանիտեն» հոդված է գրել այդ մասին, աշխարհի այն երկրներում, ուր հայեր կան, դեմոկրատական կազմակերպությունները նշում են եղեռնի 50 տարին: Միթե ճիշտ կլիներ եւ քաղաքական տեսակետից պատճառաբանված, որ Խորհրդային Հայաստանը, վերածնված հայ ժողովուրդը, կոմունիստական շինարարության ուղին բռնած, ամենավսեմ իդեալներով սոցիալիստական ազգերի համագործակցության լիիրավ անդամ հայ ժողովուրդը չհիշեր իր արեւմտահայ հատվածի ոչնչացման 50 տարին: Նացիոնալիստական կամ նացիոնալիզմ անվանել այն անկեղծ զայրույթը, որն ուղղված է թուրքական բռնակալների դեմ: Եթե թուրքական ներկա կառավարությունը ամոթաբար ազգային հերոսներ է անվանում Էնվերին, Թայլհաթին եւ մյուս ցեղասպան գազաններին, ապա ինչու չի կարելի մի անգամ եւս ասել, որ պատմությունը չի մոռանա ոչ գերմանական ֆաշիզմի, ոչ էլ նրանց արժանի նախորդի թուրքական յաթաղանի ջարդերն ու կոտորածները: Խաղաղության համար մղվող պայքարում դա օրգանապես անհրաժեշտ է, որ հիշեն խաղաղասեր ուժերը:

Ընկերներ. եղեռնի 50 տարին պետք է նշվեր լայնորեն, պետք է ասվեր ճշմարտությունը, անցյալի ողբերգությունը մի անգամ եւս ցույց է տալիս, որ միայն Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ լենինիզմը ազգային երջանկության, նրա հոգեւոր ուժերի ծաղկման հնարավորություն ստեղծեցին: Ցավոք սրտի մեր գաղափարական աշխատանքում նպատակասլացությունը քիչ է: Գաղափարական բաժինը չի ընդգրկում այն հարցերը, որոնք նրա աշխատանքում մակերեսայնությունը, չորությունը կարեւորագույն խնդիրների պոչից քարշ գալը բնորոշ է: Ես հիշում եմ, երբ աշխատում էի ՀԼԿԵՄ Կենտկոմում, Կենտկոմի նախագահության նիստում քննարկվում էր հայդուկային շարժման ականավոր զորավար Անդրանիկի գործունեության քաղաքական գնահատականի հարցը, քննարկվում էր նաեւ դրամատուրգ Լեւոն Շանթի գրական ժառանգության գնահատման հարցը: Անցել է մոտավորապես 2-3 տարի եւ բավական նյութեր են տպագրվել մամուլում, որոնք այս կամ այն չափով բացահայտում են նրա գործունեության որոշ կողմերը: Բայց չէ որ դա բավարար չէ: Անդրանիկը եղել

է թուրքական բռնակալների ոխերիմ եւ անհաշտ թշնամին: Նա երբեք դաշնակցական ավանտյուրիստներին չի պաշտպանել, նրանց կամակատարը չի դարձել: Ժողովրդի հերոսը, ինչպես նրան անվանում էր Ստեփան Շահումյանը նույնիսկ պատրաստակամություն հայտնելով իր զինված ջոկատով օգնել է Բաքվի կոմունային, նա Նախիջեւանը հայտարարեց Խորհրդային Ռուսաստանի անբաժանելի մասը, հերոսաբար կռվեց բուլղար հայրենասերների շարքերում թուրքական բռնակալների դեմ: Իր կյանքի վերջին տարիներին եւ ընդհանրապես իր ամբողջ կյանքի ընթացքում միշտ ջերմ է արտահայտվել Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Նա գնդակ չի արձակել խորհրդային զորքերի դեմ: Այսքանից հետո ինչու մտավախություն են հանդես բերում ընկերները, երբ խոսում են նրա մասին, իսկ «Կոմունիստ» թերթը նույնիսկ հեռու գնաց նրան անվանելով Դաշնակցական կուսակցության ականավոր գործիչ: Միթե սա գաղափարական բաժնի անտեղյակության արդյունք չէ: Կամ մի քանի տարի շարունակ խոսվում է Լեւոն Շանթի մասին, տարբեր հակասական կարծիքներ են արտահայտվում, ինչու իմպերիալիստական ֆրոնտի ղեկավարները վճռական կարծիք չեն հայտնում, որն է ընդունելին նրա գրական ժառանգության մեջ, որը պետք է մերժվի: Իմ տրամաչափի աշխատողների համար դժվար է, բայց նրանք պետք է, որ կարողանան ասել իրենց խոսքըն անցյալի գրականության ժառանգության եւ տրադիցիաների գնահատման լենինյան իմաստությամբ եւ դիրքորոշումով: Այնտեղ, ուր մենք ուշանում ենք, այնտեղ շտապում են իրենց խոսքն ասել նրանք, ովքեր ի վիճակի չեն կուսակցականության դիրքերից մեկնաբանել աշխատավորությանը հուզող կարեւորագույն հարցերը: Անցել է այն ժամանակը, երբ պրոպագանդիստների աշխատանքի բնագավառում յոլա էին գնում նույնիսկ առանձին: Մեր ապրած ժամանակում հարցերի պատասխանը պետք է լինի ճշմարիտ, պարզ եւ անկեղծ: Ընդհանրացումները եւ գնահատականները պետք է օբյեկտիվ եւ ճշմարտացի լինեն: Նրանք պետք է արտացոլեն իրերի իսկական վիճակը եւ ոչ թե առանձին խուլիգանների հակահասարակական արարքները գնահատեին նացիոնալիստական խուլիգանականի փոխարեն: Ում դեմ է ուղղված այդ նացիոնալիզմը իր սուր ծայրով, եթե կա նացիոնալիզմ ինչպես կարծում են առանձին ընկերներ:

Այն ժողովուրդը, որ դարեր շարունակ մաքառել է պատմության քառուղիներում. իր ազգային վերածննդին հասել է ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, որը հարստացել ու ծաղկել է խորհրդային ժողովուրդների համերաշխ ընտանիքում եւ անսահմանորեն նվիրված է կոմունիզմի իդեալներին, նացիոնալիստական տենդենցներ փնտրել եւ փաթաթել ինտելիգենցիայի եւ նրա վզին, քաղաքական զրպարտանք է:

***Նախագահ***

Ձայնը տրվում է ընկ. Մուրադյանին:

***Ընկ. Բ. Հ. Մուրադյան*** - Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար



Ընկերներ: Շատ են խոսում եւ այստեղ էլ բավականին խոսեցին, թե արդյոք կենտրոնական կոմիտեի նախագահությունը ճիշտ վարվեց, որոշելով նշել, ոչ մի առիթով այդ մասին չենք խոսել, ավելին այդ մասին երբ խոսք է եղել, նույնիսկ դատապարտել ենք: Ինձ թվում է, որ այդ մասին երկու կարծիք լինել չի կարող: Կենտրոնական կոմիտեի նախագահությունը ճիշտ է վարվել եւ ուրիշ կերպ վարվել չէր էլ կարող:

Յուրաքանչյուր նման բարդ, դժվարին միջոցառում անցկացնելիս, մենք պետք է կարողանանք ճիշտ գնահատել այդ միջոցառման թե դրական եւ թե բացասական հետեւանքները: Որն էր դրականը: Նշելով եղեռնի 50 տարին մենք որոշակիորեն ընդառաջ գնացինք ժողովրդի ցանկությանը, որն առանց մեզ նույնպես կնշեր, սակայն միանգամայն որիշ ձեւով եւ դժվար է նույնիսկ այսօր ասել, թե ինչ ձեւ կընդուներ տարերային նշումը: Կարող եք ինձ հարցնել, թե իսկ ինչպես կարող էր նշել, եթե մենք չցանկանայինք: Փորձը ցույց տվեց, որ կան հարցեր, որոնք դժբախտաբար այսօր մենք լիովին եւ անվերապահորեն չենք կարողանում կարգավորել: Չէ որ մենք ոչ միայն չէինք ցանկանում, այլեւ կարծեք թե ամեն ինչ արեցինք, որ ապրիլի 24-ին փողոց դուրս չգային: Այնուամենայնիվ, իսկ որն է դրա պատճառը: Պատճառները բազմաթիվ են: Սակայն, ես կուզեի դրանցից մի քանիսի մասին խոսել: Ամենից առաջ ստեղծված վիճակը պետք է բացատրել մեր ժողովրդի նկատմամբ թույլ տրված անարդարության հետեւանքով ստեղծված սփյուռքի գոյությամբ:

Ամենամոտավոր հաշիվներով մեր միությունից դուրս աշխարհով մեկ բնակություն են հաստատել շուրջ 700 հազար հայեր, կամ հայ ժողովրդի 20% եւ այսօր Հայաստանի բնակչության շուրջ 10% հայրենադարձներ են: Սփյուռքի հայերը ամեն տարի նշել են եղեռնի օրը: Եղեռնի օրը նշում է հայ եկեղեցին, իսկ 50-ամյակի շուրջը ստեղծված էր արտասովոր աշխուժություն: Սփյուռքի մամուլը, առաջադիմական կազմակերպությունները, ռեակցիոն դաշնակցական կուսակցությունը, եկեղեցին, մի խոսքով բոլոր նրանք, ովքեր ի վիճակի էին ինչ-որ ձեւով անդրադառնալ եղեռնին, մի ամբողջ տարի եւ գուցե ավելի միայն դրանով էին զբաղված: Մերձավոր արեւելքի պետությունները եւ ոչ միայն նրանք, այլ նույնիսկ ԱՄՆ եւ Լատինա-ամերիկյան պետությունները նույնպես որոշակի նկատառումներից ելնելով նպաստում եւ աջակցում էին հայ գաղութներին այդ օրվա նշման գործում, ընդհուպ մինչեւ պաշտոնական սգի օր հայտարարելով, փողոցները եւ հրապարակները անվանակոչելով: Այսպիսի եռուզեռի պայմաններում, երբ մայրաքաղաքի բնակչության շուրջ 15% հայրենադարձներ են, որոնք բազմաթիվ կապերով կապված են սփյուռքի հետ, նամակագրության, տուրիստների, լրագրերի, եկեղեցու, ռադիոյի եւ այլ ճանապարհներով, մանրամասն տեղյակ էին այդ ամենին, բնական է, որ քաղաքի բնակչության մի մասի մոտ, հատկապես երիտասարդության վրա այդ կարգի խոսակցությունները չէին կարող իրենց ազդեցությունը

չթողնել: Սակայն, միայն դրանով բացատրել ապրիլի 24-ի դեպքերը, ճիշտ չի լինի: Այդ դեպքերից մենք պետք է լուրջ հետեւություն անենք: Մեր քաղաքական աշխատանքի ներկա մակարդակը, նրա ձեւերը հնացած են եւ չեն բավարարում մեր երիտասարդությանը, որ մեր կուսակցական կազմակերպությունների զգալի մի մասը տեղում վիճակի տերը չէ: Երիտասարդության մի մասի վրա կուսակցական, կոմերիտական կազմակերպությունների ազդեցության պակասով միայն պետք է բացատրել այն փաստը, որ ամենուրեք, հատկապես վերջին օրերին, չնայած մենք աշխատանք էինք տանում, որպեսզի փողոց դուրս չգան եւ մեզ թվում էր թե լուրջ ոչինչ չկա, այնուամենայնիվ մի քանի հազար երիտասարդ, հակառակ մեր պահանջին եւ ցանկությանը, փողոց դուրս եկավ: Ճշմարտությունն այն է, որ կուսակցության քաղաքային կոմիտեն եւ շրջանային կոմիտեները անակնկալի եկան: Եւ ոչ միայն մենք, այլեւ կուսակցության ԿԿ-ը լավ չէինք պատկերացնում այն լուրջ դժվարությունները եւ բարդությունները, որոնք կանգնած էին մեր առջեւ: Այն հանգամանքը, որ մենք 50 տարվա մեջ առաջին անգամ էինք նշում եղեռնի օրը, չունեինք անհրաժեշտ փորձ: Սկզբնական կուսակցական կազմակերպությունների եւ ուսումնական հաստատությունների ղեկավարների մի զգալի մասը ցուցաբերեցին լիակատար անտեղյակություն, անպատասխանատվություն ուսանողության մի մասի տրամադրությունների գնահատման գործում որոշակիորեն ապակողմնորոշեցին մեզ: Շրջկոմների եւ քաղկոմի եւ ԿԿ-ի կողմից թույլ տրված մի շարք սխալներն էլ ավելի բարդեցրին իրադրությունը եւ մենք կանգնեցինք այս տխուր փաստի առջեւ: Սակայն, այս բոլորից բացի, կա նաեւ մի ուրիշ, ավելի լուրջ պատճառ, որը հասցրեց այս վիճակին: Մեր կյանքի մի շարք երեւույթների, երիտասարդությանը հետաքրքրող մի շարք հարցերի նկատմամբ մենք չունենք մշակված հստակ, ուղղակի սպառիչ պատասխան: Ավելին, մեզանից յուրաքանչյուրը այդ հարցերի նկատմամբ ունի իր կարծիքը, իր տեսակետը, որը շատ հաճախ տեղիք է տալիս ոչ ճիշտ եզրակացությունների եւ մեկնաբանումների: Վերջին հաշվով, եթե մի կողմ թողնենք օպերայում տեղի ունեցած խուլիգանությունը, անկարգությունը, այլանդակությունը, որը ամենայն զայրույթով դատապարտվում է ողջ հասարակության եւ աշխատավորության կողմից, ինչ էին ցանկանում փողոց դուրս եկած երիտասարդները, նրանք պահանջում էին Ղարաբաղի եւ Նախիջեւանի հողերը եւ մասսայական հայրենադարձության կազմակերպում: Արդյոք նոր հարց է այս հարցը: Բոլորովին էլ ոչ: Այս մասին առաջներում նույնպես բազմիցս ասել են, խոսել են, գրել են: Այս անգամ այն ընդունեց այսպիսի ընթացք, որովհետեւ կար հարմար առիթ եւ այն օգտագործվեց: Ամբողջ ճշմարտությունը կայանում է նրանում, որ այս հարցում չկա միասնական մոտեցում: Մեր քաղաքական աշխատանքը երբեմն տեղ չի հասնում այն պարզ պատճառով, որ երբ առաջ են գալիս նման հարցեր, որոշ ընկերներ կամ



լռում են, կամ ձեւացնում են, թե չլսեցին, կամ էլ առանձին նշանակություն չեն տալիս եւ պահանջում են, որ այդ մասին չխոսեն, որոշ ընկերներ էլ պատասխանում են, թե այսօր ժամանակը չի եւ նպատակահարմար չէ այդ մասին խոսել: Կարծեք թե դրանով ասում են, թե վաղը կարելի է խոսել, երբ կլինի հարմար առիթ: Այսպիսի պայմաններում, երբ բոլորը միատեսակ չեն մոտենում այս հարցին պարզ է, որ դա էլ առաջ է բերում տարակարծիքներ եւ սխալ մեկնաբանումներ, որը եւ բացասաբար է անդրադառնում երիտասարդության դաստիարակության գործի վրա: Եւ եթե կուսակցական կազմակերպությունները, շրջկոմները, քաղկոմը եւ Կենտկոմը լուրջ եզրակացություն չանեն տեղի ունեցածից, ոչ ոք չի կարող ասել, թե ինչ կլինի վաղը: Մենք պետք է ցուցաբերենք մաքսիմում պատասխանատվություն մեր երիտասարդության դաստիարակության գործի համար, պատասխանատվություն մեր ժողովրդի բախտի համար, պատասխանատվություն ոչ միայն հանրապետությունում գտնվող ժողովրդի բախտի համար, այլեւ հանրապետությունից դուրս գտնվողների համար: Մենք պետք է կարողանանք լուրջ գնահատել ստեղծված վիճակը, զգանք, թե մեր բանավոր կամ գրավոր խոսքը, ելույթը, թե թերթի հոդվածը, անզգույշ արտահայտությունը կամ վարվելակերպը ինչ տպավորություն կարող է թողնել երիտասարդության վրա եւ ինչքանով է այն նպաստում երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործին: Պետք է ասել, միշտ չէ, որ զգում ենք անհրաժեշտ պահանջկոտություն:

Ճշմարտություն է, որ պահանջկոտության պակասի պատճառով չկա նաեւ անհրաժեշտ կարգապահություն, այս հարցում հիմնականում մեղավոր են սկզբնական կուսկազմակերպությունները, շրջկոմները եւ քաղկոմը: Չնայած շատ ենք խոսում կարգապահության բարձրացման անհրաժեշտության մասին, սակայն տեղի ունեցածը ցույց տվեց կարգապահության վիճակը մեր կուսակցական, կոմերիտական կազմակերպությունում:

Անհրաժեշտ է մեզ լուրջ հետեւություն հանել տեղի ունեցածից, արմատապես փոխել քաղաքական աշխատանքի ձեւերն ու մեթոդները, այն դարձնենք ակտուալ եւ նպատակային, բարձրացնենք մեր մեծ ու փոքր ղեկավարների, դասախոսների, կուսակցական, կոմերիտական կազմակերպությունների պատասխանատվությունը եւ ավելի գործնական քայլեր կատարենք, բոլոր օղակներում գիտակցական կարգապահության բարձրացման ուղղությամբ:

***Նախագահ***

Ձայնը տրվում է ընկ. Զարոբյանին:

***Ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Ընկերներ, պլենումում կարծիքների շատ պետքական փոխանակություն էր: Իհարկե, ցանկալի էր թույլ չտալ այդ սխալները եւ թերացումները, որոնց համար Կենտկոմի Նախագահությունը լրիվ պատասխանա-

տվություն է կրում: Մենք դեռ Օպերայի թատրոնի առջեւ կատարված պատահարներից հուզված ենք: Բայց մեր խնդիրը ոչ միայն հուզվելն ու անհանգստանալն է, այլ գլխավորը՝ ողջ պատահածից քաղել ճշմարիտ քաղաքական դասեր: Դրա հետ մեկտեղ մենք ճշմարտացի ենք համարում, որ 50 տարվա ընթացքում առաջին անգամ նշեցինք այդ տարեթվի տարեդարձը, որը մեր ժողովրդի ամենից խոր զգացմունքներն է շոշափում:

***Տեղից***

Ճիշտ է:

***Ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Ամսի 24-ից հետո մենք հավաքվեցինք եւ երկար մտածեցինք, կազմեցինք որոշում: Այժմ կրկին հավաքվել ենք, որպեսզի միասնաբար կշռադատենք եւ վերջնականորեն հավանություն տանք Կենտկոմի Նախագահության որոշմանը: Ես գտնում եմ, որ Կենտկոմի պլենումը կհաստատի որոշման նախագիծը, եւ Նախագահությանը պլենումում մտքերի փոխանակման հաշվի առնմամբ կհանձնարարի վերամշակել:

Ըստ հարցի էության պետք է ասեմ, որ Կենտկոմի Նախագահությանը պետք էր կամքի մեծ ուժ ունենալ, որպեսզի բարձրացներ այդ հարցը: Մենք մեր կուսակցական պարտքը համարեցինք նշել այդ տարեթիվը, որպեսզի Կենտկոմի շուրջ համախմբենք մեր ժողովրդին: Եթե մենք չնշեինք, մեր ժողովուրդը չէր հասկանա: Սկզբում մի քանիսը դեմ էին, ասում էին, թե ինչ-որ բան կպատահի, հետո պատասխանիր: Մենք դրա հետ չհամաձայնեցինք եւ ճիշտ արեցինք: Այժմ մենք կարող ենք կուսակցականորեն գնահատել բոլոր դեպքերը, դրանց տալ ճիշտ քաղաքական գնահատական, որպեսզի ուղղենք թույլ տրված սխալները եւ արմատապես բարելավենք զանգվածների հետ գաղափարադաստիարակչական եւ կազմակերպչական աշխատանքները:

Ասում են, որ այդ հարցը պետք է քննարկել Կենտկոմի պլենումում: Ես չեմ ժխտում, գուցեեւ պետք էր: Բայց մենք միասնաբար քննարկել ենք այդ հարցը, որտեղ մասնակցել են Կենտկոմի անդամների մեծամասնությունը: Հնարավոր է՝ չէր խանգարի դեռեւս քննարկել Կենտկոմի պլենումում: Նկատի ունցեք, որ մեզ մոտ նման գործընթացների անցկացման փորձ չկար:

Ինչպես միշտ մեծ գործում գտնվեցին մարդիկ, որոնք ըստ իրենց էին մեկնաբանում այդ իրադարձությունները:

Եղան տարբեր ասեկոսներ, բայց ԽՄԿԿ Կենտկոմը մեզ ճիշտ հասկացավ, երբ թույլատրեց նշել այդ տարեթիվը: Չէ՞ որ այդ տարեթիվը 50 տարի չէին նշել, եւ միայն այս տարի առաջին անգամ նշեցինք այդ մեծ գործը:

Այստեղ ինչ-որ մեկն ասաց, պետք էր գլխավորել տարերային ելույթը: Մենք գլխավորեցինք: Եթե չգլխավորեինք, նախապես չիրականացնեինք խոշոր աշխատանքը, միջոցներ ձեռք չառնեինք, ապա թշնամաբար, երկերեսանիորեն ու առանձին ազգայնականորեն տրամադրված տարրերը, օգտվելով մեր կազմակերպչական աշխատանքի թերացումներից, կծգտեին ավելի վնասել: Ես գտնում եմ, որ չի կարելի ոչ մի ծայրահեղության գիրկը նետվել կամ խորացնել գույները: Դա կուսակցականորեն չէ: 50-ամյակին նվիրված ժողովը ավարտվեց կազմակերպված, շատերը գնացին եւ միայն 10-15 րոպե հետո խուլիգանները ներխուժեցին դահլիճ: Դահլիճում կային 300-400 արտասահմանյան զբոսաշրջիկներ, կանայք, երեխաներ. միթե կարելի էր նրանց թողնել այդտեղ: Ինչու՞ էր մեզ պետք հարվածի տակ դնել նրանց կյանքը, ում մենք հրավիրել էինք ժողովի: Ասում եք, որ ղեկավարներից ոչ մեկը դահլիճում չկար: Դա ճիշտ չէ: Այնտեղ Կենտկոմի ղեկավարության հանձնարարությամբ գնացին Կենտկոմի Նախագահության երկու անդամներ՝ Հարությունյանը եւ Քոչինյանը, եւ Կենտկոմի Նախագահության անդամության թեկնածու Մուրադյանը, որը հավաքվածների առջեւ ելույթ ունեցավ: Այնպես, որ երբեք չի կարելի կորցնել սառնասրտությունը: Մենք վարչարարական միջոցներ չկիրառեցինք, եւ գտնում եմ, ճիշտ արեցինք: Իսկ ինչ-որ մեկը դեռ ասում էր, նույնիսկ ճնշում, որ պետք էր դիմել բանակի օգնությանը: Մենք չլսեցինք եւ չգնացինք այդ քայլին: Գտնում եմ, որ ճիշտ վարվեցինք՝ ցուցաբերելով զսպվածություն եւ սառնասրտություն:

Կասկած չկա, որ Կենտկոմի պլենումը ճիշտ կհասկանա մեզ եւ հակահարված կտա չարախոս տարրերին, որոնք ցանկանում են օգտվել մեր կողմից թույլ տրված լուրջ բացթողումներից, որպեսզի վարկաբեկեն կատարված խոշոր աշխատանքը: Մեր ողջ կուսակցական կազմակերպությունը, հանրապետության ողջ աշխատավորությունը ճիշտ հասկացավ, որ մենք կատարել ենք, թեեւ դժվարին, բայց անհրաժեշտ գործ: Մեզ համար դա լուրջ քաղաքական դաս եղավ, որ մենք պարտավոր ենք հաշվի առնել հետագա աշխատանքներում:

Ես պետք է ասեմ, որ մեզ մոտ թերացումները քիչ կլինեին, եթե բոլոր ղեկավար աշխատողները, սկզբնական կուսկազմակերպությունները, յուրաքանչյուր կոմունիստ աշխատանքի իր հատվածում զգար ավելի շատ պատասխանատվություն: Մինչդեռ ամեն ինչին հարկ էր լինում հետեւել, որպեսզի նշվեր կոտորածի 50-ամյակը՝ միեւնույն ժամանակ վնաս չհասցնելով մեր երկրի արտաքին քաղաքականությանը: Քիչ չէին այն մարդիկ, ովքեր ցուցաբերեցին ավելորդ զգացմունքներ, կորցրեցին չափը, թույլ տվեցին այսպես կոչված վրիպումներ, որոնք վնաս հասցրեցին մեր ընդհանուր գործին:

Ես կբերեմ միայն մեկ օրինակ արտասահմանյան հաղորդումներից: Մի արաբ՝ մեր ռադիոհաղորդումների ունկնդիր, հարց տվեց Կոմիտասի եւ պատմական հայկական հողերի մասին, իսկ արտասահմանյան հաղորդումների բաժնի խմբագրությունում աշխատող մեր ընկերները նրան սկսեցին պատասխանել ռադիոյով: Եւ նույնիսկ անհաջող: Եւ ինչ

եք դուք կարծում: Տեղի ունեցավ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության համապատասխան վերաբերմունքը, որի ներկայացուցիչները հայտարարեցին մոտավորապես հետեւյալը. «Սիրիայում եւ Լիբանանում հայերը հանդես են գալիս Թուրքիայի դեմ, բայց մենք ուշադրություն չենք դարձնում, քանզի աշխարհում հայերին ներկայացնում է միայն Հայկական ԽՍՀ-ն: Եւ ահա ռադիոյով Հայաստանից նույնպես հակաթուրքական հաղորդումներ են սփռվում: Դա Ռադիոկոմիտեի մեր ընկերները հաշվի չէին առել: Ինչ կարիք կա ինչ-որ արաբի պատասխանել: Չէ՞ որ դա քաղաքականապես աննպատակահարմար եւ անպատասխանատու վերաբերմունք է մեր երկրի շահերի նկատմամբ ռադիոկոմիտեի աշխատակիցների կողմից:

Ընկերներ, անհրաժեշտ եմ գտնում պլենումի ուշադրությունը հրավիրել եւ այն բանի վրա, որ այստեղ առանձին ընկերներ փորձեցին ապրիլի 24-ի դեպքերը ներկայացնել մեղմ գույներով, իբր հատուկ ոչինչ չի պատահել: Դա ճիշտ չէ եւ նույնիսկ վտանգավոր է գործի համար: Պետք չէ ընկնել ոչ այս, ոչ էլ ուրիշ ծայրահեղության մեջ: Մենք՝ կուսակցական աշխատողներս, պետք է տանք սկզբունքային կուսակցական գնահատական այդ դեպքերին: Միայն այն, որ ապրիլի 24-ին հազարավոր մարդիկ փողոց դուրս եկան արտահայտելու իրենց զգացմունքները, մի կողմ թողած կուսակցական կազմակերպությունների կամքը՝ կուսակցության Կենտկոմի եւ Երեւանի քաղկոմի համար խոշոր միանուս է: Անվիճելի է եւ այն, որ այդ գործի ոգեշնչողներն ու կազմակերպիչներն ազգայնականորեն տրամադրված տարրեր էին, ովքեր խաղացին ժողավրդի զգացմունքների վրա, ստեղծեցին շանտաժ եւ քաղաքական սպեկուլյացիա հողային հարցի շուրջ: Դա նույնպես խոսում է կուսակցական եւ կոմերիտական կազմակերպությունների գաղափարադաստիարակչական աշխատանքներում լուրջ բացթողումների մասին, հատկապես սովորող երիտասարդության շրջանում: Այդ բացթողումներն առավել պարզ երեւացին այն օրերին, երբ նշում էինք այդ ծանր տարեթիվը:

Մենք պարտավոր ենք սթափ եւ առարկայնորեն գնահատել այդ ամենը եւ կատարել սկզբունքային քաղաքական հետեւություններ, մի շարք մտածված եւ իրական միջոցներ իրականացնել կուսակցական եւ պետական կարգապահության ամրապնդման, բնակչության բոլոր խավերի եւ առաջին հերթին հիմնարկությունների եւ ստեղծագործական միությունների աշխատակազմերի վրա մեր գաղափարական ազդեցության ուժեղացման ուղղությամբ:

Գտնում եմ, որ այսքանով կարելի է եզրափակել:

***Նախագահ***

Ձայնը տրվում է ընկ. Գ. Ա. Տեր-Ղազարյանցին:

***Ընկ. Գ. Ա. Տեր-Ղազարյանց***

(Կարդում է ՀԿԿ Կենտկոմի պլենումի որոշման նախագիծը)



***Ընկ. Ռ. Օհանյան***

Ինձ թվում է, որ վերնագիրը մի քիչ չի համապատասխանում առաջին կետի բովանդակությանը: Վերնագրում ասվում է անկարգությունների փաստերի մասին, իսկ առաջին կետում գրվում է. «հաստատել Կենտկոմի Նախագահության որոշումը այդ հարցի մասին»:

***Ընկ. Գ. Ա. Տեր-Ղազարյանց***

Ճիշտ է, կարելի է գրել հաղորդում անկարգությունների փաստերի մասին:

***Տեղից***

Որոշման նախագծից նացիոնալիզմ բառը կհանվի:

***Նախագահ***

Նախեւառաջ կքննարկենք Նախագահության նիստում եւ կտեղեկացնենք պլենումի անդամներին:

***Ընկ. Օհանյան***

Եթե ես կողմ եմ քվեարկում, ապա պետք է իմանամ, թե ինչին եմ կողմ քվեարկում: Ինձ համար պարզ չէ, թե ինչպես է վերախմբագրված վերջին տեքստը:

***Նախագահ***

Ընկերներ, դա պլենումում մենք չենք ծեւակերպելու: Նախագահությանը թույլ տվեք մտածել այդ մասին:

***Ընկ. Օհանյան***

Այնքանով, որ չի ծեւակերպված, ապա ինչպես կարելի է քվեարկել: Այստեղ սկզբունքային հարց է: Գրել նացիոնալիզմի մասին, թե ոչ, այդ պետք է որոշի պլենումը, այլ ոչ թե՝ Նախագահությունը:

***Ընկ. Ռ. Խաչատրյան***

Ես գտնում եմ, որ այնպիսի կարեւոր փաստաթուղթ, ինչպիսին ապրիլի 24-ի անկարգությունների մասին որոշումն է, Կենտկոմի պլենումը չի կարող հանձնարարել վերախմբագրել Նախագահությանը: Կենտկոմի յուրաքանչյուր անդամ պետք էունենա պատրաստի նյութ, միայն այդ դեպքում կարող է քվեարկել: Ես առաջարկում եմ խնդրել Կենտկոմի Նախագահությանը վերախմբագրել, հետո բաժանել Կենտկոմի անդամներին եւ դրանից հետո հաստատել այդ փաստաթուղթը. այդպես ավելի լուրջ կլինի: Ես մտցնում եմ այդպիսի առաջարկություն:

***Ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Ընկերներ, Կենտկոմի պլենումը Նախագահության որոշմանն ամբողջության մեջ հավանություն է տալիս: Այժմ 2-3 հոգի «ազգայնական տարրեր» բառերի դեմ ելույթ ունեցան. առաջարկում են, որպեսզի այդ բառերը չգրվեն: Ոչ ոք Կենտկոմի Նախագահության անդամներից շահագրգռված չէ, որպեսզի ոչ առարկայաբար գրառվի, հակառակը, մենք քննադատում ենք նրանց, ովքեր ամեն ինչում նացիոնալիզմ են տեսնում:

Սակայն, այդ անկարգությունների կազմակերպիչները ըստ ձեզ ինտերնացիոնալիստներ՞ են:

***Տեղից***

Դա խուլիգանություն է:

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Ոչ, խուլիգանները նրանց հարեցին: Դրանք ազգայնականորեն տրամադրված տարրեր են: Խոսքն առանձին մարդկանց մասին է գնում: Հաշվի առնելով ձեր դիտողությունները՝ Կենտկոմի Նախագահությունը կրկին կվերախմբագրի: Եթե առարկություններ չկան, այդ որոշումը, որը կարդացվեց, հաստատենք: Ով՞ է կողմ, որպեսզի հաստատենք այդ որոշումը:

***ընկ. Ռ. Օհանյան***

Ես ուզում եմ իմանալ ինչի համար եմ քվեարկում: Այդ պատճառով ես չեմ կարող համաձայնվել «հաստատել» բառի հետ Կենտկոմի Նախագահության որոշմանը, քանի դեռ չի եղել որոշման տեքստը:

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Այդ դեպքում մենք կվերախմբագրենք որոշումը, կբաժանենք Կենտկոմի անդամներին: Եթե նրանցից առարկություններ չստացվեն, կհամարենք ընդունված: Գուցե՞ այդպես անենք:

***ընկ. Ն. Թուխիկյան***

Ընկերներ, երբ Կենտկոմի անդամները քվեարկում են Նախագահության որոշման հաստատման օգտին, այդ նշանակում է, որ պլենումն ընդունում է Նախագահության առաջարկը: Իսկ այստեղ ընկերներն առաջարկություն մտցրեցին հանել «ազգայնական տարրեր» բառերը: Եթե մենք քվեարկում ենք, ապա պետք է համոզված լինենք՝ թողնել այդ բառերը, թե ոչ: Հակառակ դեպքում կարող են թյուրիմացություններ լինեն: Եթե ասում եք ընդունել, ապա դա նշանակում է հաստատել, իսկ հետո նշանակություն չունի՝ այդ մեզ կուղարկեք, թե ոչ:

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Ոչ մի թյուրիմացություն չի կարող լինել: Ես արդեն ասել եմ, որ որոշումը պետք է բաժանվի ձեզ, եթե դուք դիտողություններ կունենաք, ապա արեցեք, որից հետո մենք կհամարենք այն ընդունված: Եթե կլինեն սկզբունքային առարկություններ, ապա նորից կքննարկենք, իսկ եթե չեն լինի, կարելի է ընդունել: Այստեղ ոչ մի թյուրիմացություն չկա:

***ընկ. Կիրակոսյան***

Ընկերներ, մենք արդեն որոշումն ըստ էության քննարկեցինք. պլենումի անդամներն իրենց դիտողություններն արեցին: Այսօր թող քննարկի Նախագահությունը: Առավոտյան մենք նորից կհավաքվենք, եթե կլինեն սկզբունքային առարկություններ, ապա դրանք կքննարկենք եւ այդքանով կվերջացնենք:



***Նախագահ***

Գուցե պայմանավորվենք այդպես. Նախագահությանը հնարավորություն տանք վերախմբագրել տեքստը, վաղն առավոտյան ժամը 10-ին Կենտկոմի անդամները, անդամության թեկնածուները, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, կուսակցության շրջկոմների եւ քաղկոմների քարտուղարները կրկին հավաքվեն, որպեսզի քննարկեն ուղղումները: Առարկություն չկա՞: Այդ դեպքում պլենումի աշխատանքն այսօր համարենք ավարտված: Վաղը ժամը 10-ին նորից կհավաքվենք:

**ՀԿԿ Կենտկոմի 7-րդ պլենումի 3-րդ նիստ**
**30 ապրիլի 1965թ.**
**(առավոտյան)**

Նախագահում է ընկ. Յա. Ն. Զարոբյանը

***ընկ. Յա. Ն. Զարոբյան***

Ընկերներ, մենք գտնում ենք, որ երեկ 1965 թվականին հայերի կոտորածի 50-ամյակի տարեթվի անցկացման առթիվ արված տեղեկատվության աշխույժ եւ ճշմարտացի քննարկումն էր: Մենք կարդացինք Կենտկոմի Նախագահության որոշումը եւ պլենումի որոշման մեկ կետի շուրջ ստացվեցին տարբեր առաջարկներ:

Ծեծը ծագեց այն հարցի շուրջ, որտեղ ասվում է. «Դրա հետ մեկտեղ ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունն անհրաժեշտ է համարում նշել, որ կոտորածի 50-ամյակի նախապատրաստման եւ անցկացման ընթացքում ք. Երեւանում արտահայտվեցին որոշ անառողջ երեւույթներ: Առանձին ազգայնականորեն տրամադրված տարրեր, խաղալով որոշ անհասուն երիտասարդների զգացմունքների վրա, սկսեցին նրանց հրահրել անկազմակերպ գործողությունների»:

Ընկերներն առարկեցին այն բանի համար, որպեսզի գրվի «ազգայնականորեն տրամադրված տարրեր»: Կենտկոմի Նախագահությունը երեկ եւ այսօր, հաշվի առնելով պլենումի մասնակիցների դիտողությունները, վերամշակեց նախագիծը, եւ ահա մենք առաջարկում ենք այսպիսի տարբերակ. «Առանձին անձինք, խաղալով երիտասարդության որոշ անհասուն մասի ազգային զգացմունքների վրա, սկսեցին նրանց հրահրել անկազմակերպ գործողությունների»:

Ընդ որում, 4-րդ էջի 2-րդ պարբերությունում առաջարկվում է կատարել որոշ փոփոխություններ: Գրված է. «Բազմաթիվ կուսկազմակերպություններում հակաքարոզչությունը թույլ է դրված, բացակայում է հարձակողականությունը եւ նպատակասլացությունը նացիոնալիզմի առանձին արտահայտությունների հետ պայքարում, տեղի ունի արտասահմա-

յան բուրժուական քարոզչության կողմից անառողջ տրամադրություններ ի շիկացման վտանգի չարդարացված թերագնահատում»:

Այժմ առաջարկվում է այսպիսի տարբերակ. «Որոշ կուսկազմակերպություններում թույլ է հակաքարոզչությունը, բացակայում է ազգայնական տրամադրությունների առանձին արտահայտությունների հետ պայքարում հարձակողականությունը, տեղի ունի բուրժուական գաղափարախոսության ներթափանցման վտանգի թերագնահատում»:

Նախագահության որոշումը նորի՞ց կարդալ:

*Տեղերից*

Այո:

*Ընկ. Յա. Զարոբյանց*

Այդ դեպքում կարդամ (կարդում է Կենտկոմի Նախագահության որոշման նախագիծը):

*Նախագահ*

Ինչպի՞սի հարցեր կան:

*Ընկ. Կարինյանց*

Այսօր մենք հավաքվեցինք, լսեցինք Կենտկոմի Նախագահության որոշումը: Չնայած այն բանին, որ ընկ. Զարոբյանը երեկ պարզաբանեց, որ որոշման նախագիծն ուղարկված է եւ պլենումի յուրաքանչյուր անդամ կարող է ուղարկել իր առաջարկությունները, այդուհանդերձ այստեղ առանձին բացակայող քաղաքացիներ երեկ չէին համաձայնվում դրա հետ եւ պահանջում էին որոշման նախագծից հանել ազգայնական տարրերի մասին հիշատակությունը:

Կենտկոմի Նախագահությունը, մեր կուսակցության ղեկավարները ապրիլի 24-ի դեպքերի ժամանակ ցուցաբերեցին մեծ կամք: Չնայած այն բանին, որ բացարձակապես պարզ է, որ այդ ամենը նախօրոք կազմակերպված էր, մի քանիսը փորձում են փոքրացնել, հարթել այդ «դեպքերի» վտանգավորությունը եւ անթույլատրելիությունը: Երթին մասնակցեցին ոչ միայն երիտասարդություը, այլեւ տարեց մարդիկ: Ես անձամբ այնտեղ չեմ եղել, բայցասումէին եւ պատմում, որ այդ ամենը կրել է կազմակերպված բնույթ: Բայց ի՞նչ է դա, ինչո՞վ բացատրել, ինչու՞ այդ ամենը տեղի ունեցավ: Կենտկոմի Նախագահության որոշման մեջ ճիշտ է ասվում, որ դա գաղափարական ճակատի աշխատողների թույլ աշխատանքի արդյունք է: Մի շարք ընկերներ, որոնց թվում եւ այստեղ ներկա գտնվող ձեր խոնարհ ծառան (աղմուկ դահլիճում) անհրաժեշտ է գտնում ասել, որ ըստ երեւույթին մեր կողմից ազգայնական տրամադրությունների դեմ պայքարն այնքան էլ ուժեղ չի մղվել: Հարկավոր է անպայման դատապարտել եւ ցույցերի կազմակերպիչներին: Եթե մենք չդատապարտենք, ապա միեւնույն է այդ հայտնի կլինի: Երթին մասնակցել է ժողովրդի հոծ զանգված: Կարծում եմ, որ անհրաժեշտ է մշակութային-լուսավորչական ճակատի բոլոր աշխատողներին մեծ ուշադրություն դարձնել



դաստիարակչական-գաղափարախոսական աշխատանքին լենինյան ուսմունքի եւ լենինյան պատգամների լույսի ներքո: Երթը զբաղեցրել է մեծ հրապարակ, այն կարող էին տեսնել նաեւ ուրիշ քաղաքներից եկածները:

*Ընկ. Յա. Զարոբյանց*

Մենք ինքներս մանրամասն տեղեկացրել ենք:

*Ընկ. Կարինյանց*

Այնտեղ, ախր, պետք է քննարկեն, թե ինչպես այդ պատահեց: Հզոր Խորհրդային Հայաստանը, որը ծաղկում է, իրապես վերածնվել է, ընդունել հսկայական քանակի հայրենադարձների, ընդունել ոչ թե նրա համար, որ պարտավոր է ընդունել (աղմուկ դահլիճում) եւ ահա նման երթ: Խորհրդային հայ ժողովուրդը 40 տարի կառուցել է գործարաններ, ֆաբրիկաներ, իր զավակներին ուղարկել պատերազմի եւ այդ ամենը նվաճել է, իսկ հիմա ինչ-որ մեկը իր անմիտ գործողություններով (աղմուկ դահլիճում) ստեղծում է անթույլատրելի եւ հստակ անկարգ պատկեր:

Ես գտնում եմ, որ գաղափարախոսական աշխատանքում հարկավոր է այդ ամենը հաշվի առնել եւ այսուհետ մեզ բոլորիս ավելի շատ ուշադրություն դարձնել գաղափարական ավելի հստակ աշխատանքին:

Ես կարծում եմ, որ Կենտկոմը ճիշտ որոշեց 1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակին կոթող կանգնեցնել, բայց միեւնույն ժամանակ հարկավոր է մտածել եւ ուսուցիչ-բոլշեւիկ-մայիսյան ապստամբության հերոս Սարուխանյանի մասին, ում սպանեցին դաշնակները, հարկավոր է նշել նաեւ հեղափոխության զոհեր՝ Տաթեւում սպանված հերոս-հեղափոխականների հիշատակը (աղմուկ դահլիճում) եւ ուժեղացնել հակախորհրդային հոսանքների եւ տարբեր տեսքի նացիոնալիզմի դեմ պայքարը: Մեր բոլոր բանվորները, ողջ աշխատավոր մտավորականությունը, ողջ կուսակցական հասարակայնությունը վրդովված է այն անձանց պահվածքից, ովքեր կազմակերպեցին այդ բացահայտորեն անթույլատրելի ցույցը:

Ես կարծում եմ, որ գաղափարախոսական ճակատի մեր բոլոր աշխատողներին ավելի աշխույժ պայքարեն առանձին բուրժուաազգայնական տարրերի դեմ:

*Նախագահ*

Ձայնը տրվում է ընկ. Իկիլիկյանին:

*Ընկ. Իկիլիկյան*

Ընկերներ, երեկ մենք ըստ էության սահմանափակեցինք ելույթները, մեկ կետում մենք չհամաձայնվեցինք Նախագահության ընդունած միջոցառումների հետ: Դրա համար պլենումը հանձնարարեց Նախագահությանը վերանայել այդ կետը եւ ներկայացնել պլենումին: Ինձ թվում է, որ Նախագահության անունից այստեղ ընթերցված ձեւակերպումն ընդունելի է: Դրա համար ես առաջարկում եմ այլեւս չխոսել, այլ քննարկել Նախագահության որոշման հաստատման մասին առաջարկությունը:

***Նախագահ***

Կան մի քանի ընկերներ, ովքեր ուզում են ելույթ ունենալ, իսկ ընկ. Իկլիկյանն առաջարկեց ամբողջությամբ հաստատել Նախագահության որոշումը:

Ո՞վ է կողմ, որպեսզի շարունակվեն քննարկումները:

***Տեղից***

Դադարեցնել:

***ընկ. Յա. Զարոբյանց***

Այդ դեպքում քննարկենք:

***ընկ. Մուսախանյանց***

Ես կցանկանայի մի քանի խոսք ասել որոշվող մասի վերաբերյալ:

***ընկ. Յա. Զարոբյանց***

Խնդրեմ:

***ընկ. Մուսախանյանց***

Որոշվող մասից առաջ ասվում է, որ բացահայտվել են երթի ակտիվ մասնակիցները եւ նրանց դեմ քրեական գործեր են հարուցված: Ես հայտարարում եմ, որ ոչ մի գործ չի հարուցված, իսկ այն անձինք, ովքեր ձերբակալված են, ձերբակալված են խուլիգանության համար, իսկ այդ չի կարելի քրեական գործ համարել:

***Նախագահ***

Առարկություններ չկա՞ն, որպեսզի որոշման նախագծից հանվի այդ հատվածը:

***Տեղից***

Ոչ:

***Նախագահ***

Հանում ենք: Խոսք ունի ընկ. Գ. Տեր-Գրիգորյանը:

***ընկ. Գ. Տեր-Գրիգորյանց***

Ընկերներ, ես առաջարկություն եմ մտցնում՝ կատարել հետեւյալ փոփոխությունը. այն հատվածը, որտեղ խոսվում է նացիոնալիզմի մասին, հարկավոր է բացարձակապես հանել եւ որոշման մեջ թողնել միայն այն, ինչ գրված է դրանից հետո: Դրա մասին հարկ չկա գրել: Գրել այդ մասին, դա նշանակում է սեւ բիծ թողնել հայկական կուսակցական կազմակերպության վրա: Ես գտնում եմ, որ դա պետք է վերանայել:

***ընկ. Յա. Զարոբյանց***

Պարզ է: Ընկ. Տեր-Գրիգորյանը առաջարկում է հանել այն պարբերությունը, որը մենք վերախմբագրեցինք պլենումի հանձնարարությամբ:

***Տեղից***

Ճիշտ է:

***Նախագահ***

Խոսք ունի ընկ. Գալստյանը:



***ընկ. Գալստյանց***

Ես ուզում եմ երկու հարց տալ: Առաջին հարցը՝ այստեղ մեղադրում են կուսակցության քաղաքային կոմիտեին: Ես քաղաքային կոմիտեի անդամ եմ եւ ուզում եմ իմանալ՝ եղել է Կենտկոմի որեւէ հրահանգ, որը քաղաքային կոմիտեն պատվով եւ ճշտությամբ չի կատարել:

Երկրորդ հարցը՝ ես այնուամենայնիվ չհասկացա, եթե այդ երթը որեւէ մեկի կողմից կազմակերպված չէր, ապա դա ի՞նչ էր:

***Նախագահ***

Ես գտնում եմ, որ հարցը պարզ է: Խոսքը տրվում է ընկ. Հովակիմյանին:

***ընկ. Հովակիմյանց***

Ես առաջարկում եմ դադարեցնել քննարկումները, վերջ տալ նախագծում բոլոր ուղղումներին եւ անցնել որոշման քննարկմանը:

***Նախագահ***

Առաջարկ է ստացվել պլենում ներկայացված Կենտկոմի Նախագահության որոշումը հաստատվի: Ո՞վ է կողմ, որպեսզի Կենտկոմի Նախագահության որոշումը հաստատվի, խնդրում եմ ձեռք բարձրացնի:

Թողեք: Դեմ՝ չկա: Ձեռնպահ՝ չկա:

Այժմ ես կկարդամ պլենումի որոշման նախագիծը այդ հարցի շուրջ (կարդում է): Որեւէ դիտողություն կա՞: Խոսք ունի ընկ. Դովլաթյանը:

***ընկ. Դովլաթյանց***

Ես արդեն ասել եմ եւ կրկնում եմ, ինչ այստեղ երեկ ասել եմ. Կենտկոմի միջոցառումները հաստատել իմաստ չունի երկու պատճառով: Այն պատճառով, որ այդ միջոցառումները, ինչպես դուք ինքներդ տեսաք եւ ինչպես գրված է Կենտկոմի Նախագահության որոշման մեջ, միջոցառումների անցկացման ժամանակ թույլ են տրվել լուրջ բացթողումներ, ինչը եւ տվեց վատ արդյունքներ: Երկրորդ, այդ արդեն անցել է, ի՞նչ իմաստ ունի հետին թվով հաստատել այդ միջոցառումները:Դրա համար ես գտնում եմ, որ այդ հարկավոր չէ մտցնել բանաձեւի մեջ:

***ընկ. Յա. Զարոբյանց***

Ընկերներ, մենք երկու օր է քննարկում ենք, չէ՞ որ պլենումը պարտավոր է այդ կարեւոր հարցի շուրջ իր վերաբերմունքն արտահայտի: Մենք պետք է ոչ թե միջոցառումները հաստատենք, այլ մեր վերաբերմունքը ցույց տանք:

***ընկ. Հովսեփյանց***

Առաջարկում եմ հաստատել Կենտրոնական Կոմիտեի մտցրած նախագիծը: Խնդրում եմ քվեարկության դնել:

***Նախագահ***

Թույլ տվեք քվեարկել: Ո՞վ է կողմ, որպեսզի ընդունվի այդ որոշումը, թող ձեռք բարձրացնի: Դեմ չկա, ձեռնպահ չկա: Ընկ. Դովլաթյանը ձեռնպահ է:

Թույլ տվեք սրանով ավարտել պլենումի աշխատանքը:

ՀԿԿ Կենտկոմի Հատուկ սեկտորի վարիչ
*Խ. Խաչխայան*
[ստորագրություն]

***Գաղտնի***

**ՀԿԿ Կենտկոմի Նախագահության 1965թ. ապրիլի 28-ի «1965թ. ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին» որոշման մասին**

**ՀԿԿ Կենտկոմի 7-րդ պլենումի որոշումը**
**29 ապրիլի 1965թ.**

Լսելով եւ քննարկելով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Յա. Ն. Զարոբյանի հաղորդումը 1965 թվականի ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին, ՀԿԿ Կենտկոմի Պլենումը որոշում է.

Հաստատել հայերի կոտորածի 50-ամյակի կապակցությամբ անցկացված ՀԿԿ Կենտկոմի Նախագահության միջոցառումները եւ ՀԿԿ Կենտկոմի Նախագահության ապրիլի 28-ի «1965թ. ապրիլի 24-ին Երեւանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին» որոշումը:

Հանձնարարել Կենտկոմի Նախագահությանը մշակել եւ իրականացնել միջոցառումներ աշխատավորության, հատկապես երիտասարդության շրջանում գաղափարաքաղաքական, դաստիարակչական աշխատանքի հետագա արմատական ուժեղացման ուղղությամբ, ինչպես նաեւ բարելավել հանրապետության վարչական մարմինների աշխատանքը:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
***Յա. Զարոբյան***

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 2, թթ. 31-63, 71; գ. 4, թթ. 34-49, 61-64:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:



**Թ Ի Վ 24**
**[Տեղեկանք կադրերի վերաբերյալ]**

**ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**Ղեկավար կադրերի ընտրության, բաշխման եւ դաստիարակման ուղղությամբ ՀԿԿ Կենտկոմի աշխատանքի վերաբերյալ**

**[Քաղվածք]**

... Գաղափարական աշխատանքում անբավարար են հաշվի առնվում հանրապետության առանձնահատկությունները՝ արտասահմանում իրենց քաղաքական կյանքով հայկական գաղթավայրերի առկայությունը, հայրենադարձության գործոնը եւ գաղափական աշխատանքում հատուկ երանգներ մտցնող ուրիշ հանգամանքներ:

Բուրժուական գաղափարախոսական ներթափանցման հետ պայքարը, ճշմարտացի եւ օպերատիվ հակաքարոզչությունը կուսակցական մարմինների, հանրապետության գաղափարական ճակատի բոլոր աշխատողների կարեւր խնդիրն է հանդիսանում:

Սակայն, կուսակցական մարմինները, ղեկավար կուսակցական, խորհրդային աշխատողները, հանրապետական մամուլը եւ ռադիոն միշտ չեն հաշվի առնում այդ աշխատանքի առանձնահատկությունները:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի կողմից հանրապետության որոշ ստեղծագործական Միությունների վրա անբավարար հսկողության եւ ազդեցության արդյունքում վերջին ժամանակներս ստեղծագործական մտավորականության մի մասի (Գրողների Միություն, Ճարտապետների Միություն) շրջանում նկատվում են անառողջ տրամադրություններ, իսկ տպագիր օրգանների (հատկապես «Գրական թերթ» եւ «Սովետական գրականություն») էջերում սկսեցին թափանցել աշխատավորության ճշմարիտ դաստիարակությանը չնպաստող առանձին նյութեր:

Սուլթանական Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածների 50-ամյակի կապակցությամբ ապրիլի 24-ին երիտասարդության մի մասի փողոց դուրս գալը վկայում է ուսանող երիտասարդության վրա բուհերի եւ տեխնիկումների կուսակցական կազմակերպությունների, ռեկտորների եւ տնօրենների թույլ ազդեցության եւ աշխատավորության ու հատկապես երիտասարդության շրջանում դաստիարակչական աշխատանքում լուրջ թերացումների մասին:

Որոշ բուհերի՝ հատկապես Երեւանի Պետհամալսարանի, կուսակցական կազմակերպություններ բացարձակապես անբավարար են զբաղվում ուսանողության քաղաքական դաստիարակության գծով պրո-

ֆեսորա-դասախոսական կազմի պատասխանատվության բարձրացման հարցերով, անսկզբունքային են վերաբերվում այն դասախոսներին, ովքեր իրենց ոչ ճիշտ պահվածքով փաստացիորեն նպաստում են ուսանողության մի մասի շրջանում անառողջ տրամադրություններին:

Որոշ կուսկազմակերպություններում թույլ է դրված հակաքարոզչությունը, բացակայում է ազգայնական տրամադրությունների առանձին արտահայտությունների հետ պայքարում հարձակողականությունը, տեղի է ունենում բուրժուական գաղափարախոսության ներթափանցման վտանգի թերագնահատում, գաղափարապես վտանգավոր հայացքներ քարոզող անձանց սկզբունքային հակահարված չի տրվում, խորը կուսակցական դիրքերից չի բացատրվում արդիականության հրատապ եւ սուր հարցերը:

11. Երիտասարդության (հատկապես սովորող երտասարդության) գաղափարա-քաղաքական դաստիարակության լուրջ թերացումների եւ խնդիրների կապակցությամբ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Նախագահությունը անհրաժեշտ է համարում մշակել լայն միջոցառումներ հանրապետության կոմերիտմիությանը իրական օգնության ցուցաբերման ուղղությամբ՝ երիտասարդության շրջանում գաղափարական աշխատանքի արմատական բարելավման մեջ, քննարկել եւ վճռել երիտասարդության աշխատանքի տեղավորման եւ ժամանցի կազմակերպման հետ կապված հարցերը:

12. Մշակել եւ իրականացնել կոնկրետ միջոցառումներ մամուլի, ռադիոյի եւ հեռուստատեսության օրգանների, գաղափարական հիմնարկների եւ կազմակերպությունների գործունեության հետագա բարելավման ուղղությամբ, մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներին, կոմունիզմի իդեալներին, խորհրդային հայրենասիրությանը, պլորետարական ինտերնացիոնալիզմին եւ ժողովուրդների լենինյան բարեկամությանը նվիրվածության ոգով ղեկավար կադրերի դաստիարակության գործում նրանց դերի բարձրացման ուղղությամբ:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
***Յա. Զարոբյան*** [ստորագրություն]

26 մայիսի 1965թ.

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 41, թթ. 97, 119, 120, 123:
Թարգմանություն ռուսերենից: Մեքենագիր օրինակ:



## Թ Ի Վ 25
## [Յա. Զարոբյանի եւ Ա. Քոչինյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին հայրենադարձության վերաբերյալ]

### ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ
### ԽՍՀՄ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ԽՍՀՄ Նախարարների Խորհուրդը 1961թ. օգոստոսի 12-ի թիվ 731-307 որոշմամբ ՀԽՍՀ Նախարարների Խորհրդին թույատրեց 1961-1965թթ. Միացյալ Արաբական Հանրապետությունից[1], Սիրիայից, Իրանից, Կիպրոսից, Լիբանանից եւ արտասահմանյան այլ երկրներից կազմակերպել հայերի վերադարձ հայրենիք ընդհանուր քանակով մինչեւ 40 հազար հոգի:

Արտասահմանից հայերի զանգվածային ընդունումը սկսվեց 1962թ.: Երեք տարվա ընթացքում հանրապետություն հայրենադարձվեց եւ աշխատանքով ապահովվեց 4200 մարդ: Հայրենադարձության այդպիսի ոչ մեծ ծավալը բացատրվում է նրանով, որ հանրապետությունը հայրենադարձներին ընդունում է նրանց բնակարանով եւ աշխատանքով ապահովման հնարավորությանը համապատասխան:

Մինչդեռ, սկսված հայրենադարձությունը էլ ավելի ուժեղացրեց սփյուռքահայերի ձգտումը դեպի իրենց հայրենիք Խորհրդային Հայաստանը:

Հաշվի առնելով հայերի հայրենադարձությունից քաղաքական մեծ օգուտը, ՀԿԿ Կենտկոմը եւ ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը խնդրում են թույլատրել համաձայն 1961թ. օգոստոսի 10-ի ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի որոշման շարունակել արտասահմանյան երկրներից հայերի հայրենադարձությունը եւ հետագա տարիներին մինչեւ վերոնշյալ որոշմամբ նախատեսված 40 հազար մարդու չափաբաժնի:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
***Յա. Զարոբյան***
Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհուրդի նախագահ
***Ա. Քոչինյան***

9 հոկտեմբերի 1965թ.
թիվ 21/գ

ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 42, թ. 79:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

---

[1] Եգիպտոս:

## Թ Ի Վ 26

**[ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի որոշումը հայրենադարձության վերաբերյալ]**

*Գաղտնի*

**ԽՍՀՄ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**
**Որոշում**
**9 օգոստոսի 1966թ., թիվ 624 - 199**
**Մոսկվա, Կրեմլ**

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՑ ԽՍՀՄ ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Նախարարների Խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդին թույլատրել 1966-1970թթ. արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ հայերի հայրենադարձության աշխատանքներ իրականացնել: Հայրենադարձությունը կատարել միայն հայ ազգության օտարերկրյա քաղաքացիների անհատական ընտրության, այն երկրների քաղաքական իրադրության հաշվի առնելով, որտեղից իրականացվում է հայրենադարձությունը, ինչպես նաեւ հանրապետությունում նրանց աշխատանքի տեղավորման եւ բնակարանով ապահովման համապատասխան պայմանների առկայության հիման վրա:

1966-1970թթ. համար արտասահմանից ԽՍՀՄ հայրենադարձվող հայերի թվաքանակը հաստատել ամեն տարի մինչեւ 1000 մարդ:

2. Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդին.

ա) ընդունել անհրաժեշտ միջոցներ արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ մշտական բնակության տեղափոխվել ցանկություն հայտնած հայ ազգության օտարերկրյա քաղաքացիների ընտրության բարելավման, ընդ որում թույլ չտալ, որպես կանոն, անաշխատունակ տարրերի, ինչպես նաև արտասահմանում ծնողներին եւ երեխաներին թողող անձանց ԽՍՀՄ մուտքը,

բ) արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ հայրենադարձվողների համար նրանց զբաղմունքի եւ մասնագիտության հաշվի առմամբ նախօրոք բնակարան եւ աշխատանքային տեղեր պատրաստել:

3. Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդին թույլատրել.

ա) ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարարության հետ համաձայնությամբ 1966-1970թթ. իրենց ներկայացուցիչներին ուղարկել համապատասխան արտասահմանյան երկրներ արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ հայերի հայրենադարձության աշխատանքների կազմակերպման համար,



բ) 1966թ. արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ հայերի հայրենադարձության ծախսերը հաշվարկել հանրապետության բյուջեյի միջոցների հաշվին:

4. Արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ 1966-1970թթ. հայրենադարձվող հայերի վրա տարածել ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի 1961թ. օգոստոսի 12-ի թ. 731-307 որոշմամբ նախատեսված արտոնությունները:

ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի Նախագահ
*Ա. Կոսիգին*
ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի Գործերի կառավարիչի տեղակալ
*Կ. Սելիվանով*

ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65, թթ. 40-41:
Թարգմանություն ռուսերենից: Մեքենագիր օրինակ:

## Թ Ի Վ 27

**[ՀԿԿ Կենտկոմի եւ Նախարարների Խորհրդի որոշումը հայրենադարձության վերաբերյալ]**

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 31**
**ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի եւ**
**ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նիստի**
**8 սեպտեմբեր 1966**

**Կետ 2. Արտասահմանից ՀԽՍՀ 1966-1970թթ. հայերի հայրենադարձման միջոցառումների մասին**

(ընկ. Ս. Վարդանյան)

Արտահայտվեցին՝ ընկերներ Գ.Տեր-Ղազարյանցը, Բ.Մուրադյանը, Ա. Քոչինյանը

«Արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ հայերի հայրենադարձության մասին» ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի 1966թ. օգոստոսի 9-ի որոշման համապատասխան ՀԿԿ Կենտկոմը եւ ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը որոշում են.

1. Հաստատել 1966-1970թթ. համար արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ հայրենադարձվող հայերի թվաքանակը 1000 հոգի ամեն տարի:

2. ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդին կից արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեին պարտավորեցնել.

ա) Հայրենադարձությունը իրականացնել միայն հայազգի արտասահմանյան քաղաքացիների անհատական ընտրության հիման վրա՝ հաշվի առնելով այն երկրների քաղաքական իրավիճակը, որտեղից հայրենադարձությունը կատարվում է:

Հայրենադարձության իրականացման դեպքում թույլ չտալ, որպես կանոն, անաշխատ տարրերի, ինչպես նաեւ արտասահմանում ծնողներին եւ երեխաներին թողացող անձանց մուտքը ԽՍՀՄ:

բ) 1966-1970թթ. արտասահմանից վերադարձող հայերին տեղավորել հիմնականում Լենինական, Կիրովական, Աբովյան, Հրազդան, Լուսավան, Իջեւան քաղաքներում եւ Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Թալինի, Վեդիի եւ Աշտարակի շրջանների խորհրտնտեսություններում եւ նրանց աշխատանքի տեղավորել նշյալ վայրերի գործող, ինչպես նաեւ կառուցվող ձեռնարկություններում եւ խորհրտնտեսություններում ըստ զբաղմունքի ու մասնագիտության:

3. Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեին հանձնարարել միջոցառումներ մշակել արտասահմանից վերադարձող հայերին բնակարանով եւ նրանց զբաղմունքի ու մասնագիտության հաշվի առմամբ աշխատանքի համապատասխան տեղերով ապահովման համար:

4. Հանձնարարել ՀԽՍՀ Նախարարների խորհրդի Պետպլանին (ընկ. Լ. Խաչատրյանին) բաշխման տարեկան պլաններում նախատեսել յուրաքանչյուր բնակելի կետի համար բնակտարածք արտասահմանից վերադարձող հայերի տեղաբաշխման համար՝ համաձայն Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեի հայցի:

5. Պարտավորեցնել ՀԽՍՀ ֆինանսների նախարարությանը (ընկ. Ա. Շեկոյանին) Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեի հետ համատեղ ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդ ներկայացնել արտասահմանից վերադարձող հայերի տեղափոխման եւ ընդունման ծախսերի հաշվարկը, ինչպես նաեւ 1966թ. համար արտասահմանյան երկրներ ներկայացուցիչների գործուղման ծախսերը: 1966թ. այդ նպատակների համար ծախսերը կատարել հանրապետության բյուջեի հաշվին: Սկսած 1967թ. ՀԽՍՀ բյուջեում նախատեսել վերոնշյալ նպատակների համար անհրաժեշտ դրամական միջոցներ:

6. Հանձնարարել Առեւտրի նախարարությանը (ընկ. Լ.Վարդանյանին), Առողջապահության նախարարությանը (ընկ. Զ. Նարիմանովին) եւ Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեին կազմակերպել Բաթումի քաղաքում եւ երթուղում մինչեւ տեղ հասնելը արտասահմանից Հայրենիք վերադարձող հայերի սնունդը եւ բժշկական սպասարկումը:

7. Հանձնարարել մշակույթի նախարարությանը (ընկ. Հովի. Բաղդասարյանին) կազմակերպել Արտասահմանից Հայրենիք վերադարձող



հայերի մշակութային-զանգվածային սպասարկումը նրանց Բաթումիում մնալու ընթացքում:

8. Պարտավորեցնել հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարությունների, կազմակերպությունների, խորհրտնտեսությունների եւ հիմնարկությունների ղեկավարներին Հայրենիք վերադարձող հայերին աշխատանքի եւ արտադրական ուսուցման ընդունել Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեի ուղեգրով:

9. Պարտավորեցնել ՀԿԿ քաղաքային կոմիտեներին եւ աշխատավորների պատգամավորների քաղաքային ու շրջանային Խորհուրդների գործկոմներին Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեին ցույց տալ աջակցություն եւ ամենայն օգնություն, ժամանակին ընդունել հայրենակիցների բնակարանային-կենցաղային եւ աշխատանքային տեղավորման բոլոր միջոցները, նրանց կարիքներին եւ հարցումներին ցուցաբերել առավելագույն ուշադրություն:

10. Պարտավորեցնել ՀԿԿ քաղաքային եւ շրջանային կոմիտեներին, սկզբնական կուսակցական կազմակերպություններին, Հայաստանի Արեւմիությունների Խորհրդին, Հայաստանի Կոմերիտմիության Կենտկոմին եւ Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտեին միջոցներ ձեռնարկել հայրենադարձների շրջանում քաղաքական եւ զանգվածային-բացատրական աշխատանքների կազմակերպման, նրանց մարքս-լենինյան գաղափարախոսության ոգով դաստիարակության, կոմունիստական շինարարության տարբեր ոլորտներում նրանց աշխույժ գործունեության կապելու ուղղությամբ:

11. Ի ղեկավարություն ընդունել, որ ԽՍՀՄ Նախարարների Խորհուրդը նշված որոշմամբ 1966-1970թթ. արտասահմանից Հայրենիք՝ Հայկական ԽՍՀ, վերադարձող հայերի վրա տարածել է ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի 1961թ. օգոստոսի 12-ի թիվ 731-307 որոշմամբ նախատեսված արտոնությունները:

ՀԿԿ կենտկոմի քարտուղար
*Ա. Քոչինյան* [ստորագրություն]
ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի Նախագահ
*Բ. Մուրադյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1. ց. 46, գ. 48, թթ. 4-5:
Թարգմանություն ռուսերենից: Պատճեն: Մեքենագիր:

## Թ Ի Վ 28

## [Ա. Քոչինյանի եւ Բ. Մուրադյան նամակը ԽՄԿԿ Կենտկոմին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին]

### ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ

ԽՄԿԿ Կենտկոմի Քարտուղարության հանձնարարությանը համապատասխան քննարկվել է ԽՄԿԿ 23-րդ համագումարին Հայկական ԽՍՀ գիտության եւ մշակույթի գործիչների խմբի հասցեագրած նամակը:

Նամակում դրվում է Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի ԻԽՍՀ-ի վերադարձի հարցը: Նամակի հեղինակները հղում են կատարում պատմական փաստերի վրա եւ իրենց առաջարկությունը հիմնավորում տնտեսական, քաղաքական եւ էթնիկ գործոններով:

Նամակում մատնանշվում է հանրահայտ պատմական փաստն այն մասին, որ 46 տարի սրանից առաջ Ադրբեջանական ԽՍՀ-ի կառավարությունը հրապարակել է հռչակագիր այդ տարածքները Հայկական ԽՍՀ-ի անբաժան մասեր ճանաչման մասին: Սակայն, դրանց փաստացի միավորումը ձգձգվեց:

Հեղինակների կարծիքով Հայկական ԽՍՀ-ին վերոնշյալ հողերի վերադարձը կնպաստի ժողովուրդների միջեւ եղբայրության եւ բարեկամության հետագա ամրապնդմանը, կրկին անգամ ցուցադրելով լենինյան ազգային քաղաքականության հաղթահանդեսը:

Հայկական ԽՍՀ գիտության եւ մշակույթի գործիչների խմբի կողմից բարձրացված հարցերը առաջին անգամ չէ որ հարցադրվում են: Բազմաթիվ համանման դիմումներով եւ նամակներով ԽՄԿԿ Կենտկոմին եւ ՀԿԿ Կենտկոմին, հատկապես վերջին տարիների ընթացքում, դիմել են գիտնականների, ստեղծագործական աշխատողների մեծ խմբեր, մտավորականության, բանվորների, գյուղատնտեսության աշխատողների, ուսանողության եւ այլոց ներկայացուցիչներ: Այդ հարցերի առաջ քաշումը լայն արձագանք եւ հավանություն ստացավ հանրապետության հասարակայնության շրջանում: Բաժանելով նման տրամադրություններ, Հայկական ԽՍՀ-ի բնակչության գերակշիռ մասը թե գրավոր եւ թե բանավոր ձեւով աշխուժորեն դնում է Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հարցը:

Դրան հարկավոր է ավելացնել, որ նման տրամադրություններ լայնորեն տարածված են եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի բնակչության շրջանում, ինչի մասին վկայում են ԼՂԻՄ-ի աշխատավորության տարբեր խմբերից ՀԿԿ Կենտկոմում ստացվող բազմաթիվ նամակները:



Ուշադիր ուսումնասիրելով այդ հարցերի բոլոր կողմերը եւ վերլուծելով հանրապետությունում այժմ ձեւավորված իրավիճակը անհրաժեշտ ենք համարում ԽՄԿԿ Կենտկոմին զեկուցել հետեւյալի մասին:

Հայ ժողովրդի համար, ինչպես եւ ուրիշ ժողովուրդների համար, տարածքային հարցերը միշտ կենսական կարեւոր նշանակություն են ունեցել: Նրա համար մեծագույն ազգային ողբերգություն էր Հայաստանի արեւմտյան մարզերի բնազավթումը Թուրքիայի կողմից, որը կազմում էր Հայաստանի տարածքի 2/3-ը, որը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ուղեկցվում էր մեկ ու կես միլիոն հայերի զանգվածային բնաջնջմամբ: Հենց դրանով է հարկավոր բացատրել հանրապետության բնակչության ցավագին վերաբերմունքը թուրքական դիվանագիտության նենգության հանդեպ, որ փորձում է խեղաթյուրել պատմությունը եւ ձերբազատվել ցեղասպանության եւ հայկական հողերի բռնազավթման համար պատասխանատվությունից:

Երկարատեւ ժամանակի ընթացքում Հայաստանի Կոմկուսը վարում է խոշոր բացատրական աշխատանք ժողովրդի շրջանում, պարզաբանելով մեր կուսակցության եւ կառավարության արտաքին քաղաքականությունը՝ ուղղված պետությունների միջեւ խաղաղ համագոյակցության եւ ժողովուրդների միջեւ բարեկամության սկզբունքի կյանքում իրագործմանը:

Աշխատավորության տրամադրությունը վկայում է նրա կողմից Խորհրդային Կառավարության եւ Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի վարած արտաքին քաղաքականության ճշմարտացիության եւ իմաստության ընկալման մասին:

Սակայն, եթե Թուրքիայի կողմից խլված տարածքների մասին ներկայումս հարցադրման աննպատակահարմարության մասին փաստարկները ժողովրդի կողմից ընկալվում է ըմբռնմամբ, ապա Հայկական ԽՍՀ-ին Ղարաբաղի եւ Նախիջեւանի վերադարձման հետ կապված հարցերի առումով մենք լուրջ դժվարություններ ենք զգում:

Բանը նրանում է, որ իրականում Լեռնային Ղարբաղի եւ Նախիջեւանի պատկանելիությունը անցյալում ոչ ոքի կողմից կասկածի տակ չի դրվել: Միայն 1918-1920թթ. Հայաստանի եւ Ադրբեջանի բուրժուական պետությունների կազմավորման ժամանակաշրջանում եւ նրանցում դաշնակների ու մուսավաթիստների ազգայնական կուսակցությունների տիրապետության, Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի հողերը Արեւմուտքի կայսերապաշտական տերությունների եւ Թուրքիայի հետադիմական կառավարող շրջանակների սադրանքների առարկա դարձան:

Ադրբեջանում եւ Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումից հետո այդ արհեստականորեն ստեղծված տարածքային հարցի արդարացի լուծման համար իրական պայմաններ եւ հնարավորու-

թյուններ առաջացան եւ այդ ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկվեցին:

Իսկապես, 1920թ. դեկտեմբերի 1-ին, այսինքն Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումից մեկ օր հետո, Բաքվի Խորհրդի հանդիսավոր նիստում, ողջունելով Հայաստանում Խորհրդային իշխանության հաղթանակը, Ադրբեջանական հեղկոմի նախագահ, անվանի հեղափոխական գործիչ ընկ. Ն. Նարիմանովը հրապարակեց Խորհրդային Ադրբեջանի Կառավարության Հռչակագիրը. «Մուսավաթի եւ դաշնակների Անտանտին ծախված կառավարությունները ժողովուրդներին վերածեցին վերջիններիս ձեռքին կույր գործիքի եւ իրենց կայսերապաշտական բաղձանքներում թունավորում էին մեկ ժողովրդին մյուսի դեմ, ստեղծելով Ղարաբաղյան, Զանգեզուրյան, Նախիջեւանյան եւ ուրիշ տարածքային վեճեր, որոնք չէին կարող լուծվել դաշնակ-մուսավաթիստական հետադիմության ջանքերով:

Խորհրդային Ադրբեջանը .... հայտարարում է, որ այսուհետեւ տարածքային հարցերը չեն կարող պատճառ դառնալ երկու դարավոր հարեւան ժողովուրդների՝ հայերի եւ մահմեդականների, փոխադարձ արյունահեղության, Զանգեզուրի եւ Նախիջեւանի գավառների տարածքները հանդիսանում են Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը ընձեռվում է ինքնորոշման լրիվ իրավունք.....» («Կոմունիստ» թերթ, Ադրբեջանական բոլշեւիկների Կոմունիստական կուսակցության Կենտրոնական եւ Բաքվի Կոմիտեների պաշտոնաթերթ, 2 դեկտեմբերի 1920, թիվ 178):

Այդ նիստում ընդունված բանաձեւում նշվում է. «Բաքվի Խորհրդի, Ադրհեղկոմի հանդիսավոր նիստը ողջ բանվորության եւ Կարմիր բանակային կազմակերպությունների հետ, անկեղծ պրոլետարական ուրախության զգացումով, նշելով Հայաստանում Խորհրդային հեղափոխության հաղթանակի փաստը, ողջունում եւ ամբողջովին հավանություն է տալիս ընկ. Ն.Նարիմանովի հրապարակած պատմական հռչակագրին, որ մեկընդմիշտ վերացնելով դարավոր ազգամիջյան երկպառակությունները եւ արյունահոս պատերազմները Հայաստանի եւ մահմեդական աշխարհի միջեւ, բացելով Անդրկովկասի եւ ամբողջ Արեւելքի ժողովուրդների պատմության մեջ երջանիկ կյանքի նոր էջ» (նույն տեղում):

Ինչպես պարզորոշ երեւում է այդ հռչակագրից Նախիջեւանի գավառի տարածքը անվերապահ ճանաչվեց Խորհրդային Հայաստանի անբաժան մաս: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա Հայաստանին այդ տարածքի փոխանցումը հետագայում ամրագրվեց 1921թ. հունիսի 12-ի կառավարական դեկրետով՝ հրապարակված ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկովի ստորագրությամբ, որտեղ ասվում էր, որ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Հեղկոմի Հռչակագրի հիման վրա հռչակվում է, որ Լեռնային Ղարաբաղը այսուհետ



հանդիսանում է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անբաժան մասը:

Ադրբեջանական Հեղկոմի Հռչակագիրը Անդրկովկասի աշխատավորության, Հայաստանի Կոմկուսի եւ հատկապես հայ ժողովրդի ամինից ջերմ հավանությանն արժանացավ:

Այդ որոշումները լայնորեն ժողովրդականացվեցին մամուլում ու հռչակվեցին ողջ աշխարհի առջեւ, որպես միայն սոցիալիզմի պայմաններում հնարավոր ազգային հարցի լուծման հիասքանչ օրինակ:

Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության ականավոր շատ գործիչներ՝ Ս.Մ.Կիրովը, Գ.Կ.Օրջոնիկիձեն եւ ուրիշներ, բազմիցս ինչպես հրապարակայինն ելույթներում, այնպես էլ ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի նիստերում հավանություն տվեցին Ադրբեջանական Հեղկոմի հռչակագրին եւ անվերապահ արտահայտվեցին Հայաստանի կազմում Նախիջեւանի եւ Ղարաբաղի թողնելու օգտին:

Հետագայում այդ որոշումները մնացին չիրականացված:

Ինչ վերաբերում է Նախիջեւանին, ապա այդ տեղի ունեցավ Թուրքիայի պնդմամբ, որի կառավարող շրջանակները Անդրկովկասում հետապնդում էին իրենց սեփական համաթուրանական նպատակները՝ ուղղված Խորհրդային հանրապետությունների ժողովուրդների շահերի դեմ:

Հենց Խորհրդային հանրապետությունների գործերին Թուրքիայի խառնվելու արդյունքում եւ Խորհրդային Ադրբեջանի ու Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումներին հակառակ, Նախիջեւանյան մարզը չմտցվեց Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ:

Այն ժամանակաշրջանում, 1921թ., երիտասարդ Խորհրդային Ռուսաստանը, ներքին եւ արտաքին իրադրության մի շարք հանգամաքների բերումով (էսեռների Կրոնշտադյան խռովություն, արեւմտյան կայսերապաշտության ճամբար Թուրքիայի անցնելու վտանգ եւ այլն) ստիպված եղավ համաձայնվել Թուրքիայի պնդման հետ Նախիջեւանյան մարզը Ադրբեջանի պրոտեկտարատի ներքո փոխանցելու մասին:

Սակայն, հարկավոր է նշել, որ նույնիսկ այդ պայմանագրով իրավաբանորեն Նախիջեւանյան մարզը չմտցվեց Ադրբեջանի կազմի մեջ, այլ միմիայն հանձնվեց որպես ինքնավար տարածք Ադրբեջանի «հովանավորության ներքո», քանզի եւ այն ժամանակ բացարձակապես ակնհայտ էր, որ տարածքով եւ տնտեսապես Նախիջեւանյան մարզը, գտնվելով Հայաստանի կենտրոնում եւ մնալով նրա անբաժանելի մասը, չէր կարող մտցվել Ադրբեջանի կազմի մեջ:

Ինչ վերաբերում է Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ Լեռնային Ղարաբաղի մտցնելուն, ապա այդ նույնպես չիրականացավ եւ Լեռնային Ղարաբաղը, չնայած իր գերակշիռ հայկական բնակչությանը (1924թ. Ադրբեջանական ԽՍՀ-ի գյուղատնտեսական մարդահամարի տվյալներով հայերի կազմում էին ԼՂԻՄ -ի բնակչության 94,4%-ը), միակողմանիորեն մտցվեց

Ադրբեջանի կազմի մեջ միակ փաստարկի, այսինքն՝ Բաքու քաղաքին Լեռնային Ղարաբաղի բնակչության տնտեսական կապվածության մասին փաստարկի հիման վրա:

Ադրբեջանական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի փոխանցումից հետո անցել է ավելի քան 40 տարի: Որոշման ընդունման պահին Հայաստանին Լեռնային Ղարաբաղի պատկանելիության առումով որեւէ իրավական եւ քաղաքական կասկածներ չկային: Հայաստանի այն ժամանակվա ծայրահեղ հետամնացության պայմաններում այնպիսի հարց՝ ինչպիսին Բաքվին տնտեսական կապվածությունը, կարող էր դրվել, բայց չէր կարող լինել գլխավորը այդ հարցի լուծման դեպքում, քանզի ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլեւ ողջ Հայաստանը այն ժամանակ տնտեսապես կապված էր Բաքվին եւ Թբիլիսիին՝ նրա տնտեսական ծայրահեղ հետամնացությունը նկատի ունենալով:

Այժմ այդ միակ փաստարկը հանված է. առաջին, որովհետեւ Խորհրդային Հայաստանը Խորհրդային իշխանության տարիներին՝ շնորհիվ մեծ ռուս ժողովրդի անշահախնդիր օգնության, դարձել է Խորհրդային Միության առաջատար արդյունաբերական հանրապետություններից մեկը եւ այժմ լրիվ ի զորու է ապահովել Լեռնային Ղարաբաղի հաջող տնտեսական զարգացումը,

Երկրորդ, որովհետեւ Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի քառասունամյա մնալը իրավունք է տալիս խոսել այն մասին, որ այդ չի ապահովել այդ երկրամասի անհրաժեշտ տնտեսական եւ մշակութային զարգացումը:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ այդ տարիների ընթացքում Ղարաբաղի բնակչությունը չի ավելացել: Ավելին, մարզի հայկական բնակչությունը վերջին երեսուն երեք տարիների (1926 եւ 1959թթ.) ընթացքում պակասել է: Եթե 1926թ. Լեռնային Ղարաբաղում հաշվվում էին 111.694 հայ, ապա 1959թ.՝ 110.053 հայ:

Ղարաբաղի բնակչությունը այժմ էլ 85%-ով բաղկացած է հայերից եւ հենց այդ հիման վրա նրանց համար ընդունված է ազգային ինքնավարությունը: Տարածքով մարզը կից է Հայաստանին՝ հանդիսանալով նրա օգնական շարունակությունը:

Այսպիսով, ցանկացած տարածքային հարցի լուծման դեպքում հիմնական փաստարկները խոսում են Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի միավորման մասին հարցադրման օրինաչափականության վերաբերյալ:

Կարծիքն այն մասին, որ պետք չէ դնել Ադրբեջանից Հայաստանին Ղարաբաղի հանձնման հարցը, քանի որ երկու տարածքները խորհրդային են, չի կարելի համարել հիմնավոր, այնքանով որ եթե քաղաքական առումով դա իրականում միեւնույնն է, ապա միեւնույնը չէ ինչքանով հաջող մշակութային եւ տնտեսական առումներով զարգանում է այս կամ



այն խորհրդային երկրամասը, որտեղ ապրում են խորհրդային մարդիկ: Հայաստանին Ղարաբաղի հանձնելով լուծվում են եւ մի շարք ուրիշ կարեւորագույն հարցեր.

ա) Լրիվ հասկանալի է, որ հայկական սոցիալիստական մշակույթը, այսինքն Ղարաբաղի բնիկ բնակչության մշակույթը կարող է զգալիորեն լավ զարգանալ Հայկական ԽՍՀ մշակույթի ընդհանուր համակարգում: Ղարաբաղի արվեստը, մամուլը, ռադիոն, մշակութային-լուսավորչական հաստատությունները, գեղարվեստական ինքնագործունեությունը առավել լիարժեք կզարգանային հայ մշակույթի հետ շփման մեջ, այն դեպքում երբ այժմ նույնիսկ Ղարաբաղում Հայաստանից առանձին հյուրախաղային խմբերը հազվադեպ երեւույթ են հանդիսանում:

բ) Ղարաբաղի բնակչությունը միջին եւ բարձրագույն կրթության զարգացման համար Հայաստանը ավելի շատ հնարավորություններ ունի՝ ուսուցչական եւ այլ կադրերով ապահովման իմաստով: Ղարաբաղի պատանիները եւ աղջիկները ավարտելով միջնակարգ դպրոցները կրթությունը մայրենի լեզվով շարունակելու ավելի շատ հնարավորություններ կստանան:

Լեռնային Ղարաբաղի փոխանցումը կվերացնի ստեղծված իրադրության անհնորմալությունը, եթե փոքրաթիվ հայ ժողովուրդը Խորհրդային Միության պայմաններում ունի երկու պետականություններ՝ մեկը Միութենական Հայկական հանրապետություն, եւ մյուսը՝ հենց նրան հարակից ինքնավար ազգային մարզ, բայց ուրիշ միութենական հանրապետության կազմում:

Վերոնշյալի հիման վրա եւ հաշվի առնելով հանրապետությունում ստեղծված ներկա իրավիճակը, գտնում ենք ծայրահեղ անհրաժեշտ քննարկել Հայկական ԽՍՀ-ին Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի վերադարձման հետ կապված հարցերը:

Բարձրացված հարցերի քննարկման ժամանակ մենք ելել ենք հիմնական գլխավոր խնդրից՝ Խորհրդային Միության ժողովուրդների միջեւ եղբայրական բարեկամության հետագա ամրապնդման ապահովման, եւ մասնավորապես հայ եւ ադրբեջանական ժողովուրդների միջեւ:

Այդ հարցի լուծված չլինելը կուսակցական մարմինների գործունեության եւ հանրապետության բնակչության լայն խավերի շրջանում քաղաքական-դաստիարակչական աշխատանքի անցկացման մեջ լուրջ դժվարություններ է ստեղծում:

Մեր կարծիքով նպատակահարմար կլիներ քննարկել եւ դրական լուծել Հայկական ԽՍՀ-ին Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի փոխանցման հարցը, ընդ որում Նախիջեւանյան ԻԽՍՀ-ն կարող է պահպանել իր ինքնավարությունը Հայկական ԽՍՀ-ի կազմում, այն տարածքում որտեղ նա գտնվում է:

Սակայն, եթե Հայկական ԽՍՀ-ին Նախիջեւանի վերադարձնելը ժամանակակից փուլում կապված է հայտնի դժվարությունների հետ, ապա ՀԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերադարձնելը չի կապված որեւէ դժվարությունների հետ եւ կարող է իրականացվել անցավագին:

Հնարավոր անցանկալի հակազդեցության երկյուղները հիմնազուրկ են, քանի որ հարցը չի դրվում Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքի ինչ-որ մասի օտարման-խլման մասին, այլ ինքնավար ազգային մարզի միութենական հանրապետության միաձուլման, որոնցում բնիկ բնակչությունը միատեսակ-հայկական է:

Այդ հարցի դրական լուծումը կունենա բացառիկ կարեւոր քաղաքական նշանակություն ու կհանդիսանա մեր կուսակցության, Լենինյան Կենտրոնական Կոմիտեի եւ ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի իմաստուն ազգային քաղաքականության հաղթահանդեսի նոր վկայություն:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար *Ա. Քոչինյան*
Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահ *Բ. Մուրադյան*

30 սեպտեմբերի 1966թ.
թիվ 120

ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թթ. 1-9:
Թարգմանություն ռուսերենից: Պատճեն: Մեքենագիր:

## Թ Ի Վ 29

**[Հայ մտավորականության նամակը Լ. Բրեժնեւին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին]**

**ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար *Լ. Ի. Բրեժնեւին***
**ԱԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար *Վ. Յու. Ախունդովին***
**ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար *Ա. Ե. Քոչինյանին***

Լեռնային Ղարաբաղի ազգակիցներին Հայկական ԽՍՀ կազմում մեզ հետ ուս-ուսի մեր միալեզու ազգային մշակույթը, գիտությունն ու տնտեսական կյանքը զարգացնելով տեսնելու հայ ժողովրդի նվիրական, խոր ու անկեղծ երազանքը՝ լիովին համընկնում է լենինյան մեծ սկզբունքների հետ:

Ղարաբաղը Հայաստան է տարածքով եւ ազգային կազմով, Հայաստան է՝ կենսածեւով, հոգեւոր կերտվածքով ու կենցաղով:

Ղարաբաղի պատմությունը՝ Հայաստանի պատմությունն է՝ հայկական է Ղարաբաղի լեզուն, արվեստը եւ գրականությունը: Եւ քանի որ գոյություն ունի Հայկական ԽՍՀ, նպատակահարմար չէ նրա անբաժանելի մասը արհեստականորեն կտրել Խորհրդային Հայաստանից:



Հավատում ենք, որ դուք կդառնաք այս հարցի լուծման նախաձեռնողները:

Մենք համոզված ենք, որ այս հարցի վճռումը էլ ավելի կամրապնդի մեր ժողովուրդների համագործակցությունը, իսկ սահմանների անհրաժեշտ ճշտումը մեկ անգամ եւս կապացուցի մեր ժողովուրդների եղբայրությունը եւ կապիտալիստական աշխարհին ցույց կտա, որ սոցիալիզմի երկնակամարի տակ իշխում է փոխըմբռնման ոգին, որ ազգամիջյան բոլոր հարցերը վճռվում են կոմունիստական բարձր գիտակցությամբ:

Մենք երկյուղածությամբ ենք փայփայում մեր լինելիության հիմքերի հիմքը, մեր բարեկամությունը:

Մեր երկու ժողովուրդները հոգեբանորեն վաղուց են հասունացել հարցի նման լուծման համար: Դեռ ավելին, մենք վստահ ենք, որ յուրաքանչյուր ադրբեջանցի հոգու խորքում համոզված է հայ եղբայրների պահանջների արդարացիության մեջ: Մեր երկու ժողովուրդները հոգեբանորեն պատրաստ են հարցի նման լուծմանը, քանի որ խորհրդային կարգերի 50 տարիների ընթացքում մենք դաստիարակվել ենք ինտերնացիոնալիզմի ոգով, եղբայրության ոգով:

Մենք արմատախիլ ենք արել ազգամիջյան հակակրանքներն ու նախախորհրդային շրջանի բացասական տրամադրությունները եւ նման հարցերի վճռման ժամանակ պետք է հենվենք ոչ թե ինչ-որ մտացածին տարածայնությունների, այլ մեր կոմունիստական փոխըմբռնման եւ անկեղծ համագործակցության վրա:

Մենք առավել քան համոզված ենք, որ այս հարցի լուծումը վստահելի ձեռքերում է եւ խիստ ցանկալի կլիներ, որ այն համընկներ Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման տարելիցին:

**Ծանոթագրություն** - Կցվում են ԳԱ, Երեւանի պետհամալսարանի, հայկական մանկավարժական, ռուսական մանկավարժական, պոլիտեխնիկական, անասնաբուժական եւ անասնաբուծական ինստիտուտների, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի, գրողների եւ նկարիչների միությունների, «Հայաստան» եւ «Լույս» հրատարակչությունների, ռադիոյի, Պոլիմերների գիտահետազոտական եւ նախագծային ինստիտուտների կոլեկտիվների անդամների ստորագրությունը:

**Հավելված** - 1906 մարդկանց[1] ստորագրությունների բնագրերը 106 էջի վրա եւ պատճեները 47 էջի վրա ուղարկվում են ընկ. ընկ. Ախունդովին եւ Քոչինյանին:

[1966թ.]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65բ, թթ. 1-2:
Թարգմանություն ռուսերենից: Պատճեն: Մեքենագիր:

---

[1] Մարտիրոս Սարյանի գլխավորությամբ ստորագրողներից էին մասնավորապես երվանդ Քոչարը, Համո Սահյանը, Պարույր Սեւակը:

# Ն Յ ՈՒ Թ Ե Ր

## Թ Ի Վ 30

**[Վազգեն Ա.-ի կոնդակը Եղեռնի 50-ամյակի առթիվ]**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՊՐԻԼՅԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

## ՎԱՉԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԻՍ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹՅԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՉԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՉԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՕՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

## ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

**«Ի մահ համարեալ էին,**
**եւ մահք իւրեանց՝ անշուշտ կեանք»:**
ԵՂԻՇԷ

Մեր հինաւուրց ազգի պատմութիւնը կենդանի յուշարձան մըն է, մարդկային աշխարհի հորիզոնին վրայ բարձրացող, շաղախուած ու մարմին առած նահատակներու արիւնով, բարիին ու գեղեցիկին ծառայելու ստեղծարար հանճարով եւ սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կիրքով, այն օրէն մանաւանդ, երբ Աւետարանի լոյսը իջաւ ի Հայաստան աշխարհ: Քրիստոսի Աւետարանով հայ ժողովուրդը հաւատաց կեանքին, հաւատաց լոյսին ու շինարար աշխատանքին, եւ հաւատաց, թէ **«սէր ոչ երբեք անկանի»** (Ա Կորնթ. ժԳ 8): Եւ այսպէս ահա բացաւ ան դռները իր հոգիի ուժերուն, դռները յաւիտենական կեանքին:

Հայոց պատմութեան ազգային դարաշրջանը սկիզբ առաւ հինգերորդ դարուն, հայ տառերու գիւտով և Աւարայրի հերոսամարտով:

Աւարայրը լրումը եղաւ հայ ժողովուրդի ոգեկան ուժերու արգասաւորման ու պայծառ արտայայտութիւնը ազգային ինքնագիտակցու-



թեան, եւ միաժամանակ սկիզբը մեր բուն ազգային պատմութեան, որ իր դրոշմը դրաւ յետագայ բոլոր դարերուն վրայ: Վարդանանց եւ Ղեւոնդեանց նահատակութիւնը դարձաւ մեր ժողովուրդի ճակատագիրը: Եւ այդ օրէն ի վեր, ամբողջ հազար եւ հինգ հարիւր տարիներ շարունակ, մեր նախնիք նոյն հերոսական մարտը շարունակեցին **«վասն Յիսուսի, վասն հայրենեաց»**, նոյն **«զի բարձրասցի կողմն ճշմարտութեան»** ոգիով, միշտ մահը մահով յաղթելու հաւատքով:

Այդ արիւնոտ, բայց ազնիւ փառքի ճամբուն վրայ, հայ ժողովուրդի պատմութիւնը արձանագրեց իր վերջին մեծ նահատակութիւնը, յիսուն տարիներ առաջ:

Այսօր, մեր սրտերը ծով վշտով լեցուն, հոգեկան ծանր ապրումներով կոգեշնչենք յիշատակը այն ահաւոր ողբերգութեան, որ սկիզբ առաւ 1915-ի ապրիլ 24-ին եւ տեւեց ամբողջ հինգ տարի, բնաջինջ ընելով Արեւմտեան Հայաստանի համայն հայութիւնը սարսափելի տառապանքներու մէջ, կազմակերպուած ու գործադրուած սուլթանական Թուրքիոյ ցեղասպան կառավարութեան կողմէ: Նահատակուեցան մօտ երկու միլիոն հայեր: Հրկիզուեցան ու քարուքանդ եղան բազմահարիւր շէն կոթողներ հայ ճարտարապետական հանճարի: **«Քաջ նահատակք մեր անկան ի պատերազմի, եւ սուրբ քահանայք մեր խողխողեցան ի ծեռաց անօրինաց, գեղեցիկ երիտասարդքն զենան ի սպանումն, եւ բազում կուսանք վարեցան ի գերութիւն, գիրգ կանայք անկան ի տառապանս այրութեան եւ բազում որբք կականին դառնապէս»**, եւ **«շինուածք մեր եղեն գերեզմանք դիականց մերոց, եւ վաստակք ծեռաց մերոց տապալեցան ի վերայ մեր»** (Եղիշէ): Այդ սեւ օրերուն եկած էր պահ մը, երբ **«այս աշխարհի վրայ այլեւս անհնար էր հայ ըլլալ»**: Ամէն յոյս կորսուած կը թուէր եւ հայոց պատմութեան գիրքը՝ փակուած ու արեան մէջ թաղուած:

Բայց ով անհիմանալի խորհուրդ մահուան եւ կեանքի, եւ ով հրաշագործ ոգի հայոց պատմութեան:

Նահատակուած էր ամբողջ ժողովուրդ մը, այո, սակայն հայերը չէին մեռած ի սպառ, վասնզի անոնք զոհուեր էին հաւատքով ամուր, թէ **«կեանք Քրիստոս է եւ մեռանել՝ շահ»** (Փիլիպ. Ա 21): Անոնք **«որպէս սկսան քաջութեամբ, նովին եւ կատարեցին զհանդէս նահատակութեան, լի երկնաւոր սիրովն, եւ արտափայլեցին իբրեւ զարեգակն ի մէջ տիեզերաց, որոց եւ անուանք նոցա գրչեալ են ի դպրութեան կենաց»** (Յովհ. Դրասխանակերտցի):

Ինչպէս Վարդանանց հերոսամարտի օրերուն եւ այնուհետեւ դարեր շարունակ, մահը յաղթող հայոց պատմութեան ոգին անգամ մը եւս պատռեց վարագոյրը անողոք ճակատագրին ու կեանքի կոչեց մնացորդացը մեր նահատակուած ազգին: **«Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով»** արիացած հայ ժողովուրդը, հազար հինգ հարիւր տարիներ յետոյ, Կարմիր Վարդանին մեծ աւետիս տուաւ՝ Սարդարաբադով:

Եւ ահա քառասուն եւ աւելի տարիներէ ի վեր, հայ ժողովուրդի մայր զանգուածը, մէկտեղուած իր նախնեաց մայր հողի վրայ, իր հայրենի հարազատ կառավարութեան հովանիին ներքեւ, եղբայրական ժողովուրդներու կողքին, իր երջանիկ ապագան կը կերտէ՝ ապահովութեան, խաղաղութեան եւ առաջադիմութեան աննախընթաց պայմաններու մէջ: Իսկ ի սփիւռս աշխարհի ցրուած պանդուխտ հայերը, իրենց աչքերը յառած դէպի վերաշինուող ու ծաղկող Մայր Հայրենիքը, յագեցած կեանքի նոր աւիւնով և ոգեշնչուած ազնիւ հպարտութեամբ ու վառ տեսիլքներով դէպի հայոց ապագան, կերազեն օր մը վերադառնալ յաւերժական Արարատին, իրենց հայաստանցի քոյրերուն եւ եղբայրներուն մօտ, իրենց տքնութեան բաժինը ընծայ բերելու ամենայն հայոց Մայր Հայրենիքին:

Հայոց նահատակութիւնը վերջնապէս պսակուած է **յաղթութեան բրաբիոնով** ու նոր կենաքի լուսաբացով եւ վերածնած է մեր հինաւուրց երկիրը Հայաստան, իբրեւ ազգային պետութիւն:

Հայ ժողովուրդի զաւակները, որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, այսօր, մեծ եղեռնէն յիսուն տարի յետոյ, երկիւղածութեամբ կը խոնարհին բիւրաւոր նահատակներու անյայտ գերեզմաններուն առջեւ ու կաղօթեն անոնց անմահ հոգիներու խաղաղութեան եւ երանութեան համար: Եւ կը վերանորոգեն իրենց ուխտը՝ սուրբ պահելու անոնց նուիրական յիշատակը ու մնալու հաւատարիմ անոնց լոյս հաւատքին, անոնց հերոսական ոգիին, հայոց ազգը մէկտեղուած եւ հայոց ամբողջ երկիրը փրկուած տեսնելու անոնց պայծառ երազին:

**«Պանծա՛յք դուք ընդ հայրենասիրութեան ծեր, նորոգեցէք ապա զյիշատակս նախնեաց»** (Ալիշան):

Այսօր, բոլոր հայերուն համար, ուր որ ալ գտնուին անոնք, աղօթքի օր է նաեւ մեր ժողովուրդի խաղաղ զարգացման ու բարօրութեան համար, մեր նորակերտ հայրենի երկրի անսասանութեան ու շինութեան համար, ապրող ու շնչող եւ լոյսի մէջ աճող Մայր Հայաստանի համար:

Մեր նահատակները մեռան ապրելու յոյսով եւ հայ հայրենիքի վերածնունդի տեսիլքներով:

Այսօր, բոլորիս համար աղօթքի օր է նաեւ աշխարհի խաղաղութեան եւ ժողովուրդներու իրաւ եղբայրութեան համար, որպէսզի այլեւս երբեք աշխարհի երեսին ոչ մէկ տեղ արիւն չհոսի, եւ մարդիկ սուր չքաշեն իրենց նմաններուն վրայ: Թող խաղաղութիւն ըլլայ աշխարհի բոլոր սահմաններուն վրայ եւ բոլոր մարդոց սրտերէն ներս: Թող **«ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին»** (Սաղմ. ՁԴ 14):

Մենք, Հայրապետ Ամենայն Հայոց, մեր ազգի պատմութեան մեծ ողբերգութեան յիսնամեայ տարելիցի սեմին, այսու Մեր կոնդակաւ, կառաջադրենք ու կը հրահանգենք՝



**ա.** որ յառաջկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին եւ համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի եւ աղօթքի տարի:

**բ.** որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ, ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ եւ հոգեհանգստեան պաշտօններ, աղօթելու համար մեր բիւրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան եւ լուսաւորման համար:

**գ.** որ բոլոր հայ եկեղեցիներուն մէջ, Ս. Սեղանի մը առջեւ, զետեղուին մշտավառ կանթեղներ, նուիրուած հայ նահատակներու յիշատակին: Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ մշտավառ կանթեղ մը պիտի զետեղուի քրիստոնէութեան առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի սեղանի վերեւ, ուր եւ այսուհետեւ պիտի մատուցուի յատուկ սուրբ պատարագ ամէն տարի ապրիլ 24-ին:

**դ.** որ բոլոր հայ եկեղեցական համայնքներուն եւ գաղութներուն մէջ, Հայ Եկեղեցւոյ հովանիին ներքեւ, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի եւ յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական-գեղարվեստական նիստեր հայ եւ այլազգի հասարակութեանց համար, նուիրած Ապրիլեան եղեռնին:

**ե.** որ հայ եկեղեցական իշխանութիւնները, ազգային-հասարակական կազմակերպութիւնները, պատմագիտական-գրական-մշակութային հիմնարկութիւնները եւ հայ մամուլը իրենց սեպուհ պարտքը համարեն խօսքով ու գործով ոգեկոչելու նուիրական յիշատակը մեծ եղեռնի տարիներուն մարտիրոսացած հայ ժողովուրդին, հայ հոգեւորականներուն եւ գրական հասարակական մեծանուն գործիչներուն, հրապարակելով հայ եւ այլազգի հեղինակներու պատմական վկայութիւնները, վաւերաթուղթերը, ուսումնասիրութիւնները, յուշերը եւ գրական-գեղարվեստական գործերը:

Թող բարեգութն Աստուած, յաւերժական փառքի մէջ, հանգիստ եւ խաղաղութիւն պարգեւէ մեր ազգի նահատակ զաւակներու մաքուր եւ անմեղ հոգիներուն եւ Իր պահապան Աջը տարածեալ պահէ հայ ժողովուրդի եւ հայրենիքի վրայ, որպէսզի անոնց կեանքի արեւը միշտ պայծառ շողայ, որպէսզի անոնք յաւէրժ ապրին ու աճին եւ միշտ բարձրանան, աշխարհին ընծայաբերած իրենց արդար վաստակով:

Թող ապրի յաւետ հայ ազգը համայն, որպէսզի շատանայ լոյսը աշխարհի:

**«Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին»** (Մատթ. Ե 4,6):

**ՎԱՉԳԷՆ Ա**
**ԾԱՅՐԱԳԱՆՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս յ-17-ն օգոստոսի
1964 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԺԴ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

«Էջմիածին», 1964, Ը-Թ, էջ 3-5:

## Թ Ի Վ 31

**[Վազգեն Ա.-ի նամակը եղեռնի 50-ամյակի առթիվ]**

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

### ԱՌ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻ ՀՌՈՄԱ, ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑՎՈ

**ՎԱՏԻԿԱՆ. ՀՌՈՄ**

Չերդ Սրբություն.

Մեզի համար հոգեկան մեծ գոհունակություն է Չերդ Սրբության ուղղել Մեր սույն գիրը, մեր Եկեղեցվո եւ ժողովուրդների համար պատմական նշանակություն ունեցող մեկ պահին:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եւ համայն հայ ժողովուրդը հառաջիկա տարի պիտի հիշատակեն հիսնամյակը Արեւմտյան Հայաստանի (Թուրքական Հայաստանի) մոտ երկու միլիոն հայերի նահատակության, որ սկիզբ առավ 24 ապրիլ 1915 թվականին:

Թրքահայաստանի ամբողջ հայ ժողովրդի բնաջնջումը կատարվեց ծրագրված ու պետականորեն կազմակերպված ձեւով, սուլթանական կառավարության կողմից: 1915-1920 թվականների ժամանակաշրջանում, պատմական Հայաստանի հազարամյա քաղաքներ եւ գյուղեր, վանքեր եւ եկեղեցիներ թալանվեցին, հրկիզվեցին ու ավերակների կույտի վերածվեցին, եւ ամբողջ մի ժողովուրդ՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ, ֆիզիկական ու բարոյական զարհուրելի տառապանքների մեջ, դեպի Հյուսիսային Սուրիայի անապատները քշվեցին ու ջարդվեցին:

Նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանության մեծ ոճիրն էր, որ կատարվեց: Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրեւ քրիստոնյա եւ ազատ ազգություն:

Մենք, իբրեւ Հայրապետ Հայ Եկեղեցու, Մեր խղճի պարտքը նկատեցինք հատուկ մի կոնդակ գրի առնել, 17 օգոստոս 1964 թվակիր, ևվիրված Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի այս մեծ ողբերգության հիսնամյա տարելիցին, 1965 թվականը հռչակելով սուգի եւ աղոթքի տարի:



Այսու Չերդ Սրբության եւ համայն Կաթողիկե Ս. Եկեղեցու բարձր ուշադրությունը հրավիրում ենք սույն տարելիցի վրա, խորհելով, թե առաջնորդված քրիստոնեական գութի և արդարության զգացումից, պիտի կամենայիք առաջիկա տարի ապրիլ 24-ի օրը Չեր եւ Չեր մեծ Եկեղեցու աղոթքը միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար:

Չերդ Սրբության եւ բոլոր մեր քույր եկեղեցիների աղոթքները համայն հայ հավատացյալ ժողովրդի վշտահար սրտի համար պիտի հանդիսանան հոգեկան խորունկ մխիթարություն:

Ընդունեցեք, Սրբազան Հովվապետ, Մեր եղբայրական հարգանքի եւ սիրո ողջույնը եւ Մեր ջերմագին մաղթանքները քաջառողջության, որպեսզի երկար տարիների երջանիկ հովվապետությամբ Չեր սուրբ գործերով առավել փառավորեք Չեր մեծ Եկեղեցին:

Սիրով ի Քրիստոս.

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**24 սեպտեմբերի 1964թ.**
Ս. Էջմիածին

Համաձման բովանդակությամբ գրություններ ուղարկվեցին նաեւ՝
1. Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին,
2. Քենտբերիի Արքեպիսկոպոս եւ Համայն Անգլիայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն դոկտ. Մայքլ Ռեմզիին,
3. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, պատվելի դոկտ. Վիսսեր դ՝ Հուֆտին:

«Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 8-9:

## Թ Ի Վ 32

**[«Էջմիածին»-ի խմբագրականը եղեռնի 50-ամյակի առթիվ]**

### ԱՊՐԻԼՅԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի օգոստոս-սեպտեմբեր միացյալ համարում հրատարակվել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օգոստոս 17 թվակիր սրբատառ կոնդակը ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ, որպեսզի **«հառաջիկա 1965 տարին հռչակվի մեր Եկեղեցիին եւ համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի եւ աղոթքի տարի»**:

Հայրապետական կոնդակը միաժամանակ հրահանգում է, որ Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում, ապրիլի 24-ին, կատարվեն կրոնական հատուկ արարողություններ եւ հոգեհանգստյան պաշտոններ՝ **«աղոթելու համար մեր բյուրավոր նահատակներու հոգվոց խաղաղության եւ լուսավորության համար»**, որ բոլոր հայ եկեղեցիներում զետեղվեն **«մշտավառ կանթեղներ, նվիրված հայ նահատակներու հիշատակին»**, եւ բոլոր թեմերում, հայ գաղութներում, համայնքներում, համազգային հանդիսությամբ եւ համերաշխ գործակցությամբ, կազմակերպվեն **«հուշի եւ հարգանքի հանդիսավոր հավաքույթներ..., նվիրված ապրիլյան եղեռնին»**:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն իր սեպտեմբերի 24 թվակիր գրությամբ դիմել էր նաեւ քրիստոնեական քույր եկեղեցիների հոգեւոր պետերին, այդ թվում Հռոմի Պապ Նորին Սրբություն Տ. Տ. Պավղոս Զ-ին, Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին, Քենտրբերիի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն Մայքլ Ռեմզիին եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար պատվելի դոկտ. Վիսսեր դ՝Հուֆտին, որ **«մեր Եկեղեցու եւ ժողովրդի համար պատմական նշանակություն ունեցող մեկ պահին»**, այսինքն հայկական եղեռնի 50-ամյակին, 1965թ. ապրիլի 24-ին համայն քրիստոնյա աշխարհը, **«առաջնորդված քրիստոնեական գութի եւ արդարության զգացումից»**, իր մասնակցությունը բերի մեր եկեղեցու եւ ժողովրդի մեծ սուգին, **«Ձեր եւ Ձեր մեծ եկեղեցու աղոթքը միացնելու մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար»**:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սույն պաշտոնական գրությունը, որ հրատարակվում է ամսագրի ներկա համարում, վերջանում է քրիստոնեական, եղբայրական հետեւյալ զգացումով. **«բոլոր մեր քույր եկեղեցիների աղոթքները համայն հայ հավատացյալ ժողովրդի վշտահար սրտի համար պիտի հանդիսանան հոգեկան խորունկ մխիթարություն»**:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակի ոգով եւ նրա իմաստուն թելադրությամբ, արդեն իսկ բոլոր թեմերում, եկեղեցական իշխանությունների նախածեռնությամբ եւ հովանավորությամբ, ազգային հասարակական կազմակեպությունների, գրական եւ մշակութային հիմնարկների ու մամուլի սրտագին մասնակցությամբ, կազմվել են հոբելյանական հանձնաժողովներ, պատշաճորեն եւ մեր վշտին ու սգին համապատասխան լրջությամբ, նշելու ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակը:

Համայն հայ հավատացյալ եւ հայրենասեր ժողովուրդը, որ ի հայրենի աշխարհ եւ ի սփյուռս, պատրաստվում է համազգային հանդիսությամբ նշելու **հայ տառապանքի եւ հավաքական նահատակության 50-ամյակը**:



1915 թվականի ապրիլի 24-ին, հայկական եղեռնի սեւ թվականին, Արեւմտյան Հայաստանում, խաղաղասեր եւ աշխատունակ հայ ժողովրդի արյունը հոսեց գետի նման այն հողերի վրա, ուր նա հազարամյակներով ապրել, տքնել, ստեղծագործել եւ ծաղկեցրել էր ...:

Դա արյունոտ այն թվականն է, երբ քաղաքակիրթ ու քրիստոնյա աշխարհի աչքի առաջ, մորթոտեցին պատմության ամենահին ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին, որն իր բազմադարյան եւ քրիստոնեական մշակույթով, արվեստով եւ գրականությամբ, իր ազատատենչ ու լուսաբաղձ հոգու ծգտումներով, քիչ վաստակներ չունի քաղաքակրթության պատմության մեջ:

Այդ անլուր ոճիրը իր նմանը չուներ բարբարոսությունների եւ ցեղասպանությունների ողջ տարեգրությանց մեջ:

Դիվային ծրագիր էր հղացվել բնաջնջելու ողջ արեւմտահայության, որը գործադրության էր դրվում մանավանդ 1915 թվականի ապրիլից սկսած:

Այդ օրերին, սուլթանական Թուրքիայի ներքին գործերի նախարար եւ մեծ ջարդարար Թալաթը, Հալեպի կուսակալության ուղղած իր 1915 սեպտեմբեր 15 թվակիր գաղտնի հեռագրում գրում էր. «**Նախօրոք տեղեկացված է եղել, որ կառավարությունը Ջեմիաթի հրամանով որոշել է ամբողջապես բնաջնջել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին: Նրանք, որոնք կընդդիմանան այս որոշմանը, չեն կարող մաս կազմել կառավարական մարմիններին: Առանց խտրություն դնելու կանանց, երեխաների, հաշմանդամների միջեւ, ինչքան էլ ողբերգական լինեն ոչնչացման միջոցները, առանց անսալու խղճմտանքի ծայնին, պետք է վերջ տալ նրանց գոյության**»:

Արեւմտահայությունն ապրեց իր արյունոտ Գողգոթան: Բնության հազար ու մի հրաշալիքներով հարուստ մեր գեղեցիկ երկիրը ավերակների մի կույտ դարձավ, համատարած մի գերեզման: Հրդեհվող քաղաքների, թափված արյան հեղեղների միջով, անթաղ մնացած բյուրավոր զոհերի վրայով, կործանված պատմական հոյակապ եւ անկրկնելի հուշարձանների վրայով, **ինչ գեղեցիկ էր եւ հայկական**, ինչ ստեղծվել էր տասնյակ հայ սերունդների բազուկով եւ հանճարով, այդ բոլորի վրայով անցավ վայրագության, մոլեռանդության ալիքը:

**«Այդ սեւ օրերուն,**- գրում է Վեհափառ Հայրապետն Իր կոնդակում,- **ամեն հույս կորսված կթվեր եւ հայոց պատմության գիրքը՝ փակված եւ արյան մեջ թաղված**»:

Հայ ժողովրդի արյունոտ ճակատագիրը հավասար հերոսությամբ բաժանեցին նաեւ հայ հոգեւորականությունն ու հայ մտավորականությունը: Այդ անհավասար ու հերոսական մարտում ընկան շատերը հայ նորագույն գրականության վարպետներից, ընկան հերոսի մահով, արի, աննահանջ, վեհ եւ անպարտելի:

Հայ հոգեւորականությունը եւս ապրեց իր Գողգոթան: Հովվի արյունը խառնվեց հոտի արյան հետ: Ոճրագործը միասին հնձեց **«հոտն ու հովիվը»**, որոնցից շատերը **«քարկոծեցան, սղոցեցան, սպանմամբ սրոյ մեռան, կախեցան** ...»:

Հայ ժողովրդի սրտի մեջ շիկացած երկաթով է գրված սուլթանական Թուրքիայի այդ անլուր ոճիրը:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր նահատակներին:

Հայության սրտում եւ հիշողության մեջ միշտ թարմ կմնան մեր նահատակ եղբայրների եւ քույրերի գազանային կոտորածների արյունոտ պատկերները:

Վայ այն ժողովրդին, որը կմոռանա իր նահատակներին, հայրենիքի եւ ազգի հավերժության համար անձնուրացորեն զոհված մեծ մեռելներին:

Հայության գլխի վրա կախված մեծ աղետը եկավ ու անցավ ...:

Պատմությունը, սակայն, մեր ժողովրդի ճակատին գրել էր ոչ թե **մեռնել**, այլ **ապրել**:

**«Բայց ով անհմանալի խորհուրդ մահվան եւ կյանքի, եւ ով հրաշագործ ոգի հայոց պատմության,**- գրում է Վեհափառ Հայրապետն Իր կոնդակում,- **ինչպես Վարդանանց հերոսամարտի օրերուն եւ այնուհետեւ դարեր շարունակ, մահը հաղթող հայոց պատմության ոգին անգամ մը եւ պատռեց վարագույրը անողոք ճակատագրին եւ կյանքի կոչեց մնացորդը մեր նահատակված ազգին: «Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով» արիացավ հայ ժողովուրդը, 1500 տարիներ հետո, Կարմիր Վարդանին մեծ ավետիս տվավ՝ Սարդարաբադով»**:

1915 թվականի ապրիլյան եղեռնը հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջերից մեկն է, **միաժամանակ** մեր ժողովրդի անընկճելի կենսունակության, լուսավոր ապագայի նկատմամբ նրա վառ հույսերի եւ անբեկանելի հավատի առհավատչյան: Մեծ Թումանյանի ճշգրիտ բնորոշմամբ՝ «Զարմանալի է մեր ժողովրդի կենսունակությունը. ոչ մի բռնակալ, ոչ մի բարբարոս չեն կարողացել ընկճել, նվաճել մեր ժողովրդի այդ ազգային հատկությունը»:

Եւ ահա համազգային այդ աղետի օրերին էլ, անդունդի եզրը հասած մեր ժողովրդի մեծ հոգին, շարժվում է հզոր եւ աննկուն, ու արյան, կոտորածի, փլատակների միջից, հեքիաթի փյունիկի նման, **«հարյավ հոգին որբ հայ ժողովրդի»** (Վահան Թեքեյան):

Քառասունչորս տարիներ առաջ, ֆիզիկական բնաջնջման եզրին հասած մեր տանջահար, բայց արի ու կյանքի նոր ավյունով, վառ տեսիլներով ոգեշնչված հայ հավատավոր ժողովրդի մայր զանգվածը, մեկտեղված իր նախնյաց մայր հողի վրա, իր հայրենի հարազատ կառավարության հովանու ներքո, վիրավոր ու բզկտված, ոտքի կանգնեց, փշրեց դարավոր իր ստրկության շղթաները եւ ռուս մեծ ժողովրդի օգնությամբ,



եղբայրական ժողովուրդների կողքին, ազգային ապահովության, խաղաղության եւ առաջադիմության աննախընթաց պայմաններում, վերածնվեց ու աճեց եւ ամրապնդեց իր պայծառ ապագայի հուսալի խարիսխները:

Քառասունչորս տարին ոչ մեկ ժողովրդի կյանքում մեծ ժամանակաշրջան չէ: Բայց հրաշքի համազոր նվաճումներ կատարվեցին մեր ժողովրդի մաքառումներով, խիզախումներով, պայքարով ու աշխատանքով, մեր հայրենի հողի վրա, գիտության, մշակույթի, ժողովրդական լուսավորության, արդյունաբերության եւ առողջապահության բնագավառներում, եւ ստեղծված նոր պայմանների մեջ, բազմապատկվեց թիվը մեր ժողովրդի, «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր»:

Անցնող քառասունչորս տարիների ընթացքում, երբեմնի հետամնաց, որբերի եւ ողբի, համաճարակների եւ սովի Հայաստանը, դարձել է գեղածիծաղ եւ բարգավաճ հանրապետություն, լույսի երկիր, արեւի երկիր:

Մեր վերածնված հայրենիքի եւ նրա հերոսական ժողովրդի հետ են նաեւ ապրիլյան եղեռնից մազապուրծ ազատված բեկորները արեւմտահայության:

Մեր մայր հայրենիքը՝ վերածնված Սովետական Հայաստանը, ծգողական հզոր ուժ է դարձել Սփյուռքի օտար հորիզոնների տակ ապրող մեր բազմահազար պանդուխտ եղբայրների եւ քույրերի համար, որոնք Տուն են վերադառնում տարագրության եւ պանդխտության անհույս ճանապարհներից՝ շենացնելու հայրենի օջախը:

Իզուր չի անցել ապրիլյան եղեռնի զոհերի թափած սուրբ արյունը:

**Հայ ժողովրդի համար նվիրական է միշտ նահատակների խնկելի հիշատակը:**

**Վերջնական հաղթանակն ու արդարությունը կլինեն մեր նահատակների կողմը:**

**Այդ է հայ ժողովրդի խորունկ հավատը:**

**Հավերժական փա՛ռք մեր բյուրավոր նահատակներին:**

«Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 3-5:

## Թ Ի Վ 33

**[«Էջմիածին»-ի խմբագրականը եղեռնի 50-ամյակի առթիվ]**

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԵՂԵՌՆ ՈՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Լրացավ ապրիլյան եղեռնի կես դարը:

Ամենայն Հայոց Հայրապետի եղեռնի հիսնամյակի առթիվ գրի առած 17 օգոստոս 1964 թվակիր սրբատառ կոնդակի հրահանգով եւ ոգով, Հայաստանյայց Առաքելական բոլոր եկեղեցիներուն, թեմերուն, Հայաստանում եւ արտասահմանում, ապրիլի 24-ին կատարվեցին կրոնական հատուկ արարողություններ եւ հոգեհանգստյան պաշտոններ, կազմակերպվեցին հուշի եւ հարգանքի հավաքույթներ, նվիրված մեր ազգային մեծ ողբերգության:

Համայն հայ հավատացյալ եւ հայրենասեր ժողովուրդը, որ ի հայրենի երկիր եւ ի սփյուռս աշխարհի, արժանավայել լրջությամբ, համազգային հանդիսությամբ եւ սրտառուչ համերաշխությամբ նշեց ***հայ տառապանքի եւ հավաքական նահատակության հիսնամյակը***:

Հիսուն տարի է անցել մեր բոլորի սրտերը բզկտող, մեր հոգիները փոթորկող եւ մեր աչքերը կրակե արցունքով ու անսահման վշտով ողողող սեւ օրերից, բայց դեռ վերքը բաց է, այրում եւ արյունում:

Մեծ է մեր վիշտը, խորունկ՝ մեր հուզումը նաեւ նրա համար, որ եւրոպական պետությունները ողբալիորեն ուխտադրուժ գտնվեցին մեր ազգի, մեր դատի հանդեպ, եւ թույլ տվեցին, որ քաղաքակիրթ մարդկության հնագույն եւ բանկագին մեկ մասնիկը կազմող, Արեւելքում քրիստոնյա աշխարհի դարավոր առաջապահը հանդիսացող մեր բարի, մեր շինարար, մեր աշխատավոր եւ խաղաղասեր ժողովուրդը ենթարկվի անլուր մարտիրոսագրության:

1915 թվական, ապրիլ ամիս ...

Հայկական եղեռնի սեւ թվականը, երբ մի ամբողջ ժողովուրդ տեղահանվեց եւ տարագրության մռայլ ճանապարհների վրա նահատակվեց, գերեզմանվեց անապատներում, կիրճերում, ձորերում:

Հինգ տարի շարունակ, գետի նման հոսեց արյունը մեր ժողովրդի այն հողերի վրա, ուր նա հազարամյակներով ապրել, աղոթել, ստեղծագործել ու կերտել էր:

1915 թվական, ապրիլ ամիս ...

Դա այն արյունոտ թվականն էր, երբ Արեւմտյան Հայաստանի քաղաքներում եւ գյուղերում, օրը ցերեկով, ցեղասպանության մշակված ամենանուրբ մեթոդներով, երիտասարդ թուրքերը մորթոտում էին աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին, որն իր քրիստոնեական մշակույթով, լեզվով, արվեստով եւ գրականությամբ, իր ազատատենչ ու լուսաբաղձ հոգու ձգտումներով, քիչ վաստակներ չունի քաղաքակիրթ մարդկության առաջ:

Ինչ հայկական էր եւ գեղեցիկ, ինչ ստեղծվել էր հայ սերունդների սուրբ հավատով ու հանճարով, քրտինքով ու արյունով, այդ բոլորի վրայով անցավ վայրագության, բարբարոսության, ցեղասպանության ալիքը:

Արեւմտահայությունը ապրեց իր Գողգոթան:



Եղեռնին զոհ տվինք մեր ամբողջական թվի ավելի քան երկու երրորդը, շուրջ 2 միլիոն նահատակ: Դա ահավոր կորուստ էր մեզ համար:

«Այդ սեւ օրերուն,- գրում է Ամենայն Հայոց Հայրապետն Իր հայրենաշունչ կոնդակում,- եկած էր պահ մը, երբ «այս աշխարհի վրա այլեւս անհնար էր հայ ըլլալ»: Ամեն հույս կորսված կթվեր եւ հայոց պատմության գիրքը՝ փակված ու արյան մեջ թաղված»:

Ավելի քան 2500 քանդված, այրված, կողոպտված հայկական վանքեր ու եկեղեցիներ, բազմահազար հայերեն ձեռագրեր, արվեստի անկրկնելի հրաշալիքներ թալանված, փչացված:

Իսկ նյութական կորուստները անհաշիվ էին ու անհամար:

Թշնամին իր հարվածն իջեցրեց նաեւ մեր ժողովրդի իմացական ու հոգեւոր բոլոր կենդանի ուժերի ակունքին:

Եղեռնի զոհ գնացին մեր նորագույն գրականության եւ արվեստի ջահակիրները եւ շուրջ 4000 հոգեւորականներ:

Ապրող հայության սրտում, շիկացած երկաթով է գրված սուլթանական Թուրքիայի այդ անլուր ոճիրը:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր նահատակներին:

Այո, կատարվեց կատարվելիքը ... Հայության գլխի վրա կախված մեծ աղետը եկավ ու անցավ:

Անցավ 50 տարի ... Բայց վիշտը մնաց եւ փոխակերպվեց ուժի, կյանքի ստեղծագործ կամքի, հավատի:

«Ոչ յօժարիմք զթշուառութիւն մերոյ ազգիս ողբալ»:

Պատմությունը մեր ժողովրդի ճակատին գրել է ոչ թե ***մեռնել***, այլ ***ապրել*** եւ ***վերածնվել***: Ժողովուրդները հավաքական մաքառումներ են եւ խիզախումներ:

Հայ ժողովուրդը երբեք չի ընկճվել բախտի հարվածներից եւ գիտեցել է իր ***նահատակությունը վերածել հաղթանակի***:

Երբ մի ժողովուրդ կռվում է եւ նույնիսկ նահատակվում է իր ազատության, իր գոյության համար, նա ապրում է, չի կորչում: Այդ գիտակցությունը, հոգեկան այդ վստահությունը անառիկ բերդ է, որի չի կարող տիրել ոչ մի թշնամի:

Ժամանակավոր պարտությունները ու նահատակությունները չեն որոշում ժողովրդի կյանքն ու ապագան:

Խաչելիության, Գողգոթային հաջորդում է հարության այգաբացը, նահատակության՝ վերածնունդը:

Մեր ժողովրդի ուժի եւ կենսունակության գաղտնիքը այս գիտակցության մեջ է: Գիտակից ժողովուրդը չի կորչում, չի սպառվում նահատակությամբ: Ջենքի բիրտ ուժի տիրապետության դիմաց կա հոգու տիրապետությունը, մշակույթի զորությունը: Ոգեկան այս ուժի մեջ է գտել ժողովուրդը իր փրկությունը, բռնությունների դիմաց՝ նահատակությունների մեջ:

Եւ ահա, «մահը հաղթող հայոց պատմության ոգին,- գրում է Վեհափառ Հայրապետը,- անգամ մը եւս պատռեց վարագույրը անողոք ճակատագրի ու կյանքի կոչեց մնացորդացը մեր նահատակված ազգին»:

Հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության մեջ կար եւ հարություն եւ երկինք:

Չկորավ մեր ժողովուրդը:

1920 թվական...

Կոտորված արեւմտահայությունը արյունաքամ, բզկտված, գաղթական, վիրավոր ու սոված, էջմիածնի պարիսպների տակ եւ Երեւանի փողոցներում:

Թշնամին 10 կիլոմետր հեռավորության վրա փորձում է ապրիլյան մի նոր եղեռնի մեջ խեղդել վերջնականապես հայության վերջին մնացորդացը՝ շուրջ 700 000 հոգի, որի մեջ եւ արեւելահայությունը:

Սիավոր երկունքի մեջ է Հայոց աշխարհը «*Երկնէր երկին, երկնէր երկիր*»:

Ամեն կողմ նորից արյուն, նորից կոտորած, թշվառություն, մահ, բայց եւ ապրելու վճռականություն. «*Ընդ եղեգան փող բոց ելանէր*»:

Հերոսության, նահատակության ճանապարհի վրա, թափ է առնում ազգովին վերածնվելու եւ ապրելու վճռականությունը:

Ու ծնվում է *նոր Վահագնը* մեր արյան ծովից, մեր նահատակության բոցերից, մեր պայքարի թափից:

«Եվ «*Ի բոցոյն պատանեկիկն վազէր*», «*հուր հեր*» եւ «*արեգական աչկունք*» ունեցող նորամանուկը՝ Սովետական Հայաստանը:

Մեր ժողովուրդը գիտի տառապանքը հաղթության, իմաստության, արության վերածելու գաղտնիքը:

«*Հայոց նահատակությունը*,- հաստատում է հայրենասեր Հայրապետը,- *վերջնապես պսակված է հաղթության բրաբիոնով եւ նոր կյանքի լուսաբացով եւ վերածնված է մեր հինավուրց երկիրը Հայաստան, իբրեւ ազգային պետություն*»:

Հայ ժողովուրդը գտնում է իր ազգային վերածնության ճշմարիտ ուղին, իր պատմության ամենածանր պահին:

Այդ ծանր, մղձավանջային օրերին, եղբայրական օգնության ձեռք է երկարում ռուս բարեկամ ժողովուրդը:

Հայ ժողովուրդը իր բախտը, փրկության հույսը ընդմիշտ կապում է ռուս ժողովրդի հետ, որը նրան ոտքի է կանգնեցնում, բուժում նրա վերքերը, բարի Սամարացու նման:

Պայծառանում է հայոց երկինքը: Մեր ազգային ճշմարիտ վերածննդյան հուսալի սկիզբ էր դրվել: Փարատվում է մղձավանջը եւ բացվում է հուսալի լուսաբացը հայոց աշխարհում, խաղաղության, ապահովության, առաջադիմության պայմաններում:



Հայ ժողովուրդը, տառապանքի «Կարմիր ծով»-ից մազապուրծ ազատված, պատերազմից արյունաքամ, ժառանգում էր միայն ավերակ, քայքայված ու կազմալուծված մի երկիր, մի «որբի ու ողբի հայրենիք»:

Նոր կյանքի է կոչվում հայ ժողովուրդը իր ազատագրված հողում, սկսում է վերաշինել հայրենի իր բույնը, բուժում իր վերքերը:

Կատարվում է մեր մեծ նահատակների իղձը, երազը: Հայ ժողովուրդը տիրանում է իր հողին, իր ազատության, ստեղծում է հայրենիք, պետություն, ապահով ու խաղաղ կյանք:

«Եթե ինձ հարցնեն, թե մեր մոլորակի վրա որտեղ կարելի է առավել շատ հրաշքների հանդիպել, ես առաջինը կտայի Հայաստանի անունը: Ժողովրդական տնտեսության, գիտության, մշակույթի, արվեստի բնագավառում ձեր հանրապետության վերափոխումները, իրոք, հրաշքի են նման» (Ռոքվել Քենտ, Ամերիկա-սովետական բարեկամության ազգային խորհրդի նախագահ, նշանավոր նկարիչ):

«Այցելելով Հայաստան, ես ապշած մնացի հանրապետության վերածնության եւ առաջադիմության լայն ծավալով ... Ինձ վրա խոր տպավորություն թողեց Հայաստանի մայրաքաղաք Երեւանը, որը հանդիսանում է հայ ժողովրդի ուժի եւ արիության իսկական արտահայտությունը: Ես իմ կյանքում չեմ տեսել մի քաղաք, որի բնակչությունը պատմականորեն կարճ ժամանակամիջոցում՝ 40 տարվա ընթացքում, 30 000-ից հասներ 600 000-ի» (ֆրանսիացի գրող Ժան Պոլ Սարտրը):

Քառասուն տարին ոչ մեկ ժողովրդի կյանքում մեծ ժամանակաշրջան չէ: Բայց հրաշքի համազոր նվաճումներ կատարվեցին մեր ժողովրդի մաքառումներով, խիզախումներով, պայքարով ու աշխատանքով շինարարության, գիտության, մշակույթի, ժողովրդական լուսավորության, արդյունաբերության, առողջապահության եւ այլ բնագավառներում:

Հայաստանը դարձել է լույսի հայրենիք, հույսի հայրենիք, նոր ու հզոր Սովետական Հայաստան: Երբեմնի հետամնաց, քայքայված ու ավերակ Հայաստանը դարձել է շեն ու ծաղկած երկիր, իսկ քաղաքամայր Երեւանը հայ մշակույթի, լուսավորության եւ հայ նոր կյանքի կենտրոն, համալսարանով, ինստիտուտներով, գիտահետազոտական հիմնարկներով:

Տարեցտարի անճանաչելիորեն փոխվել է մեր հանրապետության քարտեզը, ծնունդ են առնում նոր քաղաքներ, ավաններ, որոնց մեջ ապրում են եւ ստեղծագործում ապագային վառ հույսերով նայող հայ նոր սերունդներ:

Մեր երկիրը, իր հազարամյակների պատմության ընթացքում, չի տեսել երբեք բնակչության այնպիսի աճ, ինչպիսին ունի այժմ: 1920 թվականին 700000, իսկ այսօր, միայն Հայաստանում՝ 2 000 000:

Այս բոլորը յուրաքանչյուր հայ մարդու սիրտը լցնում է ազգային հպարտության ամենաանուշ զգացմունքներով եւ մասամբ մեղմում եղեռնի ահավոր վշտի ծանրությունը, մորմոքը:

Եւ բացել է հայրենիքն իր մայրական գիրկը նաեւ 1915 թվականի ազգակործան եղեռնից մազապուրծ ազատած, աշխարհի չորս ծագերին ցրված իր հայրենազուրկ զավակների առաջ, եւ կանչում է նրանց, բոլորին դեպի տուն, դեպի հայրենի օջախը:

Վերջին տարիներին, ավելի քան 200 000 արեւմտահայեր է ընդունել հայրենիքն իր գրկում:

Մայր հողի հայությունը իր ազգային վերածնության, պետականության իր պայծառ ապագայի հիմքերն է ամրապնդում օրերի հետ եւ շենացնում համայն հայության հայրենի օջախը:

Ինչ ստեղծվել է 44 տարիների ընթացքում, դա սեփականությունն է հայ ժողովրդի:

Այսօր, եղեռնից հիսուն տարի վերջ, պայծառ է վերածնված մեր ժողովրդի ներկան, էլ ավելի վառ՝ նրա *ապագան*:

Այսօր հայ ժողովուրդը իր ձեռքն է վերցրել իր ճակատագիրը եւ *հայրենի հողի վրա վառել է իր հավերժության, իր գոյության խարույկը*, եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում, եւ վառ հավատով է նայում ավելի պայծառ գալիքին՝ մեր նահատակների կտակով, տեսիլքով, պատգամով:

Այո, իզուր չի անցել ապրիլյան եղեռնի զոհերի թափած սուրբ արյունը: Հայ ժողովրդի համար նվիրական է միշտ մեր նահատակների խնկելի հիշատակը, երեկ, այսօր եւ վաղը:

Վա՜յ այն ժողովրդին, որը կմոռանա իր նահատակներին:

Հայ ժողովուրդը նշեց իր բյուրավոր նահատակների պայծառ հիշատակը աղոթքով ու սուրբ ուխտով եւ մանավանդ մեր վերածնված Մայր Հայրենիքի, նրա բեղուն ներկայի եւ առավել պայծառ գալիքի անպարտելի գիտակցությամբ:

Հայ ժողովուրդը իր նահատակների անմահ հիշատակին կանգնեցրել է մեծագույն կենդանի, ներշնչող հուշարձանը, մեր վերածնված Սովետական Հայաստանը, եւ ավելի քան երբեք վստահ է, որ վերջնական հաղթանակն ու արդարությունը կլինեն մեր նահատակների կողմը եւ երբեք, երբեք չի կրկնվի ապրիլյան եղեռնը:

Այդ է հայ ժողովրդի խորունկ հավատը:

*Հավերժական փառք մեր բյուրավոր նահատակներին:*

*Փառք ապրիլյան եղեռնից հրաշափառապես հարություն առած մեր ժողովրդին:*

*Փառք մեր վերածնված Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:*

«Էջմիածին», 1965, ԲԳԴ (փետրվար-մարտ), էջ 3-5:



## Թ Ի Վ 34

**[Հաղորդագրություն Մայր Աթոռում եղեռնի 50-ամյակի նշման մասին]**

### ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ

**Ապրիլի 24-ին, շաբաթ**, առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը սուրբ պատարագ է մատուցում ապրիլյան եղեռնի հիսնամյակի առթիվ:

Ամպիովանու տակ, եկեղեցական թափորով, Հայոց Հայրապետը առաջնորդվում է Մայր Տաճար:

Մայրավանքի շրջափակը եւ Մայր Տաճարը լիքն են հազարավոր ուխտավորներով եւ հավատացյալներով, որոնք եկել են իրենց հարգանքը մատուցելու իրենց նահատակ եղբայրների եւ քույրերի խնկելի հիշատակին եւ մի ծունր աղոթք մրմնջալու:

Մայր Տաճարի աջակողմյան եւ ձախակողմյան դասերում տեղ են գրավել ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից եւ Հունաստանից եկած շուրջ 150 ուխտավորներ:

Այնտեղ են նաեւ Մայր Աթոռի հյուրերը, որոնք այս առթիվ ժամանել են Փարիզից, Հայագիտական ուսմանց կենտրոնի ներկայացուցիչ Վահագն Կարապետյանը, «Վարդանանց ասպետներ» հայրենասիրական կազմակերպության Փարիզի հայկական դահլիճի ներկայացուցիչ Արշամ Ճիզմեճյանը, Մարսելի Պրադոյի հայոց Մայր Եկեղեցու կրոնական ընկերակցության ներկայացուցիչ Գաբրիել սարկավագ Լուսարարյանը, Լոնդոնից հայ երիտասարդաց կազմակերպության նախագահ Հայաստան Վարդանյանը:

Սուրբ պատարագին ներկա են Երեւանի եւ Թբիլիսիի թեմական խորհուրդների ներկայացուցիչները, Հոգեւոր ճեմարանի դասախոսական կազմը, մտավորականներ, արվեստագետներ եւ մամուլի ներկայացուցիչներ Երեւանից:

Հանդիսության ներկա է նաեւ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

Սուրբ Սեղանին սպասարկում են Տ. Կոմիտաս եւ Տ. Վահան եպիսկոպոսները, վարդապետներ, քահանա հայրեր, սարկավագների խումբը:

Սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը շնորհալիորեն կատարում է Մայր Տաճարի երգեցիկ խումբը, ղեկավարությամբ Խորեն Հակոբյանի:

Ամեն կողմ խունկ, աղոթք, հանդիսություն, վասն յիշատակի անկելոցն ի մեծի եղեռնի, ընթացս առաջին համաշխարհային պատերազմի:

«Հայր մեր»-ի ժամանակ, Կոմիտաս եպիսկոպոսը, «ի ծայն բարձր եւ ի լուր ժողովրդեան», ընթերցում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1964թ. օգոստոս 17 թվակիր սրբատառ հայրապետական կոնդակը, Ավագ Սեղանի բեմից, նվիրված ապրիլյան եղեռնի հիսնամյակին, ունկնդրվում է արցունքոտ աչքերով, երկյուղածությամբ եւ լռությամբ:

## Հոգեհանգիստ

Սուրբ պատարագը նույն հանդիսությամբ ու վեհությամբ շարունակվում է մինչեւ արձակման Ավետարանը:

Այնուհետեւ, Ավագ Ս. Սեղանի բեմի առաջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգստյան հատուկ պաշտոն, հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսունամյակին նվիրված:

Մայր Տաճարի երգեցիկ խմբի մեներգչուհի Սվետլանա Ջաքարյանի «Յորժամ»-ը, կատարված բարձր արվեստով եւ խորին հուզումով, տպավորվում է բոլոր ներկաների սրտերի եւ հոգիների մեջ:

Եկեղեցին, քար լռության մեջ եւ երկյուղածությամբ, ունկնդրում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի «Աղոթքի եւ ուխտի խոսք»-ը, ապրիլյան եղեռնի հիսնամյակին նվիրված, որը տպվել էր «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի փետրվար-մարտ-ապրիլ համարի սկզբում:

Այնուհետեւ, Մայր տաճարի կամարների տակ, հանդիսավոր ու վեհ հնչում է «Գթա Տեր» հոգեհանգստյան շարականը, տաղանդավոր երգահան Ալեքսանդր Հարությունյանի մշակումով, ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին նվիրված:

Հանգստյան Ավետարանի ընթերցումից հետո, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ծանր եւ հանդիսավոր կերպով, արտասանում է «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղոթքը, ոգեկոչելով ապրիլյան եղեռնին զոհ գնացած շուրջ երկու միլիոն հայ նահատակների հիշատակը, «որք նահատակեցան ի մեծի եղեռնի, յընթացս առաջին համաշխարհային պատերազմին», մաղթելով, որ Տերը Իր ամենաառատ ողորմությամբ եւ գթությամբ արժանացնի նրանց հոգիները «երկնային լուսեղէն փառաց պսակին»:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Հայրապետի բերանով եւ օրհնությամբ, իր աղոթքն էր մրմնջում մեր ժողովրդի նահատակ զավակների հիշատակին:

## ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ



Հավարտ սուրբ պատարագի, ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, հազարավոր ժողովրդի ներկայության, առաջնորդվում է Մայր Տաճարի հյուսիսային կողմը, կատարելու հիմնարկեքի օրհնությունը կառուցվելիք նահատակաց հուշարձանի:

Մայր Աշտոցից քաղված համապատասխան աղոթքներից, սուրբ գրական ընթերցումներից հետո, ազգիս սիրելի Հայրապետը օրհնում եւ զետեղում է առաջին քարը հուշարձանի, որն ավարտելու եւ օծվելու է մինչեւ 1965 թվականի հոկտեմբերը:

Եկեղեցական արարողության ավարտին, ճառով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը.

«Այսօր, ապրիլի 24-ին, բովանդակ հայ ժողովուրդը, թե Մայր Հայրենիքում եւ թե Սփյուռքի բոլոր հորիզոնների տակ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 17 օգոստոս թվակիր կոնդակի հրահանգով եւ ոգով, համազգային հանդիսավորությամբ, ազգային արժանապատվության խորունկ գիտակցությամբ եւ լրջությամբ, նշում է մեր հավաքական մարտիրոսության 50 տարին:

Հիսուն տարի է անցել մեր բոլորի սրտերը բզկտող, մեր հոգիները փոթորկող եւ մեր աչքերը կրակե արցունքով ողողող այն սեւ օրերից:

1915 թվականի ապրիլ ամսին, երբ աշխարհի վրա գարուն էր բացվել, թշնամին ուզեց ողջ-ողջ թաղել մեր ժողովրդին, որը տեղահանվեց, եւ ապա, տարագրության մռայլ ճամբեքի վրա, նահատակվեց, գերեզմանվեց անապատներում, կիրճերում եւ այլ հողերի վրա, ուր նա հազարամյակներով ապրել, ստեղծագործել եւ աղոթել էր:

Արեւմտահայությունն ապրեց իր Գողգոթան, տալով շուրջ երկու միլիոն նահատակ. դա ահավոր կորուստ էր մեզ համար: Թշնամին իր հարվածն ուղղեց նաեւ մեր ժողովրդի իմացական եւ հոգեւոր ուժերի ակունքներին:

Եղեռնին զոհ գնացին նաեւ մեր արեւմտահայ գրականության եւ արվեստի ջահակիրները եւ շուրջ 4000 հայ հոգեւորականներ:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր նահատակներին ...:

Թվում էր աշխարհը փուլ եկավ հայ ժողովրդի գլխին, թվում էր փշրվեց, այրվեց, կորավ ամեն ինչ:

Հայության գլխով եկավ ու անցավ մեծ աղետը:

Անցան 50 տարիներ:

Վիշտը մնաց, բայց եւ փոխակերպվեց ուժի կյանքի, կամքի եւ հավատի:

Այդ հրաշքը կոչվում է հայ ժողովրդի անխորտակելի ոգի, ապրելու, վերածնվելու կամք, ստեղծելու կորով:

Թշնամին չկարողացավ սպանել հողում թաղված մեր ժողովրդի կենսունակության եւ հավերժության արմատը:

Պատմությունը մեր ժողովրդի ճակատին գրել էր ***ոչ թե մեռնել, այլ ապրել եւ վերածնվել***:

Ժողովուրդները հավաքական մաքառումներ են եւ խիզախումներ:

Հայ ժողովուրդը չի ընկճվել երբեք բռնակալների հարվածներից եւ իմացել է իր անհատականությունը վերածել հաղթանակի:

Հայ ժողովուրդը հավատացել է, որ խաչելության, Golgothային հաջարդում է հարության այգաբացը, նահատակության՝ վերածնունդը:

Բիրտ ուժի, բռունցքի դեմ, հայ ժողովուրդը պարզել է իր հոգու արիությունը, իր մշակույթի զորությունը:

Մեր ժողովրդի հավաքական նահատակության մեջ կար եւ հարություն, եւ երկինք:

Այժմ, եղեռնից հիսուն տարի հետո, ո՞ւր եք փնտրում մեր ժողովրդին, այդ մեծ նահատակին: Դեր Զորի անապատներում, Եփրատի եւ Տիգրիսի ալիքների՞ մեջ:

«Չէ աստ, այլ յարեաւ» հոգին ողջ հայ ժողովրդի, այստեղ, հայրենի հողի վրա, էջմիածնի պարիսպների տակ, Երեւանի փողոցներում:

1920 թվականին նահատակության, արյան, կոտորածի ճանապարհին թափ է առնում ազգովին ապրելու, վերածնվելու հավատն ու սրտառուչ վճռականությունը:

Ու ծնվում է մեր օրերի նոր Վահագնը՝ Սովետական Հայաստանը, մեր արյան բոցերից, մեր պայքարի թափից:

«Ընդ եղեգան բոց ելանէր»:

Այդ ծանր օրերին, արեւմտյան աշխարհը քար դրավ իր խղճի եւ սրտի վրա: Մեզ բարեկամության ձեռք մեկնեց ռուս մեծ ժողովուրդը, բուժեց մեր վերքերը բարի սամարացու նման: հայ ժողովուրդը իր կյանքը, ապագան ընդմիշտ կապեց ռուս ժողովրդի հետ:

Պայծառացավ հայոց երկինքը, փարատվեց մղձավանջը եւ բացվեց հուսալից այգաբացը Հայոց աշխարհում, հայոց սրտերում:

Կատարվեց մեր մեծ նահատակների իղձը, երազը:

Հայ ժողովուրդը տիրացավ իր հողին, ազատության, ստեղծեց հայրենիք, պետականություն, ապահով եւ խաղաղ կյանք:

Իզուր չի անցել մեր նահատակների թափված արյունը:

Քառասունհինգ տարուց ի վեր, մեր ժողովուրդը իր նահատակների հիշատակին կանգնեցրել է մեծագույն հուշարձանը: Դա մեր վերածնված Մայր Հայրենիքն է՝ Սովետական Հայաստանը:

«Մեռելներուս իբրեւ խաչ ես այս ծառը տնկեցի...»,- ասում է բանաստեղծը:

Այդ ծառը մեր կանաչ, մեր ծաղկած հայրենիքն է, մեր հրեշտակային աչքերով մանուկներն են, մեր ուրախ աղջիկներն ու մայրերն են, մեր մշակույթն է, մեր այսօրն է, մեր ապագան է:



Հանգչեցեք խաղաղ ու հպարտ, որ այսօրվա մեր վերածնված կյանքի մեջ, հաղթական երթի մեջ, կա հորովելը Կոմիտասի, փոթորկահույզ ոգին Սիամանթոյի, ասպետական ուժն ու գեղեցկությունը, Հայկյան հանճարը Վարուժանի, կորովի եւ արդարամիտ խոսքը Զոհրապի, քնքուշ ու սիրաթաթախ քնարը Ռուբեն Սեւակի, Տիգրան Չոկյուրյանի եւ շունչը հայոց պատմության:

Հանգչեցեք խաղաղ ու հպարտ: Հիսուն տարի ապրում էիք հայության վիրավոր սրտում, իսկ այսօր ազատ հայրենիք եք եկել իբրեւ մասունք, իբրեւ նշխար, իբրեւ սրբություն:

Կանգ առ, հայոց ժողովուրդ, այս պաշտելի շիրիմների առաջ, որոնք կառուցվել են այստեղ Մայր աթոռում, Երեւանում եւ մեր բոլոր քաղաքներում, եւ հիշիր քո նահատակներին, հիշիր նաեւ, որ 45 տարի առաջ, վերջացավ ընդմիշտ եղեռնը, վիշտը, որբությունը եւ սկիզբ դրվեց քո ազգային ճշմարիտ վերածննդյան:

Եւ ամեն անգամ, երբ հեռավոր սփյուռքի ափերից մի հայ ուխտավոր կգա համբուրելու հայրենի հողը, խունկ ծխելու եւ մի ծուռ աղոթք մրմնջալու իր պապերի Ս. Սեղանի առաջ, նա նույն բարեպաշտ երկյուղածությամբ եւ հափշտակությամբ կբերի նաեւ իր սրտի կնդրուկը Ձեր հավերժական հիշատակին, մեր սուրբ նահատակներ:

Փառք մեր նահատակներին: Նրանք ***մեռան***, որ մենք ***ապրենք*** եւ ***ապրեցնենք*** նրանց ***անունն*** ու ***գործը***, ***երազն*** ու ***պատգամը***, մեր եւ գալոց հայ սերունդների սրտերում:

Փառք իր նահատակությունը հաղթության վերածող մեր շինարար, մեր արդար, մեր խաղաղասեր ժողովրդին:

Փառք մեր ապագա կառուցումների, հույսերի եւ երազների միակ կռվան մեր մայր Հայրենիքին, Սովետական Հայաստանին:

Ապրիլի 24-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն իր շքախմբով ներկա է լինում Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայում ապրիլյան եղեռնի հիսնամյակին նվիրված մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչների նիստին:

Հանդիսության բացումը կատարում է Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը:

Ապրիլյան եղեռնին եւ մեր ազգային վերածնության նվիրված բովանդակալից եւ գեղեցիկ զեկուցումով հանդես է գալիս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանը:

## ՀՈՒՇԻ ՑԵՐԵԿՈՒՅԹ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐԱԿԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՀԻՍՆԱՄՅԱԿԻՆ

Ապրիլի 25-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

Սուրբ պատարագին ներկա են Վեհափառ Հայրապետը, ուխտավորներ, հյուրեր եւ պաշտոնական անձինք:

Հավարտ սուրբ պատարագի, ժամը 2-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Վեհարանի հանդիսասրահում, տեղի է ունենում հուշի նիստ՝ նվիրված ապրիլյան եղեռնի հիսնամյակին:

Նախագահության սեղանի շուրջ տեղ են գրավել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, ակադեմիկոս Կարո Մելիք-Օհանջանյանը, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ պրոֆ.-դոկտոր Ա. Առաքելյանը, գրող Կոստան Զարյանը:

Նիստին ներկա են Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն հոգեւոր Խորհրդի եւ վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը, Երեւանի եւ Թբիլիսիի թեմական խորհուրդների ներկայացուցիչները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը: Հրավիրյալների թվում են Արշամ Ճիզմեճյանը եւ Վահագն Կարապետյանը Փարիզից, Գ. Լուսարարյանը Մարսելից, Հ. Վարդանյանը Լոնդոնից, որպես Վեհափառ Հայրապետի հյուրերը սույն հանդիսությանց:

Ապրիլյան եղեռնի հիսնամյակին նվիրված հուշի ցերեկույթին ներկա են նաեւ մի շորք մտավորականներ, այդ թվում ակադեմիկոս Լ. Խաչիկյանը (Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի դիրեկտոր), ակադ. Ա. Ղարիբյանը (Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գրադարանների դիրեկտոր), պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը, պրոֆ. Բաբկեն Առաքելյանը, պրոֆ. Գ. Մեդնիկյանը, ճարտարապետներ պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, Վարազդատ Հարությունյանը, Ռաֆայել Իսրայելյանը, Կոնստանտին Հովհաննիսյանը, Բաղդիկ Արզումանյանը, կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը, գրականության թանգարանի դիրեկտոր Ս. Մելիքսեթյանը, բանաստեղծներ Գեւորգ Էմինը, Պարույր Սեւակը, Մայր Աթոռի տպարանի տնօրեն Խաչիկ Սամվելյանը եւ ուրիշներ:

Հուշի ցերեկույթը բացվում է Հայկական ՍՍՌ պետական հիմնով, որից հետո բացման հետեւյալ խոսքով հանդես է գալիս Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ եւ Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

«Երեկ եւ այսօր, հայ ժողովուրդը եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, սուրբ պատարագի մատուցմամբ, հանդեսների կազմակերպությամբ ոգեկոչեցին հիշատակը ապրիլյան եղեռնի շուրջ երկու միլիոն նահատակների:



Այսօր, Վեհարանի հանդիսասրահում, Ամենայն Հայոց Հայրապետի բարձր նախագահությամբ, գումարվում է սուգի նիստ, որպեսզի մենք եւս՝ Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգեւոր Խորհուրդը եւ վանքի պաշտոնեությունը, հոգեւոր ճեմարանի դասախոսական կազմը եւ ուսանողությունը, մեր ամբողջ ժողովրդի հետ միասին, մեր հարգանքի խոսքն ասենք մեր նահատակների խնկելի եւ անմոռաց հիշատակին:

Հիսուն տարի առաջ, սուլթանական Թուրքիայի կողմից գործվեց ժողովուրդների պատմության մեջ աննախընթաց մեծագույն ցեղասպանությունը: Զոհվեց շուրջ երկու միլիոն հայություն: Տարագրության մռայլ ճանապարհներում ընկավ արեւմտահայ գրականության եւ արվեստի խոստումնալից ու տաղանդաշատ մի ամբողջ սերունդ:

Հայ եկեղեցին եւս ապրեց իր Գողգոթան: Ինչպես միշտ, այս անգամ եւս հայ հոգեւորականի արյունը խառնվեց նահատակ իր ժողովրդի արյան հետ: Թշնամին միասին ոչնչացրեց հոտին ու հովվին, շատերը սղոցվեցին, մորթազերծ արվեցին, սպանմամբ սրո մեռան, ու նույնիսկ հետմահու կախաղան բարձրացվեցին: 4000-ի է հասնում նահատակ հայ հոգեւորականների ոչ լրիվ թիվը, իսկ կործանված, թալանված ու պղծված եկեղեցիները՝ 3000-ի: Անհետ կորան աչքի լույսի պես դարեր պահպանված մեր հոգեւոր մշակույթի անգին ու անկրկնելի գանձերը, մեր ձեռագրերն ու մշակութային այլ արժեքները:

Հիսուն տարի առաջ, Մայր Աթոռի պարիսպների տակ, մեծ եղեռնից մազապուրծ արեւմտահայության մնացորդացը, վիրավոր, գաղթական, սովատանջ եւ հիվանդ, բայց ապրելու վճռակամությամբ լեցուն, ձեռքերը երկինք էր բարձրացնում, աստվածային օգնականություն ստանալու համար իր ցավերին ու մեծ վշտին: Այդ օրերին Ամենայն Հայոց Հայրապետությունն ու Մայր Աթոռի միաբանությունը իրենց կարելին արին՝ թեթեւացնելու համար մեր ժողովրդի ահավոր այդ ողբերգությունը:

Վեհափառ Հայրապետի կոնդակի հրահանգով, այսօր աղոթքի եւ ուխտի օր է մեզ համար: Հայ ժողովուրդը չի մոռացել ու չի կարող մոռանալ ապրիլյան եղեռնը: Հիսուն տարի է անցել, կանցնեն եւս հիսուն տարիներ, բայց մենք կհիշենք, կոգեկոչենք նրանց հիշատակը, եւ մեր սերունդներին կդաստիարակենք մեր մեծ նահատակների պատգամով ու տեսիլքով, այսինքն հայկական շնչով ու հայոց պատմության ոգով: Մոռանալ նահատակներին, նշանակում է պարպվել հոգեկան արժեքները գնահատելու, նրանցով ապրելու, եւ նոր կյանք ստեղծելու հնարավորությունից:

Հայ Եկեղեցին, այս իմաստով, սրբացրել է «վասն Յիսուսի եւ վասն հայրենեաց» մղված մարտում զոհվածների հիշատակը:

Եղեռնի օրերին, մեր նահատակ հայրերը չնահանջեցին եւ հավատարիմ մնացին հայ հավատին, մեր ընտանական սրբություններին եւ մեր հայրենական ավանդույթներին: Կարող էին կյանքի եւ մահվան երկընտրանքի առջեւ տկարանալ, թերանալ եւ եսասիրաբար ուրանալ ամեն ինչ, բայց նրանք գիտակցորեն ու բաց ճակատով անցան տարագրության ու կոտորածի մռայլ ճանապարհներից: Նրանք մահացան, որ մենք ապրենք եւ մեր ու գալոց հայ սերունդների մեջ ապրեցնենք նրանց հիշատակը:

Մեր նահատակների երազը իրականացել է. հիսուն տարի հետո հայ ժողովուրդը տիրացել է իր սրբազան հողին, իր ազատության, ստեղծել է իր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, որը հույսի կռվան է մեր ապագա կյանքին ու նվաճումներին: Եղեռնից հիսուն տարիներ հետո, հայ ժողովուրդը իր վերածնված հայրենիքում վերստեղծել է եղեռնի տարիներին կորած, հափշտակված իր հոգեւոր ու մշակութային գանձերն ու արժեքները:

Մեր նահատակների պատգամն է, որ չմոռանանք իրենց արյունով գնված մեր ազատությունն ու հայրենի հողը. գուրգուրանք նրան եւ համախմբվենք նրա շուրջ, չխնայենք մեր ուժերը նրա առաջընթացի համար, ամուր պաշտպանենք նրան մեր սիրով, նվիրումով, որպեսզի երբեք, երբեք չքանդվի մեր այս նոր օջախը:

Այս խոհերով եւ զգացումներով, թույլ տվեք, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, բացված հայտարարել սուգի սույն նիստը, հրավիրելով Ձեզ բոլորիդ հոտնկայս մեկ րոպե հարգել հիշատակը մեր նահատակների:

Այնուհետեւ գործադրության է դրվում գեղարվեստական մի հայտագիր՝ Հոգեւոր Ճեմարանի ուսանողների ուժերով պատրաստված:

Արտասանվում են Սիամանթոյից «Ափ մը մոխիր հայրենի տուն» (Սարգիս Հալեպյան), Վարուժանից «Առկայծ ճրագ» (Հովհաննես Գրվզգյան), Հովհաննես Թումանյանից «Հայրենիքիս հետ» (Եղիշե սարկավագ Բաղրամյան), Գեղամ Սարյանից «Կառափնարան» (Գրիգոր սարկավագ Բունիաթյան) եւ Վահան Թեքեյանից «Հարության շունչն է ահա» (Նազարեթ Քիրազյան):

Հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը մեներգում է Վարդանանց հիշատակին նվիրված «Արիացեալք» Մանկունքը, որից հետո եղեռնին նվիրված բովանդակալից եւ ընդարձակ զեկույցով հանդես է գալիս Գրիգոր Բեքմեզյանը՝ հանուն Գերագույն Հոգեւոր Խորհրդի:

Ճեմարանի երգչախումբը կատարում է հաջողությամբ մի շարք խմբերգեր՝ երաժշտության դասատու Խորեն Հակոբյանի շնորհալի ղեկավարությամբ. այդ թվում «Լոլո» (Կոմիտաս վարդապետ), «Զեյթունցիներ» (Մ. Եկմալյան), «Ջան հայրենիք իմ Հայաստան» (Ե. Սահառունի), «Երգ խաղաղության» (Ե. Սարդարյան), «Ծաղկիր ազատ իմ հայրենիք» (Ա. Այվազյան):



Մայր Տաճարի երգեցիկ խմբի մենակատար Օննիկ Օդաբաշյանը ապրումով երգում է «Կիլիկիա»-ն:

Հանուն Վարդանանց ասպետների Փարիզի դահլիճի, Արշամ Ճիզմեճյանը բերում է վկայությունը հայրենասիրական այդ կազմակերպության հավատարմության դեպի մեր պատմությունը եւ դեպի հիշատակը հայ նահատակների, «կանգնած Ս. Էջմիածնի մեջ եւ նվիրական այս Արարատի դիմաց, զինված Ս. Էջմիածնի ոգով եւ հայրենիքի սիրով. ահա հիշատակներ, որոնք կապրին միշտ մեր սրտերուն մեջ, նույնիսկ օտար հորիզոններու տակ, հակառակ այն ահեղ փորձառություններուն, որոնցմով շրջապատված ենք: Մենք հավատարիմ կմնանք մեր ավանդույթներուն եւ մեր նահատակներու հիշատակին եւ կապրինք այն երջանիկ հպարտությամբ, որ կծաղկի եւ կբարգավաճի մեր ժողովուրդը հայրենի հողի վրա»:

Հանդիսության վերջում խոսք է առնում Հայոց Հայրապետը եւ իր խոսքերը, զգացումները, իր սրտի ջերմությունն ու կրակը փոխանցելով բոլոր ներկաներին, ոգեկոչում է հիշատակը ապրիլյան եղեռնի եւ վեր է հանում մեր ժողովրդի նահատակության եւ ապա մեր այժմյան ազգային վերածննդյան պատմական նշանակությունն ու գնահատությունը,1915-ից մինչեւ 1965 թվականները տեղի ունեցած եղելությունների լույսի տակ:

Ապրիլյան եղեռնի հիսնամյակին նվիրված ցերեկույթը վերջանում է խմբովին երգված «Էջ Միածինն ի Հօրէ» շարականով եւ Տերունական աղոթքով:

Ժամը 4-ին տեղի է ունենում ընդունելություն, որը վերածվում է ապրիլյան եղեռնի եւ վերածնված ժողովրդի կյանքին նվիրված հուշի երեկույթի:

Ընդունելության ներկա են Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, վարպետը՝ Մարտիրոս Սարյանը, ակադեմիկոսներ Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Ղարիբյանը, Լ. Խաչիկյանը, պրոֆեսորներ Բ. Առաքելյանը, Ա. Աբրահամյանը, Գ. Մեդինկյանը, Կ. Ղաֆադարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Առաքելյանը, գրողներ Կ. Զարյանը, Գ. Էմինը, Պ. Սեւակը, կոմպոզիտոր Ա. Հարությունյանը, ճարտարապետներ Ռ. Իսրայելյանը, Կ. Հովհաննիսյանը, Բ. Արզումանյանը եւ ուրիշներ:

Ընդունելությանը ներկա են Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի եւ վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Երեւանի, Թբիլիսիի թեմական խորհուրդների ներկայացուցիչները, ճեմարանի դասախոսական կազմը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը, վանքի պաշտոնեությունը եւ այլ հրավիրյալներ:

Ընդունելության ժամանակ խոսք են առնում Վեհափառ Հայրապետը, Կ.Դալլաքյանը, ակադ. Կ.Մելիք-Օհանջանյանը, ակադ. Ա.Ղարիբյան, պրոֆ. Ա.Աբրահամյանը, պրոֆ. Վ.Հարությունյանը, պրոֆ. Գ.Մեդինկ-

յանը, ճարտարապետ Մ.Մազմանյանը, գրողներ Կ.Զարյանը, Գ.Էմինը, որն արտասանում է իր նոր մեկ բանաստեղծությունը՝ «Փոքր ենք»-ը:

Կոմպոզիտոր Ա. Հարությունյանը նվագում է դաշնամուրի վրա «Կռունկ»-ը եւ իր «Երաժշտական պատկերներ» շարքից «Իրիկնամուտը էջմիածնում» ու «Սասունցիների պար»-ը ստեղծագործությունները:

Արտասահմանի հյուրերից ջերմ, հայրենասիրական ելույթներ են ունենում Վահագն Կարապետյանը եւ Հայաստան Վարդանյանը:

Ճարտարապետ Վ. Հարությունյանը երգում է երկու երգ՝ «Ղըլե յաման» եւ «Հայրիկ Հայրիկ»:

Ճեմարանի դասախոս Ս. Անթոսյանը արտասանում է գրաբար հատվածներ Եղիշեից:

Արսեն վարդապետ Բերբերյանը մեներգում է «Ի գերեզման յարուցելոյն»-ը:

Ընդունելության վերջում խմբովին երգվում է Տերունական աղոթքը:

Ապրիլի 24-ը եւ 25-ը Մայր Աթոռի կամարների տակ իրապես հանդիսացան սուգի, աղոթքի եւ ուխտի օրեր՝ ապրիլյան եղեռնի հիսնամյա տարելիցի կատարումով, Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակի հրահանգով եւ ոգով:

«Յիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»:

«Էջմիածին», 1965, ԵԶԷ, էջ 106-113:

## Թ Ի Վ 35

**[Հաղորդում սփյուռքահայ ուսանողների հետ հանդիպման մասին]**

### ԱՊՐՈՒՄ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հանդիպում սփյուռքահայ ուսանողության հետ

[1965թ.] Ապրիլի 19-ին Հայաստանի արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ Երեւանի բուհերում սովորող սփյուռքահայ ուսանողների հետ հանդիպման երեկո՝ նվիրված սուլթանական Թուրքիայի կառավարողների կազմակերպած հայկական կոտորածների 50-ամյակին:

Երեկոն ներածական խոսքով բացեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ ընկ. Վ. Համազասպյանը:

Այնուհետեւ ելույթ ունեցավ բանաստեղծ Գեւորգ Էմինը:

- Սուլթանական Թուրքիայի կառավարողները,- ասաց նա,- ոչնչացրին Արեւմտյան Հայաստանի բարեշեն ավանները, թափեցին անմեղ մարդկանց արյունը, բայց վերածնվեց մեր ժողովուրդը: Խոյացան ժամանակակից քաղաքներ, կերպարանափոխվեցին գյուղերը, Երեւանի, Լենինականի, Կիրովականի, Հրազդանի եւ Լուսավանի կողքին վեր բարձրացան նոր բարեշեն ավաններ՝ Զեյթունը, Կիլիկիան, Արեշը, Հաճընը ... Եւ այսօր հպարտորեն ասում ենք, մեր ժողովուրդը եղե՛լ է, կա՛ եւ կլինի՛:



Հանրապետության Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Շահինյանը մղձավանջային օրերի ականատես է եղել: Բայց նա տեսել ու ապրել է նաեւ իր ժողովրդի զարթոնքը:

- Տարիներ առաջ,- ասում է նա,- Երեւանի թաղամասերից մեկում ամեն գարուն բույն էին դնում մի զույգ արագիլներ: Աշնանը նրանք չվում էին Հնդկաստան եւ հաստատվում Մադրասում: Տարօրինակ է, բայց փաստ, արագիլները կարծես մայր հայրենիքի եւ սփյուռքի կապի խորհրդանիշ էին: Նրանք այլեւս չկան: Բայց կա հայ ժողովրդի երկու հատվածները միաձուլող մի նոր օղակ. այդ դուք եք, սփյուռքահայ ուսանողներդ ...

Խոսքը տրվում է Երեւանի մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի Ազնիվ Արաբյանին.

- Խորհրդային Միության ժողովուրդների ընտանիքում,- ասում է նա,- Հայաստանն այսօր դարձել է արեւաշող մի երկիր, որը վառ փարոսի պես լուսավորում է աշխարհով մեկ սփռված իր զավակների ուղին: Սփյուռքի եւ մայր հայրենիքի միջեւ ստեղծվել է անսասան կամուրջ:

- 1915 թվականը անթիվ զոհերի տարի եղավ,- իր ելույթում ասաց Երեւանի պետական համալսարանի ուսանող Մանվել Ադամյանը: - Բայց մեր ժողովուրդը չպարտվեց: Ձինվորագրվելով լենինյան գաղափարներին, գոյատեւելու եւ հաղթելու իրավունք նվաճեց: Մենք շարունակում ենք մեր հաղթական երթը: Դրա մի պերճախոս ապացույցը հայրենադարձությունն է: Ու տարագիրների քարավանները շարժվում են Հայաստան: Աշխարհով մեկ սփռված հայերի միակ հանգրվանը Խորհրդային Հայաստանն է:

Իր ելույթում Երեւանի բժշկական ինստիտուտի ուսանող Թորոս Թորանյանը երախտագիտության խոսք ասաց ռուս մեծ ժողովրդին, որն օգնության ձեռք մեկնեց անդունդի եզրին կանգնած հայ ժողովրդին:

Ելույթ է ունենում բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը:

- Եղեռնի օրը,- ասում է նա,- մենք նշում ենք յուրովի: Մատուռների փոխարեն կառուցում ենք Մատենադարան, նրանում հավաքելով դարավոր մշակույթի մատյանները, մոմերի փոխարեն վառում ենք Երեւանի, Լենինականի, Կիրովականի, Հայաստանի մյուս քաղաքների ու գյուղերի էլեկտրական կրակները: Աղոթքի փոխարեն Բյուրականի բարձունքից հայացք ենք հառում երկինք, գտնում նոր աստղաստփյուռներ՝ հավերժացնելով մեր ժողովրդի փառքը: Այսպես է ապրում ու հաղթանակում հայ ժողովուրդը:

Երեկոն ավարտվեց ճոխ համերգով, որին մասնակցեցին հանրապետության արտիստական լավագույն ուժերը:

ՀՀԳ[1]

[1] Հայաստանի Հեռագրական Գործակալություն (հետո՝ Արմենպրես):

## Թ Ի Վ 36

## [Հաղորդում Եղեռնի 50-ամյակին նվիրված գիտական սեսիայի մասին]

### ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ

[1965թ.] Ապրիլի 20-ին Երեւանի պետական համալսարանի նոր կորպուսի մեծ դահլիճում տեղի ունեցավ Հայկական ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի եւ Երեւանի պետական համալսարանի միացյալ գիտական սեսիան՝ նվիրված սուլթանական Թուրքիայի կառավարողների կազմակերպած հայկական կոտորածների 50-ամյակին:

Սեսիան ներածական խոսքով բացեց ՀԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը:

- Հիսուն տարի առաջ,- ասաց նա,- սուլթանական Թուրքիայի կառավարողները կատարեցին մի այնպիսի ոճրագործություն, որը դարձավ մարդկային պատմության սեւ էջերից մեկը: Նախապես մշակված ծրագրով երիտթուրքական կառավարությունը կոտորեց ավելի քան մեկ ու կես միլիոն հայ, ամայացրեց Արեւմտյան Հայաստանը: Կարող էր իրագործվել հայ ժողովրդին ամբողջապես ոչնչացնելու հրեշավոր ծրագիրը, եթե չլիներին Լենինն ու Մեծ Հոկտեմբերը:

Արյունաքամ եղած մեր ժողովուրդը 1920 թվականի նոյեմբերի 29-ին իր բախտը մեկընդմիշտ կապեց հզոր Ռուսաստանի, խորհրդային իշխանության, կոմունիզմի գաղափարների հետ: Ռուս մեծ ժողովրդի, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների օգնությամբ Հայաստանը դարձավ ծաղկուն հանրապետություն: Մենք ստեղծարար ժողովուրդ ենք: Հոգեւոր ու նյութական արժեքներ ստեղծելու համար մեզ անսահման հնարավորություններ տվեցին Մեծ Հոկտեմբերը, Կոմունիստական կուսակցությունը, խորհրդային երկրի բոլոր ժողովուրդների բարեկամությունը:

Սեսիայում «Հայ ժողովրդի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ եւ միջազգային իմպերիալիզմը» թեմայով զեկուցեց իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Եսայանը:

Վավերագրական հարուստ նյութերի հիման վրա զեկուցողը ցույց տվեց, որ 50 տարի առաջ հայերի կոտորածը տեղի է ունեցել ոչ թե տարերայնորեն, այլ թուրքական կառավարողների կողմից նախապես մշակված ծրագրով, պետական կարգով: Հայ ժողովրդի ողբերգության համար մեղավոր են ոչ միայն երիտթուրքերը, այլեւ միջազգային իմպերիալիզմը, որը կեղծ խոստումներով քաջալերում էր հայերին, սակայն ամենավճռական պահերին լքեց նրան: Անգլիայի պրեմիեր մինիստր Լլոյդ Ջորջը խոստովանում է, որ հայերը իրենց զոհերն են, որ բրիտանական կառավարության քաղաքականությունը հանգեցրեց հայերի զարհուրելի կոտորածին: Հայ ժողովուրդը այդ ճակատագրական պահին իր փրկության հույսը կապեց խորհրդային իշխանության հաղթանակի հետ:



- 1915 թվականի հայկական կոտորածների առաջին զոհերը,- իր զեկուցման մեջ ասաց ՀԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Մկրյանը,- դարձան արեւմտահայ նշանավոր մտավորականները: 1915 թվականին եւ հետագա տարիներին զոհվեցին ավելի քան հազար մտավորականներ, որոնց թվում՝ Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Տիգրան Չյոքյուրյանը, Ռուբեն Զարդարյանը, Ռուբեն Սեւակը, Թլկատինցին եւ ուրիշներ: Թուրքական կառավարողները չխնայեցին նույնիսկ այն հայ մտավորականներին, որոնք վիթխարի ծառայություններ էին մատուցել թուրքական կուլտուրային ու արվեստին:

Արեւմտահայության ինքնապաշտպանական կռիվների մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Ստեփանյանը: Զեկուցողը հանգամանորեն կանգ առավ 1915 թվականին Արեւմտյան Հայաստանի մի շարք վայրերում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվների վրա, խոսեց Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Վանի, Մուսա լեռան հերոսամարտերի մասին:

Պատմական գիտությունների դոկտոր Ե. Սարգսյանը եւ պատմական գիտությունների թեկնածու Ռ. Սահակյանը սեսիայում զեկուցեցին «Եղեռնի պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ» թեմայով:

Սեսիայում «Ժողովուրդների լենինյան բարեկամության անհաղթ ուժը» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Կ. Ուդումյանը:

- Խորհրդային երկրի ժողովուրդների մեծ ընտանիքում, - ասաց զեկուցողը,- հայ ժողովուրդը 45 տարում ձեռք բերեց վիթխարի նվաճումներ: Այդ նվաճումների համար մենք պարտական ենք Կոմունիստական կուսակցությանը, լենինյան դաշինքով զոդված խորհրդային ժողովուրդների անխախտ բարեկամությանը: Մենք՝ հայերս, առանձին ճակատագիր չունենք, մեր ճակատագիրը խորհրդային բոլոր ժողովուրդների բարեկամությունն է, կոմունիզմը:

«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը եւ հայ ժողովրդի վերածնունդը» թեմայով իր զեկուցման մեջ պատմական գիտությունների դոկտոր Գ. Գալոյանն ասաց.

- Հայ ժողովուրդը իր գոյության համար պարտական է խորհրդային իշխանությանը: Մեր ժողովրդի համար ամենածանր պահին մեզ օգնության հասավ ռուս մեծ ժողովուրդը: Լենինի նախաձեռնությամբ ՌՍՖԽՀ ժողկոմխորհուրդը որոշում ընդունեց Խորհրդային Հայաստանին օգնություն կազմակերպելու մասին: Միայն 1921 թվականին Խորհրդային Ռուսաստանը Հայաստանին բաց թողեց 3, 5 միլիոն ռուբլի (ոսկով) եւ մեծ քանակությամբ մթերքներ: Հայաստանը տնտեսական ու քաղաքական

դաշինքի մեջ մտավ Խորհրդային Ռուսաստանի հետ եւ իր բախտը կապեց Մեծ Հոկտեմբերի ու Կոմունիստական կուսակցության գաղափարներին: Անգլիայի քաղաքական գործիչ Հարոլդ Բաքստոնը, որը առիթ է ունեցել 1919 թվականին եւ ապա 1925 թվականին լինել Հայաստանում, Լոնդոնում հրատարակված իր «Անդրկովկասը» աշխատության մեջ գրել է, որ Խորհրդային Ռուսաստանը «ավելի շատ բան է արել հայերի համար, քան բոլոր արեւմտյան տերությունները միասին վերցրած»:

- Դարեր շարունակ,- վերջում ասաց զեկուցողը,- հայ ժողովուրդը պայքարել է ազգային ու սոցիալական ազատագրության համար եւ իր անցած դառնաղետ ճամփաների վրա անհամար զոհեր է տվել: Նրանց հիշատակը հավերժացնող ամենամեծ հուշարձանը Մեծ Հոկտեմբերի գաղափարներով վերածնված այսօրվա Խորհրդային Հայաստանն է:

Գիտական սեսիան հայտարարելով փակված Համալսարանի ռեկտոր Հր. Բատիկյանն ասաց.

- Փառք եւ երիցս փառք Կոմունիստական կուսակցությանը, Մեծ Հոկտեմբերին, որոնք բուժեցին հայ ժողովրդի վերքերը, նրան ներարկեցին ստեղծարար ոգի, դարբնեցին նրա հոյակապ ապագան:

ՀՀԳ

## Թ Ի Վ 37

### [Հաղորդում արեւմտահայ գրողներին նվիրված երեկոյի մասին]

### ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլի 23-ին Երեւանում, գրողների տանը տեղի ունեցավ 1915 թվականին նահատակված արեւմտահայ գրողների հիշատակին նվիրված երեկո, որին մասնակցում էին գրողներ, գիտնականներ, արվեստագետներ, մտավորականության ներկայացուցիչներ:

Բացելով երեկոն, Ստեփան Զորյանն ասաց, որ հիսուն տարի առաջ նահատակված հայ գրողների հիշատակը իր սրտում սրբությամբ է պահում հայ ժողովուրդը: Նշելով նրանց հիշատակը, մենք պետք է նոր ու բարձրարվեստ գործերով հարստացնենք մեր մշակույթը, բոլորանվեր ծառայենք հայրենիքին:

Արեւմտահայ գրողների մասին խոսք ասացին Վաղարշակ Նորենցը, Գեւորգ Էմինը, Անահիտ Սահինյանը, Գրիգոր Քեշիշյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սիլվա Կապուտիկյանը:

ՀՀԳ



## Թ Ի Վ 38

### [«Սովետական Հայաստան»-ի խմբագրականը եղեռնի 50-ամյակի առթիվ]

### ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՊՐՈՒՄ Է, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ

Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում իր նոր կյանքն է կառուցում հայ ժողովուրդը: Ջինվորագրվելով լենինյան պարտիայի գաղափարներին, ռուս մեծ ժողովրդի, եղբայրական մյուս ժողովուրդների անշահախնդիր օգնությամբ Հայաստանի աշխատավորներն անցած քառասունհինգ տարիների ընթացքում անճանաչելիորեն փոխեցին իրենց հինավուրց լեռնաշխարհի դեմքը:

Նախասովետական Հայաստանը ծայրահեղ աղքատության, սովի ու ավերակների երկիր էր: Սովետական իշխանության իշխանության տարիներին այն վերածվեց բարձր զարգացած արդյունաբերության, սոցիալիստական գյուղատնտեսության ծաղկուն ռեսպուբլիկայի:

Եթե ընդհամենը կես դար առաջ հայ ժողովրդին ճանաչում էին որպես արհավիրք ապրող մի ժողովուրդ, այսօր Սովետական Միության սահմաններից դուրս ավելի քան 60 երկրներում աշխատում են մեր ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկություններում արտադրված մեքենաներն ու սարքերը, որոնք խորհրդանշում են նրա վերելքն ու վերածնունդը:

Արդյունաբերության ամենաժամանակակից ճյուղերը՝ էլեկտրամեքենաշինությունը, սարքաշինությունը, էլեկտրոնիկան, քիմիական ձեռնարկությունները, հիդրո եւ ջերմաէլեկտրակայանները բնորոշում են ժողովրդական տնտեսության զարգացման մակարդակը:

Եթե մի քանի տասնամյակներ առաջ հայ գեղջուկի գետնափոր հյուղակում հազիվ առկայծում էր ձեթի ճրագը, այսօր Սովետական Հայաստանը արտասահման է ուղարկում գեներատորներ ու տրանսֆորմատորներ, որպեսզի ամենուրեք վառվեն էլեկտրական լապտերները:

Կանաչել են մեր լեռնաշխարհի հովիտներն ու դաշտավայրերը, բազմապատկվել են ջրովի տարածությունները, խաղողի ու պտղատու այգիներով զարդարվել դարավոր խոպանը:

Հնագույն կուլտուրայի մեր ժողովուրդը մինչեւ սովետական կարգերի հաստատումը խարխափում էր խավարի, անգրագիտության ու համաճարակի ճիրաններում: Սովետական Հայաստանը համատարած գրագիտության երկիր է, ծաղկող, բարգավաճող գիտությամբ ու կուլտուրայով, որտեղ ուսումնական հաստատություններում սովորում է յուրաքանչյուր չորրորդ քաղաքացին, որտեղ բեղմնավոր աշխատանք են կատարում գիտության ու կուլտուրայի հազարավոր գործիչներ, որոնցից շատերը հասել են համաշխարհային ճանաչման:

Կերպարանափոխվել, նոր տեսք է ստացել մեր լեռնաշխարհը: Ռեսպուբլիկայի մայրաքաղաքը՝ վարդաշող Երեւանը, որի բնակչությունը սովետական կարգերի հաստատման առաջին տարիների հագիվ էր հասնում 30 հազարի, դարձել է մեր մեծ հայրենիքի գեղեցիկ քաղաքներից մեկը, արդյունաբերության, գիտության ու կուլտուրայի խոշոր կենտրոն:

Արդյունաբերական ձեռնարկությունների կորպուսներով, բազմահարկ բնակելի շենքերի մասիվներով վեր են խոյացել Լենինականն ու Կիրովականը, Ալավերդին ու Ղափանը, Հրազդանն ու Լուսավանը, տասնյակ այլ ժամանակակից քաղաքներ:

Նույնիսկ ոչ այնքան տարեց մարդիկ լավ են հիշում, թե ինչպիսին էր հայկական գյուղը ոչ հեռու անցյալում: Միջնադարից եկող, միջնադարյանից համարյա ոչնչով չտարբերվող գետնափոր խրճիթների բլրածեւ տանիքների երդիկներից բարձրացող ծուխն էր նրա գոյության ու կենդանության խորհրդանիշը, հայ գեղջուկի իսկական ծխացող կյանքի դարավոր վկան:

Այժմ ուրիշ են, բոլորովին ուրիշ լեռների գոգավորություններում, տափարակներում ու ձորերում, ձորագլխերին ու դաշտավայրերում հպարտորեն բարձրացող գյուղերը: Հայկական տուֆի բազմերանգ աշխուժությամբ, ժամանակակից շենքերի բարետեսությամբ, մեծ մասամբ գլխավոր հատակագծերով կառուցված, նրանք ազդարարում են հայ գյուղացու նոր կյանքի, նոր կենցաղի մասին:

Հայ ժողովուրդն ապրում եւ ստեղծագործում է ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական համերաշխ ընտանիքում եւ իր արժանի լուման մտցնում կոմունիզմի կառուցման գործում:

Լենինյան ազգային քաղաքականության անշեղ իրականացման շնորհիվ ժողովրդների բարեկամությունը նոր բովանդակություն ստացավ, նպատակների ընդհանրությամբ դարձավ ամրակուռ, վերածեց իսկական եղբայրության:

Սովետական Հայաստանում կողք-կողքի, եղբայրաբար աշխատում ու ապրում են հայը, ադրբեջանցին, ռուսը, քուրդը, ուրիշ ժողովուրդների բազմաթիվ ներկայացուցիչներ: Նրանք համախմբված են այն մեծ ու անխորտակ ընտանիքում, որը կոչվում է **Սովետական Միություն**:

Սովետական ժողովուրդների լենինյան բարեկամությունն այն ամենաստեղծ ուժն է, որին ապավինած հայ ժողովուրդը վստահությամբ ու հպարտությամբ է նայում գալիքին:

Այս օրերին մեր ժողովուրդը նշում է իր պատմության ամենածանր շրջանի՝ օսմանյան Թուրքիայի կառավարողների կողմից 1915 թվի իրականացրած եղեռնի տարելիցը:

Ընդամենը 50 տարի է անցել այն ահավոր օրերից, երբ ռասիզմի մոլուցքով տարված թուրք կառավարողները փորձեցին ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ: Նրանք արեցին ամեն ինչ՝ տեղահանեցին ու կոտորեցին, այրեցին ու ավերեցին, սակայն հայ ժողովրդին, որքան էլ ծանր էին կորուստները, ոչնչացնել չկարողացան:



Մեր ժողովրդի գոյության ամենաօրհասական պահին նրան օգնության հասավ ռեւոլյուցիոն Ռուսաստանը, սովետական իշխանությունը, հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ.Ի.Լենինը: Հոկտեմբերի դրոշի տակ գոտեպնդվեց մահվան ճիրաններից մազապուրծ հայ ժողովուրդը, այդ դրոշի տակ նա վերագտավ դարեր առաջ կորցրած պետականությունը, ապաքինեց ծանր վերքերը, ստեղծեց իր պատվավոր ներկան ու պայքարում է կոմունիստական լուսաշող ապագայի համար:

Հայ ժողովուրդը արհավիրքներ շատ է տեսել: Հինավուրց Հայաստանի հողը բազում անգամ ասպատակվել է, ավերիչ պատերազմները հաջորդել են մեկը մյուսին: Տեղահանությունը, գաղթը, կոտորածները մեր ժողովրդի անբաժանելի ուղեկիցներն են եղել, նրա պատմության բնորոշ առանձնահատկությունը: Նա պատերազմ չի ցանկանում, նա դեմ է պատերազմին եւ մյուս ժողովուրդների հետ միասին ջերմորեն պաշտպանում է կոմունիստական պատիայի եւ սովետական կառավարության արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը, որը խարսխված է սոցիալական տարբեր սիստեմների պետությունների խաղաղ գոյակցության լենինյան դրույթների վրա:

Ժողովուրդների բարեկամության եւ սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ամենամարդկային գաղափարներին իր ամբողջ էությամբ նվիրված հայ ժողովուրդը, աշխարհի առաջադեմ մարդկության հետ միասին, խստորեն դատապարտում է գենոցիդի քաղաքականությունը, որի առաջին զոհերից մեկը դարձավ օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ ազգաբնակչությունը հիսուն տարի առաջ, եւ որը անհամեմատ ավելի մեծ մասշտաբներով մոլեգնեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Եվրոպայում՝ ֆաշիզմի կողմից:

Այսօր էլ այդ քաղաքականությունն իր արտահայտությունն է գտնում Վիետնամում եւ Կոնգոյում, Անգոլայում ու Հարավ-Աֆրիկյան միությունում: Աշխարհի ժողովուրդներն իրենց բողոքի հուժկու ձայնն են բարձրացնում իմպերիալիստական ռեակցիոն ուժերի նոր ոճրագործությունների դեմ: Ժամանակներն ուրիշ են, այլեւս ոչ ոքի թույլ չի տրվի անպատիժ կերպով իրագործել ժողովրդասպանության եղեռնական պլանները: Հայ ժողովուրդն իր ձայնն է միացնում այդ համամարդկային բողոքին:

Գարուն է բացվել մեր աշխարհում, արթնանում է բնությունը, բողբոջում ու ծաղկում են ծառերը, արեւից ջերմացած հողը, որն իր սրտում ձմեռվա սառնամանիքներից պահպանել է կյանքի սերմերը, սիրագորով մոր նման ավիշով է սնում նրանց, մատաղ ծիլերը բարձրացնում դեպի լույսը ու արեւը, որպեսզի կանաչի աշխարհը, որպեսզի կյանքը միշտ կանաչ մնա:

Եղբայր ժողովուրդների կողքին, եղբայրությանն ապավինած, եղբայրությամբ հզոր ու երջանիկ ապրում ու ստեղծագործում է հայ ժողովուրդը:

«Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24, թիվ 96:

## Թ Ի Վ 39

## [Հ. Քոչարի հոդվածը Եղեռնի 50-ամյակի առթիվ]

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

1890-1920 թվականների երեք տասնամյակը մեր բազմադարյան պատմության ամենաողբերգական, ամենահերոսական, ամենավիպական շրջանն էր, որ ունեցել է միլիոնավոր նահատակներ, զոհերի մեջ եղել են գիտուններ ու բանաստեղծներ, ճարտարապետներ ու երաժիշտներ, բժիշկներ ու փիլիսոփաներ, հերոսների մեջ՝ ռամիկ հողագործներ ու մշակներ, արհեստավորներ ու հովիվներ, այգեպաններ ու նույնիսկ վանքերի մենակյացներ:

Ժողովուրդն ազգովին պատմությունից ջնջվելու վտանգի տակ էր: Հարյուր հազարավոր անզեն մարդիկ, փոքր ու մեծ խմբերով, ձորերում ու կիրճերում գնդակահար էին լինում, կամ կամուրջներից նետվում էին լեռնային գետերի կատաղի ալիքների մեջ, ամբողջ բազմություններ մեռնում էին Սիրիայի ու Իրաքի ավազուտներում: Դահիճները չէին խնայում նույնիսկ ծծկեր երեխաներին ու զառամյալ ծերունիներին: Սարսափելի է հիշել մանրամասնությունները: Բայց հիսուն տարի հետո էլ մենք կարող ենք մխիթարվել մեր ժողովրդի տոկունությամբ ու կենսունակությամբ, ապրելու, մահվանը դիմադրելու նրա մեծ կամքով, ջարդարարներին դիմադրելու նրա արիությամբ, որ երեւաց այն դաժան տարիներին:

Եւ ցավալի էր, որ նոր ժամանակների մեր պատմագրությունը չէր հիշում գոնե ժողովրդի ճշմարտապես հերոսական դիմադրության դրվագները, Սասունի ու Տարոնի կռիվները, Վանի քաջարի պաշտպանությունը, Շապին-Գարահիսարի հերոսամարտերը, հայ գյուղացիների խիզախ ընդվզումը Մուսա լեռան վրա, զեյթունցիների վերջին դյուցազնությունները: Մեր պատմությունից դուրս էր մնում նույնիսկ քսաներորդ դարի Ավարայրը՝ Սարդարաբադը, որի սպիտակավուն հողի վրա, հին Արմավիրի այդ դաշտում, ժողովուրդը, արդեն հազար տեղով մարմինը խոցոտված, արյունաքամ, հուսահատ, ոտքի ելավ ոչ թե հաղթելու, այլ պատվով մեռնելու համար, դեմքը՝ թշնամուն ուղղած, թիկունքը՝ էջմիածնի, Գեղամա լեռների ու Սեւանի կողմը: Եւ կատարվեց հրաշքը ... ժողովուրդը, որ պատրաստվել էր մեռնելու, հաղթեց, ջախջախեց թշնամու գերազանց ուժերն ու ետ մղեց նրան Ախուրյանի մյուս ափը:



Ժողովուրդը հաղթանակեց Սարդարաբադում, երկու տարի էլ զարհուրելի տառապանքներ կրելով, 1920 թվականին իր հինավուրց երկրում ստեղծեց նոր հասարակարգ, որը չպետք է թույլ տար այլեւս եղեռնի ու ողբերգության կրկնություն, պետք է վերջ տար դարերի տանջանքներին:

Հայ ժողովրդի ողբերգությունը՝ մեծ եղեռնը, ծրագրվել ու ծրագրվում էր թուրքական պետության ամենաբարձր պաշտոնատներում՝ դեպքերից դեռ տասնամյակներ առաջ: Թուրքական պետական մտածողությունը կայսրության մեջ ապրող մյուս ազգերի պահանջներին ու դժգոհություններին վերջ տալու, «ազգային հարցն» իր երկրի ներսում լուծելու միակ ճանապարհն այդ ազգերին ոչնչացնելու, նրանց բնաջնջելու ճանապարհն էր համարվում: Այդպես են վարվում այլ ազգերի հետ բոլոր ցեղապաշտները: Ցեղապաշտությունը, որ ստոր, կույր, անմարդկային կիրք է, բնականաբար, հասնում է գենոցիդի քաղաքականության, երբ ցեղապաշտները կանգնած են տիրող ազգության ու նրա պետության գլուխ:

Արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի առաջին մինիստր Քեամիլ փաշան դեռ 1878 թվականին «հայկական հարցը» լուծելու թուրքական եղանակի մասին ասել է. «Հայ ազգը վերացնելու, անհետ եւ անճիտ անելու ենք: Դա գլուխ բերելու համար բան չի պակասում մեզ: Ամեն գործիք պատրաստ ունենք... Կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ: Կրոնական պատերազմ կհայտարարենք, դյուրին պատերազմ այնպիսի մի ազգի դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն, ոչ պաշտոն»:

Ժողովրդասպանության, ազգասպանության ամբողջական մի ծրագիր էր սա, թուրքական պետական մտածողության կոնցեպցիա, պետական դոկտրինա:

Այսպես էին մտածում սուլթան Աբդուլ Համիդն ու իր առաջին մինիստրը 80-ական եւ 90-ական թվականներին: 1895-97 թվականների ջարդերն այս պետական մտքի գործողությունն էին: Այսպես էին մտածում երիտասարդ թուրքերը, «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության ղեկավարները 1908-1909թթ., նույնիսկ այն օրերին, երբ «եղբայրություն եւ հավասարություն» խոսքերն էին կրկնում սրբապղծորեն: Այդ մտածողության գործադրությունն էին 1915-16 թվականների զանգվածային ջարդերը: Այդպես էին մտածում Կարա Բեքիր փաշան ու նրա նման թուրք զորավարները 1920 թվականին, գրավելով նաեւ արեւելյան Հայաստանի մի մասն ու այստեղ էլ կոտորածներ սարքելով:

Քեամիլ փաշայից հետո Թուրքիայում շատ անգամներ պետական հեղաշրջումներ եղան, բայց ժառանգաբար, մեկի ձեռքից մյուսին անցավ այդ դոկտրինան եւ նրա գործադրությունն ավելի կատարելագործվեց, ավելի ահավոր չափերի հասավ:

Թուրքական պետության այդ մտածողություններն անհայտ չէին հայ ժողովրդին: Դրանք եւ տեսություն էին, եւ պրակտիկա: Քեամիլ փաշայի այդ հայտարարությունը թարգմանվել ու տպվել էր Կովկասում հրատարակված «Փորձ» հանդեսում, դեռեւս 1879 թվականին: Ուրեմն, թուրքական բռնությունների եւ ազգասպանության այդ վայրենի ծրագիրն ու նրա գործադրությունը հայ ժողովրդի մեջ պիտի դիմադրություն հարուցեին ու կազմակերպություններ ստեղծեին՝ այդ դիմադրությունը ղեկավարելու համար:

Սակայն, հայ ժողովրդի դատը տնօրինելու հավակնող կուսակցությունները հարբել էին ժեռն-թուրքերի «հեղափոխական» խոստումներից, որ չէին զինել ժողովրդին ամեն տեղ եւ ամենուրեք, պաշտպանություն չէին կազմակերպել, ինչպես ժողովուրդն ինքը վարվեց Վանում ու Սարդարաբադում:

Հավիտյանս հանցավոր կման հայ ժողովրդի ու նրա պատմության առաջ դաշնակցություն կուսակցության ղեկավարները, որոնք դաշինք կնքելով թուրք իթթիհադականների կուսակցության ղեկավարների հետ ու հավատով նրանց, մոլորեցրին հայ ժողովրդին, դահիճների հետ եղբայրություն քարոզելով, նրանք զինաթափում էին արհավիրքը նախազգացող խիզախներին, հարկադրում էին զենքերը հանձնել թուրք պետությանը: Ադանայի հայկական ջարդերից հետո էլ դաշնակցության գործիչները շարունակում էին նույն քաղաքականությունը: Վանում, նույնիսկ իրենց սպանությունից մի քանի օր առաջ, Վռամյանն ու Իշխանը հաղորդում էին խոնարհ լինել Չեղեք փաշայի պահանջներին, «դասալիք» հայերին առաջարկում էին ներկայանալ թուրքական իշխանություններին:

Իրենց այդ վարքի առաջին զոհերն էլ հենց իրենք եղան, բայց անաչառ ու խիստ պատմությունը չի կարող արդարացնել նույնիսկ զոհվածներին:

Էնվեր եւ Ջեմալ փաշաներն ու նրանց ուղղակի կամ անուղղակի գործակիցները ասել, կրկնել են նաեւ, որ իբր թե թուրք ժողովուրդը նահապետական ժողովուրդ էր, իսկ հայերը վաճառական ու արդյունաբերող ազգ էին, որ շահագործում էին խեղճ, նահապետական թուրք ազգին եւ դրանով ատելություն հարուցում նրա մեջ, որ հայկական կոտորածներն այդ «զայրույթի» հետեւանք էին: Դա մի թափանցիկ կեղծիք էր, որ ապացուցվեց հենց այդ կոտորածների օրերին, երբ ոչնչացվում էին առաջին հերթին գավառների հայ բնակչությունը, հայ գյուղացիները, իսկ քաղաքներում՝ արհեստավորներն ու մտավորականությունը: Եթե որեւէ դաս համեմատաբար քիչ ոչնչացվեց, դա քաղաքների մանր առեւտրականներն էին:

Հայ ժողովրդի կոտորածների դեմ հոգու անհուն զայրույթով խոսել ու գրել են Լենինն ու լենինյանները, խոսել ու գրել են Մաքսիմ Գորկին ու Վալերի Բրյուսովը, Նիկոլայ Մառն ու Եվգենի Տառլեն, հարյուրավոր



ռուս գիտնականներ, գրողներ, լրագրողներ ու բանաստեղծներ: Դատապարտել են ջարդարարներին ու դատաստան պահանջել Արեւմուտքի եւ Արեւելքի մարդասերները՝ Ժան Ժորեսն ու Անատոլ Ֆրանսը, Կարլ Լիբկնեխտն ու Վասիլ Կոլարովը, լեհ բանաստեղծ Յազվեցկին եւ անգլիացի դոկտոր Գիբոնսը, Ջոն Ռիդն ու Ֆրիտյոֆ Նանսենը, վերջապես Մուսա լեռան քառասուն օրվա դյուցազներգությամբ իր անունը հայ ժողովրդի սրտում անմահացրած ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը եւ հարյուրավոր ուրիշ մարդիկ:

Նրանք բոլորը վկայել են, որ հայ ժողովրդին ոչնչացնում էին, որովհետեւ նա ազատություն էր երազում, որովհետեւ հոգով նա ծառանում էր բռնության, ստրկության, խավարի, հետամնացության, բանտային դաժան կյանքի դեմ, ձգտում էր հաղորդակից դարձնել մարդուն արժանի ազատ կյանքին, որովհետեւ նա պաշտպանում էր իր պատիվը, իր ընտանեկան սրբությունները, իր լեզուն ու իր ազգային ինքնությունը:

Սակայն հիշենք, որ աշխարհի ազնիվ մարդկանց համակրանքի, կարեկցության, բողոքի ու զայրույթի խոսքերը չօգնեցին, եւ մեկուկես միլիոն ժողովուրդ զոհվեց քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ: Չօգնեցին ոչ Անատոլ Ֆրանսի, ոչ Նանսենի շանթալի խոսքերն ու ծանր մեղադրանքներն եւրոպական պետությունների հասցեին: Չօգնեցին, որովհետեւ իմաստուններն ու ազնիվ հոգիները զենք ու բանակներ չունեին, իսկ զենք ու բանակ ունեցողները չունեին ազնիվ հոգի ու իմաստություն:

Աշխարհը եւ պետություններ կառավարող այդ մարդիկ շահամոլ եսասերներ էին, ոսկու պարկերին երկրպագող, ազգերի արյունը դիվանագիտական շուկաներում սակարկող, անսիրտ ու անհագուրդ վաճառականներ, որոնք չէին խորշում մարդկանց ու ժողովուրդներին սպանելուց, երբ այդ արյունոտ արհեստի մեջ շահ էին տեսնում:

Սպանվեց, բայց չմեռավ հայ ժողովուրդը:

«Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի,- ասել է Անատոլ Ֆրանսը ճշմարիտ մարգարեի պես, - նրան մնացել է շատ քիչ արյուն, թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ»:

Այդպես էլ եղավ: «Շատ քիչ, թանկագին արյունից» ծնվեց մեծ սխրագործությունների ընդունակ նոր, հերոսական սերունդ, որն իր երջանկությունը եւ իր ապագան կերտելով, չի մոռանում իր ժողովրդի զարհուրելի անցյալը: Այդ անցյալի արյունոտ էջերը թերթելով, նա առավել բուռն, առավել խոր սիրով կսիրի իր ժողովրդի պատմության այսօրվա օրը, կհասկանա նրա սոցիալիստական վերածնության պատմական խորհուրդն ու վեհությունը:

1915 թվականի եղեռնի զարհուրելի օրերին մարդակեր Թալեաթ փաշան մի հայ գործչի հետ խոսելիս ասել է. «Մենք այնպես կջարդենք ձեր ազգը, որ հիսուն տարի շարունակ ուշքի չգաք եւ չմտածեք ինքնուրույն ազգային կյանքի մասին:

Սա մարգարեություն է: Դահիճներն էլ երբեմն փորձում են մարգարեանալ, բայց դահիճները միշտ էլ հիմար գուշակներ են եղել, որովհետեւ տխմարաբար հավատացել են իրենց կացնի եւ իրենց կեռ յաթաղանի զորությանը:

Վիրավոր, արյունաքամ, կես մեռած, կես կենդանի հայ ժողովուրդն այդ ցինիկ «մարգարեությունից» ընդամենը հինգ տարի հետո տանջագին դալարումներով ոտքի կանգնեց, շտկեց իրանը շահագործությամբ:

Այդ մեծ, բարի, այդ հզոր արեւը ճառագեց վիթխարի, առասպելական ուժով, շունչ ու կյանք տվեց մեր ժողովրդին:

Դա Հոկտեմբերի արեւն էր: Նա ծագեց Հյուսիսից, որ ջերմացնի մեր մոլորակի կյանքը, լույսով ողողի նրա բոլոր մութ ծալքերն ու խորշերը:

Եւ Հայաստանի դաշտերում վերստին լսվեց հայկական հորովելը, քաղաքներում կրկին բարձրացան դղյակներ: Եւ նոր քաղաքներ ծնվեցին, եւ նոր հավատի նորաոճ կոթողներ հղացավ հայ ճարտարապետի միտքը: Իսկ այսօր, հիսուն տարի հետո, հայ ժողովուրդը հաստատուն կանգնած հայրենի հողի վրա՝ իր բարձրիկ սարերի պես երեւում է աշխարհին: Նրա մասին խոսում են ոչ թե կարեկցությամբ, այլ հարգանքով, ոչ թե խղճահարությամբ, այլ հիացմունքով:

Հայաստան անունն այսօր հայ պանդուխտի հողին համակում է հպարտությամբ ու պարծանքով, որովհետեւ հայրենի հողի վրա ինչ որ ստեղծվում է, երբեք չպիտի քանդվի այլեւս, ինչ հուշարձաններ որ երկինք են խոյանում, երբեք չպիտի խորտակվեն, պիտի ապրեն հավերժական կյանքով, որովհետեւ հայրենիքը մենակ ու անօգնական չէ, նա եղբայրության ուխտով կապված է եղբայր ժողովուրդների հետ: Իսկ այդ նվիրական ուխտն ու սրբազան դաշինքն ավելի զորավոր ու հզոր են, քան աշխարհի բոլոր չարագործների չար մտադրությունները:

Մեր հայրենիքը կրկնակի սիրելի է մեզ համար, որ արդար աշխարհի հետ է, բանական ճանապարհի վրա, ապահով արհավիրքներից եւ եղեռնից: Այս ճշմարտությունը փայլուն կերպով գիտակցեց ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանը: Հինգ տարի առաջ նա եկավ Հայաստան: Տեսավ հայրենիքը, նրա բնությունը, մարդկանց, նրա նյութական ու հոգեւոր կյանքը եւ վերադարձի օրը ասաց. «Ես կսիրեմ Հայաստանն ինչպես որ նա կա իր որդեգրած գաղափաներով, իր ընտրած ճանապարհով»:

Մեր հայրենիքի փառքի ու հմայքի, նրա ուժի ու զորության գաղտնիքները ճշմարիտ որ նրա որդեգրած գաղափարներն են, նրա ընտրած ճանապարհը՝ դեպի արեւը, դեպի անմահությունը:

Ապրեց մեր կենսասեր ու կենսունակ ժողովուրդը, վերածնվեց փյունիկի նման, բուժեց իր վերքերը եւ նոր հերոսներ ու նոր իմաստուններ ծնեց, որոնց հոգու վրա չկա անցյալի մրուրը, որոնք ծնող ժողովրդի



ազնիվ առաքինությունները՝ մարդասիրությունը, այլասիրությունը, բոլորի հետ համերաշխ ապրելու նրա երազը ժառանգելով, հարստացնում է նրա հոգեւոր կյանք, նոր խոսքով ու նոր գաղափարներով, նոր գրքերով ու նոր երգերով, որոնց իմաստն ու խորին խորհուրդը ժողովուրդների համերաշխությունն ու բարեկամությունն է, հավիտենական խաղաղության կարոտը:

Լեցուն է այսօր մեր ազգային կյանքը: Բայց ես մտքով տեսնում եմ սիրելի Հայաստանը նաեւ տասնամյակներ հետո, չկա մի թիզ հող, որ ծարավ լինի ու չոր, արեւի տակ շողում է իր հին ափերը վերադարձած Սեւանը, կապույտ երկնքի տակ ծփում է Ախուրյան նոր լիճը, Գուգարաց աշխարհից անտառներ է տարածվել, բոլոր կողմերից գրկվել են լայնաճիստ Արագածը, շառաչում է մի վիթխարի անտառ Գեղամա լեռներում, որ ժողովուրդը կոչել է «Նահատակների անտառ»: Մտքով տեսնում եմ գալոց օրերի հայ պատանիներին ու աղջիկներին, ականջիս հնչում են հայոց նոր երգերը եւ առավել գեղեցկացած հայոց լեզուն: Նրա մեջ չկան այլեւս «սփյուռք», «սփյուռքահայություն», «գաղութահայ կյանք», «գաղութահայություն» բառերը, որովհետեւ միավորվել է հայ ժողովուրդը, կատարվել են դարավոր բաղձանքները. աշխարհում բոլոր ժողովուրդների մեջ ստեղվել են համերաշխություն, փոխադարձ հավատ ու վստահություն: Բոլոր ազգերն իրար լույս ու ջերմություն են պարգեւում:

Այդպես եմ տեսնում ես Ապագան: Եւ հավատում եմ պատմությանը եւ իմ երեւակայության տեսիլներին:

*Հր. Քոչար*

«Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24, թիվ 96, էջ 4:

## ԹԻՎ 40

**[Գ. Գալոյանի եւ Ջ. Կիրակոսյանի հոդվածը եղեռնի 50-ամյակի առթիվ]**

## ԱՐՅԱՎԻՐՔԻՑ՝ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Սոցիալական եւ ազգային ազատության համար պայքարի ծանր ու դաժան ուղի է անցել հայ ժողովուրդը: Նրա մինչսովետական ժամանակաշրջանի պատմությունը լի է ողբերգական էջերով: Միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեւոլյուցիան, կոմունիստների լենինյան պարտիան հայ ժողովրդին փրկեցին համազգային աղետից:

Սովետական իշխանության հաստատումով դրվեցին հայ ժողովրդի բովանդակ կյանքի վերածնության հիմքերը: Հայ ժողովուրդն ընթացավ իր վերքերն ապաքինելու, նոր կյանքի, սոցիալիզմի կառուցման ուղիով: Կարճ ժամանակում փոխվեց երկրի տնտեսության պատկերը: Հայաստանը դարձավ առաջավոր արդյունաբերության եւ գյուղատնտեսու-

թյան, համատարած գրագիտության, ծեւով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական, զարգացած կուլտուրայի երկիր: Սովետական իշխանության տարիներին հայ ժողովուրդը կառուցեց ու ստեղծեց այնքան, որքան չէր ստեղծել իր բազմադարյան պատմության ընթացքում:

* * *

Հիսուն տարի առաջ աշխարհը ցնցվեց օսմանյան կայսրության կառավարող կլիկի կատարած ահավոր ոճրագործությունից: 1915թ. երիտթուրքական կառավարությունը կազմակերպեց արեւմտահայության զանգվածային տեղահանումն ու բնաջնջումը: Դա մարդկության պատմության մեջ աննախադեպ ոճրագործություն էր:

Դարեր շարունակ թուրքական սուլթաններին իրենց ներքին քաղաքականությունը խարսխում էին ռասսայական եւ կրոնական սանձարձակ խտրականության վրա, միջնադարյան ֆեոդալական նորմաներով կառավարվող օսմանյան պետականության հարվածներն ուղղում ճընշված ժողովուրդների՝ սլավոնների, հայերի, հույների, արաբների եւ այլ ազգերի արդարացի ազատագրական պայքարը ճնշելու նպատակին:

«Արյունոտ» սուլթանի տիտղոսն ստացած Աբդուլ Համիդը անցյալ դարի 90-ական թվականներին հարյուր-հազարավոր հայերի կոտորեց: 1908թ. իշխանության գլուխ անցած երիտթուրքական «Իթթիհադ»՝ շովինիստական գաղափարներ եւ գործելակերպ որդեգրած պարտիան ճնշված ժողովուրդների նկատմամբ ավելի սանձարձակ եւ դաժան քաղաքականություն վարեց: Պատմական փաստերը հաստատում էր, որ մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքական կլիկն արդեն մշակել էր արեւմտահայության բնաջնջման ծրագիրը: Իսկ իմպերիալիստական պատերազմն այն պատեհ առիթն էր, որ պետք է ձերբազատեր ժողովրդասպան պլանն իրականացնելու համար: Չէ որ գենոցիդի (ցեղասպանության) քաղաքականությունը մեծ մասշտաբներով գործնական հիմքի վրա է դրվում պատերազմների ժամանակ:

Էնվեր-Թալեաթ-Ջեմալ-Նազըմ երիտթուրքական կլիկը, գերմանական միլիտարիստների աջակցությամբ, պատերազմի հենց սկզբից ձեռնամուխ եղավ արեւմտահայության մասսայական տեղահանության եւ բնաջնջման ոճրապարտ ծրագրի իրականացմանը: Այդ մասին թուրքական կառավարության արձակած գաղտնի հրամաններից մեկում ուղղակի ասված էր, որ «Իթթիհադը» «որոշել է ամբողջովին ոչնչացնել Թուրքիայում բնակվող հայությանը»: Այդ նպատակով ստեղծված երիտթուրքական գործադիր հանձնաժողովի պլանով զինաթափվեց, թիկունքային աշխատանքների ուղարկվեց, ապա ոչնչացվեց օսմանյան բանակում ծառայող տասնյակ հազարավոր հայ երիտասարդությունը: 1915թ. ապրիլի 24-ից սկսած կայսրության մայրաքաղաք Կոստանդնապոլսից տարագրվեցին, ապա աքսորի ճանապարհին խումբ-խումբ ոչնչացվեցին հայ ան-



վանի մտավորականները՝ գրողներ, բժիշկներ, իրավաբաններ, արվեստագետներ, որոնք մեծ ծառայություն էին մատուցել ոչ միայն հայկական, այլեւ թուրքական մշակույթի զարգացման գործին: Հայ ժողովուրդը կորցրեց այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք էին Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Կոմիտասը եւ շատ ուրիշներ: Երկրի առանձին վայրերում հայ ժողովրդի մղած ինքնապաշտպանական խիզախ գոյամարտերը, դիմադրության փոքրաթիվ օջախները անկարող էին կանխել այն ողբերգությունը, որին ենթարկվեց արեւմտահայությունը: 1909թ. աշնանը դաշնակների եւ «Իթթիհադի» միջեւ կնքված «ուխտը», որով «օսմանյան նվիրական հայրենիքի» գաղափարներն էին սրբագործվում, զգալի չափով թուլացրեց հայ ժողովրդի դիմադրական ոգին: 1915-1916թթ. ընթացքում ամենայն վանդալությամբ ոչնչացվեց մեկուկես միլիոն մարդ: Արեւմտյան Հայաստանի հայաշատ նահանգներն ամայացան: Հարյուր-հազարավոր մարդիկ դարձան անօթեւան թափառականներ, հանգրվան գտան ռուսական հողում, ցրվեցին աշխարհի տարբեր մասերում:

Արեւմտահայության զանգվածային կոտորածների կազմակերպիչն ու հրահրողներն էին երիտթուրքական կառավարությունը, թուրքական ռեակցիոն դասակարգերը: «Թուրք կամ տաճիկ մասսան երբեք եւ ոչ մի դեպքում չի եղել, որ ինքնաբերաբար որեւէ մասսայական հարձակում գործած լինի իր հարեւան ռայա ժողովրդի վրա: Այդ միշտ հանապազ թելադրվել է վերեւից, բարձրից, սուլթանների եւ իր պնակալեզ արբանյակների՝ փաշաների եւ շեյխերի կողմից եւ տաճիկ մասսաները, տարաբախտաբար, ենթարկվել են այդ արյուն քամող պրովոկատորներին...»,- գրել է բոլշեւիկյան «Կարմիր դրոշակ» թերթը (10 օգոստոսի, 1919թ., N 13 ):

Այն, ինչ կատարվեց արեւմտահայության հետ առաջին համաշխարհային պատերազմի դժնդակ տարիներին, նոր ժամանակների պատմության մեջ ամենամասսայական գենոցիդի քաղաքականության սկիզբն էր, որն ավելի մեծ մասշտաբներով եւ ավելի կատարելագործված մեթոդներով երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կրկնեցին գերմանական ֆաշիստները հրեաների, սլավոնական եւ այլ ժողովուրդների նկատմամբ:

Հիրավի, համաշխարհային պատմության մեջ 1915թ. մեծ եղեռնը կարելի է համեմատել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական ֆաշիստների կողմից կատարված ավելի մեծ մասշտաբի զանգվածային սպանությունների՝ 12 միլիոն մարդկանց գազանային ոչնչացման հետ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անտանտի կառավարող շրջանները, բուրժուական գործիչները բացի փարիսեցիական ճառերից ու երկդիմի, նենգ քաղաքականությունից, ոչինչ չձեռնարկեցին թուրքական ոճրագործների ձեռքը բռնելու, արեւմտահայությունը կործանումից փրկելու ուղղությամբ: Եւ դա հասկանալի է, թալանչիական

պատերազմ սանձազերծելու, նոր երկրներ զավթելու, գաղութներ նվաճելու, ժողովուրդներին ստրկացնելու տենդով բռնված իմպերիալիստական մեծ տերությունների կառավարողներին հնարավորություն էր ընձեռվում դիվանագիտական գաղտնի սակարկության առարկա դարձնելու այն տերիտորիան, որի տերը՝ արեւմտահայությունը տեղահանվել կամ ոչնչացվել էր: Նոր խաբեության զոհ դարձած հայկական բուրժուական այն հեռատես քաղաքականագետները, որոնք ակնկալություններ ունեին իմպերիալիստական Արեւմուտքից, նրա հետ էին կապում թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրման հույսերը:

Արեւմտյան իմպերիալիզմն իր սանձազերծած զավթողական պատերազմով, հայկական հարցում վարած տրադիցիոն աղետաբեր քաղաքականությամբ մեծապես նպաստեց արեւմտահայության գենոցիդին: «Բրիտանական կառավարության քաղաքականությունը,- հետագայում խոստովանել է Լլոյդ Ջորջը,- ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 եւ 1909թթ. խարսափելի սպանդներին եւ 1915թ. ամենասոսկալի կոտորածին»:

Այն ժամանակվա թուրքական հացավոր կառավարողների ոճրագործության ու նրանց իմպերիալիստական հովանավորողների հետեւողական դատապարտմամբ հանդես եկան համաշխարհային սոցիալիստական ու բանվորական շարժման ականավոր գործիչները, պատերազմի դեմ պայքարող, ժողովուրդների միջեւ բարեկամության եւ խաղաղության հաստատմանը նվիրված մարտիկները, առաջադիմական հասարակայնությունը:

1916թ. հուլիսի 4-ին, հակապատերազմական պրոպագանդայի եւ գործունեության ամբաստանությամբ բանտ նետված գերմանական պրոլետարիատի առաջնորդ Կարլ Լիբկնեխտը դատարանին հղած իր նամակում քարը քարի վրա չէր թողնում պատերազմում Գերմանիայի հետապնդած «ազատագրական միսիայի» մասին խաբեությունից, դատապարտում դաշինքը Թուրքիայի հետ, որն «իր ձեռքերը թաթախել է հայերի արյան մեջ եւ այս պատերազմի ժամանակ անսահմանորեն ավելացրել է իր մեղքը, ամենադաժան կոտորած սարքելով դժբախտ հայ ժողովրդի նկատմամբ»:

Թուրքական ջարդարարական քաղաքականությամբ հանդես եկավ Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական (տեսնյակների) պարտիան, որը պայքարում էր միլիտարիզմի եւ պատերազմի դեմ, պահպանել էր իր հավատարմությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին: Իրենց 21-րդ համագումարում բուլղարական սոցիալիստները բողոքի հատուկ բանաձեւ ընդունեցին «հայ ժողովրդին թուրքական բարբարոսական օլիգարխիայի կողմից ոչնչացնելու դեմ»:

Բոլշեւիկները, ռուս առաջադեմ, դեմոկրատ գործիչները հանդես էին գալիս մահվան դատապարտված արեւմտահայության բեկորները



փրկելու պահանջով, անարգանքի սյունին էին գամում թուրքական ջարդարարներին եւ նրանց իմպերիալիստական հովանավորողներին: Հյուսիսային Կովկասում լույս տեսած «Թերեք» թերթի էջերում 1916թ. սկզբին հրապարակված իր հոդվածաշարքում ականավոր բոլշեւիկ Ս. Մ. Կիրովը բողոքի խրոխտ ձայն բարձրացրեց ի պաշտպանություն հայ «տառապյալ ժողովրդի»:

Հայ բոլշեւիկները, որ ի սկզբանե դեմ էին եւրոպական դիվանագիտությանն ապավինելուն, ցարիզմի միջոցով թուրքահայ դատը լուծելու դաշնակցական մտայնությանն ու գործելակերպին, դատապարտելով իմպերիալիստական պատերազմը՝ որպես զավթողական, հակաժողովրդական պատերազմ, մերկացնում էին իմպերիալիստական կառավարությունների կողմից փոքր ազգերին ազատագրելու մասին պատերազմի ժամանակ հռչակված լոզունգի ողջ խաբեությունը: Ժողովրդական մասսաներին դաստիարակելով իմպերիալիստական պատերազմի եւ նրա կազմակերպիչների դեմ ռեւոլյուցիոն պայքար մղելու ոգով, բոլշեւիկները նրանց զգուշացնում էին այն վտանգից, որ հայ ժողովրդի արեւմտյան հատվածը թուրք բարբարոս կառավարության տիրապետության տակ գտնվելով, ամեն վայրկյան կարող էր զոհ դառնալ թուրքական յաթաղանին: Սակայն, ինչպես նշում է Ստ. Շահումյանը. «Մեր «ազգասերները», ընդհակառակը, կարծես դիտմամբ ամեն ջանք գործ էին դնում... հող պատրաստելու՝ սուլթանի ու Նիկոլայ Ռոմանովի դժոխային ծրագիրները իրականացնելու համար»: (Երկեր, հ. 2, էջ 408)

Վ.Ի.Լենինը, բոլշեւիկյան պարտիան դատապարտում էին Գուչկով-Միլյուկովի բուրժուական կառավարության՝ իմպերիալիստական պատերազմը շարունակելու քաղաքականությունը, նրա գործելակերպը, որը ոչ մի նպատակ չուներ ինչ-որ քայլ կատարելու Հայաստանի ինքնորոշման, հայ ժողովրդի կենսական շահերը հարգելու ուղղությամբ: Հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ. Ի. Լենինը լիակատար ազատության պահանջ էր դնում «ամբողջ Հայաստանի նկատմամբ»: (Երկեր, հ. 26, էջ 58)

* * *

1917թ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեւոլյուցիան եզրափակեց մարդկության «նախապատմությունը» եւ դրեց նրա նոր, իսկական պատմության սկիզբը: Ռուսաստանում պրոլետարիատի հաղթանակն ազդարարեց աշխարհում առաջին սոցիալիստական պետության, նոր քաղաքակրթության ծնունդը: Հանճարեղ Լենինի գլխավորած սովետական կառավարության առաջին իսկ քայլը՝ հաշտության մասին դեկրետը ժողովուրդներին ելք ցույց տվեց իմպերիալիստական պատերազմի սպանդանոցից: Պատերազմի դեմ, սոցիալիստական ռեւոլյուցիայի հաղթանակի համար իր պայքարը բոլշեւիկյան պարտիան խարսխում էր «ազ-

ատություն բոլոր ժողովուրդներին, բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների եղբայրական միության» լենինյան սկզբունքի վրա:

Մինչդեռ, երիտթուրքական կլիկը ջարդել էր արեւմտահայերին, ավերել նրանց շեները, զրկել նրանց սեփական հողից ու ջրից, իմպերիալիստական դիվանագետները խոսքով հայանպաստ փարիսեցիություն էին անում, իսկ գործով գաղութային նոր զավթումներ իրականացնում, ապա Սովետական Ռուսաստանի կառավարությունը՝ Վ.Ի.Լենինի ստորագրված «Թուրքահայաստանի մասին» դեկրետով հռչակեց, որ պաշտպանում է Արեւմտյան Հայաստանի «ազատ ինքնորոշման իրավունքը»: Սովետական կառավարությունը պահանջում էր ապահովել թուրքական իշխանությունների կողմից տեղահանված ու տարբեր երկրներում ցրված հայերի վերադարձն իրենց հայրենի հողերը: Վ.Ի.Լենինն ասում էր. «Հանցագործ է այն կառավարությունը, որը զինադադար չի ուզում...» (Երկեր, հ.26, էջ 305): Իսկ թուրքական կառավարողները զինադադար չէին ուզում, նրանք ձգտում էին նոր զավթումների, նոր արյունահեղության: Սովետական պետության դեմ միջազգային իմպերիալիզմի հրահրած ինտերվենցիայի առաջին իրականացնողներից մեկը հանդիսացավ երիտթուրքական կառավարությունը:

Անդրկովկասի հակառեւոլյուցիոն պարտիաները՝ մենշեւիկները, մուսավաթականները, դաշնակները, դավաճանելով աշխատավորների շահերին, երկրամասն անջատեցին սովետական Ռուսաստանից եւ հեշտացրին թուրքական ու մյուս իմպերիալիստների ինտերվենցիան: Դաշնակցությունը փոխանակ հեղափոխական Ռուսաստանի հետ դաշն կապելու,- գրել է Վահան Տերյանը, դաշն կապեց հակահեղափոխական եւ արյունարբու բեգերի ու դավաճան մենշեւիկների հետ... Արյունարբու իմպերիալիստ Տաճկաստանն էլ հենց այդ էր ուզում: Երբ նա տեսավ, որ Կովկասը կտրվեց Ռուսաստանից, իսկույն եւեթ զորքը շարժեց առաջ եւ գրավեց Կովկասի հայաբնակ երկրները»: Նա գտնում էր, որ «...միայն Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր գնդեր են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին»: («Կոմունիստ», թիվ 1, 22.6.1918թ., Մոսկվա)

Ելնելով Անդրկովկասի ժողովուրդների շահերից, երկրամասը օտարերկրյա զավթիչների ներխուժումից պաշտպանելու ձգտումով տոգորված, սովետական Ռուսաստանի կառավարությունը անդուլ աշխատում էր, անշահախնդիր օգնություն ցույց տալիս երկրամասի աշխատավորներին՝ օտարերկրյա ինտերվենտների եւ ներքին հակառեւոլյուցիայի դեմ ազգային ու սոցիալիստական ազատագրման համար նրանց մղած պայքարում:

1918թ. հունվարին նյութական ծանր պայմանների մեջ գտնվող Սովետական Ռուսաստանը 6 միլիոն ռուբլի տրամադրեց Ռուսաստանում եւ Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականներին օգնություն կազմակերպելու համար: Երբ թուրքական զավթիչները ներխուժեցին Հայաստան, միակ կառավարությունը, որ վճռականորեն բողոքեց թուրքական վայրագությունների դեմ, Սովետական Ռուսաստանի կառավարությունն էր:



1918-1920թթ. դաշնակցության տիրապետության օրոք Հայաստանում, Սարգիս Կասյանի խոսքերով ասած, «գոյությունը դարձել էր անեծք, կյանքը՝ դժոխք»: Հայաստանը վերածվել էր սովի ու թշվառության, որբերի ու համաճարակների, արցունքի ու արյան երկրի:

Հայ ժողովրդին փրկություն բերեց ռեւոլյուցիոն հյուսիսը՝ մեծ Լենինի գլխավորած բանվորա-գյուղացիական Սովետական Ռուսաստանը, որի օգնությամբ նա տապալեց դաշնակցական կառավարությունը եւ 1920թ. նոյեմբերի 29-ին հաստատեց սովետական կարգեր: Վ.Ի.Լենինը առաջինը ողջունեց «իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Հայաստանին», քաղաքական ու տնտեսական անշահախնդիր օգնություն կազմակերպեց անդունդի եզրին կանգնած մեր ժողովրդին:

Սովետական իշխանության տարիներին, կոմունիստական պարտիայի քաղաքականության շնորհիվ, իսկական վերածնունդ ապրեց հայ ժողովուրդը: Իր բազմադարյան պատմության ընթացքում առաջին անգամ, խաղաղ կյանքի պայմաններում, եղբայրական ժողովուրդների սոցիալիստական մեծ ընտանիքում նա շնչեց լիաթոք, դրսեւորեց իր բոլոր ունակությունները հոգեւոր եւ նյութական արժեքների ստեղծման ասպարեզում: Հայաստանը դարձավ սոցիալիստական առաջավոր ռեսպուբլիկա:

Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1913թ. համեմատությամբ աճել է 95 անգամ, իսկ 1919թ. համեմատությամբ՝ 235 անգամ: Մեր ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի բազմաթիվ տեսակներ այժմ արտահանվում են աշխարհի 62 երկրներ:

Արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ աճում եւ ստվարանում են բանվոր դասակարգի շարքերը, ավելանում է մասնագետների թիվը: Ստեղծվել է ազգային տեխնիկական ինտելեգենցիայի, արտադրության հմուտ ու տաղանդավոր հրամանատարների մի մեծ բանակ: Ներկայումս բարձրագույն եւ միջնակարգ կրթությամբ մասնագետների թիվը հասնում է մոտ 96 հազարի: Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երեւանն այսօր դարձել է երկրի արդյունաբերության, գիտության եւ կուլտուրայի խոշորագույն օջախներից մեկը: Ժամանակակից քաղաքներ են դարձել Լենինականն ու Կիրովականը, Ալավերդին ու Ղափանը, Հայաստանի քարտեզի վրա երեւան են եկել նոր քաղաքներ ու ավաններ:

Սովետական կարգերը մեծագույն հեղաշրջում առաջ բերեցին նաեւ գյուղերում: Գյուղի կոլեկտիվացումը, արտադրական պրոցեսների մեքենայացումը, հողամշակման մեջ ագրոտեխնիկայի ու քիմիական գիտության կիրառումը հիմնովին կերպարանափոխել են գյուղատնտեսու-

թյունը: Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար նոր, պայծառ հեռանկարներ են բաց անում ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան պլենումի որոշումները, որոնք մեծ գոհունակությամբ ընդունվեցին Հայաստանի աշխատավորների կողմից:

Սովետական Հայաստանում փարթամորեն ծաղկում են ազգային կուլտուրան, գիտությունը, արվեստն ու գրականությունը: Նախասովետական Հայաստանը չուներ ոչ մի գիտահետազոտական հիմնարկ, իսկ այժմ այդ հիմնարկների թիվը հասնում է 85-ի, որտեղ աշխատում են 6.500 գիտնականներ, այդ թվում՝ 58 ակադեմիկոսներ, գիտության ավելի քան 200 դոկտորներ եւ 1.817 թեկնածուներ: Մեր ռեսպուբլիկայի գիտնականների շատ աշխատանքներ լայնորեն հայտնի են համաշխարհային գիտական շրջաններին:

Բարձր զարգացման է հասել ժողովրդական կրթությունը: Հայաստանում այժմ գործում են 1.247 ութամյա եւ լրիվ միջնակարգ դպրոցներ՝ ավելի քան 450 հազար աշակերտներով, 42 միջնակարգ մասնագիտական ուսումնարաններ եւ 11 բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ռեսպուբլիկայում 10 հազար բնակչին ընկնող ուսանողների թիվը 1963-64 ուսումնական տարում կազմում էր 141 մարդ, իսկ Ավստրիայում՝ 47, Անգլիայում՝ 44, Գերմանական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայում՝ 40, Թուրքիայում՝ 25, Իրանում՝ 11:

Մեր ռեսպուբլիկան պատված է թատրոնների, ակումբ-գրադարանների, կուլտուրայի պալատների ու տների, կինոթատրոնների խիտ ցանցով:

Արդյունաբերության, գյուղատնտեսության եւ կուլտուրայի անընդհատ զարգացումը պայմանավորեցին բնակչության նյութական բարեկեցության եւ կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը: Դրա լավագույն վկայությունը Սովետական Հայաստանի բնակչության արագ աճն է: 1920 թվականին Հայաստանի բնակչությունը 770 հազար մարդ էր, իսկ այժմ՝ մոտ 2 միլիոն 200 հազար:

Սովետական Հայաստանն այսօր դարձել է սփյուռքահայ աշխատավորության փարոսը: Դարեր ի վեր հայ ժողովրդի համար կործանարար արտագաղթը վերածվել է թուրքական ջարդարարների մեղքով աշխարհի տարբեր երկրներում սփռված հայ տարագիրների ներգաղթի՝ դեպի իրենց մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստան: Սովետական իշխանության տարիներին հայրենիք են դարձել մոտ 200 հազար մարդ: «Օտար երկինքներու տակ ապրող հայրենիքի կարոտը քաշող պանդուխտ հայուն հառաչանքն ու իղձն է եղել հայրենիք ունենալը: Դարավոր այս իղձն իրագործված է ազատագրված նոր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի փառահեղ իրականությամբ... Որքան բախտավոր է սփյուռքի հայությունը, որ արժանացած է հայրենիքի կանչին» («Լրաբեր», 27. 9.1962թ.): Այսպիսին է սփյուռքահայ աշխատավորների դիրքորոշումը:



Ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման, աշխատավորության կենսամակարդակի հարաճուն բարձրացման գործում հայ ժողովրդի ձեռք բերած հիրավի պատմական հաջողություններն ամենից առաջ սովետական կարգերի արդյունքն են, սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամության ու սոցիալիստական համագործակցության արգասիքը:

Արդարեւ, ամենաքանկ նվաճումը բարեկամությունն է, հավերժ եւ անխախտ բարեկամությունը, որ կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ Սովետական իշխանության տարիներին հաստատվել է մեր երկրի բոլոր ժողովուրդների միջեւ: Հայաստանում հայերի հետ միասին ուս-ուսի տված, եղբայրաբար, համերաշխ ապրում եւ աշխատում են ռուսները եւ ադրբեջանցիները, վրացիներն ու ուկրաինացիները, բելոռուսներն ու քրդերը: Անդրկովկասի սովետական բոլոր ժողովուրդների բարեկամությունը ներկայումս ստացել է նոր որակ, նոր բովանդակություն, դարձել է իսկական եղբայրություն: Հայ ժողովուրդը երախտապարտ է ռուս ժողովրդին՝ իր անշահախնդիր բարեկամին եւ ավագ եղբորը:

Սովետական Հայաստանի աշխատավորները մեր երկրի մյուս ժողովուրդների հետ միասին ակտիվորեն պաշտպանում են սովետական կառավարության լենինյան արտաքին քաղաքականությունը: Սովետական Միությունը սոցիալիստական մյուս երկրների հետ միասին հետեւողականորեն պայքարում է խաղաղության համար, միջազգային լարվածության թուլացման եւ եւ սպառազինությունների մրցավազքի դադարեցման համար: Սոցիալիզմի լագերը, աշխարհի բոլոր կոմունիստական ուժերը հանդես են գալիս ճնշված ժողովուրդների իրավունքների պաշտպանությամբ, հակահարված են տալիս միջազգային իմպերիալիզմի ավանտյուրիստական դավադրություններին: Սովետական Միությունը բազմակողմանի օգնություն է ցույց տալիս վիետնամական ժողովրդին՝ ամերիկյան իմպերիալիզմի դեմ նրա արդարացի եւ հերոսական պայքարում:

Սովետական Հայաստանի աշխատավորները մեր երկրի մյուս ժողովուրդների հետ միասին պաշտպանում են կոմունիստական պարտիայի եւ սովետական կառավարության լենինյան արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը, բոլոր երկրների եւ պետությունների ու ամենից առաջ հարեւան երկրների հետ հաշտ ու խաղաղ ապրելու քաղաքականությունը:

Հայ ժողովուրդը մոխիրներից հառնելով, սովետական իշխանության 45 տարիների ընթացքում վիթխարի նվաճումներ է ձեռք բերել, կերտել իր երջանիկ կյանքը: Էլ ավելի մեծ խնդիրներ են կանգնած նրա առջեւ ներկայումս: Սովետական Միության եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում Հայաստանի աշխատավորները ջանք չեն խնա-

յում մեր հայրենիքն ավելի շեն ու ծաղկուն դարձնելու, կոմունիզմի կառուցման հոյակապ ծրագիրը իրականացնելու համար:

*Գ. Գալոյան*
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
*Ջ. Կիրակոսյան*
Պատմական գիտությունների թեկնածու

«Սովետական Հայաստան», 1965, 24 ապրիլի, թիվ 96, էջ 2:

## Թ Ի Վ 41

**[Մ. Ներսիսյանի եւ Ն. Ուշակովի հոդվածը եղեռնի 50-ամյակի առթիվ]**

## ԳԵՆՈՑԻԴԸ ԱՄԵՆԱԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Է ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Մարդկության բովանդակ պատմության ընթացքում տիրապետող շահագործող դասակարգերը ոչ քիչ թվով հրեշավոր հանցագործություններ են կատարել իրենց ազգային եւ սոցիալական ազատագրության համար պայքարի ելած ժողովուրդների դեմ: Ամենածանր ոճրագործ ակտերից մեկը գենոցիդն է:

Գենոցիդը այն գործություններն են, որոնք կատարվում են բնակչության մի որեւէ ազգային, էթնիկական, ռասսայական կամ կրոնական խումբը լրիվ կամ մասնակիորեն ոչնչացնելու դիտավորությամբ: Գենոցիդը շահագործող հասարակարգի սոցիալ-դասակարգային պայմանների ծնունդն է:

Գենոցիդի քաղաքականությունը առավել մեծ թափ ստացավ իմպերիալիզմի ժամանակաշրջանում: Նրա գործակալները մշակեցին բնակչության հետապնդվող խմբերի բնաջնջման միջոցառումների նրբին սիստեմ: Գենոցիդի առավել բացահայտ եւ կործանարար ձեւը որոշակի ռասսայի կամ ազգության պատկանող մարդկանց ֆիզիկական բնաջնջումն է: Բնակչության որեւէ խմբի համար դիտավորյալ կերպով ստեղծվում են այնպիսի կենսապայմաններ, որոնք նկատի են առնված այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացման համար:

Գենոցիդի փայլուն դրսեւորում են հիտլերականների հրեշավոր ոճրագործությունները, որոնք միլիոնավոր մարդկանց ոչնչացրին որպես ոչ լիարժեք մարդիկ, որպես ցածր ռասսայի ներկայացուցիչներ: Գենոցիդի փիլիսոփայությունը ֆաշիստական Գերմանիայում դարձավ ֆաշիզմի գաղափարախոսության բաղկացուցիչ մասը, հասցվեց պետական քաղաքականության մակարդակի: Ռասսայականության հիտլերյան տեսաբանները երկրոդ համաշխարհային պատերազմի նախօրյակին եւ պատերազմի տարիներին մշակեցին ռուսների, չեխերի, լեհերի, հրեաների,



սերբերի եւ այլ ազգերի ու ազգությունների ոչնչացման ծավալուն ծրագիր: Այդ ծրագրի համաձայն, պլանաչափորեն բնաջնջվում էր խաղաղ բնակչությունը գերմանական բանակի կողմից ժամանակավորապես զավթված տերիտորիաներում: Ստեղծվեցին տասնյակ մահաճամբարներ, սկսեցին բոցավառվել Օսվենցիմի վառարանները, գործել Բուխենվալդի եւ Դախաուի գազախցիկները: Ռասիստ տեսաբանները ամբողջ ժողովուրդների ոչնչացումը համարում էին բարձր, արիական ռասսայի, զարգացման պայման, մի ռասսա, որը իբր կոչված է լինելու տերերի ռասսա, կառավարելու աշխարհը: Մնացած ժողովուրդների մեծամասնությանը առաջարկվում էր ընտրություն կատարել՝ կամ ոչնչացվել, կամ դառնալ արիացիների ստրուկները:

Նյուրենբերգի տրիբունալը, հաստատելով ֆաշիստական ճիվաղների կողմից ժողովուրդների կազմակերպված մասսայական ոչնչացման փաստը, խիստ կերպով պատժեց գենոցիդի գլխավոր ոգեշնչողներին:

Հիտլերյան բանդիտների գենոցիդին, որը հանդիսացավ ֆաշիզմի ապոգեյը, նախորդեցին գերմանական իմպերիալիզմի եւ այլ ռեակցիոն ուժերի խայտառակ գործողությունները, որոնք տեղի ունեցան առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին:

Չգտելով ինչ գնով էլ լինի իրագործել իրենց պլանները Մերձավոր Արեւելքում, Գերմանիայի մոնոպոլիստական խմբերը բացեիբաց գենոցիդ հրահրեցին Թուրքիայում: Հիսուն տարի առաջ երիտթուրքերի կառավարությունը բնաջնջեց մոտավորապես մեկ ու կես միլիոն հայ: Սկզբում գաղտնի եւ ուխտադրուժ կերպով ոչնչացվեցին հայ մտավորականությունը եւ տղամարդ բնակչությունը: Ապա կոտորածի ոգեշնչողները անցան կանանց եւ երեխաների մեթոդիկ ոչնչացմանը: Հարյուր հազարավոր հայեր ստիպված եղան փախչել օտար երկրներ: Շատերը զոհվեցին, փորձելով փրկվել կատաղի հետապնդումներից:

Այդ եղեռնի կազմակերպիչները ոչ քիչ աղետները պատճառեցին նաեւ թուրք ժողովրդին: Իրենց ոճրագործությունների համար նրանք արժանացան Թուրքիայի բոլոր առաջադեմ ուժերի, երկրի աշխատավորական լայն մասսաների ատելությանը: Առաջին համաշխարհային պատերազմում գերմանական իմպերիալիզմի ջախջախումից հետո թուրք ժողովուրդը նրանց վռնդեց քաղաքական ասպարեզից: Նոր Թուրքիան, վարելով հակաիմպերիալիստական քաղաքականություն, բարիդրացիական հարաբերություններ հաստատեց երիտասարդ սովետական պետության հետ: Սովետական ժողովուրդը անկեղծորեն ձգտում է, որ այդ հարաբերությունները հաջողությամբ զարգանան, ավելի ու ավելի բարեկամական դառնան:

Ժողովուրդները դատապարտել ու նշավակել են գենոցիդը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն ոճրագործություններից մեկը: Համաշխարհային հասարակայնության ճնշման տակ ՄԱԿ-ի գլխավոր

ասամբլեան 1946թ. դեկտեմբերի 11-ի հատուկ բանաձեւում գենոցիդը հայտարարեց միջազգային իրավունքի ոտնահարում, հայտարարելով, որ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է այն: ՄԱԿ-ի շրջանակներում մշակվեց եւ ստորագրվեց «Գենոցիդի հանցագործությունը կանխելու եւ նրա համար պատժելու կոնվենցիա», որի մասնակիցներն են այժմ ավելի քան 70 պետություններ: Կոնվենցիայի համաձայն գենոցիդ կատարող անձինք պետք է պատիժ կրեն, անկախ այն բանից, թե նրանք ըստ կոնստիտուցիայի պատասխանատու կառավարողներ, պաշտոնատար անձինք են, թե մասնավոր անձինք: Բնորոշ է, որ մի շարք իմպերիալիստական տերություններ եւ ամենից առաջ ԱՄՆ-ը, որոնք խոսքով հանդես էին գալիս գենոցիդին վերջ տալու օգտին, չվավերացրին այդ կոնվենցիան:

Եւ դա պատահական չէ: Մինչեւ օրս Ամերիկայի Միացյալ Նահանգներում ռասսայական եւ ազգային ճնշումը լայն տարածում ունի: Ռասիստական «տեսությունները» ամերիկյան ռեակցիան լայնորեն օգտագործում է ԱՄՆ-ի բազմամիլիոնանոց «գունամորթ» բնակչության եւ ամենից առաջ նեգրերի ազգային ճնշումն արդարացնելու համար:

Վ.Ի.Լենինը դեռ 1913թ. զայրույթով ասել է. «...Ամերիկայում նեգրերի դրությունը վայել չէ քաղաքակիրթ երկրին... Ամոթ Ամերիկային՝ նեգրերի դրության համար»:

Ռասսայական խտրականությունը արտահայտվում է ամերիկյան նեգրերի կյանքի բոլոր կողմերի վրա: Նրանց բաժինն է ծանր եւ ցածր վարձատրվող աշխատանքը: Շատ ձեռնարկությունների եւ հիմնարկների տերեր նեգրերին առհասարակ աշխատանքի չեն ընդունում: Նեգր բանվորի միջին վաստակը սպիտակամորթի վաստակի միայն կեսն է կազմում: Նեգրերի դրությունը ոչնչով լավ չէ գյուղատնտեսության մեջ: 1951 թվականին քաղաքացիական իրավունքների համար պայքարի կոնգրեսի կողմից ՄԱԿ-ին տրված հանրագրում ասված է, որ «Ներգրերը Միացյալ Նահանգների այն քաղաքացիներն են, որոնք ճնշվում եւ ենթարկվում են սեգրեգացիայի ու խտրականության, ինչպես նաեւ երկար ժամանակ հանդիսանում են բռնության օբյեկտ, տուժում են գենոցիդից»:

Ամերիկյան ռասիստների սանձարկությանը, որը ԱՄՆ-ի քաղաքացիների մեծամասնության կարծիքով դարձել է Ամերիկայի խայտառակությունը, նախորդեց տեղի հնդկացիների՝ Միացյալ Նահանգների բնիկների մասսայական ու պլանաչափ բնաջնջումը: Քշված լինելով անբերրի հողամասերում գտնվող այսպես կոչված ռեզերվացիաները, նրանք փաստորեն զրկված են գոյության միջոցներից: Ամերիկյան հնդկացիները դանդաղ մահանում են: Առաջ ԱՄՆ-ում բնակվող ավելի քան 600 հնդիկ ցեղերից այժմ մնացել է հազիվ 200-ը:

Վերջին ժամանակների իրադարձությունները վկայում են, որ իմպերիալիստական շրջանները կանգ չեն առնում Միացյալ Նահանգների սահմաններից դուրս «ոչնչացման տակտիկա» կիրառելու առջեւ:



Նրանք այժմ փորձում են խեղդել ազգային-ազատագրական շարժումը Հարավ-Արեւելյան Ասիայում: ԱՄՆ-ի իմպերիալիստները «կեղտոտ պատերազմ» են մղում Հարավային Վիետնամի ամբողջ ժողովրդի դեմ, որը չի ցանկանում հնազանդվել գաղութարարներին, ուզում են գինված ձեռքով կանգնեցնել պատմության առաջընթացը: Չգտնելով ամեն գնով իրենց օգտին բեկում մտցնել Հարավային Վիետնամի հայրենասերների դեմ մղվող պայքարում, ամերիկյան գեներալները գործի են դրել նապալմը, ֆոսֆորային ռումբերը եւ նույնիսկ գազերը:

Գաղութարարները եւ ռասիստները կառչում են գենոցիդից, որպես մի միջոցից, որը, ինչպես նրանք հուսով են, նրանց կոօգնի պահպանելու իրենց քաղաքական ու տնտեսական դիրքերը, փրկելու կործանվող կայսրությունների բեկորները: Նրանք առանձնապես սանձարձակ են գործում Հարավ-Աֆրիկյան Ռեսպուբլիկայում, որի կառավարողները ռասիզմը հռչակել են պաշտոնական պետական քաղաքականություն: Իր ժամանակին Ֆերվուրդը՝ հարավ-աֆրիկյան ռասիստների ղեկավարը, բացեիբաց իր համակրանքն էր հայտնում նացիստական դոկտրինայի նկատմամբ: Այժմ նա այդ դոկտրինան իրագործում է Հարավ-Աֆրիկյան ռեսպուբլիկայում: «Մենք ուզում ենք, որ Հարավային Աֆրիկան մնա սպիտակ,- հայտարարել է նա: Դա կարող է միայն մի բան նշանակել՝ սպիտակների տիրապետություն: Ոչ թե «ղեկավարություն», ոչ թե «գլխավորություն», այլ «վերահսկողություն», «գերազանցություն»: Հարավ-Աֆրիկյան Ռեսպուբլիկայում բնիկների ու եւրոպացի վերաբնակիչների «հավասարեցման» գաղափարը, ռասիստների կարծիքով, պետք է իրագործվի 13 միլիոն աֆրիկացիների սիստեմատիկ եւ պլանաչափ ոչնչացնելու միջոցով:

Այդ պլանին լիովին համապատասխան, Հարավ-Աֆրիկյան Ռեսպուբլիկայում աֆրիկացիներին մահացման են դատապարտում: 1950թ. ընդունված «Կոմունիզմը ճնշելու օրենքը» եւ 1956թ. «Խոռվարար խառնաժողովների օրենքը» ռասսայական իշխանություններին իրավունք տվեցին, առանց ռասսայի խտրականության, ոչնչացնել ամեն մեկին, եթե նա համարձակվի այս կամ այն կերպ բողոքը հայտնել գոյություն ունեցող կարգերի դեմ:

Միայն 1962թ. Հարավ-Աֆրիկյան ռեսպուբլիկայում կայացվել է 384.497 մեղադրական դատավճիռ: Ընդամենը մեկ տասնամյակում՝ 1951թ. մինչեւ 1961թ., երկրում դատապարտվել է 3 միլիոն 886 հազար 568 աֆրիկացի, որոնք իբր «խախտել են» հասարակական կարգը: Վերջին տարվա ընթացքում բանտ է նետվել 401.300 մարդ: 115 աֆրիկացի կախաղան է հանվել:

Գենոցիդի քաղաքականությունը լայն մասշտաբներով իրագործում են պորտուգալական գաղութարարները: Այդ քաղաքականությունը նրանք վարում են Անգոլիայի, Մոզամբիկի, «Պորտուգալական» Գվինեայի եւ այլ տերությունների բնիկների «համաձուլման» դրոշակով: Այդ

քաղաքականությունը հատկապես լայնորեն կիրառվում է Անգոլայում, որտեղ 1961թ. ժողովուրդը զինված ապստամբություն բարձրացրեց Սալազարի ռեժիմի դեմ: «Տեռորիստների» դեմ պայքարելու պատրվակով երկրի երեսից ջնջվում են ամբողջ շրջանները: Արտասահմանյան մամուլի տվյալներով, մինչեւ օրս պատժիչների կողմից ոչնչացվել են մեծ մասամբ երեխաներ, կանայք եւ ծերունիներ:

Ինչպես վկայում է պատմությունը, գենոցիդը, որպիսի նուրբ ու կատաղի ձեւերով էլ նա հանդես գա, չի տալիս եւ չի տա այն արդյունքը, որին ձգտում են հասնել իմպերիալիստները: Աշխարհի ժողովուրդները նրան խորտակիչ հահակահարված են տալիս: Մարդկության խիղճը վաղուց դատապարտել է այն եւ անարգանքի սյունին գամել:

Ինչ տվեց գենոցիդի քաղաքականությունը հիտլերականներին: Նրանք ուզում էին արյունաքամ, ուժասպառ անել Արեւելյան Եվրոպային եւ Սովետական Միության ժողովուրդներին, որպեսզի վերջիններս դառնային գերմանական իմպերիալիզմի ստրուկները: Բայց ինչի հասան նրանք: Լիակատար պարտություն, որ նրանք կրեցին քսան տարի առաջ: Ֆաշիզմի դեմ մղված մեծ ճակատամարտում հաղթանակեց սովետական հասարակական ու պետական կարգը: Սոցիալիզմը հաղթանակեց Արեւելյան Եվրոպայի եւ Ասիայի մի շարք երկրներում: Գոյություն ունի եւ օրավուր ամրապնդվում է միջազգային սոցիալիստական սիստեմը: Սովետական Միությունը, բուժելով պատերազմի պատճառած վերքերը, յոթմղոնանոց քայլերով առաջ է ընթանում կոմունիստական շինարարության ուղիով: ՍՍՌՄ ժողովուրդների սերտ ընտանիքում տնտեսական, քաղաքական եւ կուլտուրական հսկայական հսկայական հաջողությունների են հասել մեր ազգային ռեսպուբլիկաները: Ծաղկուն սոցիալիստական Հայաստանը դարձել է բոլոր հայ աշխատավորների հայրենիքը: Օտար ափերում թափառող ավելի քան 200 հազար հայեր տուն են վերադարձել եւ ակտիվորեն մասնակցում են կոմունիզմի կառուցմանը:

Սովետական Միությունը իմպերիալիզմի կողմից վարվող ատելության եւ ազգային թշնամանքի քաղաքականությունը հակադրում է ժողովուրդների բարեկամության քաղաքականությունը, Ասիայի, Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի զարգացող երկրներին ցույց տրվող եղբայրական օգնությունը, սանձարձակ ռասիզմին՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմը: Մինչդեռ իմպերիալիստներն ու ագրեսորները փորձում են ճնշել ասիական, աֆրիկյան եւ լատինաամերիկյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, Սովետական Միությունը եւ մյուս սոցիալիստական պետությունները հաստատ պաշտպանում են նրանց արդարացի պայքարը: Խավարամոլության եւ պատերազմի մութ ուժերին երբեք չի հաջողվի հաղթահարել առաջադիմության ու խաղաղության ուժերին: Իմպերիալիզմը իր մռայլ դիտավորությունները իրագործել չի



կարող նույնիսկ գենոցիդի օգնությամբ: Ապագան պատկանում է սոցիալիզմին, կոմունիզմին:

*Մ. Ներսիսյան*
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս
*Ն. Ուշակով*
իրավաբանական գիտությունների դոկտոր
«Պրավդա», 1965, ապրիլի 24

«Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 25, թիվ 97, էջ 2:

## Թ Ի Վ 42

## [Հաղորդագրություն եղեռնի 50-ամյակի առթիվ ժողովի մասին]

### ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 24-ին լրացավ սուլթանական Թուրքիայի կառավարողների կազմակերպած հայկական կոտորածների 50-ամյակը: 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակին էր նվիրված Երեւան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողովը, որը տեղի ունեցավ երեկ Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնում:

Ժողովի նախագահությունում էին Հայաստանի կոմունիստական պարտիայի եւ կառավարության ղեկավարներ ընկ. ընկ. Ե. Ասատրյանը, Հ. Բաղդասարյանը, Դ. Դրագունսկին, Յա.Զարոբյանը, Գ.Հարությունյանը, Ն. Հարությունյանը, Մ.Մելքոնյանը, Գ.Տեր-Ղազարյանցը, Ա.Քոչինյանը, Բ.Մուրադյանը, Ս. Առաքելյանը, Ս. Պողոսյանը, ռեսպուբլիկայի միհիստրներ, անվանի գրողներ, գիտության եւ արվեստի ականավոր գործիչներ:

Օթյակում էր Ամենայն հայոց կաթողիկոս, Ծայրագույն պատրիարք Վազգեն Առաջինը:

Ժողովը հակիրճ ճառով բաց արեց Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկ. Ն. Հարությունյանը:

- Հայ ժողովուրդը,- ասաց ընկ. Հարությունյանը,- այսօր առաջին անգամ արժանավայել նշում է մեծ եղեռնի տարելիցը, նրա բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը: Մենք նշում ենք այդ տարելիցը ոչ թե ողբով ու լացով, այլ մեր հայրենիքի վերածննդի, նրա բեղուն ներկայի եւ առավել շքեղ ապագայի անպարտելիության վեհ գիտակցությամբ, այն վսեմ գիտակցությամբ, որ ոչ մի ուժ, սոցիալիստական հասարակարգից բացի, չի բերի մեզ այդ լուսաբաղձ ապագան:

Մենք նշում ենք մեծ եղեռնի 50-րդ տարելիցը այն խոր ու անսասան հավատով, որ դաժան անցյալը չի կրկնվի երբեք եւ ոչ մի տեղ:

Մենք ամբողջ հոգով ու էությամբ դատապարտում ենք գենոցիդը՝ ժողովրդասպանությունը:

Գենոցիդի համար չկա եւ չի կարող լինել ոչ որեւէ իրավական արդարացում, ոչ էլ որեւէ հայցային վաղեմություն:

Դատապարտելով գենոցիդի մարդակեր քաղաքականությունը, մենք դատապարտում ենք ոչ թե աշխատավոր ժողովրդին, այլ բռնակալ դահիճներին, այդ քաղաքականությունն ստեղծողներին եւ նրա գործադրողներին:

Հայ ժողովուրդը նշում է այսօր մեծ եղեռնի 50-ամյակը անվտանգ ու ապահով, որովետեւ Հայաստանը այլեւս պետականությունից զուրկ մի խլյակ չէ, այլ Սովետական Սոցիալիստական հզոր Միության ամրակուռ ու բարգավաճ ռեսպուբլիկաներից մեկը:

Եւ երբ այսօր հայ աշխատավորը տուֆից ու մարմարից գործարաններ ու պալատներ է կառուցում, քարքարուտը վեր է ածում արգավանդ հողի, հայ գիտնականն ու արվեստագետը մշակույթի նոր կոթողներ են կերտում մեր ժողովրդի ազատագրական եւ հեղափոխական ճակատամարտերում նրա երջանկության համար զոհված հերոսների հիշատակին, նրանք վստահ են, որ այդ կոթողները դարեդար կմնան անխախտ ու անվթար, որովհետեւ մեր ժողովուրդը միայնակ չէ այլեւս, որովհետեւ նա այսօր անզեն ու անպաշտպան չէ, այլ հարյուրապատիկ զրահավորված է Սովետական Միության ժողովուրդների եղբայրական բարեկամության անսասան միասնությամբ ու հզորությամբ:

Լենինյան իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ, հայ ժողովրդի հերոսական աշխատանքով եւ ստեղծագործական խիզախումներով մեր եկիրը վերածնվեց եւ դարձավ այսօրվա գեղեցիկ ու բարգավաճ Սովետական Հայաստանը:

Հայ ժողովրդի բազում դարեր մղած պայքարի փառապսակը, նրա բյուրավոր զոհերի հիշատակը հավերժացնող ամենավսեմ ու վեհատես կոթողը դա մեր վերածնված Սովետական Հայաստանն է, ամբողջ աշխատավոր հայերի մայր հայրենիքը: (Ծափահարություններ)

Ժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հոտնկայս հարգում են զոհերի հիշատակը: Ընկ. Ն. Հարությունյանը 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ժողովը հայտարարում է բացված:

Դահլիճի կամարների տակ վեհորեն հնչում են ՍՍՌ Միության եւ Հայկական ՍՍՌ պետական հիմնները:

Զեկուցման համար խոսքը տրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին, որին ներկաները դիմավորում են ջերմորեն:

- Կես դար է անցել այն օրից,- ասում է զեկուցողը,- երբ սուլթանական Թուրքիայի գաղութարարներն անցան վաղօրոք նախապատրաստված իրենց ծրագրի իրականացմանը: Նրանք սկսեցին ցեղասպանության հրեշավոր գործը՝ հայ ժողովրդի բնաջնջումը Արեւմտյան Հայաստանում:



Պատմությունը արձանագրել է անհամար պատերազմներ, կոտորածներ եւ ժողովրդական զանգվածների հալածման ու տեղահանման բազմաթիվ դեպքեր: Սակայն, միայն իմպերիալիզմի ժամանակաշրջանը մտցրեց մեր բառարանի մեջ համատարած աղետների այն նոր զարհուրելի տեսակը, որը կոչվում է գենոցիդ եւ որը նշանակում է տվյալ երկրում մի ամբողջ ժողովրդի, մի ամբողջ ազգի ծրագրված, նախապես մտածված լիակատար ոչնչացում: Գենոցիդի առաջին օրինակը ցույց տվեց այն ժամանակվա երիտթուրքերի կառավարությունը, որն իր բարբարոսական նպատակներն իրագործելու համար դաշինքի մեջ էր մտել կայսերական Գերմանիայի հետ:

Այնուհետեւ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը պատմում է ցեղասպանության այն ստոր մեթոդների մասին, որին զոհ գնացին հայ մտավորականությունը, տղամարդիկ, կանայք ու երեխաները, բազմաթիվ շրջաններում ու քաղաքներում ինքնապաշտպանության ելած հայերի ցուցաբերած արիության ու անձնազոհության մասին, հայկական կոտորածների նկատմամբ եվրոպական մեծ պետությունների բռնած հանդուրժողական դիրքի մասին, որը հնարավորություն տվեց թուրքական կառավարությանը իրականացնելու հայ ժողովրդի բնաջնջման իր քաղաքականությունը:

Հայկական կոտորածի կատարված փաստը զայրույթ եւ ատելություն է առաջացնում այդ գենոցիդն իրականացնող արյունարբու դահիճների նկատմամբ: Բայց երբեք հայ ժողովուրդը չի ունեցել ատելություն այլ ազգերի աշխատավորների, այդ թվում թուրք աշխատավոր ժողովրդի հանդեպ: Դա կհակասեր մեր հումանիստական ավանդներին:

Իր զեկուցման վերջում ընկ. Վ. Համբարձումյանն ասում է.

- Մենք ունեցանք անթիվ կորուստներ: Միայն սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը փրկեցին հայ ժողովրդին իսպառ բնաջնջումից եւ նրա համար բացեցին դեպի կոմունիզմ տանող լուսաշող ու պայծառ ուղի: Մենք ձեռք բերեցինք անհամար նվաճումներ, ապրելով սովետական ժողովուրդների ընտանիքում, հավատարիմ մնալով այդ ընտանիքի ընդհանուր շահերին: Դարերի խորքից է գալիս Անդրկովկասի ժողովուրդների՝ վրացիների, ադրբեջանցիների եւ հայերի անխախտ բարեկամությունը, որն այսօր նոր, ավելի խոր իմաստ է ստացել: Հայ ժողովուրդը սրբությամբ է պահպանում այդ բարեկամությունը:

Կառուցելով նոր կյանք, շենացնելով մեր երկիրը, ամրացնելով սովետական ժողովուրդների բարեկամությունը, մենք գիտակցում ենք, որ իրականացնում ենք նաեւ հարյուր հազարավոր մեր զոհված եղբայրների ու քույրերի նվիրական իղձերն ու երազները: Մեր անթիվ զոհերի անմո-

ռաց հիշատակը միշտ կոգեւորի մեզ մեր խաղաղ շինարարական աշխատանքում, կոգեւորի կառուցելու մեր սքանչելի երիտասարդ երկիրը՝ Հայաստանը: (Ծափահարություններ)

Ընկ. Ն. Հարությունյանը 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ժողովը հայտարաւում է փակված: Դահլիճում նորից հնչում են ՍՍՀ Միության եւ Հայկական ՍՍՌ պետական հիմները:

«Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 25, թիվ 97, էջ 2:

## Թ Ի Վ 43

**[Հաղորդագրություն եղեռնի զոհերի հուշարձանի բացման մասին]**

### 1915 ԹՎԱԿԱՆԻ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ԿՈԹՈՂԻ ԲԱՑՈՒՄԸ

Երեկ, նոյեմբերի 29-ին, հայ ժողովրդի վերածննդի տոնի օրը, Սովետական Հայաստանի մայրաքաղաքի եւ մոտակա շրջանների աշխատավորության հազարավոր ներկայացուցիչներ, բանվորներ, ծառայողներ, մտավորականներ, գյուղի աշխատավորներ, ուսանողներ հավաքվել էին Ծիծեռնակաբերդի բարծունքում՝ մասնակցելու 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող կոթողի հանդիսավոր բացմանը: Իրենց հայրենիքի վերածննդի համար երախտագիտության վեհ զգացումով, այն անսասան հավատով, որ դաժան անցյալը այլեւս չի կրկնվի, նրանք եկել էին խոր հարգանքի իրենց տուրքը տալու եղեռնի զոհերի հիշատակին:

Ծիծեռնակաբերդի բարծունքի վրա, որտեղից բացվում է Երեւանի գեղեցիկ համայնապատկերը, մենք տեսնում ենք հոյակապ մի հուշարձան: Չորսուկես հազար քառակուսի մետր տարածության վրա բարձրացել է վեհապանծ հուշարձանը: Նրա կոմպլեքսի մեջ մտնում է 30 մետր տրամագիծ ունեցող շրջանաձեւ դամբարանը՝ դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե պիլոններով: Դամբարանում վառվելու է հավերժական հուրը՝ ի հիշատակ եղեռնի զոհերի:

Դամբարանը մոնումենտալ կառույցի մի մասն է: Նրանից քիչ հեռու վեր է խոյացել քառասուն մետրանոց երկնասլաց կոթողը, որը խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնունդը:

Ժամը 15-ն է: Ամբիոն են բարձրանում Հայաստանի կոմունիստական կուսակցության եւ կառավարության ղեկավարները՝ ընկերներ Ա.Ե.-Քոչինյանը, Ն.Խ.Հարությունյանը, Գ.Ա.Տեր-Ղազարյանը, Ռ.Հ.Խաչատրյանը, Լ.Պ.Ղարիբջանյանը, Ա.Ի.Գրիբկովը, Ս.Վ.Առաքելյանը, Ե.Թ.Ասծատրյանը, Ա.Հ.Ստեփանյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալներ Ս.Հ.Մովսիսյանը, Գ. Թ. Հարությունյանը, Լ. Ա. Ստեփանյանը,



Գ.Ս.Պետրոսյանը, Լ.Ս.Խաչատրյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հ.Ռ.Հասանովը, Երեւանի քաղաքային սովետի գործկոմի նախագահ Գ.Հ.Հասրաթյանը, մինիստրներ, կուսակցական եւ սովետական աշխատողներ, գիտության, կուլտուրայի անվանի գործիչներ:

Կոթողի բացմանը նվիրված աշխատավորների ներկայացուցիչների միտինգը ներածական խոսքով բաց է անում Հայաստանի կոմկուսի Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար Լ.Պ. Ղարիբջանյանը:

- Դեռ մեկ ամիս էլ չի անցել այն օրից,- ասում է նա,- երբ Սովետական Միության ժողովուրդների եւ աշխարհի բոլոր առաջադեմ մարդկանց հետ միասին հայ ժողովուրդը երախտագիտության զգացումով տոնեց մեծ Հոկտեմբերի պանծալի 50-ամյակը: Հոկտեմբերը վճռական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար: Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում մեր ժողովրդին փրկեց վերահաս իսպառ բնաջնջումից եւ նրա համար բացեց լուսաշող ու պայծառ ապագա:

1915 թվականի ապրիլին թուրքական ռեակցիոն կառավարողների նախօրոք մշակած ծրագրով նահատակվեցին մոտ մեկուկես միլիոն հայեր: Շարունակելով արեւմտահայության բնաջնջման իրենց ոճրապարտ ծրագիրը, արյունարբու բռնակալները նետվեցին դեպի Արեւելյան Հայաստան, որպեսզի նույն ճակատագրին արժանացնեն նաեւ մեր ժողովրդի արեւելյան հատվածը:

Համազգային աղետի այդ մղձավանջային օրերին, երբ թվում էր, թե կորսված է ամեն հույս, եւ փակված է ու թաղված արյան մեջ հայոց պատմության գիրքը, մեծ Հոկտեմբերի ազատարար այգը ծառագեց արյունաքամ ու ավեր Հայաստանի վրա: Իր բախտը լենինյան մեծ գաղափարներին ապավինած մեր ժողովուրդը ցրեց հայոց երկնակամարի մահաբեր ամպերը: Հեղափոխության արեւը կյանքի կոչեց մահվան նիրհից արթնացած մի ժողովրդի, որը հավիտյան երախտապարտ է Հոկտեմբերին ու նրա առաջնորդին՝ Լենինին եւ ռուս ժողովրդին:

Ընկերներ, երկու տարրի առաջ արժանավայել նշվեց եղեռնի զոհերի պայծառ հիշատակը: Ընդառաջելով հանրապետության աշխատա-վորների ու հասարակական կազմակերպությունների ցանկությունները, մեր կառավարությունը որոշում ընդունեց ի հավերժացումն եղեռնի զոհերի հիշատակի՝ Երեւան քաղաքում կանգնեցնել կոթող:

-Մեր ժողովրդի լավագույն վարպետների հմուտ ձեռքերով այդ հոյակերտ հուշարձանը արդեն կանգնել է Հայաստանի մայրաքաղաքում, որպես անշիրիմ նահատակների հավերժ կենդանի հուշարձան, որպես հայ ժողովրդի վերածննդի պայծառ խորհրդանիշ:

Այս հուշարձանը այցելող յուրաքանչյուր ազնիվ մարդու սիրտ ատելությամբ է լցվում դեպի չարը, դեպի պատերազմը, դեպի ցեղասպա-

նությունը, եւ խորը երախտագիտությամբ՝ դեպի այն հասարակարգն ու կուսակցությունը, որը փրկեց մեր ժողովրդին արհավիրքից, տվեց պետականություն, խաղաղ ու ապահով ապրելու եւ ստեղծագործելու, եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում բարգավաճելու անսահման հնարավորություն:

Ընկ. Ղարիբջանյանը Երեւանի աշխատավորության անունից, միտինգի մասնակիցների անունից շնորհակալություն է հայտնում ու շնորհավորում հուշարձանի նախագծի հեղինակներին՝ ճարտարապետներ Ա. Թարխանյանին ու Ս. Քալաշյանին, քանդակագործ Հ. Խաչատրյանին, բոլոր այն շինարարական կազմակերպություններին ու շինարարներին, որոնք մասնակցել են հուշարձանի կառուցմանը:

Միտինգը հայտարարվում է բացված: Սովետական Միության եւ Հայկական ՍՍՀ-ի պետական հիմների հնչյունները ռադիոն տարածում է ամբողջ հանրապետությունում: Երեւանցիների հետ միասին Հայաստանի աշխատավորները ունկնդրում եւ դիտում էին կոթողի բացումը: Հուզիչ րոպեներ. աշխատավորության ներկայացուցիչներ՝ Երեւանի Կիրովի անվան քիմիական կոմբինատի ապարատավար, սոցիալիստական աշխատանքի հերոս Ս. Պետրոսյանը, Շահումյանի շրջանի 22-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսության կթվորուհի, սոցիալիստական աշխատանքի հերոս Աշխեն Ավետիսյանը, գրող Պ. Սեւակը, բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Զ. Դոլաբչյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Թ. Ալթունյանը, ՀԼԿԵՄ Երքաղկոմի քարտուղար Բ. Վարդանյանը Երեւանի Կիրովի անվան քիմիական կոմբինատի մշտաբորբոք քուրայից վառած եւ զրահամեքենայով Ծիծեռնակաբերդ բերած ջահը հանձնում են Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա.Ե.Քոչինյանին: Ընդունելով ջահը, նա վառում է հավերժական կրակը:

Ընկ. Ա. Ե. Քոչինյանը բարձրանում է ամբիոն եւ ճառով դիմում ներկաներին:

## ԸՆԿ. Ա. Ե. ՔՈՉԻՆՅԱՆԻ ՃԱՌԸ

Հարգելի ընկերներ:

Այսօր, նոյեմբերի 29-ին, երբ Հայաստանի աշխատավորները նշում են սովետական կարգերի հաստատման պատմական օրը, մենք հավաքվել ենք բացելու առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական ռեակցիոն կառավարող շրջանների ազգայնամոլ քաղաքականության զոհերի, մեր ժողովրդի զավակների անմահ հիշատակը հավերժացնող կոթողը:

Այդ ողբերգությունից անցել է ավելի քան կես դար: Այժմ, մեր նոր սերունդներին դժվար է անգամ մտովի պատկերացնել այն արհավիրքը, որ ապրեց հայ ժողովուրդը այդ օրերին:



Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի զոհ դարձան միլիոնավոր մարդիկ: Պատերազմը թշվառության, սովի եւ գաղթի մատնեց աշխատավոր մարդկանց՝ հանուն մոնոպոլիստական կապիտալի շահերի, հանուն աշխարհի վերաբաժանման:

Հայ ժողովրդի արեւմտյան հատվածի ոչնչացումը, որն, իրավամբ, եղեռն կոչվեց, հնարավոր դարձավ իմպերիալիզմի պայմաններում ու հետեւանք էր իմպերիալիստական տերությունների մարդատյաց քաղաքականության:

1915 թվականին երիտասարդ թուրքերի կառավարությունը, օգտվելով համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, պետական մասշտաբներով իրականացրեց հայ ժողովրդի արեւմտյան հատվածի ոչնչացման վաղեմի ծրագիրը: Ամենավայրենի մեթոդներով գործադրվող տեռորի զոհ դարձան մեկուկես միլիոն հայեր: Իրենց բնօրրանից տեղահանվեցին եւ անապատներ քշվեցին հարյուր հազարավոր անմեղ մարդիկ: Եղեռնը վերջին գործողությունն էր այն մեծ ողբերգության, որ ապրեց հայ ժողովուրդը օսմանյան լծի տակ, հարյուրամյակների ընթացքում:

Եւ եթե մեր ժողովրդի արեւելյան հատվածի վրա չտարածվեց եղեռնի արհավիրքը, ապա դրանով նա պարտական է այն բանին, որ դեռեւս անցյալ դարի սկզբներին Արեւելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին:

Հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության քաղաքականությունը առաջ բերեց աշխարհի բոլոր առաջադեմ մարդկանց օրինական զայրույթը:

Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը եւ ռուսական առաջավոր մտավորականության բազմաթիվ այլ ներկայացուցիչներ վճռականորեն դատապարտում էին հայ ժողովրդի նկատմամբ իրականացված այդ քաղաքականությունը: Այդ օրերին հնչեց նաեւ մի շարք երկրների առաջավոր մարդկանց՝ Կարլ Լիբկնեխտի, Ռոմեն Ռոլանի, Անատոլի Ֆրանսի, Ֆրիտյոֆ Նանսենի եւ մյուսների բողոքի ձայնը:

Իմպերիալիզմի դաժան պայմաններում հայ ժողովուրդը մնացել էր ահավոր վտանգին երես առ երես: Մեր ժողովրդի ճակատագիրը, որի մասին փարիսեցիական ճառեր էին ասում Արեւմուտքի դիվանագետները, ոչ միայն չմտահոգեց իմպերիալիստական տերություններին, այլեւ դիվանագիտական առուծախի առարկա դարձավ:

Դեպքերի ողբերգական ընթացքը մի անգամ եւս ապացուցեց հայ ազգայնական կուսակցությունների քաղաքականության սնանկությունը, կուսակցություններ, որոնք մեր ժողովրդի բախտը եւ փրկությունը փորձում էին կապել իմպերիալիստական տերությունների հետ:

Հայ ժողովրդի պատմության այդ օրհասական օրերին միայն բոլշեւիկյան կուսակցությունն էր, որ տեսնում եւ նախանշում էր նրա փրկու-

թյան միակ իսկական ուղին՝ կապելով այն Ռուսաստանի պրոլետարիատի սոցիալական պայքարի, հեղափոխական շարժման հետ:

Դառն ճակատագիր էր սպասում ամբողջ Հայաստանին, եթե մեր պատմության այդ օրհասական պահին Ռուսաստանում չհաղթանակեր Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Հայ ժողովրդի ճակատագիրը նրա պատմության այդ բախտորոշ օրերին լրջորեն մտահոգում էր Վլադիմիր Իլյիչ Լենինին, բոլշեւիկների կուսակցությանը: Սովետական Ռուսաստանի կառավարությունը՝ վճռականորեն հանդես էր գալիս հայ աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանությամբ, մերկացնում էր Հայաստանի նկատմամբ իմպերիալիստական դիվանագիտության ծրագրերը:

Սովետական իշխանության առաջին ձեռնարկումներից մեկը եղավ Թուրքահայաստանի մասին լենինյան հայտնի դեկրետի ընդունումը:

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը փրկեց մեր ժողովրդին ազգովին բնաջնջման վտանգից, ավետեց մեր ժողովրդի հրաշք-վերածնունդը:

Հայ ժողովուրդը ստեղծեց իր սոցիալիստական պետությունը՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը: Կոմունիստական կուսակցության Լենինյան ազգային քաղաքականության հետեւողական իրականացման շնորհիվ Սովետական Հայաստանը կարճ ժամանակամիջոցում դարձել է առաջավոր ինդուստրիայի բարձր զարգացած գյուղատնտեսության, առաջնակարգ գիտության ու կուլտուրայի ծաղկուն հանրապետություն:

Սովետական իշխանության 47 տարվա ընթացքում Հայաստանի բնակչությունը 750 հազարից հասել է 2 միլիոն 300 հազարի, այսինքն՝ ավելացել է 3 անգամ:

Հայ ժողովրդի աշխարհով մեկ սփռված տարագիր զավակները, որոնք հեռավոր երկինքների տակ ապրում էին հայրենիքի կարոտով, բռնեցին հայրենիք վերադառնալու ուղին: Նրանցից 200 հազարն արդեն վերադարձել են Սովետական Հայաստան եւ ակտիվորեն մասնակցում են հայրենիքի ծաղկման ու բարգավաճման գործին:

Սովետական Հայաստանի աննախընթաց նվաճումները, մեր այսօրվա երջանիկ կյանքը պերճախոս հաստատում են այն ճշմարտության, որ միայն սովետական իշխանությունը հնարավոր դարձրեց հինավորց հայ ժողովրդի ազատագրությունը, միայն Հոկտեմբերի գաղափարների շնորհիվ նա կարողացավ հառնել մոխիրներից եւ բռնել վերածննդի ուղին:

Պատմության անդարձ ճանապարհին են մնացել մեր ժողովրդի այնպիսի դարավոր ուղեկիցներ, ինչպիսիք են կոտորածն ու ավերը, ազգային հալածանքը, թշնամական ասպատակությունները, արյունն ու արցունքը:



Հայ ժողովուրդը զգում է հայրենի հողի ամրությունը, ապրում է այսօրվա եւ ապագայի նկատմամբ աներեր հավատով, կառուցում ու շենացնում է հայրենի ոստանը, համոզված, որ ոչ ոք այլեւս չի հանդգնի ավերել կառուցածը:

Հիսուն տարի առաջ կրած ծանր կորուստները չկարողացան եւ չէին կարող կոտրել մեր ժողովրդի հավատը ապագայի նկատմամբ, նրա կենսասեր ոգին, կենսախինդ բնավորությունը: Լացն ու կսկիծը, որոնք այնքան ժամանակ մաշել են մեր ժողովրդի սիրտը, թունավորել նրա կյանքն ու երջանկությունը, խորթ են այլեւս նրան:

Այժմ խինդը, ուրախությունը, երջանկությունն են մեր ժողովրդի կյանքը բնութագրող հատկանիշները:

Մեր ժողովուրդը բարեկամության եւ եղբայրության անխզելի դաշինքով կապված է Սովետական Միության, մեր սոցիալիստական մեծ հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ: Նրա ապահովության, երջանկության եւ պայծառ ապագայի հաստատուն երաշխիքը Սովետական Միության հզորության, 235 միլիոնանոց սովետական ժողովրդի հավաքական ուժի մեջ է: Հայ ժողովուրդը քաջ գիտակցում է, որ եղեռնի արհավիրքը իջավ նրա գլխին, որովհետեւ նա մենակուսացած էր, մենակ եւ անօգնական:

Այս հանդիսավոր պահին մենք կարող ենք վստահորեն ասել, որ նման ողբերգություն հայ ժողովրդի պատմության մեջ այլեւս երբեք չի կրկնվի, որովհետեւ նա այլեւս մենակ չէ: Նրա հետ են սովետական եղբայրական ժողովուրդները. նա հզոր է իր մեծ հայրենիքի հզորությամբ:

Հայ ժողովուրդը մի անգամ եւս իր երախտագիությունն ու սերն է արտահայտում սովետական բոլոր ժողովուրդներին, մասնավորապես ռուս մեծ ժողովրդին, որոնց եղբայրական օգնությամբ միայն հնարավոր դարձավ նրա վերածնունդը:

Աշխարհում դեռ գոյություն ունի իմպերիալիստական այն սիստեմը, որը պատճառ էր հայ ժողովրդի պատմական ողբերգության:

Եղեռնը մարդկային նոր պատմության մեջ ցեղասպանության քաղաքականության սոսկալի նախադեպն էր, քաղաքականություն, որն այնուհետեւ որդեգրվեց եւ լայն մասշտաբներով իրագործվեց Ֆաշիզմի կողմից Եւրոպայի շատ ժողովուրդների նկատմամբ: Այսօր էլ աշխարհը վկա է գաղութատիրական, ռասայական, շովինիստական, մարդատյաց քաղաքականության բազմաթիվ դրսեւորումների: Տարիներ շարունակ հոսում է վիետնամական ժողովրդի արյունը, միջնադարը հիշեցնող վայրենի դատաստան է կատարվում Ամերիկայում ապրող նեգրերի նկատմամբ, գազանաբար ճնշվում է Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի ժողովուրդների ազատագրական պայքարը:

Այս կոթողը բողոք է ոչ միայն անցյալի, այլեւ այսօրվա իմպերիալիստական քաղաքականության դեմ, ցեղասպանության ամեն մի դրսեւորման դեմ:

Մեր ժողովուրդը լավ գիտե խաղաղության գինը:

Նրա երջանիկ այսօրվա, հետագա բարգավաճման, ստեղծագործ աշխատանքի կարեւոր երաշխիքը խաղաղությունն է, որի պահպանությունը սովետական կառավարության հետեւողական արտաքին քաղաքականության հիմնական խնդիրն է:

Հայաստանի աշխատավորները ջերմորեն պաշտպանում են սովետական կառավարության արտաքին քաղաքականությունը, որը երաշխավորում է սովետական ժողովրդի հետագա առաջընթացը, բարենպաստ պայմաններ ստեղծում առաջադրված պատմական խնդիրների հաջող իրականացման համար:

Ընկերներ: Այս տարվա նոյեմբեր ամսում սա երկրորդ հուշարձանն է, որ բարձրացվում է Երեւանում: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հոբելյանական օրերին հանդիսավորությամբ բացվեց Հոկտեմբերի պատվին կառուցված հոյակապ կոթողը, որը խորհրդանշում է երախտապարտ հայ ժողովրդի անսահման նվիրվածությունը կոմունիզմի գաղափարներին:

Այսօր մենք մասնակցում ենք մի այլ հուշարձանի բացման արարողությանը, հուշարձան, որը խոր հարգանքի տուրք հանդիսանալով թուրքական ջարդարարների ոճրագործության զոհերի հիշատակին, միաժամանակ խորհրդանշում է մեր ժողովրդի սոցիալիստական վերածնունդը:

Գնահատելով 1920 թվականի նոյեմբերի 29-ից հետո իր անցած ուղին, մեր ժողովուրդը սրտի ամենաջերմ խոսքը ուղղում է Սովետական Միության կոմունիստական կուսակցությանը, որի իմաստուն քաղաքականությունը փրկություն եւ բարգավաճում բերեց հայ ժողովրդին:

Կեցցե՛ վերածնված, բարգավաճող, կոմունիզմ կառուցող հայ ժողովուրդը:

Կեցցե՛ Սովետական Հայաստանը:

Կեցցե՛ մեր մեծ հայրենիքը՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, սովետական բոլոր ժողովուրդների երջանկության հզոր երաշխիքն ու գրավականը: (Բուռն ծափահարություններ):

* * *

Խոսքը տրվում է Երեւանի «Քիմշին» տրեստի 7-րդ շինվարչության անվանի վարպետ Վ. Աբրահամյանին:

- Մենք, շինարար բանվորներս,- ասում է նա,- այս կոթողի քարը քարին շարելիս աշխատել ենք այնպես կառուցել, որ այն արժանի լինի եղեռնի զոհերի պայծառ հիշատակին: Տեսնելով մոխրակույտերից ու ավերակներից բարձրացած Սովետական Հայաստանը, մենք նորից ու նորից մեր երախտագիտության խոսքն ենք ուղղում կոմունիստական



կուսակցությանը՝ հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու ու Հայաստանը ծաղկող երկիր դարձնելու համար:

Գյուղի աշխատավորների անունից խոսք է ասում Արտաշատի շրջանի Քաղցրաշենի կոլտնտեսության նախագահ Կ. Խուդավերդյանը: Իրենց գյուղի օրինակով նա ցույց է տալիս, թե սովետական իշխանության տարիներին ինչպիսի վիթխարի թռիչք է կատարել հայկական գյուղը՝ հետամնացությունից դեպի ունեւոր կյանքի բարձունքները:

Սիրտդ խինդով է լցվում, ասում է նա, երբ նայում ես բերքով ծփացող այգիներին, մեր հոյաշեն քաղաքներին ու գյուղերին:

Ջայնը տրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանին:

Հանդես գալով Հայաստանի մտավորականության անունից, նա ասում է, որ այսօր բացվող կոթողը միեւնույն ժամանակ խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնունդը եւ նրա բամաթիվ հաթանակները: Ազատվելով պատմական մեծ արհավիրքների վտանգից, Հայաստանի ժողովուրդն այսօր ապացուցում է իր գոյության խոր իմաստը, քարտնաջան աշխատանքով շարունակելով կառուցել մեր չքնաղ հանրապետությունը, ոչինչ չխնայելով Սովետական Միության հզորության ամրապնդման համար, համայն մարդկության լավագույն իղձերի իրականացման համար:

Շինարար, ստեղծագործ աշխատանք եւ կրկին աշխատանք, անձնվեր աշխատանք՝ սա է մեր կյանքի իմաստը եւ ապագա հաջողությունների երաշխիքը:

Միտինգը հայտարարվում է փակված:

Մայրաքաղաքի հազարավոր աշխատավորներ անցան 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող դամբարանով, ուր վառվում է հավերժական կրակը:

«Սովետական Հայաստան», 1967, նոյեմբերի 30, թիվ 279, էջ 3:

# ՅԱՎԵԼՎԱԾ

## ԹԻՎ 44
## [ՀԿԿ Կենտկոմի որոշումը Եղեռնի 60-ամյակի միջոցառումների մասին]

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 149**
**ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի նիստի**
**14 ապրիլի 1975թ.**

**Կետ 1. 1915թ. հայերի ցեղասպանության 60-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին**

(ընկ. ընկ. Ա. Ռագոզին, Ե. Պատալով, Հ. Թարջումանյան, Ե. Ասծատրյան, Վ. Ղալումյան, Լ. Ղարիբջանյան, Ս. Թովմասյան, Գ. Արզումանյան, Հ. Ոսկանյան, Պ. Անիսիմով, Կ. Դեմիրճյան)

1975թ. ապրիլի 24-ին 1915 թվականի հայոց ցեղասպանության 60-ամյակի լրանալու կապակցությամբ ՀԿԿ Կենտկոմի Բյուրոն որոշում է.

**1.** Հանրապետական հեռուստատեսությամբ եւ ռադիոհեռարձակման ցանցով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Ս. Դեմիրճյանի ելույթը նպատակահարմար համարել:

Հաստատել ելույթի տեքստը:[1]

**2.** ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության եւ Նախարարների Խորհրդի կողմից Ծիծեռնակաբերդի հուշարձանին ծաղկեպսակ դնել:

**3.** Նպատակահարմար համարել ապրիլի 24-ին ժամը 19.00-ին հեռուստատեսությամբ եւ ռադիոյով ցեղասպանության զոհերի հիշատակը հարգել մեկ րոպե լռությամբ:

**4.** Հանրապետական թերթերում եւ ամսագրերում այդ տարեթվին նվիրված հոդվածներ հրապարակել:

Հանձնարարել Ս.Թովմասյան (նախագահ), Կ.Դալլաքյան, Ջ.Կիրակոսյան, Գ.Առաքելյան, Լ.Մանասերյան կազմով հանձնաժողովին քննարկել հրատարակվող հոդվածների տեքստերը:

---

[1] Այս ելույթի տեքստը գրել է Կ. Դալլաքյանը: «Առաջին անգամ էր, որ Հայաստանի բարձրագույն ղեկավարը հեռուստատեսությամբ հանդես էր գալիս ապրիլի 24-ի առիթով: Բուն օրը ամբողջ ղեկավարությունը այցելեց Եղեռնի հուշարձանին, ծաղկեպսակներ դրեց: Դա էլ դարձավ ավանդույթի սկիզբը, երբ հետագա բոլոր տարիներին ղեկավարությունը ժողովրդի հետ միասին ծաղիկներ էր դնում անմեղ զոհերի հիշատակին»: - *Դալլաքյան Կարլեն*, Հուշապատում, էջ 191:



**5.** Հանձնարարել ՀԿԿ Երեւանի քաղկոմին (Լ. Պ. Ղարիբջանյան) մշակել եւ իրականացնել հանրապետության մայրաքաղաքում ցեղասպանության 50-ամյակի միջոցառումների կազմակերպված անցկացումը:

**6.** ՀԿԿ Քաղկոմներին եւ շրջկոմներին պարտավորեցնել ծեռնարկություններում, հիմնարկություններում եւ կազմակերպություններում ծավալել լայն ագիտ-զանգվածային աշխատանք ֆիզիկական բնաջնջումից հայ ժողովրդի փրկման գործում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմական դերի, ԽՄԿԿ եւ Խորհրդային կառավարության արտաքին քաղաքականության էության եւ նշանակության, ինչպես նաեւ ԽՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության հաղթահանդես հանդիսացող Խորհրդային իշխանության տարիներին վերածնված հայ ժողովրդի պատմական ծեռքբերումների քարոզչության պարզաբանման ուղղությամբ:

**7.** Ցեղասպանության 60-ամյակի կապակցությամբ իրականացվող միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պահպանության պատասխանատվությունը դնել Հայկական ԽՍՀ Ներքին գործերի նախարարության եւ Հայկական ԽՍՀ նախարարների Խորհրդին առընթեր Պետանվտանգության կոմիտեի վրա:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Կ. Դեմիրճյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 55, գ. 32, թթ. 2-3:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## ԹԻՎ 45
## [Կ. Դեմիրճյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին օրենքով ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելու մասին]

**[ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ][1]**

ֆրանսիական կառավարության դեմ դեմարշ է կատարվել: Մամուլում դատապարտվում է ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի որոշումը: Ծավալվել է պատմության խեղաթյուրման լայն գործընթաց: Կազմակերպվում են կոնֆերանսներ, այդ թվում՝ միջազգային, հրապարակումներ, հեռուս-

---

[1] Փաստաթղթի առաջին էջը բացակայում է: Փաստաթղթի վրա կա Կ. Դեմիրճյանի ռուսերեն ծեռագիր մակագրությունը. «Քննարկված է Կենտկոմի քարտուղարությունում 1985թ. փետրվարի 12-ին (ներկա էի): Քարտուղարությունը ընդունեց առաջարկությունը: Քաղբյուրոն քննարկել է 1985թ. փետրվարի 21-ի նիստում: Կարծիքների փոխանակման ժամանակ (ընկերներ Գրոմիկո, Գրիշին, Տիխոնով, Ձիմյանին, Չեբրիկով) հանձնարարեցին չընդունել նոր առաջարկություններ»:

տահաղորդումներ: Բոլոր արտասահմանյան երկրների Թուրքիայի դեսպանատների միջոցով բաժանվում են մեծ քանակությամբ գրականություն, ապատեղեկացվում է հասարակական կարծիքը, ժխտվում է ցեղասպանության փաստը: Հաստատվում է, իբր թե, ընդհակառակը, տեղի է ունեցել թուրք բնակչության ջարդ ռուսների կողմն անցած հայերի կողմից: Տարվում է անսանձ հակահայկական, հակառուսական, հակախորհրդային քարոզչություն, որը օգտվում է ՆԱՏՕ-ի գծով գործընկերների՝ մի շարք արեւմտյան երկրների ազդեցիկ մամուլի լայն աջակցությունից:

Դաշնակները, ձգտելով ուժեղացնել հակախորհրդային քարոզչությունը, ձգտում են առաջիկա յոթանասունամյակի շուրջ աղմուկն ուժեղացնել: Ընդ որում, ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների թելադրանքի ներքո ձգտում են մեղադրել մեր երկրին եւ հանրապետությանը 1915 թվականի ցեղասպանության նկատմամբ անտարբերության մեջ, ապակողմնորոշելու եւ սփյուռքահայերի շրջանում հակախորհրդային տրամադրությունների առաջացման հաշվարկով:

Տարբեր ալիքների միջոցով հանրապետություն վերոհիշյալի մասին տեղեկատվության թափանցումը հղի է գաղափարախոսական իրադրության բարդացման վտանգով եւ պահանջում է համապատասխան հակամիջոցների իրականացում:

Հաշվի առնելով այդ, ինչպես նաեւ 1975թ. ցեղասպանության 60-ամյակի անցկացման փորձը նպատակահարմար ենք գտնում.

- ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրով ապրիլի 24-ը հռչակել «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

- 1985թ. 24-ին նախատեսել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի ելույթը ռադիոյով եւ հեռուստատեսությամբ հանրապետական մամուլում տեքստի հրապարակմամբ:

- Վերջին տարիներին հաստատված պրակտիկայի համաձայն՝ հանրապետության ղեկավարության ցեղասպանության զոհերի հուշարձան այցելության եւ ծաղկեպսակներ դնելու, այդ օրը ռադիոյով եւ հեռուստատեսությամբ լռության րոպեի հայտարարում:

- Տվյալ թեմայի նյութերը հրապարակել հանրապետական մամուլում, ինչպես նաեւ ուղարկել սփյուռքահայ առաջադիմական թերթերին եւ հանդեսներին:

- Համապատասխան հոդվածներ հրապարակել «Պրավդա», «Իզվեստիա», «Լիտերատուրնայա գազետա», ինչպես նաեւ առանձին կենտրոնական հանդեսներում:

Այդ նյութերում, արտահայտելով ահաբեկչության նկատմամբ մեր սկզբունքային վերաբերմունքը, դատապարտել սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանակների կազմակերպած հայերի ցեղասպանությունը, հակահարված տալ պատմության ժամանակակից խեղաթյուրողներին, ընդգծել հայերի պատմական ճակատագրում Ռուսաստանի, ռուս



ժողովրդի դերը, Մեծ Հոկտեմբերի, ԽՄԿԿ-ի ազգային քաղաքականության նշանակությունը հայ ժողովրդի սոցիալական ազատագրության եւ ազգային վերածննդի գործում, ցույց տալ խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում տնտեսական եւ մշակութային շինարարության մեջ Խորհրդային Հայաստանի հաջողությունները, բացահայտել Կոմունիստական կուսակցության եւ Խորհրդային պետության խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը:

ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ համաձայնեցված է.

Խնդրում ենք քննարկել:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար
*Կ. Դեմիրճյան* [ստորագրություն]

25 հունվարի 1985թ.
թիվ 1025

ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 418, թթ. 2-հակ:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

**Թ Ի Վ 46**

**[ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի արձանագրություն օրենքով ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելու մասին]**

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն**
**ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի նիստի**
**21 փետրվարի 1985թ.**

Նախագահում է ընկ. Մ.Ս.Գորբաչովը

Ներկա էին՝ ընկերներ Հ.Ա.Ալիևը, Վ.Ի.Վորոտնիկովը, Վ.Վ.Գրիշինը, Ա.Ա.Գրոմիկոն, Գ.Վ.Ռոմանովը, Մ.Ս.Սոլոմենցևը, Ն.Ա.Տիխոնովը, Պ.Ն.Դեմիչեւը, Վ.Ի.Դոլգիխը, Վ.Վ.Կուզնեցովը, Բ.Ն.Պոնոմարյովը, Վ.Մ.Չեբրիկովը, Մ.Վ.Զիմյանինը, Ի.Վ.Կապիտոնովը, Ե.Կ.Լիգաչովը, Ն.Ի.Ռիժկովը:

**Կետ 6. Հայերի ցեղասպանության 70-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին**

**Գորբաչով**: Այս հարցը հանգամանալից քննարկվել է Կենտկոմի Քարտուղարության նիստում: Ինչպես դուք գիտեք, ցեղասպանության 50-ամյակը մեր երկրում[1] չի նշվել: Եւ այդ առաջ բերեց նշանակալից բացա-

[1] Նկատի ունի ԽՍՀՄ-ը, որի կազմից ՀԽՍՀ-ն ակամայից դուրս է թողնում:

սական արտահայտություններ: Ժամանակին ցեղասպանության 60-ամյակի մասին հարցը քննարկվել է Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի եւ Միխայիլ Անդրեյիչ Սուսլովի մոտ: Այն ժամանակ նախատեսվեցին կուսակցության Կենտրոնական Կոմիտեում հավանություն ստացած միջոցառումներ: Այժմ, երբ 1985թ. ապրիլի 24-ին լրանում է սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանակների կողմից կազմակերպված հայերի ցեղասպանության ժամանակի 70 տարին, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը լրացուցիչ միջոցառումների անցկացման մասին առաջարկություն է ներկայացրել: Այդ առաջարկությունները, ինչպես կարծում են հանրապետության կուսակցական մարմինները, ուղղված են նրան, որպեսզի հանվի դասակարգային հակառակորդի մեղադրանքը, կայացող այն բանում, որ Խորհրդային կառավարությունը իբր թե չի որոշել իր վերաբերմունքը ցեղասպանության հանդեպ: Այդ հարցի առթիվ բուրժուական մամուլի կողմից բարձրացվել է մեծ աղմուկ: ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատը ընդունեց բանաձեւ ապրիլի 24-ը «Մարդու հանդեպ անմարդկային վերաբերմունքի եւ հայերի ցեղասպանության օր» հայտարարելու մասին: Աշխույժ գործում են հենց նույն ուղղությամբ եւ Ֆրանսիայի ու մի շարք ուրիշ երկրների կառավարական շրջանակները: Այդ առթիվ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը առաջարկում է 1975 թվականին ցեղասպանության 60-ամյակի անցկացման փորձի հաշվի առմամբ հրապարակել Հայկական ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության Հրամանագիր ապրիլի 24-ը «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հռչակման մասին, ինչպես նաեւ նախատեսել Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղարի ելույթը ռադիոյով եւ հեռուստատեսությամբ՝ հանրապետական մամուլում նրա ելույթի տեքստի հրապարակմամբ:

Ուղղակի ասեմ, որ Կենտկոմի Քարտուղարությունում մենք պարզ հասկանալով բոլոր դրական եւ բացասական կողմերը, որոնք կհանգեցնի իր հետեւից նման բնույթի հանրապետական հրամանագրի հրապարակումը, որոշեցինք այդ հարցը ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի քննարկմանը:

**Դեմիրճյան** (Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար):

Նախ եւ առաջ ես ցանկանում եմ ասել, որ այդ հարցը շատ բարդ եւ լուրջ է: Այն հուզում է գործնականում հանրապետության ողջ բնակչությանը, ինչպես նաեւ արտասահմանում հայկական համայնքները: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ արտասահմանում (Լիբանանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Սիրիայում, Կանադայում եւ մի շարք ուրիշ երկրներում) այժմ ապրում են շուրջ երեք միլիոն հայազգի անձինք:

Հանրապետության Կոմկուսի Կենտկոմը պատրաստվում է ցեղասպանության 70-ամյակի հետ կապված միջոցառումներին՝ հաշվի առնելով անցյալում այդ միջոցառումների կազմակերպման փորձը: Այստեղ



ցանկանում եմ հիշեցնել. հայերի ցեղասպանության 50-ամյակը վերածվեց մեր հանրապետությունում շատ վտանգավոր գործողությունների, երբ շուրջ 100 հազար ցուցարարներ փողոց դուրս եկան եւ պահանջեցին Խորհրդային կառավարության հայտարարությունը 1915 թվականի իրադարձությունների նկատմամբ նրա վերաբերմունքի մասին: 1965 թվականին որոշում ընդունվեց կառուցել ցեղասպանության զոհերի հուշարձան, որտեղ ամեն տարի ծաղկեպսակներ են դնում: Ամեն տարի նման բնույթի քայլերթին մասնակցում են 200-300 հազար մարդ: Հաշվի առնելով այդ, ԽՄԿԿ Կենտկոմը հանձնարարեց մեզ մշակել համապատասխան միջոցառումներ: Մշակելով նշված միջոցառումները մենք ելնում ենք այն բանից, որ հարկավոր է ցեղասպանության զոհերի ոգեկոչման գործընթացը դարձնել առավել կառավարելի:

Այստեղ արդեն ասվեց, որ ցեղասպանության 70-ամյակի շուրջ իրադրությունը ուժգին սրվում է ԿՀՎ[1]-ի եւ ուրիշ քայքայիչ կազմակերպությունների կողմից: Ծավալվել է պատմության խեղաթյուրման լայն գործընթաց, կազմակերպվում են խորհրդաժողովներ՝ այդ թվում եւ միջազգային, հրատարակվում են հրապարակումներ, վարվում հեռուստահաղորդումներ: Ինչ-որ մեկը նույնիսկ հաստատում է, որ տեղի է ունեցել իբր ոչ թե հայերի կոտորած, այլ թուրք բնակչության՝ ռուսների կողմն անցած հայերի կողմից: Ուժեղացնում են իրենց հակախորհրդային քարոզչությունը դաշնակները: Այդ ամենը, ինչպես ցույց է տալիս տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվությունը, հղի է վտանգով եւ կարող է ցեղասպանության 70-ամյակի օրը հանրապետությունում գաղափարախոսական իրավիճակը բարդացնել: Հետեւաբար, մեզնից պահանջվում է համապատասխան հակամիջոցների անցկացում՝ ներառյալ ցեղասպանության հիշատակի օրվա մասին Հրամանագրի ընդունում:

**Տիխոնով**[2]: Այդ հրամանագրին համապատասխան այդպիսի օրը պե՞տք է անցկացվի ամեն տարի:

**Դեմիրճյան**: Այո, ամեն տարի: Մենք ընդհանրապես ամեն տարի ծաղկեպսակներ ենք դնում ցեղասպանության զոհերի հուշարձանին եւ անցկացնում լռության րոպե: Դրանից բացի, նախատեսվում է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Առաջին քարտուղարի 10-12 րոպեանոց ելույթ: Այդ ի լրացումն այն ամեն միջոցառումներին, որոնք անցկացվում են մեզ մոտ ամեն տարի:

Ցանկանում եմ կրկին անգամ ընդգծել, որ մեր առաջարկությունները կապված են նախ եւ առաջ արտասահմանում գործընթացի լայն թափի հետ: Վերջին շրջանում դաշնակ շարժումը միավորվել է: ԱՄՆ-ի հատուկ ծառայությունների թելադրանքի ներքո դաշնակները ձգտում են մեղադրել մեր երկրին եւ հանրապետությանը 1915 թվականի ցեղասպա-

---

[1] ԱՄՆ-ի Կենտրոնական Հետախուզական Վարչություն:
[2] ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի նախագահ:

նության նկատմամբ անտարբերության մեջ՝ հասարակայնությունը ապակողմնորոշելու եւ հայերի շրջանում հակախորհրդային տրամադրություններ առաջ բերելու հաշվարկով: Թափանցում են, իհարկե, այդպիսի տրամադրությունները եւ Հայաստան, նախ եւ առաջ մեզ մոտ սովորող արտասահմանյան ուսանողների գծով, ինչպես նաեւ մեր հանրապետություն ներգաղթած հայերի գծով:

Վերջերս, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Պլենումում քննարկելով գաղափարախոսական աշխատանքի բարելավման մասին ԽՄԿԿ Կենտկոմի որոշման իրականացման միջոցառումները մենք բացահայտ հայտարարեցինք այն մասին, որ դաշնակները հանդիսանում են խորհրդային կարգի եւ Խորհրդային Հայաստանի անհաշտ թշնամիներ: Պետք է ասել, որ դաշնակները անմիջապես այդ առթիվ բարձրացրեցին վայնասուն: Շատ բացասաբար է իրեն պահում եւ Թուրքիան: Մասնավորապես, ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանը խնդրել է կոնգրեսմեններին հայերի ցեղասպանության օրվա մասին իրենց որոշումը չեղյալ համարել: Դրա հետ մեկտեղ ընթանում է մեզ մոտ ամեն տեսակի ահաբեկիչների ուղարկում (засылка), ինչպես նաեւ փորձեր են կատարվում կազմակերպել ահաբեկչական ելույթներ արտասահմանում խորհրդային դիվանագիտական ներկայացուցիչների դեմ:

Մենք գտնում ենք, որ մեր առաջարկությունները կօգնեն աշխատանքի լավագույն կազմակերպմանը, որը թույլ չի տա թույլատրել, որպեսզի հայերի ցեղասպանության 70-ամյակը օգտագործվի հակախորհրդային նպատակներով:

**Տիխոնով**: Ինչպե՞ս եք կարծում, ձեր ելույթը ռադիոյով եւ հեռուստատեսությամբ հայերի եւ թուրքերի միջեւ հակամարտության ավելի մեծ հրահրման չի ծառայի:

**Դեմիրճյան**: Այդ ելույթում մենք խոսում ենք սովորաբար Խորհրդային Հայաստանի հաջողությունների մասին եւ այն մասին, որ հայերի ցեղասպանությունը կազմակերպվել է սուլթանական Թուրքիայի հետադեմ կառավարող շրջանակների կողմից:

**Գրիշին**[1]: Յոթանասուն տարի մենք յոլա էինք գնում առանց այդ հարցի շուրջ հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության Հրամանագրի, իսկ այժմ առաջարկվում է հրամանագիր ընդունել: Ինչո՞ւ է պետք այդ անել:

**Դեմիրճյան**: Մենք հանգամանալից վերլուծում ենք հանրապետությունում ծեւավորվող իրադրությունը: Բանն այն է, որ Հայաստանի բնակչության բոլոր խավերը խորապես վերապրում են ցեղասպանությունը: Գործնականում չկա ոչ մի ընտանիք, որում ցեղասպանության զոհ չլինի: Ինչ վերաբերում է հրամանագրին, ապա այն հարկավոր է այնքա-

[1] ԽՄԿԿ Մոսկվայի քաղկոմի առաջին քարտուղար:



նով, որ այժմ բացառապես սուր է դարձել հետադեմ ուժերի կողմից արտասահմանում բարդացվող իրավիճակը:

**Տիխոնով**: Իսկ այդ իրավիճակը հանրապետությունում վերեւից չի՞ բարդացվում:

**Դեմիրճյան**: Այդ թեման չի հեռանում հայ ժողովրդի ոչ ուղեղից եւ ոչ էլ սրտից: Ընդ որում, ես հատուկ ցանկանում եմ ընդգծել, որ միջոցառումները, որոնք նախատեսվում են անցկացվել հանրապետությունում, չունեն հակաթուրքական ուղղվածություն: Ամեն անգամ փողոց են դուրս գալիս 250-270 հազար մարդ: Մենք ցանկանում ենք կառավարել այդ գործընթացը:

**Գորբաչով**: Լսենք, ինչ կարող է մեզ ասել ՊԱԿ-ի ներկայացուցիչը:

**Ֆ. Դ. Բոբկով** (ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահի տեղակալ):

Ընկ. Կ.Ս.Դեմիրճյանի ելույթից հետո ինձ քիչ բան է մնում ավելացնել: Ասեմ միայն, որ առաջ, մինչեւ 1965 թվականը, այդ խնդիրը այդպես սուր չէր դրված: Բայց, ինչպես հայտնի է, 1965 թվականին ցեղասպանության զոհերի ոգեկոչումը վերածվեցին զանգվածային անկարգությունների: Ինչպես երեւում է, դուք հիշում եք, 5 հազարանոց ամբոխը ներխուժեց թատրոն, որտեղ ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ժողով էր անցկացվում, եւ անկարգություններ սարքեց: Դրանից հետո 1967 թվականին կառուցվեց ցեղասպանության զոհերի հուշարձանը: Նրա բացմանը հավաքվել էր ավելի քան 200 հազար մարդ: Ցեղասպանության 60-ամյակին ընդառաջ անցկացվեցին բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի, հանրապետության Նախագահության եւ Նախարարների Խորհրդի գծով: Ըստ մեր ունեցած տվյալների, ցեղասպանության 70-ամյակին կարող են մասնակցել մինչեւ 300 հազար մարդ:

Այստեղ հարց առաջացավ, իսկ ինչ է փոխվել այս ողջ ընթացքում: Պատասխանեմ դրան: Առաջին, հայտնվեցին բուրժուական գործիչների բազմաթիվ հայտարարություններ ցեղասպանության հիշատակի օրվա նշման անհրաժեշտության մասին, այդ թվում եւ հակախորհրդային ոգով: Երկրորդ, բազմաթիվ անգամ ուժեղացվեց ամեն տեսակի հակախորհրդային խմբերի աշխատանքը, այդ թվում Հայաստանի տարածքում: Այդ խմբերի շուրջ հարյուր ներկայացուցիչների հարկ եղավ ձերբակալել կամ պրոֆիլակտիկացնել: Երրորդ, նկատելի է այդ հարցի որոշակի հրահրում եւ թուրքական իշխանությունների կողմից, որոնք նույնիսկ փորձում են ապացուցել, որ ցեղասպանությունը հրահրվել է հենց հայերի կողմից: Չորրորդ, չի կարող չանհանգստացնել ահաբեկչական գործողությունների աճը, հատկապես այսպես կոչված «Ազատագրության հայկական ահ-

աբեկչական բանակի»[1] կողմից: Մեր կողմից ծերբակալվել է այդ առթիվ արտասահմանյան ուսանողների խումբ:

Ահա թե ինչու Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջարկած լրացուցիչ միջոցները կնպաստեն բնակչության լավագույն կազմակերպմանը եւ հնարավորություն կտան մեզ նախածեռնությունը վերցնել մեր ձեռքը:

**Գրոմիկո**[2]: Մենք պետք է այդ հարցը քննարկենք առանց զգացմունքների: Իհարկե, դա սուլթանական Թուրքիայի եւ ռուսական ցարիզմի զազրելի հանցագործությունն է: Բայց, ինչպես հայտնի է, Լենինի օրոք, որը գլխավորել է մեր պետությունը վեց տարիների ընթացքում, նման բնույթի հարցեր, կապված ցեղասպանության հետ, չեն ծագել:

**Պոնոմարյով**[3]: Բայց այն ժամանակ Թուրքիայում հեղափոխություն էր:

**Գրոմիկո**: Դա բուրժուական հեղափոխություն էր: Դրա համար այժմ հարց է ծագում, իսկ պետք է արդյո՞ք մեզ հավերժացնել Թուրքիայի հանդեպ նման վերաբերմունքը: Ես կարծում եմ, որ դաշնակները ատում են Խորհրդային իշխանությունն ավելին, քան՝ թուրքերին: Այնպես որ նրանք եւ նրանց վայնասունը չեն կարող մեզ համար չափանիշ լինել: Ընդ որում, այն ամենը ինչ կատարվում է արտասահմանում, այդ ամենն արվում է արտասահմանյան հայերի ծայրերի համար վազքում: Դրա համար արտասահմանյան երկրներում անցկացվող ամեն տեսակի արարքներին հղումները իմ կարծիքով համոզիչ չեն:

Միեւնույն ժամանակ, իհարկե, ժողովրդի զգացմունքներին ինչ-որ ելք պետք է տալ: Բայց հարկավոր է արդյո՞ք այդ անել հանրապետական հրամանագրի հրապարակմամբ: Չէ որ այդպիսի հրամանագիրը պետք է մտցնի սգո մշտական օր: Բայց անհրաժեշտ է արդյո՞ք դա ամրապնդել օրենքով: Չէ որ ինչքա՞ն մենք մեր երկրում ունենք սգո օրեր, սկսած Բաթուի[4] արշավանքից: Ինչպես դուք գիտեք, մենք նույնիսկ Վ.Ի.Լենինի մահվան օրը չենք նշում: Ահա թե ինչու հանրապետական հրամանագրի հրապարակման անհրաժեշտության մեջ շատ եմ կասկածում:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի գրության մեջ պարունակվում է առաջարկություն միութենական մամուլում ցեղասպանության մասին հոդվածի տեղադրման վերաբերյալ: Ինձ թվում է, որ պետք չէ գործի մեջ դնել մեր «ծանր հրետանին»: Հայաստանում ինչ-որ բան պետք է անել, այդ թվում եւ հնարավոր է հրապարակել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի ելույթը, իսկ մյուս մնացած բաներին հազիվ

[1] Հավանաբար նկատի ունի «Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակ» - ASALA-ին:
[2] ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարար:
[3] ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար:
[4] Մոնղոլական Ոսկե հորդայի խաներից:



թե մեզ պետք է համաձայնություն տալ: Քանզի եթե թուրքերը իրենց տարածքում միջուկային հրթիռներ տեղադրեն՝ ուղղված Խորհրդային Միության դեմ, ապա այդ ավելի վտանգավոր կլիներ:

Եզրափակելով ես կցանկանայի ասել, որ հարկավոր է նորից դիտարկել այդ բոլոր առաջարկությունները եւ անցկացնել բոլոր միջոցառումները ըստ նվազագույնի, կրկին անգամ հանգամանալից կշռադատելով դրանցից յուրաքանչյուրի անհրաժեշտությունը:

**Զիմյանին**: Ես որպես «Պրավդա»-ի խմբագիր ժամանակին հրապարակել եմ խմբագրական հոդվածներ այդ հարցի շուրջ: Դրանցում ցեղասպանությանը նվիրված էր ընդամենը մեկ պարբերություն: Այժմ ակնհայտ է, որ ԱՄՆ-ը ցանկանում է մեզ իրար դեմ հանել Թուրքիայի հետ: Մենք դա թույլ տալ չենք կարող: Ես չեմ մասնակցել Կենտկոմի Քարտուղարության նիստում տվյալ հարցի քննարկմանը, բայց կարծում եմ, որ ինչ-որ միջոցառումներ այնտեղ անցկացնել մեզ պետք է: Բայց դրանք պետք է անցկացնել բացառապես հասարակական, եւ ոչ թե պետական կարգով: Ինձ համար պարզ է, որ հանրապետական հրամանագիրը Թուրքիայի նկատմամբ թշնամական ակտ կլինի: Այն կհանգեցնի անտարակույս խորհրդա-թուրքական հարաբերությունների սրմանը: Մենք դրանից ոչ մի բան չենք շահի: Դրա համար ընկ. Կ. Ս. Դեմիճյանին եւ Հայաստանի կոմկուսի Կենտկոմին հարկավոր է նախածեռնությունը վերցնել իրենց ձեռքը, գործել դասակարգային դիրքերից: Ընդ որում, բոլոր միջոցառումները պետք է անցկացնել Հայաստանում հասարակայնության գծով, առանց Թուրքիայի նկատմամբ որեւիցե ելույթների:

Ամբողջության մեջ ես կողմ եմ, որպեսզի ցեղսպանության 70-ամյակին նվիրված միջոցառումները անցկացվեն միայն պատմա-հասարակական ծրագրով:

**Տիխոնով**: Երբ ես կարդացի Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջարկությունները, ապա ոչ առանց կատակի անհանգստացա: Մեզ մոտ նոր է սկսվել Թուրքիայի հետ հարաբերությունների կանոնավորումը: Այդ երկրում իմ այցելության ընթացքում թուրքական ղեկավարները Խորհրդային Միությունն անվանում էին բարեկամական տերություն եւ հայտարարում այն մասին, որ նրանք թույլ չեն տա իրենց տարածքում մեր երկրի դեմ ուղղված հրթիռների տեղակայում: Ինձ պարզ է, որ հանրապետական հրամանագիրը խորհրդա-թուրքական հարաբերություններում լարվածություն կստեղծի եւ կամա թե ակամա դրան կկապի Մոսկվային: Հարց է ծագում, իսկ ով կշահի դրանից: Պարզ է, որ կշահեն ամերիկացիները:

Թուրքիայում իմ այցելության ժամանակ այդ երկրի նախագահը եւ վարչապետը 40 րոպե բողոքեցին ինձ Հայաստանում հակաթուրքական տրամադրությունների դեմ՝ հղելով այդ հանրապետությունում պաշ-

տոնական անձանց ելույթներին:[1] Պարզ է, որ մեզ դա թույլ տալ չի կարելի: Ընդհանրապես, պետք է լավ հիշել, որ թուրքերի ձեռքին են գտնվում եւ Դարդանելը եւ Բոսֆորը, եւ որ նրանք հնարավորություն ունեն Մոնտրեում կնքված պայմանագրի հիման վրա մեծ կողպեքով փակել նեղուցները:

Ես նայել եմ այդ հարցի առթիվ հոդվածը «Պրավդա»-ում, որը լույս է ընծայվել 1975 թվականին: Այնտեղ ցեղասպանությանը նվիրված է ընդամենը հինգ տող: Եւ դա ճիշտ է: Չէ որ մեր երկրում տեղի են ունեցել անհամեմատ մեծ ողբերգություններ: Ասենք Բելոռուսիայում, որտեղ ֆաշիստների ձեռքից զոհվել է յուրաքանչյուր չորրորդ մարդը:

Ինձ պարզ է մի բան, որ ամերիկացիներին խիստ չարացնում է ֆինների, հույների, թուրքերի հետ մեր հարաբերությունների կանոնավորումը, եւ նրանք ցեղասպանության հոբելյանի միջոցով ցանկանում են փչացնել մեր հարաբերությունները հարեւան երկրների հետ:

Ցանկալի է, որպեսզի Հայաստանում, նրա կուսակցական կազմակերպությունում տարվի հետեւողական աշխատանք աշխատավորության բոլոր սերունդների հետ, լավ կազմակերպվի ինտերնացիոնալ դաստիարակությունը, վերահսկվեն բոլոր իրադարձությունները: Դրա համար, երեւի ճիշտ կլինի, ավելի խոր քննարկել այդ հարցը, եւ այն լուծել է պետք առավել ցածր մակարդակով, առանց միջպետական հարաբերություններ շոշափելու:

**Գրիշին**: Մեզ հասկանալի են հայկական ընկերների զգացմունքները եւ նրանց ծգտումը նշել ցեղասպանության օրը, բայց կարծում եմ, որ միջազգային իրադրությունը թելադրում է մեզ բացառիկ զգուշություն: Չէ որ ամերիկյան կոնգրեսի բոլոր բանաձեւերը ընդունվում են ոչ Խորհրդային Միության եւ Խորհրդային Հայաստանի շահերից: Դրա համար հղում անել նրանց վրա մեզ հարկ չկա: Ամբողջապես ես ունեմ շատ լուրջ կասկածներ ցեղասպանության հիշատակի օրվա մասին հանրապետական հրամանագրի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ: 70 տարի մեզ մոտ չկար նման հրամանագիր, եւ պետք չէ այն ընդունել: Գուցե հարկավոր է եւ հանդես գալ կենտրոնական մամուլում, մերկացնել ազգայնական կրքեր բորբոքելու ուղղված կայսերապաշտական ուժերի մեքենայությունները: Պարզ է մի բան, որ հարկավոր է արդեն այժմ մոբիլիզացնել ողջ հայկական կուսակցական կազմակերպությունը խորհրդային մարդկանց համախմբման, նրանց ինտերնացիոնալ ոգով դաստիարակության նպատակներով:

**Չեբրիկով**[2]: Ես ցանկանում եմ նշել, որ սկսած 1965 թվականից մենք գործնականորեն ամեն տարի Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի հետ զբաղվում ենք ցեղասպանության հիշատակի հետ կապված բոլոր

[1] Կարծես Հայաստանը ԽՍՀՄ-ի կազմում չէր, իսկ Տիխոնովը՝ նրա վարչապետը:
[2] ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ:



հարցերով: Հանրապետության բնակչության շրջանում լարվածությունը այդուհանդերձ գոյություն ունի, եւ այն բավականին ուժեղ է: Յուրաքանչյուր ընտանիք իրականում այստեղ ունի նախնիներ, որոնք ցեղասպանության զոհեր են եղել: Դրա համար այն միջոցառումներից կտրուկ շեղում, որոնք արդեն անցկացվել են հանրապետությունում, մենք թույլ տալ, իմ կարծիքով, չենք կարող: Այն ամենը, ինչ անցկացվել է նախկինում, երեւի պետք է պահպանել, թույլ չտալով իհարկե ոչ մի բարդացում Թուրքիայի հետ: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ ամեն ինչ, բացի հանրապետական հրամանագրից, հանրապետությունում արդեն անցկացվել եւ ընդունվել է: Մենք չենք կարող հեռանալ այն միջոցառումներից, որոնց ժողովուրդն արդեն վարժվել է:

Ինչ վերաբերում է մեր առաջարկություններին, ապա դրանք պետք է իհարկե լավ քննարկել, եւ եթե դրանում անհրաժեշտություն լինի, վերադառնալ դրանց մի քիչ ուշ:

**Տիխոնով**: Լենինի օրոք ախր այդ չկար:

**Չեբրիկով**: Ամբողջության մեջ մենք երեւի կարող ենք չմտցնելով ոչ մի նոր բան, պահպանել այն միջոցառումները, որոնք անցյալում անցկացվել են:

**Գրոմիկո**: Պետք է լավ աշխատի հանրապետության ղեկավարությունը:

**Գորբաչով**: Եթե մեզ մոտ կասկածներ չառաջանային, ապա Քարտուղարությունը այդ հարցը Կենտկոմի Քաղբյուրոյի քննարկմանը չէր ներկայացնի: Կարծում եմ, որ այսօրվա քննարկումը հարստացրեց այդ հարցի մեր գիտելիքները, եւ մենք ճիշտ վարվեցինք, երբ այն մտցրեցինք տվյալ նիստի քննարկմանը: ***Ներկայացված առաջարկությունների մասին, բացի ընկ. Կ. Ս. Դեմիրճյանից, դեռեւս ոչ ոք չգիտի, եւ պետք չէ, որպեսզի որեւէ մեկը իմանա դրանց մասին.***[1] Ամբողջության մեջ մեզ երեւի հարկավոր չէ գնալ նոր միջոցառումների անցկացմանը:

**Կուզնեցով**[2]: Ճիշտ է:

**Գորբաչով**: Բայց եւ նահանջել նրանից, ինչ նախկինում անցկացվել է, հավանաբար հարկավոր չէ:

**Գրոմիկո**: Կարելի է եւ հինը անցկացնել նորովի:

**Գորբաչով**: Երեւում է, կարելի էր համաձայնվել, որպեսզի ցեղասպանության հիշատակմամբ հոդված հրապարակվի միայն «Պրավդա»-ում: Ինչ վերաբերում է միջոցառումներին, որոնք պետք է անցկացվեն Հայաստանում, ապա պետք է ելնել մեր սկզբունքային, դասակարգային դիրքերից, ծանրության կենտրոնը տեղափոխելով ոչ թե անցյալի, այլ այն ձեռքբերումների վրա, որոնք կան Խորհրդային Հայաստանում, այն

[1] Ընդգծումը մերն է:
[2] ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահի տեղակալ:

խնդիրների վրա, որոնք սպասվում են լուծել հանրապետությանը, նրա կոմունիստներին:

Մասնավորապես, մեզ մոտ հանձնարարություն կա քննարկել ԽՄԿԿ Կենտկոմում Երեւան քաղաքի հետագա զարգացման մասին հարցը: Գուցե, հարկավոր է ընդունել այդ հարցի առթիվ որոշում ցեղասպանության տարեդարձի նախօրեին:

Ես կարծում եմ, ընկ. Կ.Ս.Դեմիրճյան, որ այստեղ ճիշտ արտահայտվեց դիտողություն այն բանի անհրաժեշտության մասին, որ հայ կոմունիստները գործեն ավելի հետեւողական եւ ավելի աշխույժ: Իսկ եթե ցեղասպանության տարեդարձի հետ կապված որեւէ հարցեր կծագեն, ապա հանրապետական կուսակցական կազմակերպությունը միշտ հնարավորություն ունի դրանք դնել կուսակցության Կենտրոնական Կոմիտեի առջեւ:

Ամենայն հավանականությամբ, մենք կարող ենք գրել Կենտկոմի Քաղբյուրոյի որոշման մեջ այն մասին, որպեսզի թույլատրել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմին նշել 1985 թվականի ապրիլին լրացող հայերի ցեղասպանության 70-ամյակը, ավանդականորեն ծեւավորված հասարակական միջոցառումների իրականացմամբ, հենվելով Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջարկությունների վրա եւ հաշվի առնելով Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում տեղի ունեցած մտքերի փոխանակությունը: Միաժամանակ կարելի է հանձնարարել «Պրավդա» թերթի խմբագրությանը հանդես գալ այդ առթիվ խմբագրական հոդվածով, որտեղ արտացոլվի մեր Խորհրդային Դաշնության կազմում հայ ժողովրդի պատմական ծեռքբերումները:

**Քաղբյուրոյի անդամներ**: Ճիշտ է:

Որոշումն ընդունվում է:

«Գոլոս Արմենիի», Երեւան, 2005, մարտի 17, էջ 6:
Թարգմանություն ռուսերենից:

## Թ Ի Վ 47

**[ՀԿԿ Կենտկոմի որոշումը եղեռնի 70-ամյակի միջոցառումների մասին]**

*Հույժ գաղտնի*

**Արձանագրություն թիվ 141**
**ՀԿԿ Կենտկոմի Բյուրոյի նիստի**
**16 ապրիլի 1985թ.**

**Կետ 4. Հայերի ցեղասպանության 70-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին**



(ընկերներ Կ. Դեմիրճյան, Հ. Ոսկանյան, Լ. Սահակյան, Մ. Հարությունյան, Մ. Յուզբաշյան, Ա. Թոփուզյան, Կ. Դալլաքյան, Լ. Ներսեսյան, Ս. Պետրոսյան, Ֆ. Սարգսյան, Կ. Ղամբարյան, Վ. Ղալումյան, Յու. Կոչետկով)

Ի գիտություն եւ ղեկավարություն ընդունել, որ ԽՄԿԿ Կենտկոմը 1985թ. փետրվարի 21-ի որոշմամբ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմին թույլատրել է նշել հայերի ցեղասպանության 70-ամյակը, որ լրանում է 1985թ. ապրիլին, ՀԿԿ Կենտկոմի առաջարկությունների վրա հիմնված կուսակազմակերպությունների կողմից անհրաժեշտ զանգվածային-քաղաքական աշխատանքների անցկացմամբ Հայկական ԽՍՀ-ում ավանդական-ծեւավորված հասարակական միջոցառումների իրականացմամբ:

ԽՄԿԿ Կենտկոմը հանձնարարել է «Պրավդա» թերթի խմբագրությանը այդ առթիվ հանդես գալ հոդվածով, որտեղ արտացոլվեն Խորհրդային պետության կազմում հայ ժողովրդի պատմական ծեռքբերումները:

ՀԿԿ Կենտկոմի Բյուրոն որոշում է.

**1.** Նախատեսել 1985թ. ապրիլի 24-ին հեռուստատեսությամբ եւ ռադիոյով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ.Ս.Դեմիրճյանի ելույթը՝ դրա տեքստը հանրապետական մամուլում հրապարակելով:

Հաստատել ելույթի տեքստը:

**2.** ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության եւ Նախարարների Խորհրդի կողմից Ծիծեռնակաբերդում գտնվող ցեղասպանության զոհերի հիշատակի հուշարձանին ծաղկեպսակ դնել:

**3.** Ըստ ծեւավորված ավանդույթի ցեղասպանության զոհերի հիշատակը հարգել լռության րոպեով՝ հեռուստատեսությամբ եւ ռադիոյով, հաղորդված ապրիլի 24-ին ժամը 19-ին:

**4.** Տվյալ թեմայի նյութերը հրապարակել հանրապետական մամուլում, ինչպես նաեւ ուղարկել դրանք սփյուռքահայ առաջադիմական թերթերի և ամսագրերի համար:

Հանձնարարել հետեւյալ կազմով հանձնաժողովին՝ ընկ. ընկ. Կ. Լ. Դալլաքյան (նախագահ), Գ. Ե. Ասատրյան, Ս. Ս. Ավետիսյան, Ա. Պ. Մելքոնյան, Մ. Ա. Խաչատրյան, Ց. Ս. Պետրոսյան, քննարկել հրապարկվող նյութերի տեքստերը:

Այդ նյութերում ցույց տալ խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում տնտեսական եւ մշակութային շինարարության մեջ Խորհրդային Հայաստանի հաջողությունները, շեշտել Ռուսաստանի, ռուս ժողովրդի դերը հայերի պատմական ճակատագրում, հայ ժողովրդի սոցիալական ազատագրության եւ ազգային վերածննդի գործում Մեծ Հոկտեմբերի, ԽՄԿԿ ազգային քաղաքականության նշանակությունը: Բացահայտել Կոմունիստական կուսակցության եւ Խորհրդային պետության խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը:

5. Հանձնարարել ՀԿԿ Երեւանի քաղկոմին (ընկ. Լ. Ն. Ներսիսյանին) մշակել եւ իրականացնել հանրապետության մայրաքաղաքում ցեղասպանության 70-ամյակի միջոցառումների կազմակերպված անցկացումը:

6. Պարտավորեցնել ՀԿԿ քաղկոմներին եւ շրջկոմներին ապահովել կուսկազմակերպությունների կողմից անհրաժեշտ զանգվածային-քաղաքական աշխատանքների իրականացումը՝ ֆիզիկական բնաջնջումից հայ ժողովրդի փրկության մեջ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության պատմական դերի պարզաբանման ուղղությամբ, պարզաբանել Խորհրդային իշխանության տարիներին ԽՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության հաղթահանդես հանդիսացող վերածնված հայ ժողովրդի ձեռքբերումները: Հանրապետության աշխատավորության ջանքերն ուղղորդել ԽՄԿԿ 26-րդ համագումարի, ԽՄԿԿ Կենտկոմի հետագա պլենումների որոշումների կենսագործմանը, 11-րդ հնգամյակի ամբողջությամբ եւ եզրափակիչ տարվա տնտեսական եւ սոցիալական զարգացման առաջադրանքների կատարմանը եւ գերակատարմանը, կուսակցության հերթական 27-րդ համագումարի արժանվույն դիմավորմանը:

7. Ցեղասպանության 70-ամյակի կապակցությամբ միջոցառումների անցկացման ժամանակ հասարակական կարգի պահպանության համար պատասխանատվությունը դնել Հայկական ԽՍՀ Ներքին գործերի նախարարության (ընկ. Հ. Ս. Շահինյան) եւ Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդին առընթեր Պետանվանգության Կոմիտեի (ընկ. Մ.Ա. Յուզբաշյան) վրա:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
*Կ. Դեմիրճյան* [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1, ց. 77, գ. 89, թթ. 70-71:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 48

**[Կ. Դեմիրճյան նամակը ԽՄԿԿ Կենտկոմին օրենքով ապրիլի 24-ը եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելու մասին]**

ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻՆ

Հայկական ԽՍՀ-ում ամեն տարի, ապրիլի 24-ին, 1915 թվականին թուրքական ռեակցիոն կառավարող վերնախավի իրականացրած հայերի ցեղասպանության տարեդարձի հետ կապված ավանդականորեն-ձեւավորված հասարակական-քաղաքական միջոցառումներ են անցկացվում:



Այդ օրը Երեւանում ցեղասպանության զոհերի Հուշարձան են այցելում մոտ 250-300 հազար մարդ: Հուշարձանին ծաղիկներ են դրվում, այդ թվում հանրապետության ղեկավարության կողմից: Տեղական ժամանակով ժամը 19-ին հեռուստատեսությամբ հայտարարվում է լռության րոպե:

Նշված միջոցառումները հանրապետության աշխատավորության, բնակչության կողմից ընդունվում է մեծ գոհունակությամբ, հնարավորություն են տալիս ժողովրդի պատմության մեջ ողբերգության օրը անցկացնել հանգիստ եւ նորմալ միջավայրում՝ առանց աշխատանքային ռիթմի խախտման:

Ցեղասպանության տարեթվին նվիրված միջոցառումները անցկացվում են եւ բոլոր սփյուռքահայ գաղութներում: Դրա նկատմամբ նկատելի հետաքրքրություն են ցուցաբերում համապատասխան երկրների պաշտոնական իշխանությունները: Ընդ որում, նրանցից մի քանիսի՝ հատկապես ԱՄՆ-ի, ռեակցիոն շրջանները եւ հատուկ ծառայությունները, ձգտում են այդ օգտագործել իրենց նպատակներով, տեղի են ունենում քաղաքական սպեկուլյացիայի փորձեր, ամեն տեսակ գաղափարախոսական դիվերսիաներ: Պատմության խեղաթյուրման, հայերի ցեղասպանության փաստի ժխտման, եւ ընդհակառակը, հայերին թուրքերի ցեղասպանության մեջ մեղադրման սանձազերծ գործընթաց են ծավալել ներկայումս ռեակցիոն թուրքական շրջանները: Այդ ամենը արտասահմանում հակախորհրդային նպատակներով օգտագործում է դաշնակցություն ազգայնական կուսակցությունը:

Ընդառաջ գնալով հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա հաստատման մասին աշխատավորների բազմաթիվ առաջարկություններին, ինչպես նաեւ հակառակորդի կողմից իրենց քաղաքական նպատակներով ժողովրդի ողբերգության փաստի օգտագործման կանխման համար ՀԿԿ Կենտկոմը նպատակահարմար է գտնում ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրով ապրիլի 24-ը հաստատել «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ համաձայնվեցված է: Խնդրում ենք քննարկել:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար
*Կ. Դեմիրճյան* [ստորագրություն]

27.03.1987

Այս նամակի հակառակ երեսին Կ. Դեմիրճյանը ձեռագրով ավելացրել է.

**21.03.87** - Հարցը քննարկեցի ընկ. Ա.Ն.Յակովլեւի հետ: (Պատմեցի խնդրի էությունը եւ նպատակները: Նա համաձայնվեց ինձ հետ եւ առաջարկեց ներկայացնել համապատասխան գրություն):

**21.03.87** - Այդ մասին ասացի եւ ընկ. Գ. Պ. Ռազումովսկուն:

**23.03.87** - Ասեցի ընկ. Ե. Կ. Լիգաչովին: Նա սկզբունքորեն գիտեր խնդիրը (մասնակցել էր Կենտկոմի Քարտուղարության եւ Քաղբյուրոյի նիստերին 1985թ. (փետրվար)): Խնդրեց 2-3 օր մտածելու եւ համապատասխան համաձայնեցման համար:

**24.03.87** - Եղա ընկ. Վ. Մ. Չեբրիկովի մոտ: Մենք ամբողջությամբ համաձայն էինք տվյալ ակտի անհրաժեշտության հարցում:

**27.03.87** - Եղա ընկ. Մ.Ս.Գորբաչովի մոտ: Զեկուցեցի: Նա հարցրեց, կա ինչ-որ գրառված բան, այնքանով, որպեսզի թողնեի իր մոտ: Ես ասացի, որ գրություն չեմ գրել, քանզի անհրաժեշտ համարեցի սկզբում հարցը համաձայնեցնել նրա հետ: Նա ասաց, որ նա հիշում է իմ գրույցները այդ թեմայի շուրջ եւ առաջարկությունները եւ սկզբունքորեն համաձայն է: Խորհուրդ տվեց խոսել եւ խորհրդակցել Ա. Ն. Յակովլեւի հետ: Ես ասացի, որ նրա հետ խորհրդակցել եմ, նա համաձայն է: Նա հավանության նշան արեց եւ ասաց, որ այդ դեպքում գրությունը պետք է տալ Յակովլեւին:

**27.03.87** - ԱԳՆ-ում համաձայնեցրեցի է.Ա.Շեւարդնաձեի հետ: Նա ասաց, որ լրիվ պաշտպանում է իմ առաջարկությունը, որովհետեւ այն սկզբունքորեն ճշմարտացի է: Ես նրան ասացի, որ Մ.Ս.Գորբաչովը նույնպես համաձայն է:

**27.03.87** - Եղա ընկ. Ա. Ն. Յակովլեւի մոտ եւ փոխանցեցի նրան գրությունը: Ասացի, որ եղել եմ ընկ. Մ.Ս.Գորբաչովի մոտ, եւ այս նրա հանձնարարությունն է: Նա վերցրեց գրությունը, ընթերցեց եւ ասաց, որ երեւի նա կհամաձայնեցնի այն ում հետ հարկավոր է եւ կզանգի ինձ, կհայտնի համաձայնության մասին, եւ մենք կարող ենք հրատարակել հրամանագիրը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 418, թ. 3-հակ:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր:

## Թ Ի Վ 49

**[Ս. Հարությունյանի նամակը Մ. Գորբաչովին օրենքով ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելու մասին]**

*Գաղտնի*

**ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր**
**քարտուղար ընկեր Մ. Ս. Գորբաչովին**

Հարգարժան Միխայիլ Սերգեյի

Ներկայացնում ենք հանրապետությունում օրենսդրական կարգով 1915 թվականի հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա հաստատման առթիվ մեր նկատառումները:



Բազմաթիվ տարիների ընթացքում օրակարգից չիջնող այդ հարցը արտակարգ սրվել է վերջին շրջանում, հանրապետությունում ծեւավորված բարդ եւ լարված իրավիճակի կապակցությամբ: Պատգամավորների հետ հանդիպումներում, միասնական քաղօրերում, հանրահավաքներում, ուրիշ միջոցառումներում աշխատավորությունը համառորեն հարցադրում է այն մասին, որպեսզի ապրիլի 24-ը պաշտոնապես ճանաչվի որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Հանրապետությունում ապրիլի 24-ը փաստորեն նշվում է որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Այդ օրը Երեւանում, ուրիշ քաղաքներում եւ շրջաններում անցկացվում են այդ տարեթվին նվիրված հասարակական-քաղաքական միջոցառումներ: Հանրապետության ղեկավարությունը ծաղիկներ է դնում հուշարձանին: Երեւանում ցեղասպանության զոհերի համալիր են այցելում շուրջ 300 հազար մարդ, ինչպես նաեւ բազմաթիվ պատվիրակություններ եւ հյուրեր: Հեռուստատեսությամբ եւ ռադիոյով հայտարարվում է լռության րոպե:

Այդ միջոցառումները մեծ գոհունակությամբ է ընդունում հանրապետության աշխատավորությունը՝ որպես Խորհրդային պետության կողմից հարգանքի արտահայտություն միայն Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ իրական վերածննդի հնարավորություն ստացած հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերի հանդեպ:

Ցեղասպանության տարեթիվը նշվում է եւ բոլոր սփյուռքահայ գաղութներում: Դրան նկատելի հետաքրքրություն են ցուցաբերում այն երկրների պաշտոնական իշխանությունները, որտեղ ապրում է հայկական բնակչություն: Դրանցիցի մի քանիսի, հատկապես ԱՄՆ-ի, հետադեմ շրջանները եւ հատուկ ծառայությունները քաղաքական սպեկուլյացիայի եւ գաղափարական դիվերսիաների նպատակներով օգտագործում են այն փաստը, որ այդ տարեթիվը մեր երկրում պաշտոնական կարգավիճակ չունի:

Հաշվի առնելով վերոնշյալը Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը նպատակահարմար է գտնում Հայկական ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության Հրամանագրով հանրապետությունում ապրիլի 24-ը հաստատել «1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

Խնդրում ենք քննարկել:

ՀԿԿ Կենտկոմի քարտուղար
***Ս. Հարությունյան*** [ստորագրություն]

12 սեպտեմբերի 1988թ.
թիվ 1118/գ

ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 2, թթ. 63-64:
Թարգմանություն ռուսերենից: Բնագիր: Մեքենագիր

## Թ Ի Վ 50
## [ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի օրենքը հայերի ցեղասպանության դատապարտման մասին]

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ[1]

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Դատապարտելով 1915 թվականին օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

2. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահություն առաջարկություն ներկայացնել հայերի 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու մասին:

3. Հանձնարարել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին Հայաստանի Արհմիությունների խորհրդի հետ համատեղ քննության առնել եւ լուծել ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր հայտարարելու հարցը, հանգստյան օրերից մեկը տեղափոխելով այդ օրը:

Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի
Նախագահության Նախագահ՝ *Հ. Ոսկանյան*
Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի
Նախագահության Քարտուղար՝ *Ն. Ստեփանյան*

22 նոյեմբերի 1988թ.
քաղ. Երեւան

«Բանբեր Հայաստանի Արխիվների», 1989, թիվ 2, էջ 5:

## Թ Ի Վ 51
## [Վազգեն Ա.-ի Կոնդակը եղեռնի 75-ամյակի առթիվ]

### Կ Ո Ն Դ Ա Կ

Այսօր 24 ապրիլի 1990 Փրկչական ամի, մեր համայն հաւատաւոր ժողովուրդը, Մայր Հայաստանից, Արցախի բարձունքներից եւ Սփիւռքի տարածքից հոգեւին քայլում է լուռ ու ինքնամփոփ դէպի Ծիծեռնակաբերդը քաղաքամայր Երեւանի, իր կրծքի տակ ծրարած մեծ վիշտը երկու

[1] Այս օրենքը Հայաստանի օրենսդիր մարմինների կողմից ընդունված առաջին եւ առայժմ միակ ակտն է, որ վերաբերում է Հայոց Ցեղասպանությանը:



միլիոն իր հարազատների, որոնք նահատակուեցին 1915-1923 տարիների ընթացքում Օսմանեան կայսրութեան տարածքի վրայ, ծրագրումովը եւ գործադրումովը «Երիտ-Թուրք ղեկավարների:

Մեր Մայր Եկեղեցին, մեր ազգը ամբողջ այսօր վերստին ապրում են զարհուրանքը մեր պատմութեան Մեծ Եղեռնի ու աղօթում զոհուածների հոգիների համար. եւ ուխտ են անում սուրբ պահելու նրանց նահատակութեան յիշատակը ու հաւատարիմ մնալու նրանց լոյս երազանքներին:

Արեւմտահայերի ցեղասպանութիւնը, Երիտ Թուրք ազգայնամոլ ղեկավարները ծրագրեցին եւ ի գործ դրեցին, նպատակ ունենալով բնաջնջել ամբողջ մի ազգաբնակչութիւն, բաց անելու համար ճանապարհ դէպի իրականացումը համաթուրքական մի կայսրութեան: Այդ խաւար ծրագրին զոհ գնաց պատմական Հայաստանի արեւմտեան հայութիւնը:

Փրկուեց միայն Արեւելեան Հայաստանի ազգաբնակչութիւնը, շնորհիւ Սարտարապատի Մայիսեան Յաղթանակի եւ ստեղծումովը հայ նորագոյն պետութեան, 1918 թուին, որը նոր պայմաններում գոյատեւում է մինչեւ մեր օրերը հանդիսանալով միակ խարիսխը հայ ժողովրդի գոյատեւման եւ գրաւականը նրա պետականութեան ամրապնդման Արարատի փէշերին:

Հայոց կոտորածների 75-ամեակի սեմին, մեր եկեղեցին ոգեկոչում է իր ժողովրդի նահատակումը՝ աղօթքով ու աղերսով առ Աստուած, որ նրանց յիշատակը յաւէտ պայծառ մնայ երկնային արքայութեան մէջ ու նաեւ երկրի վրայ՝ յաւերժ անմոռաց, որպէս ոգեղէն մի յուշարձան սգոյ եւ վերածննդի:

Այսօր, մեր պատմութեան մեծագոյն արհաւիրքը ոգեկոչում ենք մեր հայրենի կեանքի տագնապալի ներկայ վիճակում, երբ ողբում ենք նաեւ նոր զոհեր, պատմական Արցախի մեր զաւակների արդար պայքարի ճանապարհին:

Աստուած է վկայ, քաղաքակիրթ ողջ մարդկութեան խիղճն է վկայ, որ Արցախի հայերի ազգային ազատ ինքնորոշման իրաւունքը Մայր Հայաստանին միանալու, թե արդար է, թե օրինական եւ թե համաձայն մարդու իրավունքների հրամայականին:

1915-ի ցեղասպանութեան զոհ գնացած հայոց հոգիները այսօր մեզ հետ են եւ միանում են մեր աղօթքներին, մեր մաքառումներին: Նրանք քաջալերում են ու զօրացնում մեզ եւ պատգամում բոլորիս՝ անշէջ պահել նրանց ուխտը, ամուր պահպանել մեր ազգային հաւատամքն ու հաւաքական կամեցողութիւնը, միասնական ուժերով յաղթահարելու համար մերօրեայ դժուարութիւնները, գործելով ողջամտութեամբ ու հեռատեսութեամբ, երբեք մոռացութեան չտալով անցեալի մեր կործանարար փորձութիւնները: 1915-ից յետոյ, հայ ժողովրդին ներելի չէ սխալ կողմնորոշուել, քանզի արդի մեր Մայր հայրենիքի քաղաքական անվտանգու-

թիւնների ընտանիքում, գերագոյն երաշխիքներն են մեր ազգի ապագայ գոյատեւման:

Մենք նոյնիսկ յուսով ենք, որ կը գայ այն օրը, երբ աշխարհի ժողովուրդները, նաեւ մեզ հարեւան թուրք ժողովուրդը, մեզ հետ կը խոնարհուեն հայոց նահատակների յիշատակի առջեւ:

«Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ ու բարեգութ, յիշեա զհոգիս բիւրաւոր նահատակաց մերոց եւ դասաւորեալ պայծառացո զնոսա ընդ սուրբս քո, զի դու ես դատաւոր կենդանեաց եւ մեռելոց»:

Այսու Մեր կոնդակով հրավէր ենք կարդում մեր եկեղեցիներին ի Հայաստանի եւ ի սփիւռս աշխարհի, որ տարւոյս 24 ապրիլին կատարուեն հանդիսավոր արարողութիւններ Սուրբ Պատարագի եւ հոգեհանգստեան՝ ի խաղաղութիւն ու ի լուսաւորումն ցեղասպանութեան զոհ գնացած հայոց հոգիների եւ ի մխիթարութիւն մեր սգակիր ժողովրդի:

«Զարթիր եւ հայեաց, Տեր, յիրաւունս իմ, ի դատաստանս իմ. եւ իրաւ արա ինձ ըստ արդարութեան քում (Սաղմոս ԼԴ - 23), զի հզօրիչ իմ եւ ապաւէն իմ դու ես» (Սաղմոս Լ - 4): Ամէն:

***ՎԱՉԳԵՆ Ա***
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 127:
Մեքենագիր: Պատճեն:



# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1. *Հիշատակվող գործիչներ*

**Զարոբյան Յակով Նիկիտի** - Ծնվել է 1908թ. սեպտեմբերի 25-ին Արդվինում: 1914-25թթ. ապրել է Ռոստովում, 1925-41թթ. Խարկովում, 1942-49թթ. Օմսկում: 1949թ. տեղափոխվել է Հայաստան: 1949-50թթ. ՀԿԿ Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ, 1950-52թթ.՝ Երեւանի քաղկոմի երկրորդ քարտուղար, 1952-53թթ.՝ Պետանվտանգության նախարարի տեղակալ կադրերի գծով, 1953-58թթ.՝ Կենտկոմի քարտուղար, 1958-60թթ.՝ Նախարարների Խորհրդի նախագահի առաջին տեղակալ, 1960թ. փետրվարի 12-ից ՀԿԿ Կենտկոմի երկրորդ, 1960թ. դեկտեմբերի 28-ից մինչեւ 1966թ. փետրվարի 5-ը՝ առաջին քարտուղար, 1966-80թթ. ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարարի տեղակալ: Մահացել է 1980թ. ապրիլի 10-ին Մոսկվայում, թաղվել է Երեւանի կենտրոնական գերեզմանատան պանթեոնում:

**Քոչինյան Անտոն Երվանդի** - 1952-66թթ. ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահ, 1966-74թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար:

**Կիրակոսյան Զոհ Սահակի** - պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր: 1964-66թթ. ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ, 1966-69թթ.՝ Ռադիոհեռարձակման եւ հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ, 1969-75թթ.՝ Կենտկոմի գիտության եւ ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ, 1975-85թթ.՝ Արտաքին գործերի նախարար:

**Բաղդասարյան Հովհաննես Մնացականի** - 1961-66թթ. ՀԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար, ապա՝ ՀԽՍՀ Մշակույթի նախարար:

**Տեր-Ղազարյանց Գեորգի Արտաշեսի** - 1961-66թթ. ՀԿԿ Կենտկոմի քարտուղար, 1966-73թթ.՝ երկրորդ քարտուղար, հետագայում ԽՍՀՄ դեսպան Սենեգալում եւ Գամբիայում:

**Հարությունյան Նագուշ Խաչատուրի** - 1963-75թթ. ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ:

**Մուրադյան Բադալ Հմայակի** - 1961-66թթ. ՀԿԿ Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար, 1966-72թթ.՝ Նախարարների Խորհրդի Նախագահ:

**Ինճիկյան Հովհաննես Գրիգորի** - 1959-71թթ. ԳԱ Արեւելագիտության բաժանմունքի վարիչ:

**Աղայան Ծատուր Պավելի** - 1961-68թթ. Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի Հայկական մասնաճյուղի տնօրեն:

**Այվազյան Հակոբ Ռաֆայելի** - 1960-1966թթ. Ռադիոհեռարձակման եւ հեռուստատեսության կոմիտեի նախագահ:

**Առաքելյան Սոկրատ Վաղարշակի** - 1960-69թթ. Հայաստանի Արհմիությունների Միության Խորհրդի Նախագահ:

**Ավետիսյան Վարդան Ավետիսի** – 1964-67թթ. ՀԿԿ Կենտկոմի Գիտության եւ ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ:

**Ավչյան Բաբկեն Մեսրոպի** – 1963-65թթ. ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ:

**Արզումանյան Սերգեյ Արկադիի** - 1961-68թթ. Հասարակական կարգի պահպանության-Ներքին գործերի նախարար:

**Բաղամյանց Գեորգի Արտաշեսի** – 1954-1972թթ. ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահ:

**Գալստյան Ռուբեն Ստեփանի** - 1963-74թթ. ՀԿԿ Երեւանի Լենինյան շրջկոմի առաջին քարտուղար:

**Գասպարյան Սերգեյ Տիգրանի** - 1963-67թթ. Կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ, 1967-70թթ. Հայրենադարձների ընդունման եւ տեղավորման կոմիտեի նախագահ, 1957-63թթ. եւ 1970-77թթ. Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ:

**Դանիելյան Դանիել Հովհաննեսի** – 1958-1965թթ. ՀԿԿ Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ:

**Դովլաթյան Ավետիք Խաչատուրի** - Կամոյի Անասնաբուժական տեխնիկումի տնօրեն:

**Դրագունսկի Դավիդ Աբրամի** - 1960-65թթ. ՀԽՍՀ տարածքում տեղակայված խորհրդային բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության կրկնակի հերոս:

**Զախարյան Վաչագան Սամսոնի** - 1953-73թթ. ՀԿԿ Կենտկոմին կից Կուսակցական Հանձնաժողովի նախագահ:

**Թոփչյան Էդուարդ Ստեփանի** - 1954-67թթ. Հայաստանի Խորհրդային Գրողների Միության Վարչության Նախագահության պատասխանատու քարտուղար, 1967-75թթ.՝ Վարչության առաջին քարտուղար:

**Թովմասյան Ստեփան Սուրենի** - 1964-67թթ. ՀԿԿ Կենտկոմի գիտության եւ ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի տեղակալ:

**Իկիլիկյան Հրաչյա Սիմոնի** - 1963-65թթ. ՀԿԿ Աշտարակի շրջկոմի առաջին քարտուղար:

**Խառազյան Մարատ Ալեքսանդրի** – 1964-65թթ. ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ:

**Կարինյան Արտաշես Բալասիի** - 1960-68թթ. ՀԽՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

**Կիրակոսյան Ալեքսան Մատթեւոսի** - 1964-65թթ. ՀԿԿ Կենտկոմի գյուղատնտեսության բաժնի վարիչ:

**Համազասպյան Վարդգես Եղիշեի** - 1964-85թթ. Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ:

**Հովակիմյան Օնիկ Տիգրանի** - 1963-68թթ. ՀԿԿ Ստեփանավանի շրջկոմի առաջին քարտուղար:



**Ղարիբջանյան Գեւորգ Բագրատի** - 1961-68թթ. ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար:

**Մարտիրոսյան Բալաբեկ Գրիգորի** - 1958-72թթ. ՀԽՍՀ Արտգործնախարար:

**Մելքոնյան Հայկ Հովհաննեսի** – 1962-1974թթ. Նախարարների Խորհրդի գործերի կառավարիչ:

**Մելքոնյան Պետրոս Գրիգորի** - 1946-65թթ. Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր:

**Մովսեսյան Սամվել Ալեքսանի** - 1962-70թթ. Լուսավորության նախարարի առաջին տեղակալ:

**Մովսեսյան Սուրեն Համբարձումի** - 1960-73թթ. Նախարարների Խորհրդի Նախագահի առաջին տեղակալ:

**Մուսախանյան Վարդգես Մատթեւոսի** – 1961-71թթ. ՀԽՍՀ դատախազ:

**Շահինյան Հայկազ Սրապիոնի** - 1957-69թթ. Պետանվտանգության Կոմիտեի Նախագահի տեղակալ:

**Պետրոսյան Գեղամ Սողոմոնի** - 1960-78թթ. ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի Նախագահի տեղակալ:

**Սելյան Պատրիկ Աբրահամի** - Արտասահմանյան երկրների հետ բարեկամության եւ մշակութային կապերի Հայկական ընկերության խորհրդատու:

**Սիմոնյան Շավարշ Ստեփանի** - 1955-73թթ. ՀԽՍՀ Լուսավորության նախարար:

**Ստեփանյան Ալբերտ Հմայակի** - 1963-65թթ. ՀԿԿ Կենտկոմի Կուսակցական մարմինների, 1965-73թթ. Կազմակերպչական-կուսակցական բաժինների վարիչ:

**Ստեփանյան Լարիսա Ալեքսանդրի** - 1959-75թթ. Նախարարների Խորհրդի Նախագահի տեղակալ:

**Վարդանյան Ստեփան Հմայակի** – 1964-65թթ. ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչ:

**Ուդումյան Կամո Բաբինի** - 1964-67թթ. Երեւանի Հայկական Մանկավարժական Պետական ինստիտուտի ռեկտոր, 1967-72թթ. Մշակույթի, 1972-75թթ.՝ Արտաքին գործերի նախարար, հետագայում՝ ԽՍՀՄ դեսպան Նեպալում:

**Քամալյան Գուրգեն Ոսկանի** - 1955-72թթ. Երեւանի Անասնաբուծա-Անասնաբուժական ինստիտուտի ռեկտոր:

**Քոչարյան Մուսայել Տիգրանի** - 1959-70թթ. ՀԿԿ Երեւանի Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղար:

**Օհանյան Ռոբերտ Համբարձումի** – 1965թ. Երեւանի Հայէլեկտրագործարանի տնօրեն:

## 2. *Եղեռնի 50-ամյակին առնչվող հակիրճ մատենագիտություն*

1963-1967թթ. հրատարակվեցին Հայոց Եղեռնին նվիրված բազմաթիվ աշխատություններ եւ հոդվածներ, որոնցից մասնավորապես հիշատակենք հետեւյալը.

1. *Ալեքսանյան Ս., Էվոյան Վ., Սարգսյան Ա.*, **«Մարդկությունը չպետք է ների: Փաստաթղթեր»**, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, թ. 1, էջ 34-103:
2. **«Արեւմտահայերի ցեղասպանության վերաբերյալ երիտթուրքական կոմիտեի փաստաթղթերը, 1915-16թթ.»**, Կազմելը եւ առաջաբանը՝ *Ռ.Գ.Սահակյանի*, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1965, թ. 3, էջ 73-86:
3. *Գալոյան Գ., Կիրակոսյան Զ.*, **«Ողբերգությունից վերածնունդ»**, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 24:
4. *Ինճիկյան Հ.Գ.*, **«Երիտթուրքական շարժման գնահատման շուրջ»**, «Արեւելագիտական ժողովածու», Երեւան, 1964, հ. 2, էջ 216-239:
5. *Կիրակոսյան Զ.*, **«Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը 1914-16թթ.»**, Երեւան, 1967: (1965թ. պաշտպանված պատմագիտության դոկտորի ատենախոսությունն է):
6. *Կիրակոսյան Զ.*, **«Արեւմտահայերի ողբերգությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին»**, «Լենինյան ուղիով», 1965, թ. 4:
7. *Կիրակոսյան Զ.*, **«Արեւմտահայերի ծանր դրությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին»**, «Պատմաբանասիրական հանդես», 1965, թ. 1:
8. *Կիրակոսյան Զ.*, **«Միջազգային իմպերիալիզմը եւ հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը»**, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1965, թ. 4:
9. **«Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու»**, *Մ.Ներսիսյանի* խմբագրությամբ, Երեւան, 1966 (ռուսերեն):
10. *Հովնանյան Ս.*, ***«Հայերի կոտորածները 1890-ական թվերին եւ բուլղար հասարակայնությունը»***, «Պատմաբանասիրական հանդես», 1965, թ. 2, էջ 207-210:
11. *Սահակյան Ռ.Գ.*, **«Հայերի ցեղասպանությունը առաջավոր հասարակայնության գնահատմամբ»**, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1965, թ. 4, էջ 101-112:
12. *Սարգսյան Ե.*, **Երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը 1915-1916թթ.**, «Սովետական Հայաստան», թիվ 4, էջեր 16-23:
13. *Սարգսյան Ե., Հայերի ցեղասպանությունը 1915-1916թթ.*, (ռուսերեն), «Պատմաբանասիրական հանդես», 1965, թ. 1, էջ 23-36:



14. *Սարգսյան Ե., Սահակյան Ռ.*, **Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ճեճգափոխումը թուրք պատմագրության մեջ**, Երեւան, 1963: (Սա 1965թ. տպվեց անգլերեն լեզվով – **Vital Issues in Modern Armenian History**. Watertown, 1965.)
15. **«Ցեղասպանության ծրագիրը, (փաստեր, փաստաթղթեր)»**, «Լիտերատուրնայա Արմենիա», («Գրական Հայաստան» - ռուսերեն), 1965, թ. 4, էջ 79-81:

Առանձնահատուկ պետք է շեշտել Զ.Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը 1914-16թթ.» աշխատության խաղացած չափազանց կարեւոր դերը թե ազգային զարթոնքի, եւ թե հատկապես ցեղասպանագիտության զարգացման առումներով: Որպես այդ պարագայի առհավատչյա՝ բավական է հիշատակել նրա հիմնարար աշխատության մասին բազմաթիվ գրախոսականների գոյությունը:[1]

Եղեռնի նահատակ անվանի հայ մտավորականների մասին տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, ուր երկարատեւ հանիրավի մոռացությունից հետո վերարժեքավորվեցին եւ ըստ արժանվույն գնահատվեցին նրանց ստեղծագործությունները:

1. *Էդ. Զրբաշյան*, **«Ռուբեն Սեւակ»**, «Սովետական Հայաստան», 1965, փետրվարի 27:
2. *Նահրի Զարյան*, **«Գրիգոր Զոհրապ»**, «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 2:
3. *Վաղարշակ Նորենց*, **«Ռուբեն Սեւակ»**, «Գրական թերթ», 1965, մարտի 5:
4. *Գուրգեն Մահարի*, **«Պատիվ ըրեք վսեմական քերթողին ... Դանիել Վարուժան»**, «Գրական թերթ», 1965, մարտի 19:
5. *Ա. Ինճիկյան*, **«Սիամանթո»**, «Գրական թերթ», 1965, ապրիլի 2:
6. *Լ.Կարապետյան*, **«Թլկաթինցի»**, «Գրական թերթ», 1965, ապիլի 9:

---

1 *Մ.Ներսիսյան*, «Լենինյան ուղիով», 1965, թ. 9: *Ե.Սարգսյան*, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1965, թ. 7: *Կ.Քարամյան*, «Պատմաբանասիրական հանդես», 1965, թ. 2: *Վ.Միքայելյան*, «Սովետականն Հայաստան», 1965, օգոստոսի 3: *Ա.Մնացականյան*, «Կոմունիստ» (ռուսերեն), 1965, հուլիսի 25: *Ա.Մակարյան*, «Սովետական մանկավարժ», 1965, թ. 8: *Հ.Տեր-Եղյան*, «Գրական թերթ», 1965, սեպտեմբեր 3: *Հ.Խաչատրյան*, «Հայրենիքի ծայն», 1965, օգոստոսի 29: *Վ.Ղազանչյան*, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, թ. 2: *Թ.Թորանեան*, «Աշխարհ», Փարիզ, 1965, սեպտեմբերի 11: *Գ.Գալոյան*, «Սովետական Հայաստան»,1966, թ. 1:

**3. *«Ձերբակալված յոթ հայրենասերներ»***

1965թ. համազգային զարթոնքին էապես նպաստեց ձերբակալված «յոթ հայրենասերների» պարագան, որոնց ազատությունը ցուցարարների պահանջներից էր:

1963թ. դեկտեմբերի վերջին եւ 1964թ. հունվարին ձերբակալվել եւ «հակախորհրդային գործունեության համար» 1964թ. հունիսին դատապարտվել են[1].

**1. Հովհաննիսյան Մերուժան Արտաշեսի** - ծնված 1940թ.: 1958թ. «հրազենի ապօրինի պահպանման համար» դատապարտվել է 3 տարվա ազատազրկման: Սրբագրիչ ԳԱ էջմիածնում գտնվող տպարանում: Դատապարտվել է **5 տարվա** ազատազրկման:

**2. Ամիրջանյան Խաչատուր Զումշուդի** - ծնված 1924թ.: Երեւանի Անասնաբուժա-անասնաբուժական ինստիտուտի «Կադրերի համար» թերթի պատասխանատու քարտուղար: Դատապարտվել է **5 տարվա** ազատազրկման:

**3. Բաբայան Վիգեն Ասատուրի** - ծնված 1940թ.: 1957թ. «անզգույշ սպանության համար» ազատազրկվել է 3 տարով: ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանող: Դատապարտվել է **5 տարվա** ազատազրկման:

**4. Սաֆարյան Խաչիկ Էլոյի** - ծնված 1932թ.: Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու: Եղել է Երեւանի Գյուղատնտեսական ինստիտուտի հեռակա բաժանմունքի մեթոդիստ: Դատապարտվել է **4 տարվա** ազատազրկման:

**5. Եղիյան Գրիգոր (Հովհաննես) Հակոբի** - ծնված 1926թ. Երուսաղեմում: Եգիպտոսից հայրենադարձվել է 1948թ.: էջմիածնի Հոգեւոր ճեմարանի անգլերեն լեզվի եւ պատմության ուսուցիչ, սարկավագ: Դատապարտվել է **2 տարվա** ազատազրկման:

**6. Քիրամիջյան Կարապետ Պողոսի** - ծնված 1940թ. Բեյրութում: Հայրենադարձվել է Սիրիայից 1947թ.: ԵՊՀ քիմիական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող: Դատապարտվել է **2 տարվա** ազատազրկման:

**7. Կակոսյան Էդուարդ Վարդանի** - ծնված 1936թ.: 1963թ. գինու գործարանում (աշխողեկ էր) «շինարարությունում շինանյութերի պակասորդի անփութության համար» դատապարտվել է 1 տարվա ուղղիչ աշխատանքների: Ղափանի շրջանի Եղվարդ գյուղի դպրոցի ուսուցիչ: Դատապարտվել է **1,5 տարվա** ազատազրկման:

[1] Ըստ պաշտոնական տվյալների:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Առաջաբան

Հայոց Ցեղասպանության 50-ամյակի նշումը Խորհրդային Հայաստանում. Համազգային զարթոնքից միջազգային ճանաչում ..... 3

Փաստաթղթեր

1. ՀԿԿ Կենտկոմի որոշումը Սփյուռքի կոմիտե ստեղծելու մասին ..... 27
2. Նամակ ՀԿԿ Կենտկոմին Եղեռնի 50-ամյակը նշելու վերաբերյալ ..... 30
3. Յա. Զարոբյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին Եղեռնի 50-ամյակը նշելու վերաբերյալ ..... 37
4. Ա. Քոչինյանի նամակը ՀԿԿ Կենտկոմին հայրենադարձության վերաբերյալ ..... 41
5. Որոշում սփյուռքահայ ուսուցիչների հրավիրման մասին ..... 39
6. ՀԿԿ Կենտկոմի որոշումը հայրենադարձության վերաբերյալ ..... 43
7. ՀԿԿ Կենտկոմի որոշումը «Հայրենիքի ձայն»-ի հրատարակման մասին ..... 45
8. ՀԿԿ Կենտկոմի որոշումը հայրենադարձների ժողովի վերաբերյալ ..... 45
9. ՀԿԿ Կենտկոմի որոշումը Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին ..... 48
10. Յա. Զարոբյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին «Հայրենիքի ձայն»-ի հրատարակման մասին ..... 49
11. ՀԿԿ Կենտկոմի որոշումը Սփյուռքի հետ կապերի ընդլայնման մասին ..... 50
12. ՀԿԿ Կենտկոմի որոշումը Դ. Վարուժանի անունով դպրոց անվանակոչելու ..... 55
13. ՀԿԿ Կենտկոմի որոշումը գաղափարա-դաստիարակչական աշխատանքի մասին ..... 56
14. ՀԿԿ Կենտկոմի որոշումը սփյուռքահայ երեխաների հրավիրման մասին ..... 61
15. Հայրենադարձների նամակը ԽՍՀՄ ղեկավարությանը ..... 62
16. ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի կարգադրությունը Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին ..... 64
17. ՀԿԿ Կենտկոմի որոշումը «Հայրենիքի ձայն»-ի լույս ընծայման մասին ..... 65
18. ՀԿԿ Կենտկոմի որոշումը Եղեռնի 50-ամյակի մասին հոդվածի եւ զեկույցի վերաբերյալ ..... 63
19. Մկրտիչ Արմենի նամակը ՀԿԿ Կենտկոմին 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին ..... 67
20. Գրողների միության կուսկազմակերպության ժողովի արձանագրություն ..... 76
21. ՀԿԿ Կենտկոմի որոշումը 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին ..... 110
22. ՀԿԿ Կենտկոմի Պլենումի որոշումը 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին ..... 116
23. ՀԿԿ Կենտկոմի Պլենումի արձանագրությունը 1965թ. ապրիլի 24-ի ցույցի մասին ..... 117
24. Տեղեկանք կադրերի վերաբերյալ ..... 155
25. Յա. Զարոբյանի եւ Ա. Քոչինյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին հայրենադարձության վերաբերյալ ..... 157
26. ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի որոշումը հայրենադարձության վերաբերյալ ..... 158
27. ՀԿԿ Կենտկոմի եւ Նախարարների Խորհրդի որոշումը հայրենադարձության վերաբերյալ ..... 159
28. Ա. Քոչինյանի եւ Բ. Մուրադյան նամակը ԽՄԿԿ Կենտկոմին ..... 162

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին
29. Հայ մտավորականության նամակը Լ. Բրեժնեւին ..... 168
Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին

Նյութեր
30. Վազգեն Ա.-ի կոնդակը Եղեռնի 50-ամյակի առթիվ ..... 170
31. Վազգեն Ա.-ի նամակը Եղեռնի 50-ամյակի առթիվ ..... 174
32. «Էջմիածին»-ի խմբագրականը Եղեռնի 50-ամյակի առթիվ ..... 175
33. «Էջմիածին»-ի խմբագրականը Եղեռնի 50-ամյակի առթիվ ..... 179
34. Հաղորդագրություն Մայր Աթոռում Եղեռնի 50-ամյակի նշման մասին ..... 185
35. Հաղորդում սփյուռքահայ ուսանողների հետ հանդիպման մասին ..... 194
36. Հաղորդում Եղեռնի 50-ամյակին նվիրված գիտական սեսիայի մասին ..... 196
37. Հաղորդում արեւմտահայ գրողներին նվիրված երեկոյի մասին ..... 198
38. «Սովետական Հայաստան»-ի խմբագրականը ..... 199
Եղեռնի 50-ամյակի առթիվ
39. Հ. Քոչարի հոդվածը Եղեռնի 50-ամյակի առթիվ ..... 202
40. Գ. Գալոյանի եւ Զ. Կիրակոսյանի հոդվածը Եղեռնի 50-ամյակի առթիվ ..... 207
41. Մ. Ներսիսյանի եւ Ն. Ուշակովի հոդվածը Եղեռնի 50-ամյակի առթիվ ..... 216
42. Հաղորդագրություն Եղեռնի 50-ամյակի առթիվ ժողովի մասին ..... 221
43. Հաղորդագրություն Եղեռնի զոհերի հուշարձանի բացման մասին ..... 224

Հավելված
44. ՀԿԿ Կենտկոմի որոշումը Եղեռնի 60-ամյակի միջոցառումների մասին ..... 232
45. Կ. Դեմիրճյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին օրենքով ապրիլի 24-ը ..... 233
Եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելու մասին
46. ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի արձանագրություն օրենքով ..... 235
ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելու մասին
47. ՀԿԿ Կենտկոմի որոշումը Եղեռնի 70-ամյակի միջոցառումների մասին ..... 244
48. Կ. Դեմիրճյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին օրենքով ..... 246
ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելու մասին
49. Ս. Հարությունյանի նամակը Մ. Գորբաչովին օրենքով ..... 248
ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակի օր հռչակելու մասին
50. ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի օրենքը ..... 250
հայերի ցեղասպանության դատապարտման մասին
51. Վազգեն Ա.-ի Կոնդակը Եղեռնի 75-ամյակի առթիվ ..... 250

Ծանոթագրություններ
1. Հիշատակվող գործիչներ ..... 253
2. Եղեռնի 50-ամյակին առնչվող հակիրճ մատենագիտություն ..... 256
3. «Ձերբակալված յոթ հայրենասերներ» ..... 258

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու

Խմբագրությամբ Ավագ Հարությունյանի

# 50-ЛЕТИЕ ГЕНОЦИДА АРМЯН И СОВЕТСКАЯ АРМЕНИЯ

Сборник документов и материалов

Под редакцией Авага Арутюняна

# The 50th Aniversary of Armenian Genocide and Soviet Armenia

(Documents and Material)

Editor: **Avag Harutyunyan**

Հանձնված է շարվածքի՝ 25.03.2005թ.:
Ստորագրված է տպագրության՝ 04.04.2005թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տառատեսակ՝ Arial Armenian: Տպագրությունը՝ օֆսեթ: 16.25 տպագր. մամուլ: Տպաքանակ՝ 1000: Գինը՝ պայմանագրային:
«Գիտություն» հրատարակչություն, Երեւան, Մարշալ Բաղրամյան 24:
Издательство „Гитутюн", Ереван, Маршала Баграмяна 24.